

ԱՆԻՑԵԱԼՆ

ՅԱԲԲԱՅԷ * * *



510
313

ԹԱՐԳՄԱՆԵԱՅ Ի՞ ԳԱՂՂԻԱԿԱՆԷ
ՌԵԹԷՈՍ Յ. ՊԵՐՊԷՐԵԱՆ

ՏԵՐ ԵՒ ՅՐԱՏԱՐԱԿԻՉ
ՄԵԼԻՍԵԳԵԿ ԶԻՄՐԻՍ

ՀԱՏՈՐ ԱՌԱՋԻՆ



Կ. ՊՕԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՊԵՏՐՈՍ ՃԷՉՎԷՃԵԱՆ

)(1870)(



U.S. DEPARTMENT OF AGRICULTURE

OFFICE OF THE SECRETARY

WASHINGTON, D. C.

1918

NO. 1

1918

1918



1918

1918

1918

ՅԱՌԱՋԱԲԱՆ ԹԱՐԳՄԱՆՉԻՆ

Կրօնքն , իր սահմանին և իւր պարզութեանը մէջ , սյօինքն իբր մարդուս առ Աստուած , առ նմանս և առ ինքն ունեցած եռակի պարտաւորութիւններն ուսուցանելու միակ պաշտօնն ունեցող դրութիւն մը որքան վսեմ է և օգտաւէտ մարդկային ընկերութեան , սյնքա՛ն նըշուատ է և վնասակար սյն անհեթեթ զեղծումներովը , որոնք հետզհետէ անոր հետ զանգուելով նորա բնութիւնն սյլայլած և զսյն ժանդոտած ու ապականած են :

Ո՛վ կրնայ ճանչնալ Քրիստոնէութիւնը՝ սիրոյ , եղբայրութեան , հաւատարութեան , անձնօրութեան և ներողամտութեան սյն վսեմ կրօնքը , արդի Քրիստոնեայ եկեղեցւոյ մէջ , ուր սիրոյ և եղբայրութեան տեղ՝ հեռ և պառակտումն , հաւատարութեան տեղ՝ խտրութիւն , անձնօրութեան տեղ՝ շահն ու ետութիւնը , և ներողամտութեան տեղ՝ նզովքն ու աններողութիւնը կը թաղաւորեն , Ո՛վ կրնայ ճանչնալ Քրիստոնէութեան հեզ , ներող և անձնուրաց Հեղինակը և Նորա նախկին անձնուէր շահատակները արդի Քրիստոնեայ եկեղեցւոյ հստարտ , փառամոլ , մարմնասէր և շահախնդիր պաշտօնէից վրայ , որոնք միմիայն ժողովուրդներն հարբատահարելու և անոնց վնասովն անդորր և անաշխատ կեանք մ'անցունելու պաշտօնն ունենալ կը կարծեն : Եկեղեցին՝ որ , իր հիմնադրութեան առաջին ժամանակները , յերկինս զԱստուած հայր ճանաչող եղբայրներու սուրբ միաբանութիւն մ'էր , հիմայ ուրիշ բան չ'է , բայց եթէ մեծերու և փոքրերու , տէրերու և ծառայներու , իշխաններու և հպատակներու դաշնադրեալ ընկերակցութիւն մը :

Եկեղեցին իւր պարզութենէն հանելով և իւր մեծութենէն մերկացրնելով՝ աստիճանաբար սյս դձուձ և ողբալի վիճակին ենթարկող , և կրօնքն աւելի մարդկային ընկերութեան մէկ պատուհասը քան թէ անոր փրկութեան մէկ գործիքն ընող զեղծմանց գլխաւորները եղած են՝

- Կրօնասիրութեան մոլի եռանդը ,
- Կղերին փառասիրութիւնը ,
- Վանքերը և կրօնական ուխտերը :

Կրօնամոլութիւնը , կրօնից և Աստուծոյ շահերը պաշտպանելու խօլ եռանդով , (իբր թէ Աստուած ինքնին անկարող ըլլար իւր շահերը պաշտպանելու կամ իր անուան եղած նախաստանաց վրէժն առնելու) ըսկրսաւ մոլեգնարար հալածել խղճի ազատութիւնը , բռնաբարել սյն նընօրական տաճարը՝ որու դէմ ամենախորք յարձակում մը աններելի սքրբապղծութիւն մ'է : Ասկէ հետեւեցան կրօնական արիւնքուշտ պատերազմները , խաչակիրները՝ որք Արեւելքն արեամբ ներկեցին , Ս . Բարթուղիմէասի կատորածը՝ որ Ծաանսայի մէջ արեան հեղեղներ վազցուց

և վսթսուն հազարի չսփ զոհեր ըրաւ , և վերջապէս բարբարոս Հաւա-
 տաքննութիւնը՝ որ խարոյկներու լուսով մաքերը լուսաւորել կը ջանար ,
 և հայրն՝ իր որդւոյն , աղջիկն՝ իր մօրը , Լաքայրն՝ իր եղբօրը մասնիչն
 ու դահիճը ըլլալու կը սպարտաւորէր : Եւ այս ամենը յանուն Յիսուսի Քր-
 իստոսի՝ որ Խաչին վրոյ ճշմարտութեան սիրոյն համար զոհուած միջո-
 ցին իւր թշնամիներուն համար կ'աղօթէր :

Մոլեռանդութիւնը Քրիստոսի եկեղեցին պառակտեց և զայն ան-
 հաշտ ատելութեանց և սխերիմ թշնամութեանց թասր մ'ըրաւ , նա
 Քրիստոնէութեան ողին սյրափոխեց , և զայն , փոխանակ Աղպոց մէջ
 սիրոյ և միութեան յօգակապ մ'ընելու , հալածանաց , քինու և պժգալի
 հակառակութեանց գործիք մ'ու սպարուակ մ'ըրաւ :

Աղերն , իր սատուածային ու սրբազան կոչումը մոռնալով ,
 մոռնալով Քրիստոնէութեան դերագոյն Հեղինակին « որ մեծն է ի ձէնջե-
 ղիցի ամենեցուն ծառայ » , փետմ խօսքերը , իւր պսշտօնը , որ զօհողու-
 թեան , անձնութեան պաշտօն մ'է , շահասիրութեան և փառամոլութեան
 գործիք մ'ըրաւ : Ահաւ տիրել Եկեղեցւոյ մէջ , և , փոխանակ Աւետա-
 անին լսի պաշտօնեայն ու քարոզողն ըլլալու , ինքզինքն Աստուծոյ կամա-
 ցըն ու խորհրդոց աւանդապահն ու թարգմանը , և ժողովուրդէն տարբեր ու
 դերագոյն բնութեան տէր ցոյց տալով , անկէ պատիւ ու խունկ պա-
 հանջեց : Հարստահարեց տգէտ ու անմեղ ժողովուրդը , փոխանակ իւր
 հօտին անձնուրաց հովիւն ըլլալով՝ անոր բռնաւորն ու դահիճը եղաւ
 սակեձեղուն պաշտօներու մէջ բնակեցաւ , զարգարուն հանդերձներով
 ու փառաւոր կառքերով շրջեցաւ , և թողուց որ սովաւաւ թշուառն իր
 արցունքները խմելով յագենայ : Ինքն իր մէջ պատուոյ ու մեծութեան
 կախիւններով յուզեցաւ , և իրարու հաւասարապատիւ առաքելոց յաջորդնե-
 րըն իրենց մէջ դանազանութիւն և գերիշխանութիւն որոնեցին : Երենց
 անձնական շահուն միակ տեսութեամբը՝ մոլեռանդութիւնը քաջալերեցին ,
 կրօնքին հիմն ու պարզութիւնը փոխեցին , հաւատալեաց ու պատուիրա-
 նաց թիւն ըստ քմաց աճեցուցին ու պակսեցուցին , երկրայինը երկնայինին
 հետ շիտթեցին , բարի և գթած Աստուծը վրէժխնդրութեան ու ցաս-
 ման ահաւոր գոյներով նկարեցին , ինքզինքնին փոխանակ իրենց ժողո-
 վուրդին աւետարանական առաքինութեանց տիպար մ'ընծայելու , մէկ
 կողմէն կուսակրօնութեան պատուարով աշխարհէս անջատուած , միւս
 կողմէն ամեն տեսակ մոլութեանց տղմին մէջ թաւալեցան , և որպէս
 զի ժողովուրդը ճշմարտութեան լուսոյն անձանօթ մնալով իրենց քստմը-
 նէլի գործոց քօղը պատուելու փորձ չի փորձէ , մաքերը տղխտութեան
 թանձրամած խաւարի մը մէջ փտտեցնելու համար ամեն ջանք և ճիդ
 ի գործ դրին : Աղերականութիւնը քրիստոնէութեան հակասութիւնը
 եղաւ : Ահա Պատը , որ ինքզինքը Քրիստոսի փոխանորդը կ'անուանէ , և

սակայն ինչ դարմանալի և անհեթեթ հակասութիւն Անոր և ասոր մէջ :
 Նա « իմ թագաւորութիւն չէ յայսմ աշխարհի » կ'աղաղակէ , աղքատ
 հոգատակ կը ծնի , և , երկնային թագաւոր , երկրայինին օրէնքը կը յարգէ ու
 անոր կը հպատակի : Իսկ սա , Պապը յանուն Քրիստոսի աշխարհային գահե-
 բու վրայ կ'իշխէ , մէկ ձեռքով Խաչը և միւսով սուրը կը շողացնէ , մէկով
 Աւետարանը և միւսով պատժական օրինաց գիրքը կը բռնէ : Նա՛ Քրիստոս
 իւր ժողովրդեան փրկութիւնը իր արեամբը կը գնէ , սա իւր փառքն
 ու մեծութիւնը ժողովրդին արեան մէջ կը փնտռէ , Նա՛ կ'օրհնէ , սա նզով-
 քի շանթեր կ'արձակէ , Նա՛ կը ներէ , սա կը դատապարտէ , Նա՛ կ'աղա-
 տէ , Նա՛ կեանք կը բաշխէ , սա բանտերու , շղթաներու , տանջանաց ու մահ-
 ուան կը մատնէ . . . : Նէքը , մարդ սխալական , անսխալ ըլլալ կը պահանջէ ,
 իր « ոչ կարեմքը » անգառնալի է , սակայն պապերէն շատերն իրենց
 նախորդաց վճիռներուն հակառակը կը վճռեն , և դարձեալ ամենքն անսը-
 խալ են . . . :

Ահա քրիստոնեաց կղերին հակա-քրիստոսեան ընթացքը , որով փոխա-
 նակ մարդկային սեռին փրկութեան առաջնորդն ըլլալու , անոր շանթն
 ու հարուածը եղած է :

Արօնամուլութիւնը , ուղեւոր նուիրել Աստուծոյ՝ ինչ որ Ան չի պահան-
 ջեր մեզմէ-մեր մարմինը- , հիմնեց վանքերը՝ ուր գացին կոյսեր և պա-
 տանիներ իրենց երիտասարդութեան ծաղիկը քստմնելի տանջանքներու և
 վերացեալ միտտիկականութեան մը խստութիւններու մէջ թռամեցնելու :
 Վանքերը մարդկային ընկերութեան ամենէն վնասակար հաստատութիւն-
 ներէն մին կրնան սեպուիլ , վասն զի անոնք անգործութեան կեդրոններ ,
 մոլութեանց բոյներ և կենդանիներ կ'ընող գերեզմաններ են : Անոնք
 ընտանիքները կ'ամայացնեն և ծնողքները կ'անդաւակեն . անոնք երիտա-
 սարդութիւնը կը չօրցնեն , իմացականութիւնը կը խամբեն , զգացումները
 կ'սպաննեն , սիրտը կը սառեցնեն , և մէյմէկ զիսկ կը դարձնեն այն առոյգ
 և իմացական էակները՝ որոնք մարդկային ընկերութեան զարգերը կըր-
 նային ըլլալ , և որոնք ա՛լ աշխարհի համար մեռած են այն վայրկենէն՝
 ուր ոտուրնին այս դժօխային սեմէն ներս կը դնեն : Վանարդեւութիւնն ու
 կուսութիւնը կրօնքի դէմ , Աստուծոյ դէմ երկու մեծ ոճիրներ են , վա-
 սրն զի Աստուած մարդն ընկերական ստեղծեց և ինքն կազմեց ու օրհ-
 նեց առաջին ընտանիքն ու ամուսնութեան սրբազան օրէնքը հաստատեց :

Գալով կրօնական ուխտից կամ միաբանութեանց , կ'ըսեմք թէ ասոնք
 ալ կրօնքին ամենէն վնասակար զեղծումներէն մին եղած են , սա երեք
 գլխաւոր պատճառներով : Նախ՝ վասն զի կուսակրօնութիւնը քաջալերած և
 դայն իրենց սկզբու ընք բռնած են : Երկրորդ՝ վասն զի կրօնքին պարզ և մեկին
 սկզբունքներն սյւլայլելով՝ վերացեալ միտտիկականութեան մը շահատակնե-
 րը եղած , և մտքերը փոխանակ ճշմարտութեան լուսով լուսաւորելու՝

այլանդակ մուրրութեանց խաւարովը մթապնած են : Երրորդ՝ վասն զի այս ուխտերուն դրեթէ ամենքն ալ, իրենց մէջ միեւնոյն ոգւով կապուած և կեդրոնական տեսչութեան մը ներքեւ միացած ըլլալով, իրենց ջանից նըստատակ ըրած են, չէ՛ թէ կրօնքին շահը, քանզի այդ պատրուակ մ'է միայն, այլ աշխարհի մէջ ամեն հնարքներով մասնաւոր ազդեցութիւն մը ձեռք բերել և անոր միջոցաւ հզօր իշխանութիւն բանեցնել կառավարութեանց վրայ, և աշխարհի բացարձակ տէրերն ըլլալ :

Այս ուխտերէն ամենէն վտանգաւորը, ամենէն սոսկալին և ամենէն ամպարիշտը, այն որ բոլոր միւսներն իր առջեւ խանարհեցուցած է, այն որ իրաւամբ մարդկային ընկերութեան ժանտախտը կոչուած է, այն է Իգնատիոս Լոյօլայի հիմնած «Յիսուսեան», անուն նշովեալ Բնկերութիւնը :

Այս Բնկերութիւնը, որ արտաքուստ կրօնից և Յկեղեցւոյ շահերը պաշտպանելու և երիտասարդութիւնը դաստիարակելու անձնուիրական պաշտօնն ունենալ կեղծած է, ներքուստ և իրօք կրօնից և մարդկութեան ամենէն անհաշտ և արիւնարբու թշնամին եղած է : Նա այն օձը եղած է զոր մարդկութիւնը իր ծոցին մէջ տաքցուցած է, և որ սակայն մարդկութիւնը թունաւորած և զայն սպաննելու նկրտած է : Այս Բնկերութեան ներքին և իրական նպատակը եղած է բացարձակ տիրապետութիւն, բանակալութիւն ո՛չ միայն անձերու, այլ և մտքերու, հոգիներու և կամաց վրայ, մէկ խօսքով, մարդկութիւնը անկենդան դիակ մը, և աշխարհն իրեն հրամաններուն կուրօրէն հնազանդող անշունչ մեքենայ մը դարձնել : Ո՛հ, կը քստմնիմ, և մազերս գլխուս վրայ կը դիզուին, երբ այս դժոխքէն զգայուեալ Բնկերութեան 333 տարուան պատմութիւնը թղթատելով՝ կը տեսնեմ թէ ի՛նչ ապիրատութիւններ, ի՛նչ սոսկալի սճիրներ և ի՛նչ քստմնելի ամբարշտութիւններ գործած, և ի՛նչ դժոխային մեքենայութիւններ ի գործ դրած է իւր նպատակին հասնելու համար :

Այս Բնկերութիւնը, որու բոլոր անդամները մեքենասալէս կը հնազանդին իրենց գլխաւորին հրամաններուն, որոնք ամեն երկիրներէ ըլլալով բնաւ հայրենիք մը չ'ունին, և ամեն ազգերէ ըլլալով, բնաւ մէկ ազգէ մը չ'են, և որոնք, այս ընկերութեան հետ անդամակցած վայրկեանէն, կը մերկանան ամեն ազգային դրօշմ, կը խզեն բոլոր այն կապերը որոնք զիրենք իրենց ազգին, հայրենեաց և ընտանեաց հետ կը կցորդեն, կ'ուրանան ամեն անհատական սկզբունք և կարծիք, և ա՛լ ուրիշ բան չ'են, բայց միայն այս ժէզուիթական մեծ ընտանիքին անհասնելը, և ա՛լ ամենքը մի և նոյն կամքը, մի և նոյն կարծիքը, մի և նոյն ուխտն ու սկզբունքն ունին, այս Բնկերութիւնը, կ'ըսեմ, որ մէկ մարդու մը հըրամանովը իւր մէկ մարդ մը կը շարժի և կը գործէ, ի քթթեւ ական,

տիեզերական ժանտախտի մը նման , իւր թեւերը տարածեց ընդհանուրը , և Նորոսայի ամեն կողմերը , Ափրիկէի , Չինաստանի , Հնդկաստանի , Ճարոնի , Ամերիկայի մէջ եւն իր ճիւղերն ունեցաւ : Աջօլայի թռուները , իբր խոնարհ և համեստ կրօնաւորներ , սպրդեցան , մտան ամեն տեղ ամեն քաղաքներու , գիւղերու և ընտանեաց մէջ , և իրենց ուխտին տիրապետական ու շահասիրական ոգին ծայրաձեղ բարեպաշտութեան և խիստ բարոյականութեան մը դիմակին տակ քօղարկելով սկսան կեղեքել թշուառ ժողովուրդները ։ Հարստութիւններ դիղելու և իրենց ազդեցութիւնը զօրացնելու համար սա երեք գլխաւոր միջոցները ձեռք առնելու փութացին . մանկանց դաստիարակութիւնը , բեմբասացութիւնը և խոստովանութիւնը :

Դաստիարակութեամբ մանկանց մտքերը հաշմելու , իմացականութիւնը խամրելու , զգացումները խեղդելու , հոգին նուաստացնելու և բարոյականը թունաւորելու , մէկ խօսքով , զանոնք կրաւորական հնազանդութեան ու կոյր մոլեռանդութեան մէջ մեծցնելու , և երիտասարդութիւնը իրենց ուղած կաղապարովը ձուլելու ջանացին : Մէյմը որ ընդհանուր պատանեկութեան կրթութիւնը իրենց ձեռքն յանձնուէր , ա՛լ մարդկութեան ապագայն իրենցն էր :

Բեմբասացութեամբ կարող եղան իշխել մտքերու և սրտերու վրայ , մոլեռանդութիւնը գրգռել , աւելորդապաշտութիւնները զօրացնել , նախապաշարմանց խաւարը թանձրացնել , ինքզինքնին ռամկին յարգելի ու պաշտելի , և ստապատիր խոստումներով ու երեւակայական երկիւղներով զայն իրենց շահուն նպատակու տրամադիր ու պարտաւոր ընել :

Խոստովանութիւնը , մանաւանդ կանանց խոստովանութիւնը , յարմարագոյն միջոց մ'էր ընտանեկան գաղտնիքները թափանցելու և իրենց ազդեցութիւնը մինչեւ տանց ներքին կառավարութեան մէջ տարածելու : Իրենց կամքերն ու տենչանքը , իբրեւ Աստուծոյ կամքը , մոլեռանդ կանանց գործադրել առին , որոց միջոցաւ անուղղակի կերպով իշխեցին տուներու մէջ , ընտանիքներու առաջնորդը եղան , և անոնց շահերը անխըղձաբար զոհեցին իրենց շահասիրական անյաղ ցանկութեանցը :

Վերջապէս սեւ մարդերու այս ուխտը , իր յառաջադրեալ նպատակին հասնելու և իր իշխանութեան դրօշը ամեն կողմ կանգնելու համար , անպատկառ եղաւ բոլոր այն իրաց համար՝ որոնք մարդկային սեռին յարգանաց վրայ իրաւունք ունին , անխիղձ ու անգութ բոլոր անոնց համար՝ որոնք գթութեան ու արգահատանաց արժանի են , և ապստամբ բոլոր այն բաներուն դէմ՝ որոց հնազանդութիւնը պարտք է նուիրական :

Բռնաբարեց ամեն անբռնաբարելի իրաւունք , ոտնակոխ ըրաւ ամեն նուիրական սպարտականութիւն , և անարգեց ամեն սրբազան օրէնք :

Անմեղութիւնը ճնշեց , արդարութիւնը հալածեց , ճշմարտութիւնը

նենդեց, կրօնքն անպատուեց ու եղծեց, առաքինութիւնը ծաղրեց, խրդ-
 ճի ազատութեան և ամեն ընկերային յառաջադիմութեան ոխերիմ թըշ-
 նամին եղաւ : Իւր նպատակին ծառայող ամեն միջոց օրինաւոր սեպե-
 լով, բայց միշտ արտաքուստ իբր հլու հպատակ, անկեղծ, մարդասէր,
 տէրութեան ու կրօնից շահերուն նախանձախնդիր, և մութին մէջ դադա-
 նի դարաններ լարելով, հարստահարեց որքն ու այրին, ընտանիքները
 կործանեց ու քայքայեց, ամեն քաղաքային կարգերն ու օրէնքները ա-
 ռաթուր կոխեց, ընկերութեանց մէջ հեռ և որոմն սերմանեց, ամեն իշ-
 խանութեան դէմ ապստամբեցաւ, ժողովուրդները խռովեց, գահեր տա-
 պալելու ջանքեր ըրաւ, և իշխանաց ու թագաւորաց արեան մէջ ան-
 գամ խր սկիզ ձեռուրները շաղախեց :

Հուսկ ուրեմն Աստուծոյ և մարդկութեան թշնամիներու այս Բնկերու-
 թիւնը բոլոր Եւրոպայի մէջ և ուրիշ տեղեր այնքան ատելի ու նողկալի
 եղաւ, որ տերութիւնները փութային իրենց երկիրները բժշկել այս ըն-
 կերային « քանկրէնայէն », և Լոյօլայի աշակերտները հետզհետէ վտա-
 րեցան՝ 1581 ին և 1601 ին Անգղիայէն, 1594 ին Ֆրանսայէն, իբր Էւ-
 դործակից Ժան Շաթէլի արքայատանութեան, 1762 ին կրկին Ֆրան-
 սայէն, 1606 ին Վենետիկէն՝ իբր ապստամբ ծերակուտի վճիռներուն,
 1618 ին Պոզէմիայէն՝ իբր խռովարար, հպատակներն իրենց իշխաննե-
 րուն դէմ յապստամբութիւն գրգռող, մտքերը Պապին անախտութեան
 և տիեզերական իշխանութեան վարդապետութեամբն ապականող եւյն
 անձինք, 1619 ին Մորաւիայէն՝ մի և նոյն պատճառներով, 1645 ին Մալ-
 թայէն, 1717 և 1817 թուականներուն Ռուսիայէն, 1755 ին Չինաս-
 տանէն, 1759 ին Բորթուկալէն, 1767 ին Սպանիայէն և Սիկիլիայէն, և
 վերջապէս 1775 ին Աղեմէս ԺՊ. Պապը մասնաւոր կոնդակով այս ուխ-
 տին բարձումը վճռեց :

Սակայն, ինչպէս ըսած է փիլիսոփայ մը, ժէզուիթները կատունե-
 րու կը նմանին, ուսկից ալ նետուելու որ ըլլան, միշտ չորս սաքի վրայ
 կ'իյնան, և անմիջապէս արագընթաց քալել կ'սկսին : Ռուսի այս անիծ-
 եալ Բնկերութիւնը, նման այն առասպելական եօթնազլուխ վիշապին՝ ու-
 րուն գլուխները՝ քանի որ կը կտրուէին՝ նորէն կը բուսնէին, դարձեալ
 ամեն տեղ երեւան ելնել, և առաջուան պէս իր ժանտաժուտ ազդեցու-
 թիւնը զգալի ընել ու ամեն տեղ անհնարին շարիք ու աւերած դործել
 սկսաւ :

Ահա՛ իննեւտասներորդ դարու քրիստոնեաց, և մասնաւորապէս Աա-
 թոլիկ Եկեղեցւոյ ախուր պատկերը. ահա՛ կրօնքն իր անհեթեթ զեղ-
 ծումներովը՝ իր անդի-քրիստոսեան պաշտօնեայներովը և իւր հրէշային
 ծնունդներովը : Ասո՛նք Եկեղեցին կորստեան անդունդին եղերքն հասու-
 ցած են, ասո՛նք բուն և ճշմարիտ քրիստոնէութիւնը սպառսպուռ ջնջել,

եւ անոր տեղ խարեւոյտափր ու աղիտարեր կրօնք մը հաստատելով մարդկութիւնը յաւիտեան թշուառացնել կ'ապառնան :

« Անիծեալը » սրտառուչ և բարձրաբարբառ բողոք մ'է այս ամեն վնասակար զեղծմանց և ընկերային շարեաց դէմ :

Հեղինակը, Արքայ * * * որ անշուշտ Հռոմի շանթերուն երկիւղէն իւր անունը ծածկելու ստիպուած է, սոյն գրքով կը նշաւակէ առնաբար մոլեռանդութիւնը, կեղծաւոր ու վառատենչ կղերականութեան երեսէն վար կ'առնու գիմակն ու կ'ապտակէ զայն, ժէզուիթութեան հրէշին նոր և ուժղին հարուած մը կուտայ, և վիպասանական երեսութի մը տակ, մարդկութեան այս երեք բռնաւորներուն երեսէն Յիկեղեցւոյ կրած ճշնշումներն ու վնասները ազգու և հարտար գրչով մը կը նկարէ : Նա' մատնանիչ կ'ընէ Յիկեղեցւոյ և կրօնից սխերիմ ու մահացու թշնամիները, և ցոյց կուտայ անոնց ստից տակ լարուած ծուղակները, նա Յիկեղեցւոյ փրկութեան ու վերանորոգութեան և քրիստոնէութեան փիլիսոփայութեան հետ ամուսնութեան մեծ խնդիրը կը յուզէ :

Տարակոյս չիկայ որ Արքայ * * * իւր այս ընտիր լղործովը, ինչպէս նաեւ իւր ուրիշ ճնաշխարհիկ գործերովը (*), որոնք Ներսիսայի մէջ մեծ յարգ և ընդունելութիւն գտած են, իննեւտասաներորդ գարու քաղաքակրթութեան մեծ ու նշանաւոր ծառայութիւն մը կը մատուցանէ :

Մենք ալ մեր սիրելի Ազգին՝ որու ամենէն աւելի Հռովմէադաւան ճիւղը վերայնկարեալ զեղծմանց տխուր հեռեւանաց ենթարկեալ է, օղտաւէտ ծառայութիւն մը մատուցանելու նպատակաւ կը փութամք նուիրել անոր այս ընտիր ու կարեւոր վէպին հայերէն թարգմանութիւնը, յուսալով որ անոր ընթերցասէր Հասարակութեան կողմէն գտնելիք ընդունելութիւնը կը քաջալերէ զմեզ սոյն Հեղինակին ուրիշ գործաց թարգմանութիւններն ալ հետզհետէ իւրյս ընծայելու :

1869 Յուլիս 18

Կ. Պօլիս

(*) Հեղինակին ուրիշ գործերն են « Լա Ռչլիթիէօղ » (կրօնուհին) « Լը ժէզուիթ », « Լը Մուան », (կրօնաւորը), « Լը Քիւռէ Տը Լա Գանրաներ », (զիւղին ժողովրդավեար) « Լէ Սիսիթիք » (խորհրդակալ ճիւղ)

ՅԱՌԱՋԱԲԱՆ ՀԵՂԻՆԱՍԿԻՆ

Այս գիրքը արուեստական երկ մ'է . ո՛չ վիճարանագաս գրուած մ'է , ո՛չ ալ պատմական . գրքին վերնագիրն արդէն ի՛նչ ըլլալն ըստ բաւականին կը յատնէ :

Ի՞նչպէս քահանայ մը վիպասանութիւն մը գրելու ձեռնարկած է :

Պատասխանը խիստ պարզ է :

Վիպասանութիւնը մեր ժամանակի մտքերուն ամենէն յարմար գըրական ձեւն է : Հեղինակը , իւր գաղափարաց արտայայտմանն համար , այս կաղապարն ընտրած է , ինչպէս Պղատոն տրամախօսութեան (տիալօկ) ինչպէս Բասքալ թղթակցութեան կաղապարը : Գամիւս եպիսկոպոսը վիպասանութիւններ գրեց , իւր դարուն Աղէքսանդր Տիւման եղաւ , բայց ասով իւր ժամանակակցաց աչաց առջեւ անստգտանելի կեանքի մը յարակից մեծարանքէն ու յարգանքէն բան մը չը կորսնցուց : Ֆէնէլոն հրաշազան վէպ մը թողած է մեզ : Ո՞վ Կալիպսոյի և նորա կղզւոյն յաւերժահարսանց նկատմամբ քաղցր յիշատակ մը չ'է պահած իւր մտաց մէջ : Քիչ շատ արժէք մ'ունեցող վիպասանութիւն մը հրատարակուեցաւ , որուն հեղինակը Հռովմէական Եկեղեցւոյ Կարդինալ մ'է , Գեր . Ռայզմէն :

« Անիծեալը » գրող քահանայն ալ Կարդինալ Ռայզմէնի , Ֆէնէլոնի , Գամիւսի պէս ըրած է :

Իւր նիւթը եռանդուն է և բոցավառ . ոչ ոք կը գրէ չի կարգացուելու համար : Բայց ինքը սա համոզումը ունի թէ իւր գրչէն չ'է սպրդած միակ տող մը՝ որ ամեն յարգանաց արժանի իրաց համար խորին յարգանք մը չի կրէ , ինչպէս նաեւ անողոքելի եղած է , նոյն իսկ կրօնքին շահուն համար , բոլոր այն ամօթալի հնարքներուն դէմ որոնք զայն կը նուաստացնեն և կ'արատաւորեն : Արո՞ւն է յանցանքը : Անտարակոյս յանցաւորաց , և չէ թէ զանոնք խայտառակող արխասիրտ մարդուն :

Անշուշտ այս գիրքը կրօնամօլ և մոլեռանդ մասին պժգալի և նողկալի պիտի ըլլայ . բայց անկողմնակալ և բարեկրօն մարդիկ պիտի խօստովանին համարձակօրէն թէ այս գիրքը պաշտպանութիւն մ'է մանաւանդ քան թէ վնասակար յարձակում մը սրբազան դատի մը զոր այնքան ուրիշ գրիչներ նուաստացուցած ու անպատուած են :

UNIVERSITY OF TORONTO

The first part of the report deals with the general situation of the country and the progress of the war. It is followed by a detailed account of the operations of the army and the navy. The report concludes with a summary of the results of the campaign and a statement of the resources available for the future.

ԱՆԻՇԵԱԼՆ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ՆՈՐԱՏԻ ՔԱՀԱՆԱՅՆ

Ա.

ՀԱՒԱՏԱՔՆՆՈՒԹԵԱՆ ՄԱՏՈՒՌ

ՎԵՇՏԱՍԱՆԵՐՈՐԴ դարուն մէջ խորհրդարանի անդամի մը ձեռքով Թ. Ի մէջ, Թօրի փողոցը, կառուցուած հինաւուրց մեծ տնէ մը երեք կանայք դուրս կ'երնէին: Առաւօտ էր. կապիտուլի մեծ ժամահարը ութը կը զարնէր. բայց դաւառներու մէջ մարդիկ սովորութիւն ունին օրուան հետ ելնելու: Երեքն ալ բարեպաշտուհի կանանց համար վերջին ծայր կարեւորութիւն մ'ունեցող ժամադրութեան մը կ'երթային:

Տիկին Տըլա-Պլավիէր, անոնցմէ ամենէն տարիքօտը, իւր եղբօր աղջկան դեռահասակ Նուիզ Փիւլիօյի թեւէն բռնած էր: Սենեկապանուհի մը իր ետեւէն կը քալէր. այն էր Մատլէթ, պառաւ և սրբակեաց աղջիկ մը որն որ իւր յիսուն և հինգ տարեկան հասակին մէջ, մաշած մարմնոյ մը տակ տակաւին կը պահէր Պիրենեան ցեղին բոլոր աշխոյժը:

Թօրի փողոցէն դէպ ի կապիտուլի հրապարակը կ'երթային: Անոնցմէ իւրաքանչիւրը, իր թեթեւ մեղաց քննութեամբ դրաւեալ, լռիկ մնջիկ կը քալէր: Յեր տիկինը ունեցեր էր դարձեալ իր սովորական նեղարտութիւններն ու ըզբօսանքները, ուրիշի նկատմամբ մէկ քանի չարամիտ խօսքեր

բերնէս սպրդած էին, և տեղի տուած էր որկրամուտութեան դրդման մը՝ զոր զգայասիրութեան անուան տակ կը քողարկէր ազնուօրէն: Երբ կին մը մատաղահասակ եղբօր աղջկան մը հետ առանձնակի կեանք մը կը վարէ, երբ աշխարհէս մի միայն երկու երեք ծերունիներ կը տեսնէ՝ որ կուգան ամեն երեկոյ անոր հետ թղթի խաղ մը դարձնելու՝ խիստ մեծ մեղաւոր մը չի կրնար սեպուիլ: Այսու ամենայնիւ տիկին Տըլա-Պլավիէր սաստկապէս յուզուած կ'երեւէր: Յամբ և գրեթէ դողդոջուն քայլով մը կը քալէր: Աուիզ լսեց իսկ անոր ցած ձայնով սա խօսքերը մրմնջելը. Աստուած իմ, ի՞նչ պիտի ընեմ:

Երիտասարդուհին իւր քսաներորդ դարնան լիուլի պայծառութեանը մէջ կը գտնուէր: Անիկայ այն ազնուական տիպարներէն մին էր՝ որոնք երբեմն հարաւային կանանց վրայ կը տեսնուին, եւ՛ որոնք կատարելութեան հաւասար աստիճանի մը մէջ կը միացնեն և դիմաց գծադրութեան կանոնաւորութիւնը, իբր թէ ճարտար նկարչի մը ձեռքէն ելած ըլլար, եւ այն սխրալի շնորհքը՝ որուն համար իրաւամբ ըսուած է թէ դեղեցկութենէն աւելի չքնաղաղեղ է: Բարձրահասակ իւր հօրաքրոջ նման՝ որն որ ինքն իսկ երբեմն աշխարհի մէջ խիստ նշանաւոր եղած էր, կարծես թէ կը տիրէր անոր վրայ իւր գլխովը՝ զոր վեր կը բարձրացնէր բնազդմամբ և առանց դռնօղութեան ամենափոքր դիտումի մը, մինչդեռ խեղճ պառաւը, խղճմտանաց խայթի մը ներքեւ ճրնջրուածի պէս, ուժով մը Աուիզի կը կրթնէր չիյնալու համար, դեռ չը հասած այն բարի հօր ոտից առջեւ, որ այս անգամ ահարկու հայր մը կ'երեւէր իրեն: Աուիզ ալ, իւր խղճմտանաց մէջ մանրախոյզն որոնելով, շատ մը կանային փոքր մեղքեր կը գտնէր: Գորովանօք կը սիրէր իւր հօրաքոյրը, սակայն երբեմն ծեր կնոջ նեղսրտութիւններն երիտասարդուհին ալ նեղասրտած էին: Իւր հայելին, թէպէտ ինքը սնափառութիւն չունէր, ըսած էր իրեն թէ կարի չքնաղաղեղ էր, ինչպէս որ ութ կամ տասն տարիներէ ի վեր իրեն կը յեղյեղէր,

և Աւայի դուստրը այս անգամ հայելին մտիկ ըրած էր :
Փաղրած էր նաև, թէև անշուշտ դոյզն ինչ, ծերունի Թուռնի-
շներ, իւր հօրաքրոջ մէկ բարեկամը, որ Թ. ի մէջ ժեզուիթաց
գաղտնի գործակատարներէն մին և անոնց կատարելապէս
անձնուէր ողի մը կը համարուէր : Սիրուն օրիորդը, այն տար-
տամ ըղձանաց ժամերուն մէջ՝ յորս սիրտը կենօք յորդելով
կ'եղնէ կը բարձրանայ դէպ ի երեւակայեալ երանութիւն մը,
իւր մտածութիւնը կեցուցած էր վախաստեայ պատկերի մը
վրայ՝ որն որ անշուշտ կիրակի օրը հանդարտօրէն Թօրի եկե-
ղեցին գացած ատեն զինքը գիտող առիւծի մը յիշատակն
էր :

Ահա այս էր ամենը : Ա՛չ չարախօսութիւն ըրած էր, ո՛չ
որկրամոլութիւն, այս երկու մոլութիւններն որոնք անծա-
նօթ են մատաղ և դեղեցիկ բնութիւններու : Ինքզինքն յան-
դիմանելու բան մը չ'ունէր Մատլէթի մասին ալ, զոր թէ և
ապուշ մը կը համարէր, բայց իւր հօրաքրոջը հաւասար մե-
ծարանօք կը յարդէր : Արեմն խոստովանահայրը զինքը կը շ-
տամբելու տեղի չ'պիտի ունենար : Ա՛հ, դուք, կիներ, որ ալ
ձեր քսանամեայ հասակին մէջ չ'էք, դուք գիտէք թէ ո՛րչափ
հպարտութեամբ կ'երթայ կին մը գաղտնադատ դատաւորին
առջեւ այսչափ շնչին և թեթեւ բեռով մը :

Մատլէթի գալով, անիկայ մեղքին ինչ ըլլալն ալ չէր գի-
տէր : Ամեն բանի անդէտ ու անտեղեակ, օր մը իւր լեռնե-
րէն ինկած, և մինչեւ այն կէտը կենդանի էակներէն լոկ Աւալ-
գապրերի դալարադեղ մարդաց վրայ արածելու տարած ոչ-
խարները ճանչցած ըլլալով, միայն մէկ մտածում մ' ունէր .
ամեն բանի մէջ տիկնոջ կամքը կատարել : Աւ եթէ տիկին
Տըլա-Պլավիէրի և Աուիզի հոգեւոր առաջնորդը եղող Հայ-
րը իւր հարցումներովը անոր բերնէն եկեղեցւոյ և աղօթից
մէջ իր անուշադրութեանցը նկատմամբ կարող ըլլար մէկ քա-
նի այո՛ներ կորզել, մարդկային ուրիշ տկարութեանց մասին
լոկ յուսահատեցուցիչ ո՛չերու պէտք էր ակնկալել : Աերա-
պատուելի հայրը իւր որոշումն ըրած էր :

Մատչեթի խոստովանութիւնը հաստատաւորօրէն դրոշմուած էր (Սթէռօթիբէ) . անոր համար իւր խոստովանութեան մէջ փոքր փոփոխութիւն մը մտցնելը իւր արքայութիւնը կորսընցընել ըսել էր : Այնպիսի միօրինակ կեանքի մ'առջեւ իւրաքանչիւր շարաթուան խոստովանութիւնն ալ միօրինակ պէտք էր ըլլալ : Ախրին է դուշակել որ Մատչեթ , թէ և ծերացած , իւր մտայ մէջ ամենափոքր խորամանկութիւն մը չունէր , բայց իւր բոլոր լսածները յիշելու եղական ձիրքն ունէր : Ի՞նչ էր ասոր պատճառը . արդեօք այն առանձնական կեանքին մէջ՝ ուր համբուծեան դատապարտուած էր , իւր բանականութեան տեղ յիշողութիւնը սրցնելն էր , եթէ ո՛չ անբան անասնոյն բնագոյն մը՝ որ շատ կը նկատէ և ամենաչընչին պատկերներն իր մտայ մէջ կը պահէ , վասն զի չի մտածեր : — Չեմք գիտեր , բայց կրնար մէկը զՄատչեթ հարցաքրննել տիկին Տը լա-Վըսթի տան մէջ պատահած ամեն իւրայ նկատմամբ : Եւ որովհետեւ իր խոստովանահայրը իրեն համար աստուած մ'էր յերկրի , երբէք մտքէն անդամ չէր անցնէր որ մերթ ընդ մերթ վերապատուելի հօր կողմանէ խնդրուած՝ այս սպասուհիէ մը առ խոստովանահայրն բարեպաշտական շարախօսութեանց մէջ Աստուծոյ ամենամեծ փառաց միակ փափաքէն զատ գիտում մը , շարժառիթ մ'ըլլար :

Աւրեմն երեքն ալ հանդարտաքայլ կը ճանապարհորդէին Փողոցին դէպ ի մէջ տեղը , ձախ կողմը , կը բարձրանայ մեծակառոյց շէնք մը ողորկ և անպաճոյճ ճակատով , ինչպէս որ արդի ճարտարապետութիւնը կը շինէ գործարաններու և զօրանոցներու համար : Առիդ ակնապիշ այս կողմը գիտեց ընդ երկար , և իւր վճիտ այլ եռանդնավառ աչկունքը դողցես այն բարձր պատերուն ետեւ կը փնտռէին սիրելի էակ մը՝ որու գէթ գէմքը նշմարելու երջանկութիւնն ունեցեր էր : Տակաւին այս հասակին մէջ աչքերը սիրտը կը մատնեն :

Շուտով Ասպիտոյի հրապարակը ելան : Նրիւ կիներն իւրենց մտքերն զբօսցնելու միջոց մը դտան տեսնելով պտղոյ վաճառանոցին Ասպիտոյի դեղեցկաշէն ճակտին առջեւ Հա-

բաւոյ արիւնոյն հոռուէտ արդասիքներն շնորհալի կերպով ի հանդէս ածելն , այն քաղցր արիւնոյն՝ որ չի մոռցուիր երբէք , երբ դո՛նէ կենացդ մի քանի տարիներուն մէջ իւր զօրութեանէն մաս մը խառնած է արեանդ մէջ :


Յետոյ երկայն , բաւական լայն բայց ծամածուռ փողոց մը մտան որն որ Հարաւոյ վաղեմի մայրաքաղաքին ամենէն մեծ շնչերակներէն մին է , ու քիչ մը վերջը գէպ ի աջ դառնալով Հաւատաքննութեան փողոցը մտան : Յիսուսեան ընկերութեան հարց բնակած Հաւատաքննութեան տունին անուամբն այսպէս կը կոչուի այս փողոցը :

Տանը ճակատը փոքր և ցած է , բայց անոր շինութիւնը անշուշտ մինչեւ այս արիւնարբու տանին Թ . ի մէջ հաստատութեան թուականը կը հասնի : Ներս մտնալու դրան վրայ դեռ կը տեսնուի գօթական դժուարլինթեռնի արձանագրութիւն մը որ շինութեան թուականը յայտնելու կը ծառայէ :

Գրեթէ դիմացը , փողոցին մէջ , պատին վրայ խորշ մը կայ որուն մէջ դրուած է Աստուածամօր սեւա պատկեր մը , գլուխը ոսկեզօծ պղնձէ պսակով մը զարդարուած , մետաքսեայ պատմուճան հաղած և բազկաց մէջ կրելով Յիսուս մանուկը նոյնպէս պսակազարդ և շքեղազգեստ : Գիշեր և ցերեկ կանթեղ մը կը վառի այս հինաւուրց պատկերին առջեւ՝ որ Թ . ի բնակչաց համար մեծ և խորին յարգանաց առարկայ մ'է : Գողցես միջին դարու ոգին գորովանաց և գթութեան պատկերն ուզած է զետեղել այն ահարկու տան առջեւ՝ ուսկից տանջանաց և մահու սոսկալի վճիռներ կ'արձակուէին :

Տիկին Տը լա-Վլավիէր խաչակնքեց երեսը , պատկերին նայեցաւ , մահուան դատապարտուած թշուառի մը նման՝ որ , գէպ ի խարոյկն առաջնորդուած ատեն , աղաչալից կերպարանքով մը իւր ազատութիւնը կը խնդրէ : Առիդ ուրիշ բան չիտեսաւ , բայց եթէ նոյն առաւօտը պատկերը պաշտպանող երկաթեայ վանդակին ետին դրուած ծաղկի խոշոր փունջե-

579-313



ըր, և Մատլէթ թթին տակէն Ողջոյն քեզ Մարիամ մը մըր-
մըռայ :

Տիկին Տը լա-Պլալիէր, Լուիզ և Մատլէթ նրբուղիէ մը
վանքին ներսը մտան, որուն ծայրը կը գտնուի մատուան դու-
ռը : Փէղուիթներու այս վտրրիկ եկեղեցին ոչ շէնքին մեծու-
թեան, և ոչ ճարտարապետութեան կողմանէ նշանաւոր բան
մը չունի. մի միայն միջավայրին վարի կողմերը մթին խոր-
շերու շարք մը կայ, որոց իւրաքանչիւրը ընդարձակ խոստո-
վանարան մը կը պարունակէ : Այս միաբանութեան ողին
սոյն արտաքին յօրինուածին մէջ յայտ յանդիման կը տեսնուի :
Հոս ամեն բան գաղտնիք մ' է. բնաւ վերնագիր մը իւրա-
քանչիւր խոստովանարանի մէջ բազմող անձին անունը չի յայտ-
ներ, ինչպէս սովորութիւն է ժողովրդապետական թեմերու
մէջ : Պարզ թուանշան մը միայն կը տեսնուի այս կաղնիաշէն
խաւարային խորշերուն վերեւը՝ որոնք այս ճարտար կրօնա-
ւորաց իդական աշխարհին հետ հաղորդակցութեան զօրաւոր
միջոցը եղած են, որովհետեւ այրերն իրենց խուցերուն մէջ
կ'ընդունին :

Խոստովանողներն, նախապէս օրհնեալ ջուր առնելով և
ջերմեռանդաբար երեսնին խաչակնքելով, դէպ ի թուանը-
շանը ուղղուեցան, որն որ տաճարին վարի կողման ծայրը
կը գտնուի, և այս մեկուսարանին խոր մթութեան մէջ ան-
հետացան : Մէկէն ծերունի բայց տակաւին առոյգ քահանայ
մը, չոր ու դունաա գէմքով, սեղանէն իջաւ, կողմնակի
դուռնէ մը սրբարանէն դուրս ելաւ, և մէկ քանի վայրկեան
վերջը, երկայն թեզանիներով վտաւակ մը հաղած, եկաւ իւր
խոստովանարանին մէջ փակուելու : Մի քանի հաւատացեալ-
ներ գասին առջեւօքը կ'աղօթէին : Երկու ուրիշ հայրեր, ի-
րենց խոստովանարաններուն մէջ փակուած, խոստովանուհեաց
մեղքերը մտիկ կ'ընէին : Հոն այնպիսի լռութիւն մը կը տի-
րէր՝ զոր դրսէն ոչ ինչ կուդար վրդովել, և զոր հաղիւ մերթ
ընդ մերթ կը խռովէր խոստովանահարց առջեւ ծնրադրելու
գացող կանանց մետաքսեայ շրջագդետից հանած շրջիւնը :

Մերունի կինը, որ զգալի կերպով յուզուած էր և որուն այտերը դունաւորած էին, իբր թէ ծանր յանցանքի մը դժուարին խոստովանութիւնն ընելու կ'երթար, ամենէն առաջ ներս մտաւ մութ գոյն վարագոյր մը վեր առնելով որն որ իր վրայ գոցուեցաւ : Այլ երկար ատեն այն խորհրդաւոր մեկուսարանին բոլորակքը ուրիշ բան չի լսուեցաւ, բայց միայն երկու ձայներու անըմբռնելի մնչիւնը, որոնք՝ կատարելապէս վարժուած այս կրթութեանը, յամբ նոյնաձայնութեամբ մը իրարու կը պատասխանէին :

Խոստովանահայրը սովորական Վատիներէն օրհնութիւնը արտասանելէն վերջը՝ որու ներքեւ բարեմիտ պառաւը կրցածին չափ կը խոնարհէր, իբր թէ այս խոնարհական դործին մէջ քիչ մ'արիութիւն ստանալու համար, սկսաւ բառական հանդարտ ձայնով մը իւր ծանուցեալ փոքր յանցանքները խոստովանելու : Յետոյ կուրծքին զարնելով յաւելցուց .

— Հայր իմ, ասոնցմէ ուրիշ բան մը չ'եմ յիշեր :

Եւ իր առջեւ դրուած փոքր սեղանի մը կրթընելով, կ'ըստպասէր :

— Աաւ ուրեմն, սիրելի աղջիկս, ութ օր յառաջ ձեզի ըսածիս վրայ լաւ մը մտածեցի՞ք :

— Այո՛, հայր իմ :

— Ինչ որոշում ըրիք :

— Ինչ որ կ'ուզէք, հայր իմ. ձեզի բացարձակ հնազանդութիւն մը խոստացած եմ :

— Անտարակոյս, աղջիկս. բայց դիտէք որ հողիներու տեսչութեան մէջ, նա մանաւանդ երբ խնդիրն այսպիսի ծանրը որոշումներու վրայ ըլլայ, մեր պաշտօնը պարտք կը դնէ մեր վրայ հնազանդութեան սրբազան խոստումներուն չ'զիմել՝ հողին իւր զոհողութեան բովանդակ մեծանձնութեանը հաւատարիմ թողելու համար : Եւ հոս անկեղծ օրէն խօսելով ձեր ընելիք զոհողութիւնը այնքան խիտա չ'է :

Ձեզի, աղջիկս, որ այնքան յաճախ կը խորհիք մեր այս ազեւից ձորէն անցից արագութեանը և երջանկագոյն մահուան

մօտալուտ հաւանականութեանը վրայ՝ որ զձեզ այս աղցաւոր կենաց ձանձրոյթներէն և անկատարութիւններէն պիտի խլէ, ինծի դժուարին չէ ըսել ձեզ թէ պէտք է որ, ուզէք կամ չ'ուզէք, շուտով հրաժարիք այդ հարստութենէն՝ որուն, գիտեմ, այնքան սրտով յարեալ չ'էք :

Աարեւի եղածին չափ շուտով սրբազան նպատակի մը ծառայեցուցէք զայն : Այս աշխարհէս մեկնելնէդ առաջ ձեր առատաձեռնութեան և հաւատոց անշնչելի յիշատակ մը թողուցէք : Եկեղեցին զձեզ պիտի օրհնէ, աղջիկս, և մեր սուրբ ուխտը իւր ամենաապշուխ և ամենասիրելի բարերարութեան համար մշտամիմունջ բարեմաղթութիւններ պիտի ուղղէ յաւերժ Ամենակալին Աթոռը :

Ժէզուիթը կանկ առաւ իբր թէ իւր հոգեւոր դասեր բերնէն խօսքի մ'սպասելու համար : Անիկայ լուռ կեցաւ . բայց ընդ երկար հեղձուած հառաչանք մը իւր հոգւոյն տաղնապը երեւան հանեց : Ժէզուիթը նորէն շարունակեց :

— Գուք տակաւին մարմնոյ և արեան ձայնին ուղնդ իր էք, աղջիկս, և հին մարդը ձեր սրտին մէջ իր մեղապարտ ցանկութիւնները նորէն կը գտնէ : Չար ողւոյ վտանգալից թելադրութիւններէն զգուշացէք :

— Հայր իմ, կ'ապահովցնեմ զձեզ որ ես ինծի համար բնաւ չ'եմ ցաւիր, և վկայ է Աստուած որ այս ժամուս ամեն բանէ յօժարակամ կը հրաժարելի, եթէ խղճի խայթ մը, խորին անհանդստութիւն մը . . . : Առիւ և իւր եղբայրը կրկնակի կերպով իմ ժառանգորդներս են, որովհետեւ նոյն իսկ ես թիւլիօ մը և իրենց հօրաքոյրն եմ : Միթէ, խղճի մտօք գործելով, կրնամ այս տղաքն իմ ու իրենց հօրեղբօրը ստացուածքէն անժառանգել :

— Այո՛, թիւլիօ եղբօր ստացուածքին համար չ'էք ըսեր : Հարստութիւն մը որ, ինչպէս ըսած եմ ձեզ և ստոյգ աղբիւրներէ իմացած եմ, յիսուն տարուան միջոցի մէջ վաշխառութեամբ և ասպօրինաւոր գաղտնագողի շահերով ստացուած է :

— Սակայն և այնպէս պարկեշտ մարդ մը ճանչցուած էր :

— Ի՞նչ օգուտ, երբ իրեն անիրաւաբար դիզած ինչքերըն հիմայ զինքը քաւարանի մէջ բոցերու ճարակ կ'ընեն : Արկին կ'ըսեմ ձեզի . հանդերձեալ կենաց մէջ անոր հոգին խաղաղելու և ձերը փրկելու համար միայն այս միջոցն ունիք : Գէշ կերպով ստացուած ընչից համար անհրաժեշտ պարտականութիւն մ'է զանոնք ետ դարձնելը : Սրդ Աստուածաբանութիւնը կը սովորեցնէ մեզի թէ երբ անկարելի է դրոսնել այն անձինքը՝ զորոնք վաշխաւութեամբ փաստուց ենթակայ ըրած ենք, բարեպաշտական նուիրատուութիւնները նոյն նպատակն ի դործ կը դնեն : Գուք պէտք է շնորհակալ ըլլաք այս միջոցն ունենալնուդ համար :

— Ա՛հ, հասլա այն խեղճ տղաքը :

— Այո՛, այն խեղճ տղա՛քը գեղեցիկ կարեկցութիւն . տեսէ՛ք, ի՛նչպէս երկրաբարչ հոգիներու նման կը խօսիք : Յիրաւի աղջիկս, եթէ զձեզ չի ճանչէի, պիտի կարծէի թէ հաւատք չունիք : Ասկէ աւելի Աստուծոյ վրայ յիմարական անվստահութիւն չի կրնար ըլլալ : Ո՛վ ըսաւ ձեզի թէ սիրելի Առնիզը կրօնական կոչման մը կանչուած չ'է : Արնաք հասկրնալ թէ իրեն խոստովանահայրն ըլլալով կան բաներ զորս չ'եմ կրնար ձեզի ըսել : Իսկ ժիւլիօյի՝ ձեր եղբօրորդւոյն դաշով, այն ալ մէկ քանի օրէն քահանայ պիտի ըլլայ : Անխոհեմը, եթէ մեր դպրոցէն ելած ատեն մեր հայրերուն խօսքին ականջ դրած ըլլար, հիմայ մեզի հետ պիտի ըլլար : Օր մը պիտի գղջայ այս ըրածին համար . տաղանդ ունի . ի՞նչ գեղեցիկ ապագայ մը պահուած էր իրեն : Բայց վերջապէս աշխարհական կղերին մէջ պաշտօն մը պիտի ունենայ, և բնաւ կարօտ չ'պիտի ըլլայ կէս միլիոն հարստութեան մը՝ որ զայն փոքր անբարտաւան մը և յոռի քահանայ մ'ընելու պիտի ծառայէ : Հաւատացէ՛ք ինձի, աղջիկս, Աստուած ձենէ աղէկ դիտէ թէ ի՛նչ բան պիտի ըլլայ ձեր եղբօր գաւակաց փըրկութիւնը :

— Ա. երջապէս, հայր իմ . . . :

— Այո՛, աղջիկս, պէտք է որ այդ պէս թերահաւատութեամբ մտածէք. ասանք ունայն մորմաքներ և զուտ երեւակայութիւններ են. միթէ կ'ուզէք Աստուծոյ աչքէն իյնալ, ձեր սիրելի ամուսնոյն կորստեան պատճառն ըլլալ և ընդդէմանալ շնորհաց՝ որ ձենէ զոհողութեան մեծութիւնը կը խնդրեն :

— Լաւ ուրեմն, հայր իմ, ա՛լ չ'եմ ընդդիմանար :

— Արդէն այս պատասխանը կ'սպասէի, աղջիկս, ձեր դուրսլայոյզ բարեպաշտութենէն : Աստուած կը սիրէ այն հողիները՝ որոնք զուարթութեամբ կուտան : Եթէ թոյլտուութիւն կ'ընէք, պարոն Թուռնիշոնին կտակի օրինակ մը կ'յանձնեմ, և դուք ալ կ'օրինակէք զայն դիւրընթեռնի եղանակաւ մը : Որովհետեւ աշխարհի մէջ չարամիտ անձինք կը դառնուին, և կրնայ ըլլալ որ կտակին դէմ յարձակումներ ըլլան՝ մեր թըշնամեաց թելադրութիւններէն դրդուեալ, ուստի նոյն իսկ Պ. Թուռնիշոնին վրայ կ'ընէք ձեր բոլոր կտակադրութիւնը : Ասկէ զատ ծրարին մէջ դիտմամբ դրած եմ որ ինքը ցկեանս յարմար թոշակ մը պիտի վճարէ Լուիզի և Աբբային : Արտեսնէք, այնպէս չ'է՞, որ մեր այս սիրելի զաւակաց նկատմամբ ունեցած դիտումներն լիովին պիտի կատարուին : Մեր ընկերութիւնը միշտ պիտի պաշտպանէ զիրենք իյիշատակ ձեր : Եւ մեր ընկերութիւնը բնաւ իր բարեկամաց դէմ ապերախտ դառնուած չ'է :

— Կ'ուզեմ որ այնպէս ըլլայ, հայր իմ :

— Ուրեմն ա՛լ լմնցաւ, ձեր խօսքին վրայ վստահ եմ :

Տէր ընդ քեզ, սիրելի դուստրդ իմ, ընդունէ իմ օրհնութիւնս և երթի խաղաղութիւն :

Վարագոյրը նորէն վեր ելաւ :

Խեղճ կիներ, աւելի մեռած քան թէ [կենդանի], յամբարաքայլ դէպ ի իւր աթոռը եկաւ, որուն վրայ ինկաւ գրեթէ ողեսպառ և դէմքը ծածկելով : Լուիզ թիւլիօ իւր հօրաքեռտեղը բռնեց :

ՏԱՐԱԿՈՒՍԵԼԻ ԿՈՉՈՒՄ ՄԸ

Լուիզիւր պղտիկ մեղքերը խոստովանեցաւ տղոց այն շնորհալի պարզամտութեամբը, զորոնք ներում խնդրելու կը ստիպեն, և որոնք ցած ձայնով մը կը ըսեն « սակայն յանցանք չ'ունիմ ես » : Իւր անմեղութեան զգացումը պահող երիտասարդութեան չափ նուազ խոնարհ բան մը չ'կայ : Անիկայ ամեն բանի, նոյն իսկ առաքինութեան համար, հպարտութիւն մ'ունի : Այն ատենէն զեղջը դժուարին է նախընթաց օրուան յանցանքները կը խոստովանի առ համազմամբ որ, հետեւեալ օրը, բնութիւնը պիտի յաղթանակէ և աւելի չարաչար կերպով պիտի մեղանչէ : Այս բանը թէեւ կերպով մը կը հակառակի խոստովանահարց կամքին, բայց մարդկային սիրտը անհաւատալի ընդդիմութիւններ ունի, և հարկ է արձակել այն պաշտելի և դուռը էակները՝ որոնք « հայր իմ » կը ըսեն քեզի այնպիսի ձայնով մը՝ որ վաղրերն անդամ կարող է ի դորով ածել :

Լուիզ, վերջին աստիճան խղճահարութեամբ, իւր շարթուան յանցանքները խոստովանեցաւ : Տեսանք արդէն որ իւր բոլոր յանցանքները խղճմտանայ մայր-տումարին մէջ վարդադոյն թանաքաւ արձանագրուելու արժանի էին :

Սակայն վերասպառուելի հայրը երկիցս իւր յօժքերը պըռքստեր էր :

— Աթէ քու տեղդ ուրիշ մ'ըլլար, սիրեցեալ զաւակս, ըսաւ իւր ամենադաշն ձայնիւր, քու խոստովանածներդ դոյզն բան մը պիտի համարէի : Անոնք Աստուծոյ առջեւ ուրիշ բաներ չեն, բայց եթէ յողորմումներ՝ որոնց տեղի կուտան ամենէն զեղեցիկ հողիները : Սակայն ասի ինձի շատ անդամ մատանջութիւն կը պատճառէ : Այս առաջին անգամը չէ որ կը նկատեմ հայերույդ հետ եղած խօսակցութիւններն և այն-

պիսի յիշատակներէ հաճութիւն զգալի՝ որոնք կրնան զքեզ աւելի հեռուները տանիլ : Ահ, զաւակս, ե՞րբ սիրտդ բոլորովին պիտի բարձրացնես այն կորստական տարիանքներէն վեր՝ որոնք քեզի արժանի չեն : Ե՞րբ իմ սիրուն ազանեակս իւր թեւերը պիտի բանայ յաւիտենական հրաժեշտ մը տալու այս պիղծ աշխարհիս, որուն մէջ չեմ տեսներ կէտ մը՝ որ արժանի ըլլայ զայն կրելու : Տեսնենք, սիրելի դուստրդ իմ, ե՞րբ պիտի գայ այն երջանիկ վայրկեանը՝ ուր պիտի ըսես քու հօրդ . Ա՛լ չեմ վարանիր ինքզինքս բոլորովին Աստուծոյ նուիրելու :

— Խորհելու համար քիչ մը ժամանակ տուիք ինձ, հայր :

— Իրաւ է, զաւակս . ուստի ուրիշ բանի համար չեն խօսքերս, բայց եթէ յիշեցնելու համար քեզի նոյն իսկ այդ խորհրդածութեանցդ կարեւորութիւնը՝ որոնք քու կոչումդ անդըրդուելի հիմանց վրայ պիտի հաստատեն : Բա՛ց ինձ քու բոլոր հոգիդ, սիրեցեալ դուստրդ իմ : Թո՛ղ որ քու ամենէն ներքին մտածումներդ թափանցեմ : Յանուն Աստուծոյ քու ապագայիդ վճիռը տալու պարտաւորեալ ըլլալով, իմ որոշումս ընելու համար՝ պէտք է որ քու սրտիդ արամադութիւններն ու միտումներն ուշի ուշով քննեմ ու զննեմ : Աւստի հաղորդէ՛ ինձ ինչ որ քու սրտիդ մէջ անցաւ բոլոր այս շաբթուան միջոցին մէջ :

— Աստուած իմ, միշտ մի և նոյն դաղափարները, հայր իմ, մի և նոյն անստուգութիւններն : Երբեմն անանկ վայրկեաններ կը պատահին որ ինձի այնպէս կը թուի թէ Աստուած զիս իրեն կը կոչէ, և կը կարծեմ տեսնել երջանկութիւնը Նուիրական-Սրտի այն բարի տիկնանց մէջէն որոնց մէջ սահած են մանկութեանս օրերը : Երբեմն մտայ այնպիսի յափրշտակութիւններ կ'զգամ, յորս աշխարհէս մեկուսացեալ կեանքը կանխագիւտ արքայութիւն մը կ'երեւի ինձ :

— Աղջիկս, ահաւասիկ ատոնք են այն գեղեցիկ վայրկեանները՝ յորս երկնաւոր փեսայն իւր սրբատուն հարսանց սրտին հետ կը խօսի :

— Այո՛ , հայր իմ . բայց , չեմ գիտեր ի՛նչպէս , մէկէն այս քաղցր տպաւորութեանց կը յաջորդեն տարբեր տպաւորութիւններ : Երական կեանքը կը ներկայանայ աչացս . աշխարհիս վրայօք ունեցած գոյզն ծանօթութիւնս , զգացածներս , այն գրադիտական միակ հատակոտորներն՝ զորս հօրաքոյրս ներած է ինձ կարդալ ճաշակս յղկելու համար , ըսե՛մ ամենը , նոր աշխարհ մը՝ զոր կը գտնեմ յիս բաղմագիմի անբացատրելի ըզձանօք՝ զոր ո՛չ ես ինքնս կրնամ լաւ մը հասկնալ , ո՛չ ալ ձեզի բացատրել , ինծի յակամայիցս հաւտացնել կուտան թէ աշխարհս չէ այնպէս ինչպէս որ բարեպաշտական գրքերը , քարոզները , ձեր խօսքերն իսկ , ներեցէ՛ք , հայր , այս խօսքըս ըսելուս , մեզի կը ներկայացնեն ամեն վայրկեան : Մեծի այնպէս կը թուի թէ գաղտնիքի նման բան մը կայ՝ զոր չգիտեմ գեռ , առեղծուածի նման բան մը՝ զոր չեմ կարող լաւ հասկնալ , բայց որն որ օր մը բացօրոջ կերպով պիտի յայտնուի ինձ : Այն աստե՛ն կը խորհիմ թէ սրտիս այն տալտամ ձկտումները , որոնց նպատակն անծանօթ է ինձ , օրինաւորապէս իրենց վախճանին պիտի հասնին , և թէ այն ամեն տեսակ հետաքրքրութիւններն որոնք միտքս կուղան և զիս յաճախակի կը տագնաւեն , օր մը լիովին պիտի յազենան : Անշուշտ խիստ գէշ կերպով իմ գաղափարներս կը բացատրեմ ձեզի , բայց դուք պատուիրեցիք ինձ որ զգացածս ձեզի ըսեմ :

— Ա՛յ ո՛չ , զաւակս , խիստ լաւ կերպով կը բացատրես քու տատանումներդ և այն կէս-մորմոքները՝ որ զքեզ գեռ աշխարհի ուրախութեանց հետ կը կցորդեն , որոնցմէ հրաժարելու պէտքդ շնորհքը կ'զգացնէ քեզի : Ամենէն մեծ հողիներն անգամ զգացած են այն երերակոծ տատանումներն՝ յորս հողին փոփոխակի առ Աստուած կամ առ բնութիւնն՝ որ յետս կ'ընկրկի զոհողութեան առջեւ , կը վարանի Դսահակայ նման խարուկին վրայ ելնելու : Մի՛ զարհուրիր այդ պատերազմներէն . ես զանոնք յառաջուց նախատեսած էի և պէտք էր որ ըսէի քեզի . փորձութիւնն է այդ , աղջիկս , և չկայ բան մը որ անոր լկանաց չափ դժնդակ ըլլայ :

— Ա՛յ, հայր իմ, բնաւ վշտադին զգացում մը, ամենափոքրը լկանք մը չեմ զգար, կ'ապահովցնեմ զձեզ: Ստիպուած եմ ձեզի խոստովանելու որ, ընդ հակառակն, անսահման հրապոյր մը, հաճոյք մ'է ինձի համար անծանօթ կեանքի մը խնդիրները ինքնին լուծելու ջանալը, այն կեանքին՝ որուն մէջ շատ աղէկ կ'զգամ թէ առաջին քայլերս կ'առնում:

Այս չէ, ամենը, հայր իմ, թէ և շատ բաներ կան որոնք անծանօթ են ինձ և որոնց համար հօրաքրոջս հարցումներ ընելու անգամ չեմ համարձակիր, երբ վերջապէս ինքնին սախոշոր հարցումը կ'ընեմ «կրօնուհի՞ պիտի ըլլամ թէ աշխարհի մէջ պիտի մնամ» ընտանեկան կեանքը կը ներկայանայ աչացս այնպիսի հրապոյրներով՝ որոնք մոռցնել կուտան ինձ զիս վանուհի մ'ըլլալու յորդորող կէս-կամքերը: Ար պաշտեմ սղաքները. մանուկ մը Աստուծոյ ամենէն հիասքանչ և սրխրալի ձեռակերտն է: Մանաւանդ ժամանակէ մ'ի վեր, անկարելի է ինձ, նոյն իսկ ժողովրդեան մէջ, սիրուն մանկիկնին իրենց բազկաց վրայ կրող մայրեր տեսնել, առանց ներքին զօրաւոր բնազդում մ'ինձ ըսելու՝ Քո՛ւ ալ կրնաս ունենալ մօր մը քաղցրիկ հրճուանքները: Հոս է որ կ'ըսե՛մ այս խօսքերը ձեզի, հայր իմ. ուրիշ տեղ՝ ձեզի, և բնաւ տեղ մը ուրիշի մը չի պիտի համարձակէի ըսել զանոնք, վասն զի սաստիկ պիտի շառաղնէի: Քայց այնպէս կը կարծեմ թէ բնութեան օրինաց պէս գեղեցիկ բան մը չիկայ: Աւերջին պարսպոյ օրերուս միջոցին բնական պատմութեան վրայ մէկ քանի տեղեկութիւններ ստացայ գրքի մը մէջէ զոր Աս-Պլավիէրի մէջ Յիւլիօ Եղբօրս գրասեղանին վայէն գտայ: Այս ընթերցումն ընելէս յառաջ, բնաւ բան մը հասկցած չէի կենդանի էակաց այն հրաշալի գործունէութենէն, որոնք կը ծընին և կը բազմանան մեր բոլորտիքը: Քանիօ՛ն գեղեցիկ և հիանալի է այդ գործունէութիւնը, հայր իմ, այն առած տեղեկութիւններս, ինձի բարոյապէս փաստակար չըլլալէ զատ, աւելի ուժգին կերպով մը կը կապէին զիս Աստուծոյ հետ, և աւելի ջերմ սիրով կը սիրէի զայն:

— Աղետալի ցնորք, դուստրդ իմ: Անոնք ամենքը բընական շարժառիթներ են, անոնց վրայ հաստատուն բան մը չ'ես կարող չինել: Նրխտասարդները պէտք է որ դարչին բընութեան այդ սէրէն որ սիրտը մեղկացնելու կը ծառայէ:

— Սակայն, հայր իմ, ասոնք այնպիսի զգացումներ են որոնք զմեզ կը յորդորեն զՍատուած պաշտելու, իբրև բարի, մեծ, կարողութեան և ճշխութեան մէջ անսահման էակ մը, որ իւր նախախնամական ձեռքերէն կը հեզու աշխարհի մէջ անսպառ կեանքը, ինչպէս նիւթական արեւը իւր լոյսը ուղիսորէն կը հեզու մեր բոլորութիւքը: Եթէ այսպիսի ըզգացումներ կրօնական չ'են, ապա ուրեմն կրօնքը ոչինչ է:

— Կը տեսնեմ, աղջիկս, որ քիչ քիչ շաղակրատ մը կ'ըլլաս:

Ես դքեզ միշտ լաւադոյն ճամբէ մ'առաջնորդած եմ, հնազանդութեան, զոհողութեան և անձնաշարշարութեան ճամբէն, և ասի աւելի ապահով եղանակ մ'է:

— Անշուշտ, հայր իմ, այն հողիներուն համար՝ զորս կը կառավարէք վանքին մէջ, բայց վերջապէս եթէ իմ կոչումն չ'ըլլար . . . :

— Կը մտորիս, զաւակս, կը տեսնեմ որ այդ դիրքը շատ և շատ ապականեր է զքեզ: Ահ, որչափ վնասակար է այսպէս ըստ բախտի և անխտրաբար կարգալը, և ս'ըչափ յանցաւոր է քու եղբայրդ . . . :

— Զիս շատ կը զարմացնէք, հայր իմ, կ'ապահովցնեմ զձեզ:

— Դուստրդ իմ, միայն մէկ անվրէպ և հաստատուն շաւիղ մը կայ, այն է հնազանդութիւնը: Ընչպէս դու իսկ կ'զգաս, բոլոր մնացածները զմեզ բաւդի մը մէջ կը գահավիժեն . . . Երեւակայական վաստակ մ'է . . . բայց մտիկ ըրէ՛ ինձ. Նուիրական-Սրտի միանձնուհեաց վանքին մէջ վանական կեանքի վրայ քարող մը պիտի խօսիմ: Հոն ընդունուիլը մեծ շնորհ մ'է. դրսէն շատ քիչ օրիորդներ հոն ներկայ պիտի գտնուին: Արդէն դու այս սրբալայր տանը մէկ զաւակը կը նը

կատուիս . հոն հրեշտակային կեանքի նուիրուող հոգիներու
երանութեանը վրայ պիտի խօսիմ : Հանդստեան և մտաց
ամփոփման այս ութ օրերը պիտի փարատեն այն ամպերը
զոր վնասակար ընթերցում մը դիզեց քու հոգւոյդ վրայ՝ որ
մինչեւ այս վայրկեանը բոլորովին օտար էր ամեն մեղանշա-
կան գաղափարներէ : Մտածէ՛ ուրեմն , զաւակս , որ պէտք
է . . . :

Վերապատուելի հայրը իւր խիստ քարոզը շարունակեց ,
բայց Լուիզ ա՛լ անոր խօսքերուն ականջ չէր դնէր , Իւր կե-
նաց մէջ այս առաջին անգամ ամեն բան իրական տեսիլքով
մը իւր աչացը կ'երեւէր :

Իւր երեւակայութենէն անցնող մտածութիւնները հա-
մետօրէն քօղարկած էր , լուրջ մեկնութեան մ'սպասելով
այն մարդուն բերնէն , որ մինչեւ այն օրը իրեն համար Աս-
տուծոյ նեկայացուցիչն եղած էր : Ուստի իւր պատանեկան
սիրտն զգած ող գաղափարաց նկատմամբ իրեն լուսաւորու-
թիւն տալու մասին ըրած զլացումը իւր սիրտը կարի վերա-
ւորեց :

— Տղու մը հետ վարուելու պէս վարուեցաւ իմ հետս ալ ,
ըսաւ իւրովի :

Աղօթքը լմնցուց , խոնարհեցու Վերապատուելի Հօր
օրհնութիւնը ընդունելու համար , և դուրս ելաւ վշտահար
և գելեալ սրտիւ :

Վարդը Մատէթի եկաւ :

Հայր Պրիֆար իւր քապաշխարողաց մէջ սովորաբար չէր
ընդունէր ծառայութեան պաշտօն վարող կիները : Յուրս և
համառօտախօս էր իւր խոստովանարանին բոլոր այն այցե-
լուհեաց համար որոց մետաքսեայ շրջազգեստին շրջիւնը
չէր լսուէր , որնոր ազնուապետական և մեծափարթամ ըն-
տանիքէ մ'ըլլալու սովորական նշանն էր : Անիկայ Թ. ի Փէզ-
ուիթաց մէջ , ինչպէս սովորութիւն է կոչել կղերանոցներու
մասնաւոր լեզուովը , ազնիւ կտաւի լուացարար մ'էր :

Անազգի եւ արուեստաւոր դասէն ո՛վ որ սոյն վերա-

պատուելի հարց խոստովանորդին ըլլալ ուզէր, սովորութիւն
ունէր դիմելու Հայր Նրնուլեէի, խոնարհ և պարզ մարդ մը՝
որ բարեպաշտ քարոզչի մը բոլոր բնազդումներն ունէր, և որն
որ առանց մեծ ցաւ մ'զգալու՝ իւր բարձր և կարող ուխ-
տակցաց կը թողուր Մարքիզուհեաց խնդները:

Հաստ կտաւն էր իւր բաժինը:

Մատչէթ Հայր Պրիֆարէն իբր հողեւոր դուստր ընդուն-
ուելու բարեբախտութիւնն ունեցէր էր: Բսե'նք նաեւ որ այս
առանձնաչնորհութիւնը իրեն համար պարծանաց առարկայ
մ'էր. մեծաշուք տիկնանց խոստովանահօր հողեւոր դուստ-
րըն էր: Բնաւ մտքէն անդամ չ'էր անցնէր թէ ի'նչ օգուտ
կրնար քաղել ժէզուիթը անդուլ խնամքներ մատուցանելով
իրենն աստիճանը եղող պառաւ աղջկան մը՝ որ վերջին ծայր
փթամիտ՝ այլ շաղակրատ և պարզասիրտ էր, և կը կարծէր
թէ խոստովանութեան ատեն ս'ըջալի բան ալ ըսելու ըլլար
իր և այլոց նկատմամբ, դարձեալ քիչ էր:

Այն երկայն բաւդին մէջ, ուսկից անցնելու պարտաւոր-
եալ կարծեց ինք լինքը իր սովորական անհամբերութիւններն
ու թարթախումները խոստովանելու համար, Մատչէթ ամեն
բանի վրայ խօսեցաւ, Տիկնոջ, Լուզի, Թ. ի մեծ կղերա-
նոցին, անոր վերատեսչութիւնն ընող Սիւլբիսեաններուն*,
Լուիզի եղբօր և Աբբայ ժիւլիօյի ձեռնադրութեան վրայօք
որոյ արարողութիւնը, որ քիչ օրէն տեղի պիտի ունենար,
պառաւ աղջկան միտքը սասակապէս նախադրաւած էր:

Հայրը հաստատուեցաւ, սա կարծիքին մէջ թէ ժիւլիօ
Աբբայն, Լա-Պլավիէրի մէջ անցուցած վերջին պարապոյ օ-
րերուն միջոցին, ժէզուիթաց նկատմամբ ոչ-նպաստաւոր
խօսքեր բերնէն դուրս տուած էր, թէ երբեմն իւր քոյրն
իսկ ծաղրած էր Հայր Պրիֆարի մասին, որն որ, կ'ըսէր,

* Քահանայից միարանութիւն մ'է որ նորընծայ եկեղեցականաց կըր-
թութեանը նուիրուած է. 1641 ին Սէն-Սիւլբիսի ժողովրդապետը՝ Օլիէ
հիմնեց դայն: Մ. Թ.

ճարպիկ մարդոց այս ընկերութեան մէջ դատած ամենէն խորամանկ մարդս է, և թէ որ մը զուարթութեան միջոցին սեղանին վրայ բարձրաձայն ըսեր է « կը ցաւիմ այն կնոջ վրայ որ անգամ մը այս մարդուն ճիրաններուն մէջ կկոխայ » :

Տիկին Տը լա-Պլավիէր շառագ՛ներ և խօսակցութիւնը փոխելու փութացեր է : Մի և նոյն օրը Լուիզ երկար բարակ իւր եզրօրը հետ խօսակցեր, և Մատլէթ լսեր է նորաամի Ս. Բ. բային անոր նախազուշակելը թէ առաւօտ մը պիտի լսեն որ իրենց հօրաքոյրը գեղեցիկ կտակաւ մը իւր բոլոր հարստութիւնը ժէզութաց նուիրեր է :

— Չեմ կարծեր որ, յաւելցուցած էր Մատլէթ, Ս. Բ. բայն, վասն զի այսպէս կ'անուանէր դայն Տիկինին նման խօսելու համար, չարամտութեամբ բոլոր այս խօսքերն ըսած ըլլայ . ներեցէք իրեն, հայր իմ, վասն զի խիստ բարի է :

— Հաւատացէ՛ք, սիրեցեալ դուստրդ իմ, որ բոլոր այդ դրպարտութիւնները չ'են կրնար հասնիլ առ մեզ : Մեր սուրբ Ընկերութեան երջանկաւէտ մէկ առանձնաշնորհութիւնն է յարածամ հաշածուիլը : Մենք Սէն-Միւլբիսի կրօնաւորները չ'ենք ամբաստաններ մեր վրայօք իրենց աշակերտաց գէշ ըսելնուն համար, աշխարհի ոգին մինչեւ կղերանայներու մէջ սպրդած մտած է, և դիտէ Ստուած որ այդ բարի վերատեսչաց հանրածանօթ ներօղամտութեան պատճառաւ մինչեւ ո՛ւր պիտի հասնի գէշութիւնը Թ. ի վիճակին մէջ :

Թիւլիօ յոռի դըլուխ մ'ունի : Անիկայ մեր քով առած է իւր ուսումը . մենք կարող եղանք զինքը պարտկել, բայց տեսնենք հիմայ, իւր երեւակայութիւնը ու գոռօղութիւնը մինչեւ ո՛ր կէտը պիտի հասցնեն զինքը : Մենք մեր մէջը դողալով կը խօսիմք անոր վրայ : Խնդրեցէ՛ք Ստուած մէ, աղջիկս, ձեր աղօթից մէջ, որպէս զի օր մը զանի ի քահանայութիւն կոչելնուն համար չի զղջան : Թիւլիօ, եթէ մեր հրակողութեանը ներքեւ մնար, օր մը մեր ամենէն նշանաւոր հայրերէն մին կրնար ըլլալ . բեմբասացութեան համար մեծ

յարմարութիւն ունի . բայց քահանայութեան ազատ կենաց մէջ վախճանը շատ և շատ գէշ պիտի ըլլայ :

— Արչափ ատի ցաւ կը պատճառէ ինձ . հայր իմ :

— Ահ . աղջիկս , չէ՛ թէ ձեր անոր վրայ ունեցած սէրը վերցնելու համար այս խօսքերը կ'ըսեմ՝ ձեզի : Մեզի ալ սիրելի է Աբբայն . սակայն դոյզն ինչ հսկողութեան կարօտութիւն ունի : Մեր կացութեամբը , գիտէք , եւ արքեպիսկոպոսարանի մէջ մեր վայելած յարգանքն ու ակնածութեամբը պիտի կրնանք այս երիտասարդին ապագային վրայ ազդեցութիւն մ'ունենալ : Մեծ ապերախտութիւն մ'է իրեն մեզի շարիք ուղելը , և մեծ անխոհեմութիւն մը , եթէ չի սիրեր զմեզ , գէթ չի լռելը : Առաջի որ դիտնար այս , և ինծի անհաճոյ գործ մ'ըրած չի պիտի ըլլար այս բանն իրեն կրննելով :

Եւ զՄատէթ արձակելէ յառաջ յաւելցուց ,

— Բայ ատի , աղջիկս , դուք ինձմէ լաւ գիտէք թէ ձեր ունի ժիւղիջի հարստութիւնը մեծաւ մասամբ վաչխառութեամբ ստացուած էր : Յարդամեծար Տիկին ալ լա-Պլա-վիէրի տալիք հրաման մը չունիմք , բայց , մտերմաբար կ'ըսեմ ձեզի , եթէ որ եւ է նուիրատուութեամբ մը հոգին խաղաղելու ըլլայ , վստահ եմ սիրելիդ իմ Մատէթ , որ իւր հոգւոյն փրկութիւնը՝ իւր երկու ժառանգորդները ճխայրենելու համար դժոխոց մ'ջ բոցախիզելու հաճոյքէն նախամեծար համարելուն առաջին ծափահարողը դուք պիտի ըլլաք :

Միթէ իրաւունք չ'ունիմ :

Մատէթ Պանդորայի* խելքն ունեցաւ :

— Ահ , այո՛ , Հայր իմ , միշտ իրաւունք ունիք :

Պառաւ աղջիկը՝ իւր խօստովանահօր իրնն հետ մտերմաբար խօսակցելը մեծ և անսովոր շնորհք մը համարելով կը հպարտանար : Իւր փոքր մեղաց համար իրեն վրայ դրուած ապաշխարութիւնը թեթեւ բան մը կ'երեւէր իր աչքին : Հայր Պրիֆարի խոստովանարանէն դուրս ելաւ զուարթափայլ դիմօք : Իւր երկու տիրուհիները իրեն չ'ապաստելով գէպի տուն ուղղուած էին :

* Ըստ դիւցարանութեան առաջին կիճը :

ՀՐԱԺԱՐՈՒՄ ՄԸ

Այն օրը, յորում Լուիզ՝ այնքան ջաւաղին զգածեալ՝
 Հաւատաքննութեան մատուռէն դուրս կ'երնէր, իւր եղբայ-
 րը՝ Աբբայ ժիւլիօ իւր գեռահասակ աշակերտակցաց հետ
 պոռչտ մ'ընելու ելած էր: Սկեզեցականութեան նորընծայ-
 ներու սեռ վաշտը Հարաւոյ կրճին միօրինակ և սեպածեւ
 եզերաց վրայ յամբարար կը քայլէր: Կրարմէ անհաւասար հե-
 ուաւորութեամբ աւելի կամ նուազ բազմաթիւ խմբեակներ
 կազմուած էին: Միոյն մէջ դասատու մը, հարիւրերորդ ան-
 դամն ըլլալով, այն հինաւուրց եւ աւանդական պատմութիւն-
 ներէն մին կը պատմէր, որոնք Սէն-Սիւլբիօի մէջ բերնէ բե-
 րան կ'աւանդուին, եւ զսօսանաց ու պոռչաներու ատեն աշա-
 կերաները կը զուարճացնեն: Քիչ մը հեռուն զուարճախօսին
 մէկը խեղկատակ պատմութիւն մը կ'ընէր, որ աղմկալի քրք-
 քիչներով կ'ընդունուէր: Աւրիշներ՝ միասնական խօսակցու-
 թեանց մէջ ընկղմած՝ եռանդեամբ կը մխուէին այն վտան-
 դալից շաւղին մէջ՝ ուր հաւատքը ուղեւին մէջ կը խտանայ
 շողւոյ նման որ կը դինովէ, փոխանակ մարդկային խղճին խա-
 ղաղ սահմաններուն մէջ իյնալու, մարդկային խղճին՝ որ կ'ի-
 րականայնէ Աստուծոյ սէրը մարդերու սիրով:

Ժիւլիօ առանձին էր Յիւլիանի Աէնտլանի հետ՝ որ իւր ման-
 կութեան բարեկամը, սրտի բարեկամն էր: Ժիւլիօ կղերա-
 նոցի աշակերտութեան վերջին պոռչտն էր որ կ'ընէր:

Հետեւեալ օրը կղերանոցին մէջ պիտի մեկուսանայր ձեռ-
 նագրութեան պատրաստուելու համար, վասն զի ժիւլիօ սար-
 կաւաղութենէ ի քահանայութիւն պիտի կոչուէր:

Աէնտլան, իւր բարեկամէն աւելի տարիքոտ, դեռ փոքր
 աստիճանները միայն ընդունած էր: Շատոնց ի վեր իւր մե-
 ծերը ազատութիւն տուած էին իրեն վերջին որոշումն ընելու

և սրբազան կարգերն ընդունելու : Բայց երիտասարդը , անըստուգութեան մէջ տատանախաղ և սաստիկ վհատութեամբ համակեալ , ժամանակ խնդրած էր լաւ մը խորհելու համար : Երկու բարեկամները իրենց սրտերն իրարու կը բանային երիտասարդութեան այն սխրալի լքումովը , որ ամենէն անբիծ վայելքներէն մին է կենաց այս եղանակին՝ ուր սիրտը զեղծմանց մէջ անհամեմատ հրապոյր և քաղցրութիւն կը գանէ :

Եթէ երբէք մեծ և ազնիւ ոգի մը Աստուծոյ Սեղանին ծառայութեանը նուիրուեցաւ , այն ժիւլիօ եղաւ : Ինքն իսկ կը խոստովանէր թէ ինքն իրեն բնազդմամբ յեկեղեցակահոսութիւն կոչուած ըլլալը կ'զգար : Ասոր համար խիստ և երկար փորձերու հանդուրժելու պետք չէր ունեցած , և իրեն խոստովանահայր ծերունի Սիւլբիսեանը յաճախ ըսած էր իրեն . 'Գու , որդեակ , դու քահանայ ծնած ես :

'Քանի մը վաղրկենէ ի վեր ժիւլիօ միայն կը խօսէր : Իւր բարեկամը , սովորականէն աւելի մտասխորհ և զգալի կերպով սրտայոյզ , հազիւ իւր խօսքերուն կը պատասխանէր . հուսկ ուրեմն խզեց այս ցաւազին լռութեան թելը :

— 'Գու երջանիկ ես , ժիւլիօ , դու քահանայական կարգի ամեն ուրախութիւնները պիտի ունենաս : Իսկ ես եթէ աւելի յառաջ երթամ , յոռի քահանայ մը պիտի ըլլամ :

— Ի՞նչ կ'ըսես , բարեկամդ իմ , դ՞ու , այնքա՛ն զգուշաւոր , այնքա՛ն ազնուոգի : Օ՛ն , վանէ այդ խղճահարութիւններն :

— Խղճահարութիւններ . ո՛հ , ո՛չ : Ես ինքզինքս այնքան լաւ կը ճանչեմ , այնքան երկար ատեն խղճմուռնքս քննած եմ , որ չեմ կրնար ըսել թէ իմ ըրած որոշմանս շարժառիթն այն երկչոտ մտքերու վարանումներէն մին ըլլայ , որոնք քահանայական կարգի ծանր պարտականութեանց առջեւ կը կասին :

— Այդ խօսքերդ ինձի երկիւղ կը պատճառեն :

— Կեցի՛ր . ամեն բան պիտի իմանաս , վաղը կ'ըրանայէն կը մեկնիմ ես :

— Ո՛հ, Աստուած իմ, ի՞նչ ահաւոր լուր . չա՛ր, ի՞նչու քու այդ դիտաւորութիւնդ աւելի կանուխ չի յայտնեցիր ինձ . ի՞նչու այսքան ստեւ քու սիրտդ չի մերկացար ինձ . Թերեւս սիրտի՛նք քու վշտերդ, թերեւս օգնէի քեզի՝ ելնելու համար այն խորին թաղծանքէն՝ ուր խորասուզիլդ կը տեսնեմ այժմ . Ո՛կիւսթ, արիութենէ պակասաւոր կը գտնուիս, և դիտցի՛ր որ այդ ըրածդ ո՛չ մարդու արժանի է և ո՛չ քրիստոնէի :

— Թերեւս իրաւացի ըլլան խօսքերդ, բայց ա՛լ շատ ուշ է . Ի՞նչ պիտի ընէի, եթէ սիրտս բանայի քեզի . դուցէ վքեզ ալ իմ տկարութեանցս հաղորդ ընէի, դուցէ մնասակար ըլլայի քեզի, և կը տարակուսէի ալ որ քու բարեկամութիւնդ, որ ինձի այնքան քաղցր և սիրելի է, պիտի կարենար իմ մացականութեան և սրտի վերքերս ապաքինել . դու անարատ և աննենդ ողի մ՛ունիս, սակայն քու մտածութիւնդ տրկար պիտի գտնուէր իմ սոսկալի տարակուսանացս առջեւ . Երջանիկ կը համարիմ ինքզինքս որ իմ հողիս այրող թոյները քու հողւոյդ մէջ չի ձգելու չափ արիութիւն ունեցայ . Հաւատա՛ ինձ որ այդ արիութիւնն ունենալու համար հարկ եղաւ ինձ միայնակ կրել այն երկար ու դժոխմբեր լլկանքն՝ որոնք իմ մարտիրոսութիւնս եղան :

Կը յիշե՞ս այն հեշտալի օրերը՝ զորս ի միասին անցուցինք Աս-Պլաթիէրի մէջ վերջին պարապոյ օրերուն միջոցին . Քոյրըդ՝ Աուիզ և դու ուրախ և զուարթ էիք և կը յանդիմանէիք զիս լուրջ և մտախորհ դէմք մ՛ունենալուս համար . Արսէիք խնդալով թէ անտարակոյս պարապոյ օրերը խիստ երկար կը թուին ինձ . իսկ քոյրդ, ծաղկոցին մեծաբերձ մարդարտած աղիկներ թերթաթափ ընելով, դ լխուս վրայ ձեան գնդ տկներու նման ծաղկի թերթեր կը տեղայնէր, «նմանելու համար, կըսէր, նախնեաց՝ որոնք զոհի յատկացած ոչխարները ծաղկամբք կը պսակէին .» Ար հարցնէիր ինձ «թէ արդեօք Յեթիթայի աղջիկէն աւելի ընդ երկա՛ր պիտի լայի լերանց վրայ .» Սիրուն տղաքնե՛ր, երբեմն ձեր խօսքերուն կը ժըպատէի, այլ մահը սրտիս մէջն ունէի :

— Այդ յիշատակները դեռ մտացո մէջ անջինջ մնացած են, սակայն բնառ մտքէս անգամ չէր անցնէր որ այնքան ծանրը վշտեր ու տառապանքներ կը կրէիր: Աթէ զանոնք գուշակած ըլլայի, անշուշտ այն անմեղ ծաղրաբանութիւններէն տարբեր լեզուով մը պիտի վարուէի քու հետդ:

Այսու ամենայնիւ, սիրելիդ իմ Օկիւսթ, ներէ՛ ինձ որ վերջին ճիգ մը փորձեմ քու սրտիդ վրայ: Թէպէտ քեզմէ աւելի երիտասարդ եմ, բայց կը կարծեմ թէ քու վստահութեանդ արժանի ըլլալու չափ ըջամիտ եմ: Աւթ օրէն քահանայ պիտի ըլլամ. քահանայական կարգս պատուէ՛ յասաջագոյն: Ասկէց զատ, քեզի համար անձնուէր բարեկամ մ'եմ ես. բայց ինձ քու բովանդակ սիրտդ, քու մտերմական խոստովանութիւններէդ չի մնասուելու համար՝ ես իմ վրաս բաւական վստահութիւն ունիմ. քու վշտամբերութեանցդ ականատես ըլլալով այդպիսի դժնդակ փորձէ մ'ազատած ըլլալուս համար ինքզինքս երջանիկ կը համարիմ:

— Աթէ քու այդքան խանդակաթ գորովանացդ ու սիրոյդ անտարբեր ըլլայի, խիտտ ապերախտ մէկը պիտի ըլլայի, սիրեցեալդ իմ Թիւլիօ:

Իմ պատմութիւնս խիտտ պարզ է և քանի մը բառով պիտի ըսեմ քեզի զայն: Վիտե՛ս դու մեր մանկութեան տարիներուն եռանդը, մեր զարմացումը Յիսուսեան հարց վրայ՝ որոնք մեր դաստիարակներն եղած են: Վիտես նաեւ իմ անկեղծ գորովս սա բարեսիրտ Սիւլբիսեաններու նկատմամբ, որոնք քահանայից ամենէն համեստներն ու առաքինիներն են: Յորչափ այս նախընծայ տպաւորութիւններն իմ պատանեկան սրտիս մէջ մնացին, հանդարտ ու խաղաղաւէտ վիճակ մ'ունեցայ, և, լաւ քան զայս, ինձի յատուկ եղած բոլոր աշխուժովս նետուեցայ այն միտիկական կեանքին մէջ՝ ուր այսօր անխոհեմաբար կը մղեն այնպիսի մարդիկ՝ որոնք վանքի համար ծնած չեն, և որոնք աշխարհային կենաց մէջ աւելի բանաւոր և զօրեղ գոյութիւն մը գտնելու պէտք ունին: Այն ատեն նորընծայութեան բովանդակ աշխոյժը սիրտս կը

բողավառէր : Անձնութեան , խոնարհութեան , զոհողութեան կեանքէն զատ բնաւ բան մը դեղեցիկ , մեծ և դեղեցիկ հողւոյ մ'արժանի չէր երևէր ինձ : Աշխարհը միշտ նըկարած էին ինձ իբր անուշիկ ճիւղ մը՝ ուսկից հարկ էր խուսափել , որտի տարփանքը՝ իբրեւ մեղապարտ յուզմունքներ՝ զոր սանձելու չի ջանայողը երկնային դատապարտութեան ենթակայ պէտք էր ըլլալ , կինը՝ իբր մահաբոյր սրտուղ մը՝ որոյ մտածութիւնը , տեսութիւնը , մատչումն իսկ մահառիթ է , և ընկերային յարաբերութիւնները՝ իբր հողւոյ յարատեւ վտանգ մը և առաքինութեան նաւառեկմանը մշտակայ առիթ մը :

Այս դաղափարներն ընդունած և սիրած իսկ էի , անոնք իմ մտածութիւնս , իմ համողումս եղած էին , և որովհետեւ այնպիսի բնութիւն մ'ունիմ որ բնաւ բան մը կիսկատար չի թողուր , այս ամենքը մինչեւ մղեռանդ մ'ըլլալու կէտը հասուցած էին զիս :

Գեռ այս դաղափարներովը , զորս այսօր մանկական ջընորքներս կը կոչեմ , կը սնանէի , երբ , Աստուած արանական դասիս երկրորդ տարւոյն վերջը , պարապոյ օրերս գացի իմ հօրեղբայրներէս մէկուն տունը անցընելու , որն որ Մէն-Ատտէնի մօտ գիւղի հեշտազուարճ տան մը մէջ կը բնակի : Հոն աշխարհն իմ աչացս առջեւ տեսայ : Զիս չըջապատող ընկերութիւնը մեծաշուք և նշանաւոր էր . հօրեղբայրս , մեծ հարստութեան մը տէր և վերին-Աարօնի ընդհանուր ժողովին անդամ ըլլալով , ազդեցութիւն և հետեւաբար դեղեցիկ յարաբերութիւններ ու բաղմամբիւ բարեկամներ ունէր : Այն ատեն քսան և չորս տարեկան էի . այր էի , Հօրեղբայրս զիս իրեն ծանօթ պատուաւոր ընտանեայ ներկայացուց : Մէկէն հրաւերներն ու հանդէսները իրարու յաջորդեցին , Վկայ է Աստուած որ վայրկեան մը չի մոռցայ այն յարգանքը՝ զոր ունենալ պարտական էի առ իս իբր քրիստոնեայ , իբր եկեղեցական :

Նրիտասարդները , նոյն իսկ ամենէն թեթեւամիտները ,

ինձի հետ ունեցան այն պարտուպատշաճ վարմունքը՝ որոց ամենէն խիստ դիտողը նախ ես էի : Տեսայ ուրեմն այս ընկերութիւնը՝ որ քիչ մը նոր էր ինձի համար , առանց իմ սրբտէս քան մ'անոր տալու և , կրնամ ըսել , վերջին ծայր ըզգուշաւոր ընթացքով մը՝ զոր բնականաբար իմ հաստատուն սկզբունքներս և բոլոր կենացս տպաւորութիւնները կը պահանջէին ինձմէ :

Դիտող ծնած եմ ես : Մեր շուրջը ապրող , շարժող , խօսող և դործող ամեն առարկայից ամենափոքր հանդամանքներն ուշի ուշով դիտելու ունակութիւնը մարդուս ունենալ կրցած մտաւորական ամենամեծ վայելքներէն մին է : Երկու երկար ամիսներ վայելելի այն գաղտնի նկատողութեան հրապուրանաց քաղցրութիւնը՝ զոր կ'զգայ մատաղ և աշխոյժ միտք մը՝ երբ նոր առարկայներ իւր առջեւ կը տեսնէ : Ասի իմ աշխարհի մէջ ուղեւորութիւնս եղաւ : Ամենէն աւելի ըզգուշութիւն կ'ընէի սիրտս չի վտանգելու համար , և այս ըզգուշութիւնն էր որ զիս կատարելապէս կ'ապահովցնէր այն հաճոյական խուզարկութեանց մէջ՝ որոնցմով կ'որոնէի ճշմարիտը կրցածիս չափ անկեղծութեամբ :

Առանձին եղած ժամերս ալ ոչինչ ընդհատ կարեւոր դործածութիւն մ'ունէին քան այն ժամերը՝ զորս աշխարհիս նրկատմամբ իմ սիրելի հետախուզութեանցս կը նուիրէի : Հօրեղբօրս թանգարանը ճոխ է , մանաւանդ փիլիսոփայական և պատուական գրեանց մասին : Անյաղաբար կարդացի մի քանի փիլիսոփայական գրուածներ՝ որոնցմով վերահասու եղայ թէ մեր հինօրեայ դպրոցական աստուածաբանութեան խեղճուկ ուսմանց մէջ , ի բաց առեալ իմաստասիրելու եղանակին վրայ ընդունած մէկ քանի հարեւանյի ծանօթութիւննիս , ծանօթութիւններ՝ որոնք աւելի վիճաբաններ յառաջ բերելու , քան թէ իմացականութիւնը առաջնորդելու կը ծառայեն , դեռ նախագաւթէն անգամ չենք անցած այն հրաշակերտ տաճարին զոր դարերը կառուցած են մարդուն , իւր բնութեանը , յարաբերութեանցը , իրաւանցն ու պարտաւիճի դի-

տութեանը : Մեծ եռանդեամբ ինքզինքս այս կարեւոր ուսումներուն նուիրեցի : Հօրեղբայրս իւր թանգարանէն մի քանի լրջօրէն գրուած պատմական գրքեր ընտրեց ինձ , յորս արդի աշխարհը ներկայացաւ ինձ իւր մեծ ձգտումներովը , իւր բուռն իղձերովն ի յառաջադիմութիւն և հազար տարիներէ ի վեր զինքը շղթայող ընկերային ու կրօնական դժընդակ սարկութենէն զերծանելու պիտոյքովն :

Տեսայ նաեւ , և ասի ինձի համար յեղակարծ յայտնութիւն մ'եղաւ , որ մեր առաջին ուսուցչաց՝ Թէզուիթաց պատմական դասերն ուրիշ բան չ'են եղեր , բայց եթէ ճարտար տոութիւններու երկար շարք մը , թէ պատմութեան անթիւ իրողութիւններն այնպէս մը դասաւորեր են , որ ստիպեն զիս անելու այն քաղաքակրթութիւնը զոր կը տեսնէի , այն դարը՝ յորում կ'ապրէի , և տենչալու այն երկար դարերն՝ յորս ժողովուրդք չ'ունենալով դործելու ապատութիւնը , խթանով վարւող խաղաղաւէտ հօտոց նման , արդէն դժուած արահետէ մը կը քայլէին , նախնի սերնդոց միօրինակ կեանքէն զատ բանի մը չի ցանկալով :

Այն ատեն հարցուցի ինքնիրենս թէ սո՞ւտ է այն ամբաստանութիւնը՝ զոր կ'ընէին կղերին վրայօք թէ աստուածապետութեամբ աշխարհի տիրապետել կ'երազէ :

Միջին դարու հազարամեայ միջոցին մէջ տեսայ այն վրտանդաւոր «Թէօոի»ին յառաջացումն ու զարդացումը , որ հոգիներու աշխարհին տեսչութիւնը վարդապետող եկեղեցւոյն ապահովելով , անոր իշխանութեանը կենթարկէ միանգամայն մարմնաւոր աշխարհն ալ , պատճառ բերելով որ եկեղեցին է բարոյականի դատաւորը և թէ ժողովրդոց ընկերային վարդապետութիւններն սոյն բարոյականին մէկ մասը կը կազմեն :

Տեսայ այն ատեն ակնյանդիման թէ մարդկային մտքին այն երկարատեւ մրցումներն , որոնք վերջապէս արեւմտեան աշխարհին մէջ բողոքականութեան կրօնական մեծ հերձումն սրտոճառած էին , ուրիշ բանէ ծագում առած չ'էին , բայց

եթէ աշխարհային ընկերութեան՝ աստուածայեւթեան անհրճարին յարձակմանը դէմ ինքզինքը պահպանելու պէտքէն:

Բոլոր այն բռնական սկզբունքներն, զորս կղերական դաստիարակութիւնը տպաւորած էր մտացո մէջ, ինչ որ էին այնպէս երեւցան ինձ, այսինքն սոյն աստուածայեւթեան յարձակումի դրութեան շարունակումը:

Ար խոստովանիմ քեզ, բարեկամդ իմ, այս տեսութեան նոր կէտը, որով ներկայացաւ իմ հայեցուածոցս կղերին ընկերութեան մէջ բռնած դիրքը, ինձի համար լուսոյ ճառագայթ մ'եղաւ:

Թերեւս ասի մտքիս մէկ անհեթեթութիւնը, երեւակայութեանս մէկ ցնորքն ըլլայ, սակայն երբէք չեմ հանդուրժեր խարկանաց ենթակայ ըլլալու: Աստուածեան ինձի տուած լոյսերէն, այն ստոյգ ծանօթութիւններէն զորս ստացայ յետոյ նախնական յիշատակարաններէ, դար առ դար մարդկային մտքին կղերին դէմ ունեցած մեծ վէճին երեւոյթներն (Ֆազ) հետազօտելով, վերջապէս սա տխրառիթ եզրակացութիւնը հանեցի թէ՛ այս ժամուս անոր ծոցը մանելով կուրօրէն մարդկութեան ամենէն վտանգաւոր ոխերմաց խումբին մէջ սլտի իյնայի, որովհետեւ անոնք, կրօնքին բուն նպատակէն վրիպելով, յանուն աւետարանին, յանուն ազատութեան, յառաջագիւտութեան վարդապետութեան մը ողբալի յարատեւութեամբ մը մարդկային սեռը յախտենական անշարժութեան մ'ենթարկել կը նկրտին:

Բարեկամդ իմ, աշխարհի դիմացը ընկերային ազատութեան դադափարաց իբր ակտոյեան կանգնող մարմնոյ մը հանդիսաւոր խոստումներով անդամակից գտնուելու միակ մըտածութիւնն իսկ անհանդուրժելի և անտանելի է ինձ: Եւ այն օրէն՝ յորում ըսի ինքնին «դեռ ժամանակն է, մէկգի թող այդ պարկեշտ այլ կոյր մարդիկը՝ որոնք լոյս կը քարոզեն և մարելու գործին կը դարբնեն՝ որու ներքեւ հողինին կուտան» այն օրը ինքզինքս ազատ և երջանիկ զգացի:

Ես ինձի համար, իբր սոսկական անհատ և անդամ մարդ-

կային մեծ գերդաստանին, ստրկութեան շղթայներէն ազա-
տեցայ :

Թիւլիօ իւր բարեկամին խօսքերուն ուկնդիր եղած էր ա-
մենայն ուշադրութեամբ : Նա ալ ինքնիրեն առաջարկած էր
քրիստոնէութեան ազատական սկզբանց և կղերին տիրապե-
տական ոգւոյն մէջ դտնուած հակասութեան ծանրակշիռ
խնդիրը : Ինքը խիստ ազատամիտ, սակայն քաղցրահամբոյր
և ներող բնութեան տէր ըլլալով, սոյն խնդրոյն լուծում մը
դտած էր մարդոց վրայ ձգելով կղերին վրայ տեսնուած փա-
ռասիրական ձգտումները այն ատենէն ի վեր՝ ուր բարբա-
րոսաց արշաւանքը զայն արեւմտեան աշխարհին իմացական
առաջնորդն ըրաւ, և, իր տրամաբանելու եղանակին մէջ ա-
նողք Ալեքսանդրէն նուազ խիստ ու անաչառ, ըսած էր իւրո-
վի թէ եկեղեցականութեան մէջ կրնար մարդ բարիք դոր-
ծել և կրնար անոր մէջ մտնել, առանց դադրելու մարդկու-
թեան ընկերային յառաջադիմութեան համար եռանդագին
համակրութիւններ տածելէ :

Ալեքսանի խօսքն ընդհատեց :

— Մի՛ գուցէ ըրածդ պարզ շիտթութիւն մ'ըլլայ, բարե-
կամդ իմ. ի՞նչ հարկ կայ բոլոր կղերական մարմինն միա-
հաղոյն ամբաստանել մի քանի մարդոց փառասիրութեանը
համար, որոնց դարերէ ի դար աստուածպետական տիրա-
պետութեան անձկատենչ ջլլալը պատմութիւնը կը ցուցնէ
մեզ :

Պէտք է եկեղեցւոյն մէջ տեսնել աստուածային կողմն ու
մարդկային կողմը : Մին կը թողում ձեր նզովքերուն, մարդը
կը նուաստացնէ իր ամեն դպչած բաները, բայց միւսը ազ-
նուական, մեծ և անկորնչելի է :

ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

Վէպուլօն պատասխանեց .

— Հաւատա՛ ինձ , սիրելի ժիւլիօ , քու ենթադրած շք-
փոթութիւնդ չեմ ըրած ես : Այո՛ , ե՛ս ալ քեզի հետ քրիս-
տոնէութիւնը աստուածային և այնու իսկ խորին ակնածու-
թեան արժանի կը համարիմ : Պիտեմ նաև որ Նկեղեցին ,
իբր Աւետարանական վարդապետութեանց յայտարարու-
թիւն և իրականացումն , բոլորովին որոշ է իւր կղերէն : Աս-
կէ զատ դիտցածս և պատմութեան անժխտելի փաստերով
իմ բանականութեանս ապացուցածն այս է որ այս քրիստոն-
եայ կամ Աթոզիկէ Նկեղեցւոյ ծոցը , հող չէ՛ ինչ անուն որ
տաս , այն գեղեցիկ դարերէն յետոյ՝ յորս իւր փառքն էր ա-
ռաթուր կոխել աշխարհային ճոխութիւնքն ու մեծութիւնքը ,
կղերը ինքզինքը իբր առանձին դաս մը , իբր առանձնաշնոր-
հութեանց տէր մարմին մը ձեւացուցած , խոնարհ և աղքատ
Քրիստոսի նզովքներուն ենթակայ եղած հարստութեանց
ցանկացած , այս աշխարհի թաղաւորաց ախոյսներ եղած և
ամեն տեղ՝ ուր կարելի եղած է իրեն՝ ոսկւոյ թաղն իր գը-
լուխը դրած է , առանց երբէք վախնալու թէ կը յանդիմա-
նեն զինքը որ իրեն այս ըրածը հակասութիւն մ'է Անոր դէմ՝
որուն ունեցած թաղաւորութիւնը հողեւոր է , և որոյ աշ-
խարհի վրայ պսակը իբարու հիւսուած երկու փշոյ ճիւղեր են :

— Բոլոր ատոնք , ըսաւ ժիւլիօ , մարդկային իրողութիւն-
ներ են՝ որոնք երբէք չեն կրնար ոչնչացնել աշխարհի մէջ
առաքելութեան յանձնուած աստուածային պաշտօնը :

— Անշուշտ , բարեկամս , բայց խոստովանէ՛ թէ ասի սոս-
կալի վրիպում մ'է նոյն իսկ կղերին ուսուցած վարդապետու-
թեանէն : Անիկայ չէ՛ դադրած աշխարհային իրերէ անշատու-
մին քարոզելէ , և տակայն հաղտը տարի է որ իւր սնյադ-

ցանկութեամբը երկրային ինչքեր գիղելու հետամուտ եղած է: Քրիստոսի Փոխանարդը*, որ իր հոգեւոր փոխարքայութեան պաշտօնովն այնքան մեծ է, ութ երկար դարերէ ի վեր մաս առ մաս Նոսայիոյ կեդրոնական ճոխ գաւառները գրաւելու կը ճղնի. և միայն այն ատեն երջանիկ է, երբ, իբր աշխարհին թագաւորը, կայսրերէն և թագաւորներէն վեր բարձրանայ: Սիրելի ժիւլիօ, և թէ այս է Աւետարանը, որ ոչ կարգացած եմ, ո՛չ ալ հասկցած:

— Եւ անկեղծութիւնս չ'ներեր ինձ որ այդ դժբախտ վերիպումը ուրանամ. բայց եկեղեցւոյ ողին պահող բոլոր մեծ հոգիները հեծած են այս աղետալի զեղծման վրայ: Այլ տէք ինչ որ կը մտածէր Ս. Բեռնարդոս, պապութեան աշխարհային ամենէն մեծաշուք պերճութեանց դարուն մէջ, այս երկրային թագաւորութեան վրայ՝ զոր խիստ քիչ կարեւոր կը նկատեն Ակեղեցւոյ բարւոյն: Աարդացած էք Ֆենէլոնը, որն որ դառնապէս կողբար «այն բարեբաստիկ ժամանակը՝ յորում Ակեղեցին մարտիրոսաց մէջ կը բարգաւաճէր՝ առանց երբէք աշխարհային իշխանութենէն բան մ'իրեն սեպհակահել խորհելու» եւ՝ կ'աղաղակէր. «իցիւ թէ Քրիստոսի հարսը (Ակեղեցին) հիմայ ալ միեւնոյն վիճակն ունենար, եւ կամաւ հրաժարէր իւր երկիրներէն, իւր ինչքերէն եւ այս աշխարհի դձուձ փառքերէն ու մեծութիւններէն»: Պիտէք նաեւ Աարօնտէնի՝ զԱկեղեցին գետնադամբաններուն եւ Աստուանդիւանոսի մէջ տեղը գանուած միջոցին մէջ որոնելը:

— Բու այդ խօսքերովդ պարզապէս միայն մէկ բան մը ինձ կ'ապացուցանես, այն է թէ եկեղեցւոյ մէջ կայ դեռ խորին զղացում մը այն աղէտից եւ թշուառութեան՝ ուր գրւորեց զանի իւր կղերը՝ աշխարհային իշխանութիւնը ինքեան սեպհակահանելով: Ես ալ ճիշդ քեզի նման կը խորհիմ, Աայ Ակեղեցւոյ ողին, որ անոր հիմնադրին ողին է. կայ նաեւ կըղերին աստուածպետական ողին ալ՝ որ Ակեղեցւոյ ողւոյն

* Այսպէս կը յորջորջեն Հոովմէականք զՊապը:

Ժխտումն է : Ահա այս պատճառաւ է որ եկեղեցւոյ գերկը մնալով կղերին գրկէն կը բաժնուիմ :

— Ատի սարսափեցուցիչ եզրակացութիւն մ'է :

— Ըսէ՛ ինչ որ կ'ուզես , բայց քու անկեղծութեանդ կը բողբեմ : Նոյն իսկ դու գիտես եւ համազուած ես որ այն օձառամբ՝ զոր ըրած է կղերը , օձառամ մը՝ որու վրայ դու եւս կ'ողբաս ինծի հետ , Քրիստոսի վարդապետութեանը , Ակեղեցւոյ ճշմարիտ ոգւոյն ներհակ է : Արեւմե այս կղերը , որ վարդապետող Ակեղեցի (Ալլիլիա անսէնեանդ) կը կոչուի , դարերէ ի վեր աւանդապահն եղած վարդապետութեան յարատեւ բացասութեանը մէջ կ'ապրի , այն վարդապետութեան՝ զոր ունի իւր շրթանց վրայ եւ զոր կը քարոզէ , եւ որոյ հակասութիւնն են իւր գործերը : Վործնական մ'ըրու թեան եւ սխալանաց մէջ դ'ըրող կղեր մը կրնայ զԱկեղեցին ներկայել : Աւ կրնա՞ս պարտաւել զանոնք՝ որք կը դժկամալին անդամակցիլ այնպիսի մարմնոյ մը՝ որ ատելի կ'ընէ Ակեղեցին , զայն իբրեւ ազատութեան եւ յառաջդիմութեան սխերիմ ցոյց տալով : Բոլոր ասոնց ուզած եւ հաւնած մեկնութիւնդ տո՛ւր , ամենեւին չ'եմ ընդդիմանար . բայց խոստովանէ՛ , ինչ որ շոշափելի իրողութիւն մ'է եւ զոր ծածկելն անտեղի է , թէ Ակեղեցւոյ ոգւոյն ու կղերական ոգւոյն մէջ անշատում մը , հակասութիւն մը կայ , եւ արիութիւն ունեցիր քաջալերելու այն մարդիկը՝ որոնք կ'ուզեն թողուլ որ կղերն իր առանձնութեան մէջ տկարանայ եւ աւերակացը մէջ մարի , մինչեւ որ իւր նախնական հաստատութեան ճշմարիտ ոգին կըրող կղեր մը յաջորդէ :

— Բայց քու այդ ըսածդ կատարուելու համար , ըստ իս , աւելի արամաբանական կ'ըլլար եզրակացնել թէ մանաւանդ պէտք է փութալ մտնել կղերականութեան մէջ , հոն ներմուծելու համար իւր կորուսած ոգին : Այն ատեն գործն աւելի գեղեցիկ կ'ըլլար :

— Բարեկամդ իմ , այն ժամը դեռ չէ՛ հասած : Բոլոր այն քաջասիրտ մարդիկը՝ որոնք կ'ուզեն , քեզի պէս , արդի ընկե-

բութեանն եւ կղերինն հաշտութեանը համար աշխատիլ, պիտի ընկճին մրջման մէջ: Քու ազնիւ ըղձանացդ համար կը սիրեմ զքեզ. բայց ատոնց ապագային մէջ քեզի պատրաստած վըշտերն ու ցաւերը այժմէն կ'երեւակայեմ: Քու բնութեանդ մէջ գտնուած մեծութիւնը չի ներէր քեզ երթալ անձնուէր հետեւող մ'ըլլալ այն բռնաւորական մասին՝ որ այսօր կղերինն մէջ կը տիրապետէ: Աւ այն օրէն՝ յորում չ'երթաս դու անոնց հետ դարուս դէմ նշովք եւ անէծք ժայթքելու*, եւ միջին դարու դեղեցիկ աւուրց զարմացման հինօրեայ նադարաթը յեղյեղելու, իբր կասկածելի պիտի նկատուիս, եւ իբրեւ Քարիա* մը պիտի մերժուիս: Աւղեցի կանխաւ ինքզինքըս այս ցաւառիթ ապագայէն ազատել. ա՛յս է, այն բռնաւոր պատճառներէն մին եւ թերեւս ամենէն գլխաւորը՝ որ հրաժարել կուտայ ինձ յեկեղեցականութենէ՝ որոյ համար մանկական հասակէս ի վեր անդրդուելի կոչում մ'ունենալ զդացած էի:

— Սիրելիդ իմ Ալեքսանդր, եթէ այսօր հարկ ըլլար ինձ եւ կեղեցական կեանքի մէջ մտնելու մասին վերջնական որոշում մ'ընել, այդ պատճառը բաւական զօրաւոր չի պիտի երեւէր ինձ դիս կասեցնելու համար: Քեզի հետ ես ալ կը ցաւիմ այն աղէտալի հակասութեան վրայ յորում կը գտնուի կղերինն մէկ նշանաւոր մասը, բայց չեմ կարծեր թէ ամբողջութիւնը: Այս փոքրագոյն մաս մ'ալ ուղղախոհ, որ հաւատարիմ վաղնջուց աւանդութիւններու, կարող եղած է զերծ մնալ այդ վտանգալից ողիէն: Այս փոքրագոյն մասը կը պահէ եկեղեցւոյ մէջ թանկագին կայծը: Անի, այն բարեհաւատ մարդոց հետ՝ որոնք ամեն օր աշխարհի մէջ աւետարանական մեծ վարդապետութիւնը կ'իրականացնեն, Ակեղեցւոյ հոգին կը կազմէ:

Յաւազին փորձէ մը կ'անցնինք: Քա՛նն է մեզի համար՝

* Հնդկաստանի մէջ տնիճեալ եւ արտարտեալ դասու մ'անդամոց արտած սնունն է:

մինչեւ եպիսկոպոսութեան մէջ և քահանայապետական բե-
մին վրայ տակաւին այն բարբարոս դարերէն փոխ առնուած
կոչա սկզբունքին տիրելը տեսնել, այն է թէ Ակեղեցւոյ հո-
գեւոր զարգացմանը համար իշխանութեան և սակեոյ ամեն
հնարքները կարեւոր են: Բայց այնպէս կը մտածենք, և ա-
սի իմ անձնական համոզումս է, թէ նոր ժամանակները մօտ
են, և թէ ընդ հուպ հնացեալ վարդապետութեանց խար-
խուղ շէնքին կործանումը պիտի տեսնենք: Այնպէս լաւա-
գոյն օրերուն արշալոյսը միայն ընդհամարեմ, եթէ մի քանի
հոգիներու մէջ միայն ջահեմ այն աշօտ ճաճանչը՝ որ զա-
պաղ այն պիտի լուսաւորէ, դարձեալ իմ աշխատութեանս վրայ
ուրախ և երջանիկ պիտի ըլլամ: Արցաւիմ, Ալեուտօն, որ
դու իմ արիութիւնս չ'ունիս, բայց կ'ըսես թէ ուրիշ պատճառ-
ներ կան . . . :

— Խիտ դժուարին է պաշտօնական Ակեղեցւոյ անդամն
ըլլալ և ամեն ժամ ստիպուիլ զայն առաջնորդող ողին դատա-
պարտելու: Խղճի և պատուոյ կռիւ մ'է այս՝ որուն ձախող
դիպաց չ'եմ ուզեր ենթակայիլ: Ար մաղթեմ որ քու քաղց-
րահամբոյր բնաւորութիւնդ և հաշտարար ու չափաւոր ողիդ
քաղցրացնեն քեզ համար այդ կացութիւնը՝ որոյ վտանգն
անկարելի է քեզ ակնյանդիման չի տեսնել: Քաջասրտու-
թիւն . և թէ յաջողիս, դիւցաղն մը պիտի ըլլաս . և թէ ընկճիս,
մարտիրոս մը պիտի ըլլաս:

Արդէն ստուերները կը խոնարհէին դաշտին մէջ: Մարը
մանող գեղանչոյլ արեւ մը երկու բարեկամաց այն տեսա-
րաններէն մին ներկայեց՝ որոց առջեւ ո՛չ ումեք հնար է
անադդակ դռնուիլ, և որոնց կրնայ հանդիսատես ըլլալ
իրենց բոլոր մեծաշուք պայծառութեանը մէջ Ալկէանու
մերձակայ նահանգաց բնակիչ մարդը: Պիրենեան լեռանց
կոհակաւէտ և լայնատարած շարքը հարաւոյ կողմը սակով
ու ծիրանեաւ ներկուած կապուտակ սնասման վարագոյր
մը կը յօրինէր: Թ. հանդիսադիտաց և սկեգոյն ամպոց
եան ծածկուած արեւուն մէջ տեղը զետեղուած, գու-

նաւորեալ ստուերի մը մէջէն կը ցուցնէր իր շէնքերուն խառնաշիտթ տեսարանը, որոց ամենուն վրայ կը բարձրանային Սէն-Սէրնէնի զանգակատան և իւր եկեղեցեաց բարձրաբերձ գագաթները: Երկինքը ծածկող ձիւնափայլ ամպոց մէջ ամբողջ անէակ արարչութիւն մը կը շարժի. լայնատարած կապուտակ ծովեր, անսահման անտառներ, սուկալիթխար ճիւղեր, ինչպէս որ առասպելք և կամ նախքան Կլորհեղեցին եղած դարերը պատմող երկրաբանութիւնը կը նկարեն զանոնք ահաբեկ երեւակայութեան: Սխրացեալ ականողիք կրնային յանձունս մայրիլ այն շրջապատներին վրայ՝ զոր բնութիւնը, շռայլ իւր ճոխութեաց մէջ, հորիզոնին վրայ պարզած էր:

Երկու մտերիմները ժամանակ մը կանկ առին այս հիասքանչ նկարին առջեւ, և, երբ ամպերը ա՛լ իրենց դունաթափ զանգուածները միայն ընծայեցին հայեցուածոց, խօսակցութիւնը վերստին սկսաւ:

— Գեռ ամենը չըսի քեզի, սիրելիդ իմ ժիւլիօ: Անտարակոյս, դուռը կըլերին այս ձաղող ներհակութեան դիրքին մէջ յամառեալ մնալը ինձի ցաւ կ'առթէ, և չեմ այլ եւս փափաքիր հանգերձ մը՝ որուն ներքեւ արդի մարդը պրժգանօք կը տեսնէ հարստահար մը փոխանակ եղբօր: Բայց բայց աստի, կարի դժուարին է ինձ սրբակեցութեան հանդիսաւոր ուխտով մը կապուիլ:

Համոզուած եմ վերջապէս թէ մարդ մը, որ երիտասարդ է և առոյգ ու զօրաւոր հասակ մ'ունի, չի կրնար խղճի մըտօք այսպիսի սոսկալի ուխտ մ'ընել:

— Բայց, սիրելիդ իմ, այս ուխտն ամեն օր կ'ըլլայ, և հաղարաւոր նորատի քահանայներ հաւատարիմ են այս ուխտին:

— Ստուգիւ, բարեկամս, համոզուած եմ որ դու, քու փափուկ զգացմամբդ ու աննենդ ոգւովդ, յանձն պիտի առնես այն ամեն զոհողութիւնները զորս կը պահանջէ այդ պիսի ուխտ մը: Գիտեմ նաեւ որ կան շատ մը քահանայներ՝ որոնք

կը յաջողին այս այրեցեալ դօտուոյ սահմանէն ներս անյնեւու, ուր նետած է զիրենք անխոհեմ օրէնք մը . բայց ի՞նչ մրցումներով, և քանի՞ տառապանքներով : Եւ բոլոր ասոնք ի՞նչ նպատակի համար . զիտեա դու աչ ինձի պէս թէ ժողովուրդը չի հաւատար քահանայից առաքինութեանը : Այս կէտիս նկատմամբ աշխարհի մէջ դարերէ ի վեր անյեղլի և հաստատուն համոզումներ կան : Այն դայթակղեցուցիչ դէպքերը, որոնք ժամանակ առ ժամանակ տեղի կ'ունենան եւ որոնք այս օրինակ կանոնի մը արդիւնքներն են, ժողովուրդն իր կարծեաց մէջ առաւել եւս կը հաստատեն : Առաքինի քահանայն աչ կասկածաւոր է, ինչպէս յանցաւորը :

Ուրեմն արեւմտեան Եկեղեցին իւր քահանայից սրբակեաց կեանքէն քաղել կարծած բովանդակ օգուտը կ'կորսնցնէ : Արեւելեան Եկեղեցին այս սխալը չի գործեց : Անիկայ խելամուտ եղաւ թէ, եթէ սրբակեցութիւնը մեծ բան մ'է, պէտք է որ ազատ ըլլայ, եւ երիտասարդութեան յախուռն եւ անխոհեմ եռանդէն չի պահանջուի : Անիկայ լոկ ամուսնացեալ մարդիկը կը կոչէ ի քահանայութիւն :

Ես ինքզի քս քննած ու զննած եմ նաեւ այս պարտականութեան մասին ալ՝ զոր Հռովմէական Եկեղեցին կը դնէ իւր կզերին վրայ : Փորձուեցաւ իմ սիրտս, եւ նորածին սիրոյ մը առջեւ՝ որոյ վտանգն ստուգիւ չ'էի կասկածած, ինքզինքս այր զգացի, եւ ի միտ առ ի թէ ի՞նչ դառն վշտեր պիտի պատրաստէի ինչ բոլոր կենացս համար, եթէ անբռնաբարելի երդմամբ մը ինքզինքս չլթայէի :

Աստարելապէս համոզուած եմ թէ օր մը Արեւմտեան Եկեղեցին պիտի լիութայ ջնջել այսպիսի օրէնք մը՝ զոր պատուաւոր՝ այլ բորբոքեալ զգացում մը, կուսութեան ծայրայեղ յարգանքը, եկեղեցականութեան մէջ մտցուցած է : Փորձն եղած է, և պատմութիւնը ապացուցած է թէ այսպիսի օրէնքի մը հաւատարմութիւնը մեծագոյն մասին կարողութեանէն բարձր է : Եթէ այս օրէնքը մի քանի բացառիկ առաքինութիւններ յառաջ կը բերէ, շատ մ'ալ զոհեր կը գործէ :

Այս կերպով օր մը Եկեղեցական կարգն արատած ըլլալու յանցանքովը չի պիտի շառագնիմ, եւ անօգուտ մարմնաքանաց չի պիտի ենթարկեմ իմ անձս : Մինչդեռ ակնարկ մը, ձայնի հնչիւն մը, ձեռաց սեղմում մը կարող են ամենին արիական եւ հաստատուն դիտաւորութիւններն իսկ դղրդել, մեծ եւ աններելի համարձակութիւն մ'է ինձ համար այդպիսի ուխտադրութիւն մը : Աւերջին պարսպոյ օրերուն միջոցին կրած դժնդակ փորձիս չէի ուզէր երկու անգամ ենթարկել մեր բոլոր նորատի աշակերտակիցները, անոնք Աս-Պլավիէրի մէջ իրենց խեղճ սիրտը վիրաւորեալ պիտի թողուն . . . :

Ահա ասոնք են, բարեկամդ իմ, այն պատճառները՝ որոնք կ'ստիպեն զիս կղերանոյէն մեկնելու : Խոստովանահայրըս՝ որուն յայտնեցի զանոնք, ինձի ռամկական հասարակաց տեղիքներէն պատասխանեց, այսինքն թէ պարսպոյ օրերն իմ կորստեանս պատճառ են եղեր, թէ յոռի ընթերցումներ երեւակայութիւնս բորբոքեր են, թէ սատանային թելադրութեանց ականջ կախեր եմ, եւ ուրիշ այսօրինակ սնտի բաշաղանքներ : Չի պնդեցի այն արժանաւոր մարդուն դէմ, որ նոյն իսկ առաքինութիւնն է, եւ դացի չուելու պատրաստութիւններս հողալու :

Այն անէն ելնելէս յառաջ քու ձեռքդ պիտի սեղմեմ մի՛ մոռնար զիս, Ժիւլիօ . դու ընդհուպ քահանայ պիտի ըլլաս : Նախախնամութիւնը պահպանէ՛ զքեզ այն աղէտներէն՝ որոց կը պատահին անշուշտ կղերականութեան մէջ դանուող քեզի նման ուղիղ եւ անենդ բնութիւնները : Մընա՛ս բարեալ :

Քիչ քիչ քաղաքը կը մտնէին, եւ խմբեակներն իրարու կը մօտէին . ուստի ա՛լ անխոհեմութիւն մը կրնար համարուիլ խօսակցութիւնն յերկարելը : Ասպիտովի մեծ հրապարակէն անցան, Թօրի փողոցը մտան, եւ ընդհուպ Աէռալօն եւ Ժիւլիօ աներեւութացան կղերանոյին բարձրաբերձ պատերուն ետեւ :

Ժիւլիօ, իւր խցիկը մտնելով, իւր սրտին լաութեանը մէջ

Տայրէ ի Տայր յիշեց իր և բարեկամին մէջ տեղի ունեցած խօսակցութիւնը : Քանիցս այն ամեն խօսքերն ըսած էր իւրովի , և անոնցմէ ալ աւելին : Բայց դեռահասակ քահանայն Աստուծմէ հրեշտակային հօգի մ'ընդունած էր : Արնախատեսէր վտանգները , բայց իւր սրտին մէջ յաղթանակի ըզդացումը , տենչն ունէր :

« Ի՞նչ կ'ըլլար առաքինութիւնը առանց մրցման , ըստ իւրովի , այս եկեղեցական աշխարհը՝ ուր մտած եմ , յետագիմական է , անհանձար է , դժբախտութիւն մ'է այս , բայց ինձի ի՞նչ վայթ : Գոյզն ինչ բարիք պիտի ընեմ աղքատներուն , տկարներուն և այս աշխարհի մէջ լքեալներուն : Երկար տարիներ մէկ խոնարհ գիւղի մը՝ ուր իբր հովիւ պիտի դրկուիմ , նախախնամութիւնը պիտի ըլլամ : Անտարակոյս պիտի ունենամ իմ նեղութիւններս , հակասութիւններս , փորձերս . բայց երկրի վրայ իմ գործս կատարած պիտի ըլլամ , և ասի ազնիւ ապագայ մը չ'է՞ » :

Հասարակաց ընթրիքէն վերջը , Փիւլիօ կրկին խօսակցեցաւ իւր բարեկամին հետ : Հասաւ խելքը թէ անկարելի էր զայն իւր անդրդուելի դիտաւորութենէն յետոս դարձնել : Ուտի ամենեւին ճիգ մը չ'ըրաւ զայն եկեղեցականութեան մէջ պահպանելու : Բայց Ահաւլօն աւելի յայտ յանդիման մերկացաւ անոր իւր սիրտը , և թողուց զուշակել այն խորին տպաւորութիւնը՝ զոր ըրած էր իւր վրայ դելեցկադէմն Լուիզ՝ որ Լա-Վրալիէրի մէջ իբր շնորհաց և առաքինութեան տեսլական պատկերը երեւցած էր իրեն :

— Յաւէ՛ իմ վրաս , Փիւլիօ , բայց սիրէ՛ դիս միշտ :


Ասոնք եղան Ահաւլօնի վերջին խօսքերը :

Չանդակին արծաթաձայն հնչիւնը կղերանոցին աշակերտւր ազօթքի կոչեց : Փիւլիօ ի զուր ջանաց իր միտքն ամենել . խորին վէրք մը իւր սրտին մէջ կ'արիւնէր . ինքն ալ հողւոյն ամբօթութեանը մէջ երազ մ'ունեցած էր :

Ուր օժման նախընթաց մտածութեան օրերը մըրկաւ մըրկելին : Իւր գիշերը վրդովեալ եղաւ . նսեմաստուեր տե-

սիւները քնոյ ատեն զինքը տաղնապեցին, սեւ ուրուականներ հեղնական ժպիտով մը կուգային բռնել զայն իւր անկողնոյն մէջ և վրիժուց սպառնալիքներով զանի ահաբեկել:

Օրուան սկզբնաչօղ նշոյլները, մաքուր օդ մը որով ողողեց իւր խցիկը և գիշերուան անդոհական յիշատակները փարատելու համար ինքնին ըրած ճիգը զինքը գոյզն ինչ հանդարտեցուցին. և երբ մատրան մէջ այն պատանեաց, իւր աշակերտակցաց, քաղցր ու դողդոջուն ձայները, յոր իրենն ալ խառնեց, սկսան նուազել այն օրհներգը՝ որով Յկեղեցւոյ մէջ այնքան դարերէ ի վեր Աստուծոյ ոգին, լուսոյ և շնորհաց ոգին կը խնդրուի, ժիւլիօ մոռցաւ պահ մը երկիրը, երկրպագութեամբ և սիրով ելնելու բարձրանալու համար մինչեւ Անոր անթողին ոտից առջեւ՝ որոյ ողորմութեանց բաշխողը պիտի ըլլար երկրիս վրայ:



Ե .

ԵՐԿՈՒ ՊԱՊԵՐԸ

Աթոյիկ միապետութեան մէջ, որ հողագնտիս մակերեւոյթին վրայ երկու-հարիւր միլիոն հպատակ ունի, կ'ըսուի, երկու թագաւոր կայ. մին առերեւոյթ թագաւորն է և կ'անուանի Պապ. Աատիկանի մէջ կը բազմի կարգինալներով, սենեկապաններով, բարձրաստիճան եկեղեցականներով, և ժե. դարու թատրերգութեան մը մէջ առևտրանի վրայ իրենց դերը խաղացող կեղծ-համբերու (դօնբառս) նման զգեստաւորեալ թիկնապահներով: Միւսն է իրական թագաւորը. «ձէզու» ի մէջ կը նստի և կ'անուանի Փէզուիթայ դվսաւորը:

Մարդկային հանճարոյն համայօդել կրցած մարդերու

ընկերակցութեանց ամենէն աւելի հոծ, ամենէն աւելի գործօն ու միանգամայն հզօրացոյն ընկերակցութեան գլուխն է այն: Այս երկու մեծ անձերէն առաջինը «Մրբութիւն» (Սէնթրթէ) անուամբ կ'ողջունուի, իսկ երկրորդը «Վերապառուութիւն» անուամբ: Եթէ Պապին ներկայանալու դէպքին մէջ գտնուիս, դեռ չ'մտած այն դահլիճը՝ ուր Քրիստոսի փոխանորդը պիտի մատուցանէ քեզ իր մատանին և հողաթափն ի համբոյր, և ուր երեք յաջորդական ծնրադրութիւններէ վերջը միայն կարելի պիտի ըլլայ քեզ մտնել, սրահի մը մէջ կը պատահիս չորս կամ հինգ դեռահասակ եկեղեցակահայ՝ որոնք մանուշակագոյն պարեզօտ և ուռուցեալ և փոքր ծալքերով վտառակներ հագած են, և խօսակցութիւններով արքունեաց արարողութիւններու ձանձրոյթը կը զուարթացընեն: Երբ «ձէզու» ի նախասենեկէն անցնիս, և երթաս ժէզուի թաց գլխաւորին ներկայանալու, հարկ է քեզ անցնիլ սրահէ մը՝ ուր քառասուն քարտուղար կը դրեն ամեն ծանօթ լեզուներով, յետ որոյ կը գտնուիս այնպիսի մարդու մը ներկայութեանն առջեւ, որ անսահման շահերու վրայ հսկելու պաշտօնն ունի, և որ կը նստեցնէ զքեզ ու քեզի հետ գործոյ վրայ կը խօսի: Ասի կաթոլիկութեան Արչիէօն * է, իսկ միւսը Լուի ԺՊ .ը:

«ձէզուի» դիւանատունը, մէկ քանի օրուան միջոցին մէջ՝ աւելի շատ ծանր գործեր կը տնօրինուին, քան թէ ամբողջ տարուան մը միջոցին կարգինալներէ կամ նոյն իսկ Պապէն նախագահուած միաքանութեանց մէջ: Պատճառն այս է որ Պապական հաստատութիւնը կը ներկայացնէ միջին դարու

* Արչիէօ (Առման-ժ . տիւ Բլէսիւ, Կարտինալ, դուքս Արչիէօյի) Լուի ԺՊ . ի մեծանուն սրաշտօնեայն, ծնեալ ի Փարիզ ի 1583, մեռ . ի 4 գեկտեմբեր 1642: Շատ մը երեւելի սրատերազմներով Պաղղիական դէնուց փառքն յաւելցուցած, և շատ մեծ խորհուրդներ հաստատամտութեամբ ի գլուխ հանած է . բայց նաեւ մեծ անդթութիւններ գործած . և տէրութեան շահուց պատրուակաւ իր անձնական վրէժխնդրութիւններն ի գործ դրած է:

մէջ Նկերդեցւոյ պատրիարքական կաղմակեւոյութիւնը , իր յամբութիւններովը , իր պարզմտութեամբը , իր քմային ընթացքներովը . մինչդեռ ժէզուիթական հաստատութիւնը կը դործէ այն կեդրոնացումի դրութեան բովանդակ նրբամտութեամբը , որ այսօր արդի վարչութեանց զօրութիւնը կը սահմանէ :

Վատիկանը տակաւին աւատական մեծ դղեակ մ'է՛ ուր կ'ապրին ընտանեբար . «Ճէզուն» պաշտօնատուն մ'է՛ ուր ամեն մարդ առաւօտուն իր դործը սահմանուած կը գտնէ , եւ կ'աշխատի տեսչի մ'աչաց ներքեւ՝ որ աշխարհի մը շահուց պատասխանատուութիւնն ունի :

Պապին ձեռքը բաց է տալու եւ օրհնելու համար : Այն՝ որ անաստիւն մէջ հացերը բազմապատկոյն ներկայացուցիչն է , Հռովմէական երկիրներուն թաղաւորին դանձը հըրաշալեօք անսպառ կը կարծէ : Չի կայ նեզութիւն մը , պէտք մը , յաւելցնենք նաեւ ճշմարտոն ըսած ըլլալու համար , չի կայ բարեպաշտական մտային հաճոյք (ֆանթէզի) մը որ Պապին առջեւ ներկայանայ՝ առանց առ ժամայն անսահման առատածեւոյնութեան մ'առարկայ ըլլալու , եւ երբ Հռոմայ Ս . Վերտուսի անշուք՝ այլ լայնարձակ պատշգամէն իր օրհնութիւնը կուտայ քաղաքին եւ աշխարհի , սարսուռ մը կ'ընթանայ ծնրադրեալ ամբոխին մէջ , եւ չի հաւատացողներն իսկ կ'զգան թէ անոր մէջ աստուածային բան մը կայ :

Ժէզուիթաց Վերապատուելի մեծաւորը Սրեւմուտքի՝ Պալիէրայի , Յունաստանի , Բորթուկալի թաղաւորաց նման քրտան փոքր թաղաւորներու «Պիւճէ» էն աւելի ընդարձակ «Պիւճէ» մ'ունի իր տնօրինութեան ներքեւ , որուն մէջ հարիւր բաօլիին անգամ դործածութիւնը նշանակուած է ճշդիւ , մանրամասն հաշուակալութեամբ : Յեղափոխութիւնք կ'անցնին , կը խորտակեն ընկերային հինօրեայ կաղապարը , լայնածաւալ զօրանոցներու կը փոխարկեն հզօր ուխտին կառուցած դեղեցկաչէն վանքերն ու հոյակապ վարժարանները . եւ երբ խաղաղութիւնը կը յաջորդէ , երբ քաղաքական փոթորիկը իր

յեալին զայրոյթքը կը ցածուցանէ, Ս. Ինեասի ուխտին այս մեծ շարժչին արդասաւոր մղմամբը՝ մէկ քանի տարուան մէջ շատ մը միլեարներու արժողութեամբ շինութիւններ, ամենէն աւելի արդիւնաւէտ արուեստական ձեռնարկութեանց մէջ գրուած դրամագլուխներ այս ընկերութեան պահանջքը կը կազմեն, որուն «Պիւճէ»-ին բոլոր ծախքը կը կայանայ մի քանի մարդոց զգեստին ու համեստ կերակրոյն մէջ: Պապութիւնը ամեն տարի հաւատացելոց ձեռքերէն եւ թողութիւններէ դոյայած հասոյթներէն խիստ մեծ գումարներ կ'ընդունի, որոց ամենափոքր մէկ մասն իսկ իրեն համար վար չի դնել: Աթէ Եանթոի կամ Նոթո-Տամ-տէ-Վիքթուաի աստուածամօր պատկերին նման սեւ փայտէ հին տիրամօր նկարի մը պսակ մը դրկելու ըլլայ, պէտք է որ այս պսակը ոսկեղէն, ականակուռ, եւ Հոովմայեցի արուեստաւորին ալ ութսուն հազար ֆրանգ վճարուած ըլլայ: Պապութիւնը մշտահոս աղբիւրն է: Յիսուսեան ընկերութիւնը այն վիճն է՝ ուր դարուցի դարս պիտի դիզուէր բեմբասացներու քրտամբք, դասատուներու երկամբք եւ ժառանգութեան հետամուտներու երկարատեւ համբերութիւններովը շահուած ոսկին, եթէ ժամանակ առ ժամանակ բորբոքող յեղափոխութեանց սոսկալի օրէնքը չի կատարուէր եւ չի դար «Եղիփսի ոսկին աւարաւուաց տոպրակը պարպելու»:

Պապերը սաստկապէս կ'զգան այս ախոյեան զօրութեան լուծը, որ, զանոնք պաշտպանելու պատրուակաւ, տակաւ առ տակաւ անոնց տեղը բռնելու կը նկրտի: Աղեմէս ԺՊ. շատ մը վարանումներէ եւ արտսունքներէ վերջը՝ օր մը ձեռքը այս հարստահար ցեղին վրայ տանելու արիութիւնն ունեցաւ, եւ իր «Եէնիչէրի»-ները արձակեց: Յեղափոխութեան մեծ ցնցումներէն վերջը, ճարը հատած Պապութիւնը դարձեալ անոնց բազկացը մէջ նետուեցաւ: Չուշացան զարհուրելի ըլլալու: Պիոս Թ. ի քաղաքական վերանորոգչին մոլեղին ոխերիմները եղան: Իսկ այսօր անոր կը հանդուրժեն, վասն զի զանի զգեստնեցին եւ խոնարհեցուցին այնպիսի ընդդիմագոր-

ծուծեան (ուէարսիօն) մ'ամեն նուաստութիւններուն՝ որ երկրային պատուածեան վերջին ճգնաժամն է :

Բազմիցս Պիոս Թ. փորձ փորձեց նոցա լուծէն զերծանելու : Օր մը Վատիկանի արձանագրութեանց դիւանէն Աղեմէս ԺՊ. ի օրով անոնց վտարման վաւերական գրերն հանեց, եւ հայր Թէյերի յանձնեց «Աւանք Աղեմայ ԺՊ. ի» ատուոցսով այս մեծ ընկերութեան դէմ գրուած գրքերէն ամենէն սուկային խմբագրել, վասն զի անոր թերթերը նոյն իսկ Պապին հրամանաւը տպուած էին : Յիսուսեան ընկերութիւնը, զօրեղ այլ դիւրածեք թփի մը նման, գլուխը ծռեց, բայց ետքը վեր առաւ զայն՝ առաջուրնէ աւելի ուժով եւ զօրութեամբ : Աարծեցին թէ անոնց դէմ հարուած մ'էր՝ ամեն տեղ եւ մինչեւ Հռովմի Ս. Աետրոսի Սկեզեցոյն ճակատին վրայ իրենց մարդարէութիւն՝ Աատարինէլան գատապարտող հանդիսաւոր վճիռը ծանուցանող յայտարարութիւններ փակցընելը, այն մարդարէութիւն՝ որ ամեն տեղ կը կանխասացէր ժէզուիթաց միջոցաւ Աթոլիկ աշխարհին մէջ դործուելիք մեծ հրաշալիքները եւ մասնաւորապէս Արեւելեան եկեղեցեաց Հռովմի հետ միացումը : Ժէզուիթք լուիկ մնչիկ ընդունեցան այս ապտակը, բայց ընդ հուպ հարկ եղաւ անոնց հետ հաշտուիլ եւ կրկին նոցա խնամակալութեանը տակ մտնել : Իրենց մեծ յաղթանակը եղաւ Անարատ Յղութեան վարդապետութեան հրատարակումը, որուն աւելի հաստատութիւն մը կուտային պապերուն հրովարտակները : Ժէզուիթական Վատիկանը յաղթեց ուրեմն Պապական Վատիկանին : ճրչմարիտ քահանայապետը զնկեղեցին կառավարող սխտին փառաց եւ զօրութեան աճումը տեսաւ : Թողուցին մի սին որ թագաւորաց եւ կայսերաց դեսպաններն հանդիսաւոր կերպով ընդունի, շատ մը միտակներ, վարդարաններ, եւ փոքր պատկերներ (ակնիւս) օրհնէ, ոսկեղէն վարդը զրկէ վեհապետաց եւ գոհացնէ այն «օրհնութեան» պէտքը՝ զոր յարածամ ունինալ կը ցուցնէ Հռովմի ժողովուրդը :

Սյն սխտին Պապիկոյ մէջ զարդացումն Ալիսաւորին ամե-

նէն եռանդուն շանից նախատակը եղած է միշտ : Հռովմ այսօր զառամութեան մէջ է , հոնկէ չի բղխիր կեանքը , ո՛չ կըրօնքի եւ ո՛չ ուրիշ բաներու մասին : Պաղղիան յորդահոս կենաց երկիրն է : Աւստի հարկաւ Փէղուիթք պիտի փութային այս արգաւանդ հողը մեծաւ խնամով մշակել :

Տասն տարիէ ի վեր խիստ յախուռն ձեռնարկութեան մը ս'լսած են : Մեղմով եւ առանց աղմկի պէտք էր մեծ ազդին ծոցն արմատանալ , եթէ ոչ համարձակապէս եւ բուռն դըղըրգմամբ , Պաղղիոյ բոլոր քաղաքացի մէջ ուսուցանելու իրաւանց տէր ըլլալ , եւ հոն շքեղութեան մասին Տէրութեան վարժարանաց հետ մրցող վարժարաններ կառուցանել : Միաբանութեան ժողովոց մէջ այս վերջին հնարքը յարթանակեց :

Պիւրին է մակաբերել որ անշուշտ Թ . Հարաւոյ դշխոյն , գերազանցապէս կաթովիկ քաղաքը , մասնաւորապէս անոնց հայեցումքն իր վրայ հրաւիրեց : Անկարելի էր որ իրենց վարժարանին համար Սէն-Սէրնէնի սնարից վրայ զետեղուած անշուք շէնքով մը բաւականանային : Պէտք էր միլիոններ արժող հոյակապ շէնքի մը շինութեան միջոցներուն վրայ խորհիլ :

Նոյն խակ այն իրիկունը՝ յորում Փիւլիօ իւր անկողնոյն վրայ ի զուր անդորդ հանդիստ մը կը փնտռէր , ծանր եւ հանդիսաւոր տեսարան մը տեղի կ'ունենար Հաւատաքննութեան տան մէջ : Քաւառակալ (Բաօվէնսիալ) Հայրը դադտնի ժողով մը հրաւիրած էր :

Նրբ խոր լռութիւն մը տիրեց , երբ ամեն հարք իրենց խոսքերուն մէջ փակուեցան եւ զանազան դատիկոններու նրբութեաց մէջ ա՛լ ընաւ ըյս չ'տեսնուեցաւ , եօթն ծերունիներ ժողովոյ սրահը դացին :

Միակ կանթեղ մը կը լուսաւորէր այս սրահը եւ անոր սլատերուն վրայ աղօտ նշոյլներ կը ձգէր : Ասդին անդին մի քանի քանդակներ կախուած էին , պարզ շրջանակներու մէջ առնրւած , որոնք մեր ժամանակը կրօնական աշխարհին մէջ սիրելազոյն՝ բարեպաշտական առարկայներ կը ներկայէին : Ս .

Իգնատիոս մը , Ս. Գրանտուա-Քապիէ մը , մէկ Ս. Առի-տը-Աոնզակ , մէկ Յիսուսի Նուիրական-Սիրտ մը , մէկ Մարիամու Նուիրական-Սիրտ մը , մի քանի միտիօնարաց ի Զին եւ ի Ճարտն մարտիրոսութիւնը եւ մէկ Աուսին երեւումը Սալէթի մանկանց : Պաճեայ սեւադիծ մեծ Քրիստոս մը , որու վրայ նըկարիչը ասդին անդին պղնձի փոշուով մէկ քանի մետաղական ցոլքեր նետած էր , սրահին խորն արձանացած էր : Աանաչ բրդէ դորդով ծածկուած սեղան մը , այս սեղանին ետին թիկնաթոռ մը , սրահին բոլորտիքը աթոռներ . ահա ասոնք էին սրահին բոլոր կազմածը : Աարմրագոյն աղիւսներով հինօրեայ տախտակամած մը վերջին դարդն էր Հաւատարմութեան այս ահաւոր սրահին ուսկից միջին դարու մէջ մահուան վճիռներ արձակուած էին :

Պաւառակալ վերապատուելի Հայրը դէպ ի սեղանը յառաջացաւ եւ անոր վրայ դրաւ պողպատեայ փակոցով կաշեայ մեծ թղթապանակ մը : Միւս Հայրերն ալ իրեն աջ եւ ձախ կողմերը շարուեցան : Ամենքն ալ ծնրագրեցին , ե Պաւառակալը ցած եւ յամր ձայնով մը «Նկ Սուրբդ» եւ «Ողջոյն քեզ , Մարիամ» աղօթքներն արտասանեց : Հարք պատասխանեցին այս աղօթքին : Յոտն կացին եւ բաղմեցան :

Ամեն հայեցումքները խոնարհեցան վայրահակ . Պաւառակալը նախ ինքզինքն ամիսօփեց , եւ ապա մեծ թղթապանակն իր առջեւ բանալով այսպէս խօսեցաւ :

— Հարք իմ , մեր Պերապատիւ դիտաւորէն Ք. ի մէջ մեր ուխտին համար տուն մը շինելու հրամանն ընդունեցի : Մեր ընկերութեան Ք. ի մէջ յաջող կացութիւնը անձանօթ չէ ձեզի : Պաղղիոյ ամեն քաղաքներէն աւելի հոս , այս քաղաքիս մէջ մեր ուխտը ամենէն մեծ աղդեցութիւն մը կը վայելէ : Մեր վարժարանին , որ հետզհետէ զարգացման վիճակի մէջ է , այլ եւս խիստ նեղ կուգայ Սէն-Սէրնէնի հրապարակին վրայի առժամանակեայ շէնքը , եւ ընդ հուպ մեծ շինուածի մը շինութեան ձեռնարկելու պէտքը կ'զգացուի :

Անցեալ տարի այս շինութեան խորհրդոյն ձեր հաճու-

թիւնը տուիք, և ես ալ այն խորհուրդը հաղորդեցի Պերապատիւ Պլխաւորին՝ որ չուշացաւ ինքն իսկ իւր հաւանութիւնը տալու: Արդ ժամանակն է այս խորհուրդն ի կատար ածելու միջոցներուն վրայ խորհելու: Մեր ճարտարապետին ծրագիրն իմ քովս ունիմ: Անշուք և ստորին բան մը չ'եմք կրնար շինել. պէտք է այս շինուածին մեծաշուք գիրքովն ամեն աչքերը շլացնել. պէտք է որ իր բարձրութեամբը և շք'ղութեամբը դերազանցէ քաղաքին ամեն շէնքերը, արքեպիսկոպոսարանը, կղերմնոցը և կուսակախն ապարանքը, և, ի բաց առեալ կճեայ սիւներով նախագաւիթ մը, պէտք է նաեւ որ Ասպիտոյի հետ ալ մըցի: Պիտէք, հարք իմ, որ մեր բոլոր զօրութիւնը դրսէն ցուցնելու պէտք ունիմք: Մեղի համար, որ խեղճ կրօնաւորներ ենք, բաւական են խցիկի մը խոնարհ անկիւնը, պարեգօտ մը և օրուան հացը, բայց ուխտը՝ պէտք է որ մեծ ըլլայ և ճոխ երեւի: Պուցէ զարմանալի պիտի երեւի ձեզ. շինութեան հաշուեդրոյն ընդհանուր թիւը երեք միլիոնը կ'անցնի: Արաւ է որ այս երեք միլիոնին չորս-հարիւր-յիսուն-հազար ֆռանդը քաղաքին ամենէն դեղեցիկ թաղերէն միոյն մէջ գնուելիք հողոյն իբր դին հաշուուած է: Աւսկից պիտի գտնենք այս երեք միլիոնը:

Զսպուած ժպիտ մը ծերունեաց շուրթերուն վրայ տեսնուեցաւ: Տկար շշուէջ մը լսուեցաւ:

— Երեք միլիոն, ըսաւ Հայր Արքիւէ՛ որ Պաւառակալին աջ կողմը նստած էր, դըլուխը ցնցելով, երեք միլիոն, այդչառ է: Հին ատենը յիսուն հազար ոսկեով գաւառի մէջ դեղեցիկ վարժարան մը կը կառուցուէր:

— Այո՛, հին ատենը, ըսին միւս ծերունիներն հառաչանօք:

— Պիտէք, յաւելցուց Պաւառակալը, որ ընկերութեան ընդհանուր գրամագլխոց վրայ չ'ենք կրնար վստահիլ: Այս գրամագլուխներն՝ որ արուեստական մեծ ձեռնարկութիւններու և մասնաւորապէս երկաթուղեաց շոգ ենաւուց ընկերութիւններու մէջ գրուած են, պահեստի գումարներ են՝ զորս

ուխտը դժբաղդ ժամանակներու համար կը պահէ : Աէտք է նախատեսել այն վայրկանը՝ ուր գուցէ Յեզափոխութիւնը զմեզ Պաղղիայէն վտարել յաջողի : Քէ և առ այժմ այս մասին երկիւղի տեղի մը չ'ունիմք , և ուխտը կը թագաւորէ շընարհին Աստուծոյ , բայց դէշ օրերը կրնան վերասին և ոգանալ : Աւրեմն անօգուտ է այս միջոցին վրայ մտածելը : Մեր Բուաթիէրի , Պօրտոյի և ուրիշ տեղերու մէջ եղած հայրերն շէնքեր կը կանգնեն առանց ընկերութեան կեդրոնական գրամարկէն սանթիմ մ'առնելու :

Կանոնը , դիտէք , հարք իմ , խտախ կը պահանջէ որ ամեն նոր հիմնարկութիւն ինքն իրեն բաւական ըլլայ , և այնքան խիտ է այս մասին , որ եթէ միեւնոյն քաղաքին մէջ երկու տուն ունենայինք , իւրաքանչիւրին իրեն կ'իյնար իւր հաստատութեանը կարեւոր միջոցները ձեռք բերել : Այս կանոնը թէ և դրսէն նայելով միեւնոյն ընկերութեան անդամոց մէջ ըլլալ հարկ եղած դժութեան օրինաց կը հակառակի , սակայն և այնպէս մեր իւրաքանչիւր քաղաքի մէջ զարգացումն ու ընդարձակութիւնը անոր արդիւնքն են : Նոյն իսկ Փարիզի մէջ Մայր-Տունը իրաւունք չ'ունի քաղաքին միւս տանց սանթիմ մ'իսկ գրիւելու : Երկու տարի յառաջ Հայր Աստիկանեան դիշեր մը Սէն-Փէրմէն արուարձանը մեծաշուք աիկանոջ մը տունը գտնուելով հանդանակութիւն մ'ըրաւ Փարիզի մէկ թաղին մէջ նոր հաստատուած սան մը համար՝ որն որ հետեւեալ օրը իւր հայրը գտնելուն վրայ ապահով չէր : Հո՛ն , այն լաւ խորհող և բարեպաշտ ժողովքին մէջ ամեն աչերէ արտաւք հասեցուց :

Այս բանը քիչ մը խիտ է , դիտեմ , բայց ընկերութեան անջատման և աղքատասիրութեան ողւոյն վրայ տիեզերաց զարմանքը կը գրգռէ : Աւխտը պարտի ճոխ և մեծագոր ըլլալ , մեք նոյն իսկ կարեւորէն ալ կրնանք զուրկ մնալ : Հոս է ահա՛ այս կազմութեան ոյժը :

— Աէտք է որ այս իմաստուն կանոնին հպատակինք , ըսաւ ուրիշ հայր մը :

— Անտարակոյս , շարունակեց Պաւստակաղը :

Եւ թղթապանակը թղթատելով թուղթ մէջ հանեց՝ զոր իւր առջեւ դրաւ :

— Մենք արդէն մէկ քանի խնայութիւններ ըրած ենք , Հարք իմ , Հինգ-հարիւր-հազար Ֆրանկ զուտ հասոյթ Սէն-Սէրնէնի վարժարանէն , ներկայ տարւոյնն ալ ի միասին հաշուելով Ֆր . . 500,000

Երկու-հարիւր-քսան-հազար Ֆր . դոյայած քարոզչութիւններէ , աղօթատեղիներէ , և միայնարանը քաշուողներէ , մեր Պ . ի մէջ հաստատութենէն ի վեր , մեր հարց ձեռքով այլ և այլ քաղաքացի մէջ հաւաքուած մասնաւոր տուրքերն ալ ի միասին առնելով " 220,000

Իննսուն երկու հազար-վեցհարիւր-վաթսուն և եօթն Ֆր . դաղանասպէս տանց և վիճակին մէջ եղած հանդանակութիւններէ " 92,667

Մեր Հաւատաքննութեան տանը գինը , որուն համար երկու-հարիւր-հազար կ'առաջարկեն մեզ , հոն Մշտնջենաւոր Երկրպագութեան միաբանութիւնը հիմնելու համար " 200,000

Աւանդական ժառանգութեամբ ստացուած մասնաւոր հրիտակներ՝

Տիկին Ամսուհի Ալլ Վլինեաքի " 80,000

Տիկին Մարքիլուհի Պատուրի " 120,000

Տիկին Մարգէ այրի " 230,000

Պ . Ասան , հին սեղանաւոր " 70,000

Պ . Ամս Վիլլըպրի-Միէի " 118,000

Աենդանի կամ մեռել աւանդանց ոմանց մասնաւոր տուրքերը՝ բերողին վճարելի տոմսակօք " 96,000

Անդամանդ .ք , ապարանջանք , դոհարք , թանկագին ասեղնադորժուածք , աշխարհային

Հարստութեան կորչուած և արժեքի	60,000
Ընդամենը	<u>4,786,667</u>

Ահառասիկ արդէն բաւական մեծկակ դումար մը՝ որուն վրայ գրեթէ կրնանք վստահ ըլլալ, եթէ շահախնդիր և անկըրօն ազգականներու կողմէն դատ մը չի դայ այս ժառանգութիւնները մեզմէ խլելու :

Տիկին տը Պաօնթօն իւր բոլոր հարստութիւնը, որ 240,000 ֆրանկ կ'արժեցնեն, մեզի համար կտակաւ կը նուիրէ բարեսիրտ Պ. Պիւվալօյին՝ որ սուրբ մարգ մ'է և որուն վրայ կըրնանք անկասկած ըլլալ ինչպէս նոյն իսկ մեր վրայ :

Տիկին տը Պաօնթօն 78 տարեկան է . զդառի կերպիւ դէպ ի դերեզման կը յառաջէ, և Լըկրան բժիշկը ապահովցուց զի որ աշունը չի պիտի անցնէ : Նա իւր դեզեցկատիպ հոգին պիտի աւանդէ Աստուծոյ ձեռքը տերեւութաւի ժամանակ :

Տիկին Սօնթէքի պարոնուհին իւր կաշուածոց կէսը կը նուիրէ նոյնպէս կտակաւ մեզի համար Պ. Ուսիայ՝ մեր աւանդաւորին : Իւր նօտարը 80,000 ֆրանկ կ'արժեցնէ այս մասը : Միւս մասն ալ, որ իրմէ երկու տարու նուազ հասակաւոր քրոջը վերապահուած է, որ մը նոյնպէս մեզի պիտի լցնայ, կը յուսամ :

- Բու դործդ է այս, Հայր ժէրվէզ :
- Հայր ժէրվէզ գլուխը խոնարհեց և ժպտեցաւ :
- Կը յուսամ յաջողիլ, վերապատուելի Հայր :
- Ուրեմն այս ալ ապահովեալ բան մ'է կամ կրնայ համարուիլ : Սակայն դեռ ս'ըչափ հեռու ենք պահանջուած դումարէն : Մեր դերապատուելի դիտաւորը ինձի կը դրէ ըսելով . «Աւանց սնտուկնուդ մէջ դրամագլուխ ունենալու բանի մը մի՛ ձեռնարկէք :» Ուրեմն հիմա մեր դործը պիտի ըլլայ դումարին մնացորդը հայթայթել : Ամեն բանէ յառաջ մեր վստահութիւնը պիտի դնենք Նախախնամութեան վրայ . նա զգալի եղանակաւ կը պաշտպանէ մեր միաբանութիւնը որ այնքան բազմայեղ դէպքերէ և վիկիտիայից, ամպարչտաց և յեղափոխականաց մոլեղին պատերազմներէն ետքն ալ տա-

կաւինն այսօր կաթուղիութեան գլուխը կը գտնուի . սակայն նախախնամութիւնը կ'ուզէ որ մարդիկ աշխատին և ներդրութիւն կրեն :

Յայտնի եւ ակներեւ է որ Թ . ի պէս ընչաւէտ քաղաքի մը մէջ՝ ուր մեզի անձնուէր այնքան բարի հողինէք կը դըռնըւին , մեր երեք միլիօնը պիտի յաջողինք ձեռք բերել :

Տեանենք հիմայ մեր անստոյգ ինչքերը :

Հայր Շէվի , դուք կը խնամէք ծերունի Պ . Պէյուօնը , այնպէս չ'է : Որոնք են ձեր յոյսերը : Անիկայ միայն մէկ հեռաւոր ժառանգ մ'ունի : Յաջողեցա՞ք կտակադիր մը ձեռք անցնելու :

Հայր Շէվի ստքի ելաւ :

— Պժուարութիւններ կը տեսնեմ գործին մէջ , Աերապատուելի Հայր : Պ . Պէյուօն վերջին աստիճան փոփոխամիտ անձ մ'է . իր գաղափարները միշտ մի եւ նոյնը չ'են , եւ , խօսքը մեր մէջ , տղու նման բան մ'է : Իմ վստահութիւնս իր երկու սպասուհեաց վրայ է , որոնք բարեպաշտ աղջիկներ են , բնաւ չ'են զատուիր անոր քովէն եւ չ'են թողուր որ մէկու մը հետ տեսնուի : Հասկըցուցած եմ իրենց թէ իւրաքանչիւրը լաւ բաժին մը պիտի ունենայ , եթէ յաջողին անոր ձեռքէն ի նսրաստ մեզ կտակադիր մը բրջնելու : Մեծ խոհեմութիւն հարկաւոր է , նախ արդիւնելու համար որ չ'ըլլայ թէ օր մը ապացուցուի թէ զրեթէ տղու պէս բան մ'էր կտակն ըրած ատենը , եւ յետոյ անոր տունը մտցնելու համար մեր սիրելի Պ . Արկուօն որ ժառանգական աւանդաւուն (ֆիտէրքոմիտէն) պիտի ըլլայ :

Ապրը այս գործիս համար ժամադրութիւն մ'ունիմ , եւ չ'եմ կարծեր որ օրը անցնի առանց կտակը ձեռք անցընելու :

- Որչափ կը կարծէք որ ըլլայ հարստութեան դումարը .
- Առ նուազն 200,000 ֆու . սքանչելի՛ բան :
- Խիստ ծեր է :
- Այո՛ , ծեր , խիստ ծեր , եւ զրեթէ տղայ մը :
- Խնամեցէք ծերը : Իսկ դուք , Հայր Արանաիէ , Ապթէլի Տիկին Աերակոմնուհին ինչպէս ըրիք :

Հայր Արանտիէ սրատասխանեց :

— Այս դործն ալ քիչ մը դժուարին է , վերապատուելի Հայր իմ : Գժուարութիւնը՝ երկու հօրեղբօր աղջիկներ ժառանգութենէ դրկելու մէջ կը կայանայ , երկու հարստութեան ծարաւի եւ Գասկոնեի ամենէն խորամանկ աղջկանց պէս սատանայամիտ աղջիկներ՝ որոնք ինձմէ կը կասկածին : Սակայն զանոնք բռնելու կերպը գիտեմ ես . յաջողեցայ հուսկ ուրեմըն համոզելու զիրենք թէ աւելի լաւ է գեղեցիկ կտակագրոյ մը զօրութեամբ շորս-հարիւր-հազար ֆռանդին մեզի հետ մասնակից ըլլալ , քան թէ թողուլ որ հարստութեան տէրը առանց կտակաւրելու մեռնի , որ առեն՝նոյն հարստութիւնը բազմաթիւ Լրկորդական ճիւղերու մէջ բաժնուելով՝ իրենց մի միայն մէկ տասներորդ մասը պիտի կրնայ իյնալ : Թէ եւ բոլոր ժառանգութիւնը գրաւել կը փափաքին , բայց վերջապէս այս կերպին պիտի հաւանին : Խեղճ ճիկիւնը զգալի կերպիւ կը մօտի իւր մահուան . առաջին հարբուխը կրնայ զինքը տանիլ : Աւտի վերջնական միջոցներս ձեռք առնելու պիտի փութամ : Բաց աստի , շատ մը շարժուն ստացուածքներ կան որ ինձի խոտապուած են . այս մասին վստահ եմ :

— Աստուած օրհնէ՛ զքեզ : Կսկ սիրելի հայր Պրիֆարը իւր պաշարումը ՚ի գլուխ հանեց արդեօք :

— Այո՛ , վերապատուելի հայրդ իմ :

Եւ յաղթական խոտովանահայրը ծերունեաց պշուցեալ աչաց առջեւ թղթապանակէն ըստ արժանւոյն վաւերագրեալ եւ ստորագրեալ դրօշմատիպ թուղթ մը կը հանէ եւ Գաւառակալին կը մատուցանէ որն որ այս նօտարէն վաւերացեալ թուղթն առնելով՝ կը դռչէ :

— Ատակաղիւր մ'է այս :

Իւր հայեցուածքը կը բոցավառի , դէմքը զուարթ ու պայծառ երեւոյթ մը կ'առնու , եւ խորին գոհունակութեան ժպիտ մը իւր շրթանց վրայ կը դեզ երի :

Ար կարդայ . ամենքը կրօնական ընտելութեամբ մ'ունկնդիւր կ'ըլլան :

«Նարոյէն Պ . շնորհուն Սատուծոյ և կամօք Ազգին Աայս-
սըր Պաղղիացւոց , ամենեցուն՝ որոց տեսցեն զներկայս՝ ողջոյն :

« Ես ստորագրեալս , նօտար կայսերական ի բնակութեան
Թ . ի , նշանագրելոյ ի թիւ 42 , բնակեալ ի հրատարակին
Լաֆայէթի , ի թիւ 15 , դալով ի բնակարանն Էլէօնօս-Սիւ-
զան-Աիթրա տը լա-Պլավիէր Տիկնօջ , այրւոյն հանդուցեալ
Էթիէն-Ֆէլիսիէն ժիւլիօ տը լա-Պլավիէրի , բնակելոյ ի փո-
ղոցն Թօրի ի թիւ 27 , ընկալայ , ի ներկայութեան վկայիցն
ստորագրելոց , գլետին կամս վերոյիշեալ տիկնօջ , որք այսո-
քիկ են առանց իրիք փոփոխութեան :

« Ես Էլէօնօս-Սիւզան-Աիթրա Տը-լա Պլավիէր , այրի
հանդուցեալ Էթիէն-Ֆէլիսիէն Տը-լա Պլավիէրի , ի հասակի
ամաց եօթանասուն և երկուց , դիտացեալ զի չիք ինչ առա-
ւել անստոյգ քան զկեանս և ստուգադոյն քան զմահ , զայս
օրինակ կարդագրեմ զկտակագիրն իմ :

« Ընդ հանրական հրտակառու իմ կարգեմ ներկայիւս ,
վասն հաստատուն բարեկամութեանն ի յիս , զՊ . Վէնսան-
Սամարակ տը Թուռնիչօն , բնակեալն ի Թ . ի փողոցն Մաժ , 13 ,
յանձն առնելով նմա զկատարումն այոց հետողայ կտակաց :

« Ա . Թոչակ իմն տարեկան և ցկեանս՝ հազար ֆռանդաց ,
վճարելի առ Պ . Աբբայ ժիւլիօ Տը-լա Պլավիէր , եղբօրոր-
դի իմ , սարկաւադ այժմ ի Աղերանոցն Թ . ի , փողոց Թօ-
րի , 16 .

« Բ . Թոչակ իմն տարեկան և ցկեանս՝ հազար ֆռանդաց ,
վճարելի առ Օր . Լուիզ ժիւլիօ Տը-լա Պլավիէր , դուստր
եղբօր իմոյ , բնակեալ այժմ ընդ իս ի փողոցն Թօրի , 27 .

« Պ . Թոչակ իմն տարեկան և ցկեանս՝ երեք-հարիւր-յի-
սուն ֆռանդաց , վճարելի առ Մատլէթ Ռոմէնկայ , ի դեղ-
ջէն Վալդապրէրի , սպասուհի իմ :

« Զկտակագրային յայտարարութիւնս զայս , ես ստորա-
գրեալ նօտարս առեալ ի դիր արձանագրեցի աստանօր ի-
պէտս որոց անկն է :

(Ստորագրութիւնք)

« Վասն ճշգրտութեան ընդօրինակութեանն .

ՏԻԻՊՈՒՐՏԻԷ, Նօտար » :

Թուղթը խնամօք կաշեայ մեծ թղթապանակին մէջ դրուեցաւ : •

— Շատ լաւ, Հայր Պրիֆար, ըսաւ դաւառակալը . յանձնարարութիւններն հանուելէ վերջը, քանի՞ հազար ֆռանգի գումար մը կը կազմէ մնացեալ հրիտակը :

— Պ. Թուռնիչոն 450 հազար ֆռանգի կ'արժեցնէ :

— Ատակարարը շուտով պիտի մեռնի :

— Աենաց մէկ շունչ մ'ունի միայն :

— Արեմն կրնանք հիմակուրնէ մեր շինութիւններն ըսկըսիլ . ձեզի ի՞նչպէս կ'երեւի, Հարք իմ :

Աը կասկածուի որ միաձայն հաւանութիւն մը եղաւ այն ծանր անձանց պատասխանին :

Գաւառակալ Հայրը ոտքի կ'ելնէ : Ամենքը կը ծնրադրեն : Աղօթք մը կ'ուղղուի առ կոյսն՝ որ այսպէս զգալի օրինակաւ կը պաշտպանէ այս բարի կրօնաւորներն, և կ'առատաձեռնէ անոնց այս աշխարհի ինչքերն՝ որոնցմէ այնքան անձնուրացութեամբ կը հրաժարի իւրաքանչիւրը, ազքատութեան ինքնակամ ուխտով մը :



Զ .

ԺԻԻԼԻՅՅԻ ՆԱՄԱԿՆ ՍՈՒ ԼՈՒԻԶ

Հէքն Վէառլօն սրտաճմլիկ դէմքով մը դնաց նախ իւր գըլխաւորէն, որ բարի և քաղցրահամբօյր Սիւլբիտեան մ'էր, մեկնելու հրամանն ընդունելու և յետոյ իւր խցիկին մէջ իր շուոյ պատրաստութիւններն ընելու : Այն սեւ պարեգօտին տեղ՝ զոր երեք տարիէ ի վեր կը հաղնէր՝ աշխարհական հանդերձ մ'զգեցաւ, զորն որ դերձակը նախընթաց օրը բերած էր :

— Հնացեալդ ամիան Հռովմէական, ըսաւ իւրովի այս երկարածիգ պատմութեանը դնելով այն արկեղ յատակը՝ ուր կը զետեղէր իւր զգեստները, դու աշխարհի խրոխտ երկրակալաց ուսերէն Քրիստոսի հեզ եւ խոնարհ առաքելոց ուսերուն վրայ ինկար: Դո՛ւ ա՛լ այս ժամուս ժողովրդոց աչաց առջեւ ուրիշ բան մը չ'ես, բայց եթէ գոռողութեան, մարդկութեան մեծամեծ շահուց ճնշման, խղճերու վրայ բռնակալութեան նշան մը: Դու աշխարհի շատ պատկառանք ազդեցիր, շատ թշուառներ գրեզ ողջունեցին, և Սէն-Լէօն-տը Առան և Սէն-Վէնսան-տը Բօլ գրեզ կրեցին: Քիչ ատենէն դու յիշատակ մը միայն պիտի ըլլաս Պղատոնի և Յունաստանի մեծ փիլիսոփայից վերարկուին և միջին դարու ասպետաց զբրահից նման՝ որոնք այսօր մեր թանգարանաց մէջ կը կենան:

Լուեց վայրկեան մը. յետոյ յաւելցուց:

— Բայց, մինչեւ որ պարտեալ եկեղեցականութիւնը ըզքեզ մերկանալու հաւանի, քանի՛ մրցմունք, քանի՛օ՛ն մորմոքք և լլկանք հարկաւոր են:

Վէռուլօնի չուն, իւր օրոշումը եկեղեցական վիճակը թողելու՝ կղերանոցին մէջ մեծ դէպքի մը կարգն անցան:

— Ս, զէկ կ'ընէ, կ'ըսէին ոմանք, եթէ այդ բանին կոչում չ'ունի:

— Շատ մ'աղօթենք իրեն համար, կ'ըսէին միստիկայինք՝ պզտիկ սուրբերը, աչքերնին երկինք վերցնելով:

Երբ իր բեռները կրող սպասաւորին առջեւն ինկած մեծ սանդուխէն վար իջաւ, սա արհամարհանաց բառը զարկաւ ահանջին:

— Դասալիքն:

Շառագունանք մը պատեց ճակատը. աչքերը արտասուքով մը թրջուեցան: Զանաց ծածկել այս ամօթը:

Նրբուղւոյն մէջ բազմաթիւ խմբակ մը կազմուեցաւ: Ոմանք համակրութեան մնացուած մը կը կերպարանէին այս աննենդ երիտասարդին նկատմամբ՝ զոր սիրած էին. այլք գողցես հազիւ կը ճանչեային զայն ու անտարբերութեամբ

անոր երեսը կը նայէին . մոլեկրօններն անոր վրայ հաւատա-
քըննչաց ակնարկներ չը շեշտէին : Ար խոնարհէր աչերն ու կ'անց-
նէր : Բոլոր այս բերաններէն չելաւ և ո՛չ մէկ բարեկամա-
կան խօսք մը , և ո՛չ մէկ հրաժեշտի պարզ բառ մը : Մինչ
նրբուղիէն դուրս ելնելու և դէպ ի դուռը ուղղուելու վրայ
էր , ձայն մը լսուեցաւ :

— Անդամ մ'ալ , բարեա՛ւ երթ , իմ ամենասիրելի Վէռու-
լօնս :

Այս դիւցազնական դործոյն առջեւ ամեն զիմաց վրայ
ղարմանք մը կը նկարուէր : Փիւլիօն էր այն որ բաղմութիւ-
նը ճեղքելով գնաց իւր բարեկամին ձեռքը սեղմելու : Խան-
դադատանօք նայեցաւ անոր ետեւէն մինչեւ որ արտաքին
ծանրաշարժ դուռը գոցուեցաւ դասալիք փախստականին
վրայ :

Փիւլիօ նորէն խուճբին հետ միացաւ իւր խցիկը երթա-
լու համար : Սա թշնամալիւր խօսքը գրեթէ ըսուեցաւ իւր
ականջին :

— Ահա մէկ մ'ալ որ անոր պէս չ'ընելուն վրայ անշուշտ
կը ցաւի :

Վէռուլօն , Բեռկամինիէռի փողոցը դեռ չ'գացած՝ ուր
խիստ օգաւէտ և ջերմագին փոքրիկ բնակութիւն մը վար-
ձած էր հարաւակողմը նայող , Թօրի փողոցին 27 թուոյն
առջեւ կանկ առաւ , դուռը զարկաւ և դուռը բացող պա-
ռաւ կնկան մը նամակ մը յանձնեց՝ զոր Փիւլիօ առաւօտուն
իրեն յանձնարարած էր :

Այս կինը Մատլէթն էր : Այս նոր հագուստին տակ ճանչ-
ցաւ նա կատարելապէս այն նորատի Աբբայն՝ զոր Լա-Ռլա-
վիէրի մէջ տեսած էր : Խաչակնքեց դէմքը իբր թէ սատա-
նայի մ'երեւոյթ տեսած ըլլար , ջղանձգական շարժմամբ
մը գոցեց դուռը , և այնպիսի արագընթաց քայլով մը քա-
լելով որուն նմանը քսան տարուրնէ ի վեր չ'էր տեսնուած իւր
քալուածքին մէջ , խռովայոյզ դիմօք մտաւ այն սրահը՝ ուր
հօրաքոյրն ու եղբօր աղջիկը կը գտնուէին :

- Սուրբ կոյս Մարիամ, գոչեց, ի՞նչ էր տեսածս :
- Ի՞նչ կայ Մատլէթ, հարցուց Լուիզ :
- Ի՞նչ է, ըսաւ տիկին Տը-լա Պլավիէր :
- Ա՛հ, տիկին, Սբբայն կղերական պարեզ օտը թողեր է :
- Ո՞ր Սբբայն :
- Այն՝ որ պարապոյ օրերուն միջոցին Պ. Ժիւլիօյի հետ Լա-Պլավիէր էր :
- Է՞յ ուրեմն, այդ քան տարօրինակ բան մ'է եղեր, ըսաւ Լուիզ :
- Ահաւասիկ օրիորդին համար ինձ տուածը, ըսաւ պառաւ աղջիկը տիկին Տը-լա Պլավիէրին գառնալով :
- Հօրաքոյրը ճանչցաւ Ժիւլիօյի դրութիւնը և նամակը Լուիզի տուաւ : Լուիզ զայն կարդալու և անոր պատասխանելու համար սենեակ մ'առանձնանալու թոյլտուութիւն խնդրեց :
- Օրիորդ Տը-լա Պլավիէր այն ատեն իւր գեղեցկութեան լիուրի պայծառութեանը մէջ էր : Հարաւ այնոց շատերուն նրման իր ալ դիմաց գծագրութիւնը քիչ մը խոշոր էր, բայց սքանչելի նրբութեամբ մօրթ մը, դոյզն ինչ ամօգունութիւն մը, վճիտ ականողիք՝ որոց մէջ կը նկարուէր գողցես իւր աննենդ ու անբիծ հողին, այս հռովմայեցւոյ դիմակը կ'անուշցնէին, և առանց անոր ազնուական մեծվայելչութենէն բան մը պակսեցնելու, նոր շնորհք մ'ու փայլ մը կը յաւելուին : Ժիւլիօ, որ արուեստագէտ էր, երբեմն կ'ըսէր անոր իւր անմեղ հիացման վայրկեաններուն մէջ :
- Արլի Ասողկան նմանութիւնը կը բերես դու :
- Լռէ՛, ծաղրածո՛ւ, կը պատասխանէր երիտասարդուհին : Աբբայի մը չ'վայլեր իւր քրոջը հպարտութիւն ազդել :
- Ժիւլիօյի Լուիզի նկատմամբ զգացած սէրը առաւել եւս պնդած էր այն քաղցր կապը՝ որ անդստին յորրանէ կը միացընէր զիրենք : Աբբային սիրտը, որ սիրոյ անհաւատալի ընդունակութիւն մ'ունէր, իւր քրոջը սիրով հրավառեալ էր, տեղի տալով ծածուկ բնադդման մը՝ որ կ'ըսէր իրեն թէ այս սուրբ սէրը պիտի փրկէր զինքը, իր ամուրի մնալու ուխտին

յարակից դժնդակ փորձերէն : Արնար նա սիրել և սիրել անբըծութեամբ :

Լուիզ ալ կ'սիրէր իւր եղբայրը : Ժիւլիօ իւր պարծանքն էր . ինչ որ իւր խղճմտանաց փափկութիւնը չէր ներէր իրեն աղէկութեան մասին իր վրայօք խորհիլ , կը վերաբերէր զայն իմացականութեամբ և սրտով օժտեալ այս վէհ բնութեան : Նա ինքզինքը կը սիրէր յայս մարդն՝ որուն ուրիշ մարդոց վըրայ ունեցած գերազանցութիւնը կ'զգար : Ար սէրը մանաւանդ տեսակ մը զարմանք էր . Ժիւլիօյի գեղաժպիտ ճակատուն բոլորովին փառաց լուսահիւս պսակ մը կը տեսնէր :

Բայց Լուիզ կ'ին էր : Այս այնքան քաղցր և արդարեւ այնքան անբիծ կապը , որոյ իտէական բերկրութիւնները բաւական պիտի ըլլային Ժիւլիօյի սիրատենչ սրտին , պիտի կրնա՞ր պատասխանել իւր քրոջը ամեն բնազդմանց , որն որ , հրաշալի ձիրքերով օժտեալ բնութիւն , կը հասկնար արդէն անդիմադրելի ըղձանքներէ ազդուած՝ թէ իրեն համար՝ նոյն իսկ աշխարհի մէջ ցայն վայր իր ամենէն աւելի սիրած էակին հետ երիցատան մը մէջ թաղուելէն տարբեր ճակատադիր մը պիտի ըլլար :

Լուիզի սիրտը կը տրոփէր Ժիւլիօյի նամակին պահարանը բացած միջոցին : Նամակ մը միշտ գաղտնիք մը , խորհուրդ մ'է . անձանօթն է՝ զոր կ'որոնէ սիրող էակին տենդային աշխոյժը :

Ժիւլիօյի նամակը , թղթի մեծկակ կտորի մը վրայ՝ գէպ ի վեր ելլող տողերով ու արագութեամբ գրուած , ինչպէս կ'ընեն ինքնաբեր բնութեան տէր անձինք , կը նմանէր աւելի այն թերթերէն միոյն՝ որոց վրայ կը նետէ մարդ յանկարծագրեցիկ մտածութիւններ կամ բուռն և անզուսպ զգացումներ քան թէ եղբօր ու քրոջ խաղաղիկ թղթակցութեանը :

— Ի՞նչ կրնայ զրել ինձ այս պահուս՝ յորում անշուշտ իւր առանձնական մտածութեանց մէջ խորասուզած է իսպառ : Ի՞նչ կ'ըսես ինձ , ցանկալիդ քարտէս :

Եւ սկսաւ կարդալ :

• Սիրելիդ իմ Լուիզ ,

• Անշուշտ շատ պիտի զարմանաս այսօր ինձմէ նամակ ընդունելուդ : Իսկ դիտես որ ձեռնադրութենէ առաջ հարկ եղած մենակեցութեան մէջ ենք , և կանոնը կ'արգիլէ մեզի ամեն յարաբերութիւն արտաքիններու հետ՝ մեր ի քահանայութիւն նուիրման նախընթաց այս մտածումի օրերուն մէջ :

• Աւրեմն ինչո՞ւ այդ կանոնը կը բռնաբարես . պիտի ըսես ինձ :

• Աստուած իմ , կանոնին դիրը կը բռնաբարեմ , կը խոստովանիմ . բայց ոգին կը պահեմ : Քեզի հետ սրտազեղութիւն մը իմ վրաս լաւ ներդործութիւն մը պիտի ընէ : Քեզ իմ հոգւոյս ներքին կողմը կարգացնել տալէ , և յիս զեղող բոլոր մտածմանց ու ամեն տեսակ խորհրդոց նկատմամբ ըստփոփանք մ'ընդունելէ յետոյ , աւելի հանգարտ պիտի ըլլամ , և աւելի արիութեամբ պիտի դիմեմ վերջին զենման :

• Հոս ամեն տեսած բաներս ինձի ցաւ և վիշտ կը պատճառեն : Այս միայնութեան օրերու տարժանելի վարժութիւններն այնպիսի անխորհուրդ կերպով կարգադրուած են , միատիկական ոգին՝ որուն մէջ կը ծիւրի արդի քահանայութիւնը , այս վարժութեանց մէջ այնպիսի յայտնի ու բացարձակ կերպով կը տիրէ , միջին դարն իւր անհեթեթ ձեւերովն ու իր տղայական կերպերովն այնպիսի գերիշխանութեամբ մը կ'երեւի հոն և հոգւոյն այնպիսի ստորնութիւն մը և ստրկութիւն մը կը պարտաւորէ , որ կը կարեկցի մարդ կղերին վրայ՝ որ հրաշք մ'ընել կը կարծէ քահանայական դեռահաս սերունդը հոսելով այս անձուկ կազապարին մէջ՝ ուր կը ճընշուին իւր բոլոր գորութիւնները :

• Չմեզ կառավարող Սիւլբիսեանք արդարեւ բարեսիրտ ու քաղցրաբարոյ մարդիկ են . բայց , իրենք ալ եօթնեւտասներորդ դարու զաւակներն ըլլալով , չ'են կրցած վրիպիլ այն անհանճար ու այլանդակ եղանակէն՝ որ քահանայութեան սահմանուած նորատի երիտասարդին այնպիսի կրթութիւն մը կուտայ որ իբր թէ հետեւեալ օրը՝ եպիսկոպոսին

անոր վրայ ձեռք դնելէն վերջը, իբրեւ նոր սիւնակեաց մը, պիտի երթայ սիւնի մը վրայ դադարելու և ալ բնաւ հաղորդակցութիւն չունենալու երկրի հետ :

• Ար կարծէի՞ր թէ այս ութ օրերուն մէջ՝ ուր մեր մեծերուն խօսքը պէտք էր մեզ ցուցնել քահանայական կեանքն իր լայն հօրիզօնին մէջ, ուր, ինչպէս ծերունի նաւավարները լիտանդալից և հեռաւոր նաւարկութիւններ սկսողներուն, նոյնպէս ալ անոնք պարտէին մեզ ցոյց տալ խոչերն ու խութերը թէ՛ սրտի և թէ՛ այնպիսի կեանք մը վարելու մասին՝ ուր ուղղութիւնն ու անկեղծութիւնն իսկ զմ'իզ այնքան վրտանդաց մէջ կը գահավիժեն և մեզ այնքան դառնութիւններ կը պատրաստեն, կը կարծէի՞ր թէ պէտք էր մեզ օրը երկու անգամ մահուան, դատաստանի, դժոխոց և ուրիշահաւոր առարկայից վրայ երկայնաձիգ ճառեր մտիկ ընել, որոնք արդէն հարիւր անգամ զուրցուած են մեզ :

• Անշուշտ յարգանօք ունկնդիր կ'ըլլայ ասոնց մարդ, բայց անբացատրելի ներշնչութեամբ մը, երբ գիտէ և կը ճանչէ քահանային նոր պէտքերը այն նոր ընկերութեան ծոցին մէջ՝ ուր այնպիսի գեղեցիկ պաշտօն մ'ունի կատարել :

• Ար խոստովանիմք ի՞նչ որ բոլոր ասոնք արհամարհանք և ցաւ կ'ազդեն ինձ կղերին նկատմամբ՝ որոյ մէկ անդամն եմ այսօր. և, եթէ չունենայի այն պարզ հաւատքը՝ զոր կը ճանչես, մինչեւ հողւոյս ներքին խորերը սոսկալի ցնցում մը պիտի զգայի, և թերեւս դառն մորմ. քք և ապաշաւք պաշարէին սիրտս . . . : Ասի իմ յանցանքս չէ : Ինչո՞ւ կը յամառին իմ բոլորտիքս եղողներն այդքան անմտութեանց ու անպատեհութեանց մէջ. ինչո՞ւ յարգելի ու կրթեալ մարդիկ հաճութիւն մը կ'զգան յարատեւելու այն տարօրինակ ընթացքին մէջ՝ որ անհաշտելի է իրենց դարուն, և այն քաղաքակրթութեան պիտոյից և ըզձանաց հետ, յորս կ'ապրին : Յիրաւի, բոլոր ասոնք ինձ համար անհասկանալի են և անիմանալի :

• Բայց թողունք այս : Ի՞նչ պէտք է ընել այս ժամուս :

Այս ազէտները՝ որոց վրայ կ'ողբամ, չեն նուազեցներ իմ յարգանքս այս ուղղամիտ մարդոց նկատմամբ՝ որոնք բարեբախտաբար աւելի յաջողակ են բարւոյն օրինակը տալու քան զայն ուսուցանելու մէջ :

• Ի՞նչ ըսեմ այժմ : Ինքզինքս երկու աշխարհաց սահմանագլխոյն վրայ կ'ողբամ, կը բաժնուիմ պատանելութեան բերկրութիւններէն, հրաժեշտ կ'ուտամ այն վտանգալից տղիտութիւններուն՝ յորս ընդ երկա՛ր թողուց զիս իմ կղերական դաստիարակութիւնս : Առանց ո՛ր և է փոխանցման, իտէական նկատողութեանց կեանքէն աշխարհի դրական և իրականասէր կեանքին կ'անցնիմ : Այս կենաց ոչինչ պատրաստած է զիս հոս, բաց ի իմ առանձնական մտածութիւններէս՝ այն պարապոյ օրերէն ի վեր՝ ուր սակաւ ինչ ի մօտոյ տեսայ ինչ որ աշխարհ կը կոչուի, և նաեւ թերեւս բաց ի այն փրկաւէտ բնազդմանէն՝ որ աննենգ ողիները կը հրահանգէ և կանխահաս փորձառութիւն մը կ'ըլլայ :

• Անտարակոյս քիչ է այս, բայց այդ է իմ միակ զօրութիւնս այս աշխարհի առջեւ՝ ուր կը նետեն զիս : Ար խարուիմ, կայ ուրիշ զօրութիւն մի եւս, ուրիշ բարիք մի եւս՝ զոր ընձեռած է ինձ՝ Նախախնամութիւնը՝ զիս իրական կեանքի մէջ մտցնելու ատեն :

• Չե՞նադրութեանս հետեւելիք առաջին փորձը գուցէ միայն մէկ քանի ամիս տեւէ : Յետոյ փոքրիկ քաղաքի մը, Սէն-Աօտէնի, Միւրէի, և թերեւս նոյն իսկ Թ. ի մէջ փոխանորդութիւն մը պիտի ունենամ, և ապա Պիրենեանց ամենէն խոր ձորերէն միոյն մէջ ժողովրդապետական պաշտօն մը պարապ պիտի մնայ : Ընդհանուր-փոխանորդին դբաղեալ աչքը անպաշտօն փոխանորդաց ցանկին վրայ հայեացք մը պիտի նետէ, և գիւղի ժովրդապետ պիտի անուանիմ :

• Ես կը յուսամ ասոր, բայց դու, սիրելիդ իմ Լուիզ, ինձի հետեւելու արիութիւնը պիտի ունենաս : Բու ամենէն զեղեցիկ տարիներուդ մէջ՝ Աստուծով, բնութեամբ և բարեկամութեան ամենէն բարձր աստիճանը եղող եղբայրական

սուրբ սիրով ապրելու համար հոն դալու չափ պիտի կրնա՞ծ զիս սիրել: Մեր խեղճ հօրաքրոջ առողջութիւնը խիստ դիւրեղծանելի և անվտանգելի կացութեան մը մէջ է: Առաջին բուն տպաւորութիւն մը կրնայ անոր ուղեղին վնաս մը պատճառել և անոր կենաց թելը խզել. բայց այսօր պէտք է որ ամեն բան քեզի ըսեմ:

Չեմ կարծեր որ մեր հօրաքրոջը ժէզուիթաց ուշադրութենէն վրիպած ըլլայ: Բարեբախտ պիտի ըլլանք, եթէ այս մարդիկը մեր սննդեան բաւելու չափի թոշակ մը գէթ մեզի թողելու գութն ու պարկեշտութիւնն ունենան, և գոնէ կենաց անհրաժեշտ պիտոյքը հայթայթելու հոգերէն ազատ ըլլանք: Ասիկայ քեզի զգացուցած էի կանխաւ՝ զուարճաբանական ձեւով մը, դքեզ չ'ահաբեկելու համար: Այն ատենէն ի վեր, Թուռնիչոնին, որ մեր հօրաքրոջ վրայ հսկող Աերբերոսն* է, բերնէն ելած մէկ քանի խօսքերն՝ զորս աղէկ աղբիւրէ մը քաղած եմ, ինծի հաւատալ կուտան թէ դը ռաման գործն արդէն շատ յառաջացած է:

Ար խոստովանիմ որ այս բանիս յառաջքն առնելու վրայ չեմ խորհեր, վասն զի չի կրնալ յաջողիլս լաւ դիտեմ, և յաջողակութեան ու հնարադիտութեան մասին ժէզուիթաց հետ մրցելու պահանջումը երբէք չ'ունիմ: Բայց, եթէ յաջողելու ըլլան, մեզի ամենէն աւելի նուիրական եղած բաներուն վրայ կ'երդնում, անոնց քօղը վար պիտի առնում, պիտի խայտառակեմ զանոնք, և սուղի պիտի նստեցնեմ իրենց դործած այս դողութիւնը երկու որբերու իրաւանց մասին, որոց մին չի կրցին ընել ժէզուիթ մը, և միւսը՝ Նուիրական-Սրտի մայրապետ մը:

Որովհետեւ, խեղճ Աուիզս, դիտեմ որ շատ բարի, շատ բարեպաշտ ես, բայց կոչման մը ստուերը չ'ունիս: Հայր Պրիֆար թէ և խիստ յաջողակ ալ համբաւուած է, բայց քեզի հետ գլուխ չի պիտի կրնայ ելնել, քաջ դիտեմ:

* Շուն եռադլուխ, պահապան դժոխոց, ըստ առասպելից:

« Եթէ մեր բարեսիրտ հօրաքոյրը կորսնցնելու դժբախտութիւնը ունենանք, պիտի գա՞ս իմ խոնարհ ու անշուք երիցատունս գեղազարդելու, իմ երանութեան և խաղաղութեան հրեշտակս ըլլալու: Ահ, քանի՞օ՛ն տխուր և աղէտալի պատրանք մը կ'ըլլար իմ սրտիս համար, եթէ այս քաղցր յոյսը երազ մ'ըլլար, եթէ այն մեծ խորհուրդներով լի բարեկամուհին, զոր գտնել կարծած եմ ի քեզ, օր մ'ա՛լ ուրիշ բան չ'ըլլար բայց եթէ գձուձ կին մը՝ որ թեթեւամտութիւններու և յիմարութիւններու կեանք մը նախամեծար համարի սրտի այն քաղցր զուգաւորութեան՝ որուն ի վաղուց հետէ նախասահմանած էի դինքը: Ստուած չի պիտի ներէ որ այս թշուառութիւնը կրեմ, վասն զի մահաբեր հարուած մը պիտի ըլլայ ինձ այդ, և այն օրը, դառն յուսահատութեան մը մէջ, իմաստուն պիտի համարիմ անոնք՝ որոնք երիցատան պժգալի միայնութեան և ընտանեկան սրբազան վայելքներէն զրկուելու տխուր հարկին առջեւ կը նահանջին: »

« Մնա՛ս բարեաւ, սիրելիդ իմ Լուիզ. շաբաթ մեծ օրն է: Գիտե՛ս թէ ո՛րը պիտի ըլլայ այն առաջին անունը՝ որուն յիշատակը պիտի նուիրեմ Ստուածոյ՝ սեզանին ստորոտը, և թէ իմ սիրտս քանի՛ ջերմ մաղթանքներ պիտի ուղղէ յերկինքս միակ սիրելի քոյրի մը համար: »

« ԺԻԻԼԻՅՈ »

« Յ. Գ. — Մոռցայ ըսելու քեզի որ այս նամակը բերողը իմ բարեկամս՝ Վէռտլօնն է, այն նորատի Աբբան՝ որուն ընկերութիւնը անցեալ տարի, մի քանի օր վայելեցինք Լա-Պլավիէրի մէջ: Իեռ այսօր կղերանոցէն բաժնուեցաւ: Ազնիւ սիրտ մ'ունի: Քահանայական պաշտօնին մէջ կրնար մեծ բարիք գործել. բայց աշխարհ կը մտնէ. իւր այս որոշումը ինձի մեծ տրտմութեան առիթ եղաւ: Տկարութեան և վհատութեան զգացումի մը առջեւ տեղի տուաւ: »

« Ահ, բոլոր այս բաներն կաթոլիկ կրօնքին համար ի՞նչ տխուր ապագայ մը արդէն իմ աչացս առջեւ կը նկարեն: Արքան հոգիներ բեկած են, ո՛րքան ընտիր ու հաղուադիւտ ու

դիներ հովուական պաշտաման ահարկու պատասխանատու-
ութիւնն ստանձնել պիտի մերժեն : Բայց եսական ոգիներ ,
առանց քրտանց և աշխատութեան հայթայթուած պատառ-
մը հացին անյագ ցանկացող , եկեղեցւոյ սրբավայրին մուտ-
քը կը խռնուին : Երեք տարի մենակեցութեան մը ձանձ-
րոյթնէրը կը կրեն , ուսկից ետքը ազատ օդին մէջ կ'ենեն ,
կ'ըզգենուն հանդերձ մը՝ որով դոյզն ինչ յարգանք կ'ստանան ,
և հետեւեալ աւուր վրայ անկասկած ու ապահով կեանք մը
ձեռք կ'անցընեն : Ասոնցմէ վերջը կուգան փառամունները՝ ո-
րոց աչաց առջեւ հեռուէն կը շողայ ոսկեկուռ մատանին ե-
պիսկոպոսական վերարկուն հետ , դաս մը մարդկան՝ որ
չ'սպառիր ո՛չ եկեղեցւոյ , ո՛չ աշխարհի մէջ , և որ խիղճն ու
ՂԱստուած իսկ կը հանէ ի վաճառ իւր անյագ փառասիրու-
թիւնն յագեցնելու համար :

• Թշուա՛ռ եկեղեցի . . . ե՛րբ պիտի դունէ վերստին ինչ
որ թողուց նա , գետնադամբաններէն բոլորովին փառա-
ճաճանչ դուրս ելած ատեն : •

Լուիզ մինչեւ այս վայրկենիս ոտքի վրայ կեցած էր ,
իւր սենեկին փոքրիկ պատուհանին առջեւ օրուան վերջին
նշոյլներէն լոյս առնելով : Պաղ քրտինք մը հոսեց ճակտէն .
նամալն ինկաւ ձեռքէն , և , ոգեսպառ ու դողդոջուն , իւր
ետին դտնուած ցած աթոռի մը վրայ նստաւ :

— Ժիւլիօ՛ . . . Ժիւլիօ՛ . . . մրմնջեց , քու թշուառու-
թիւնդ պիտի ըլլամ ես :

Եւ երկար լռութիւն մը ատրեց սենեկին մէջ :



ԿՆՐԴԻՆԱԼ - ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԸ

Նորին Գերապատուութիւնը Լուի-Օկիւսթ-Շառլ-տը-Ֆըլամարէն, Աարդինալ Հռովմէական Եկեղեցւոյ, Յորինիթէ-տիւ-Մօն (Նորորդութիւն Լեռին) տիրողոսով, և արքեպիսկոպոս թ. ի, բարձրահասակ և գեղեցիկ ծերունի մ'էր, բաց և զուարթ դէմքով, որու բոլոր անձը ազնուականի, եպիսկոպոսի և հանճարեղ մարդու եզական խառնուրդ մը կը ներկայացնէր : Թ. ի ազնուական մասը չ'էր սիրեր զինքը, վասն զի իւր ազատամիտ դաղափարներովը, իւր եպիսկոպոսական վիճակը հասած ատեն ժառանգական-թագաւորականաց (լէժիթիմիսթ) հակառակութեանց հաղորդ ըլլալը բացէ ի բաց մերժած ըլլալովը, և կուսակալին ու պաշտօնական մարդոց հետ բարեկամաբար վարուելովը՝ տեսակ մը քաղաքական ուրացեալ կը համարուէր : Չ'էին վախնար թ. ի սրահներուն մէջ բարձրաձայն զրուցելու թէ կարդինալը իւր խոյրը կառավարութեան քով ըրած շողմարարութեանց շնորհիւն ստացած էր :

Այսու ամենայնիւ միշտ անոր հետ ամենայն քաղաքավարութեամբ և առ երեսս խորին յարգանք կը վարուէին :

— Այդ պարկեշտ մարդոցմէն, կ'ըսէր, իմ բոլոր ուզածըս ալ այդ է :

Թ. եկած ատենը միևնոյն դերը խաղացած էր ժէզուլիթաց հետն ալ : Անհաշտ ատելութեամբ մը կ'ատէր զանոնք : Ժէզուլիթք կարդինալին իրենց դէմ ըլլալն իմացած ըլլալնուն մասին կասկածներ ցոյց տալէ չգուշացած էին : Ուստի հազար ու բիւր գորովոյ ցոյցերով կը չըջապատէին զինքը, և ամեն առթի մէջ կը կրկնէին թէ գիտէին որ նորին Գերապատուութիւնը ընկերութեան լաւագոյն բարեկամներէն մին է : Արքեպիսկոպոսը պաշտօնապէս խիստ համակրական բառերով կը խօսէր բարի հարց նկատմամբ : Ասոնք սուտ ոս-

կիներ էին որ սուտ դրամներով կը փոխանակուէին : Սակայն այն գերիշխանութիւնը՝ զոր ժէզուիթք ամեն օր ձեռք բերելու վրայ էին իւր եպիսկոպոսական քաղաքին մէջ, ժողովրդապետաց տրտունչները՝ օրոնք վեհերոտութեամբ, անշուշտ մատնուելու վախերնէն քայց շարունակ, կշռայլին յայտնելու թէ թեմերու իրական ժողովրդապետները ժէզուիթներն էին, և թէ իրենց՝ որ բուն հովիւներն էին, ուրիշ բան չ'էր մնացած քայց միայն «մանր» հոգիներու տեսչութիւնը, ասոնցմէ աւելի, ընչից դրաման մասին ի գործ դրուած ճարտարութիւններն ու հաւատացելոց բազմաճօխ ընծայները իրենց յանկուցանելու համար գործադրուած սուրբ նենդութիւններն, այն ստուգութիւնը թէ քիչ ատենէն ժէզուիթական մեծ տուն մը պիտի բարձրանար քաղաքին կեդրոնը և թէ շքեղութեան մասին պիտի հաւասարէր Ապպիտովի՝ որ Պ. ի բնակչաց պարծանքն էր, բոլոր այս պատճառները մէկտեղ գալով ծերունին դոյզն ինչ զրգուած էին : Առի-Ֆիլիբի թագաւորութեան առաջին տարիներէն ի վեր եպիսկոպոս էր : Բոլոր զաղղիացի եպիսկոպոսներուն պէս ինքն ալ վարժուած էր այն բացարձակ ինքնիշխանութեան՝ որ հասարակ լեզուի մէջ զուտ բռնակալութիւն (տէսթօթիզմ) կ'անուանի : Յայն վայր միշտ տէր այն վիճակաց՝ զորս կառավարած էր, առանց ընդդիմութեան ստուերի մը պատահելու, հիմայ ընդդիմութեանց ամենէն սոսկալոյն առջեւ կը գտնուէր, այնպիսի ընդդիմադիր մասի մը՝ որ խիզճերը կը գերէր, հասարակաց վարկը կը գրաւէր և վեհապետօրէն իշխելով իրեն լոկ ընդարձակ վիճակի մը առաջնորդութեան բեռը կը թողուր, առանց բարոյական գերիշխանութեան՝ որ է հոգիներու վրայ ճշմարիտ ազդեցութիւնը :

Դեռ քիչ ատենէ ի վեր իւր ընդհանուր-փոխանորդներէն մին՝ Ա. բբայ ժօլիպէր մեռած էր : Այս Ա. բբան իւր մէկ քանի մասնաւոր առաքիլութիւններովը գովելի մարդ մ'էր, քայց ժէզուիթաց անդուլ շողոքորթութիւնները զինքը պարզ-

մըտօրէն իրենց ծուղակին մէջ ձգած էին : Այս մարդուն , զոր իւր կենդանութեան ատեն ժէզուիթք յանչափս կը դըրուատէին և սուրբ մը կը կոչէին , քաջ դիտնալով որ անոր շնորհիւ արքեպիսկոպոսական ժողովին մէջ զօրաւոր նեցուկ մը ստացած կ'ըլլային , արքեպիսկոպոսական վիճակի ընդհանուր փոխանորդութեան պաշտօնին մէջ յաջորդեց ընդհանուր-քարտուղարը՝ որ Աարդինալին մտերիմն ու սրտակից բարեկամն էր , և ժէզուիթաց նկատմամբ դոյզն յարգանք մը ցոյց կուտար :

Արքեպիսկոպոսարանի նոր քարտուղարը դեռ կարգուած չ'էր : Խել մը նորատի քահանայներ կը տենչային այս կարեւոր պաշտօնին՝ որն որ մէկ մարդու մը աչքէն անցընել կուտայ ամբողջ վիճակի մը բոլոր և նոյն իսկ ամենէն գաղտնի գործերը , ժէզուիթք անշուշտ ունէին իրենց ընտրելին . երջանիկ կ'ըլլային՝ եթէ կարենային սոյն պաշտօնին մէջ իրենց անձնուէր ոգիներէն մին զեռեղել : Աստի վերջին հանգըստեան աղօթքը դեռ չ'էր երգուած իրենց նախնի պաշտպանին մարմնոյն վրայ , երբ Պաւառակալ գերապատուելի Հայրը կը փութար իւր ցաւակցական այցելութիւնն ընելու Աարդինալին , բարի Պ. Ժօլիպէրի պէս մարդու մը կորստեան համար՝ որուն նման մարդիկ չի կրնար գտնուիլ մեր թշուառ դարուն մէջ . և դիտնալով , գրեթէ ի պաշտօնէ , որ ընդհանուր-քարտուղարը պատկառելի հանգուցելոյն յաջորդը եղած էր , ժէզուիթական ճարտարութեամբ մը Աբբայ Աիւրսօնի անունը կը սպրդեցնէր , « հին և համեստ քահանայ մը , կ'ըսէր , քաղաքավար կերպերով , անդուլ աշխատող , գործունեայ , յստակ իմացականութիւն մը , և թերեւս Թ . ի վիճակին համար մեր կըթած երիտասարդ քահանայից մէջ՝ Նորին գերապատուութեան քով՝ այս ժամուս պարսպ գըտնըւած այդպիսի դժուարին պաշտօնի մ'անհրաժեշտ բոլոր թէութիւնքն ու յարմարութիւններն ունեցող միակ քահանայն » :

Աարդինալը ծեր աղուէսին բարեմտութեամբ շնորհակալ

եղաւ, և խիստ ուրախ երեւցաւ որ նախախնամութիւնը քարոտուղարներու այս հրաշակերտը բարի հարց ձեռքին տակ զետեղած է, այնպէս որ գերապատուելի Վաւառակալը ժրմտալից դէմքով Հաւատաքննութեան տունը դարձած ատեն, կարգին բոլոր տոլորութեանց հակառակ, չի կրցաւ զսպել իւր ուրախութիւնը և յայանեց հինգ կամ վեցհարց՝ ըսելով. «Թէ Աարդինայը ա՛լ ձեռքին մէջն էր, և թէ եթէ կորուսին Պ. Ժօլիպէրը, վստահ էր սակայն որ արքեպիսկոպոսարանի ժողովոյն մէջ ընկերութեան շահուց ոգւով չափանձնուէր երիտասարդ մը պիտի մտցընէր »:

Նոյն օրը Աարդինայը Սիւլբիսեանց կղերանոցը պիտի երթար, հետեւեալ շաբաթ օրը ձեռնադրուելիք քահանայացուներուն վրայ Վլխաւորին տեղեկագիրը մտիկ ընելու: Հաւատարիմ աղբիւրէ մը՝ Տիկին Տը-լա Պլալիէրի Ժէզուիթաց ըրած կտակին բոլոր պարագայներն իմացած էր. գիտէր սոյն կտակին կեղծ կտակակատարը և երկու որբոց եղած անիրաւ դրկանքն ու բռնաբարութիւնը: Իւր զգայուն հոգին զայրոյթ մ'զգաց, և թէ և, իբր եպիսկոպոս, այնքան հոգ չէր ըներ որ իւր նորատի քահանայներէն մին գեղեցիկ հարստութեան մը տէր ըլլայ՝ զոր քահանայութեան մէջ զրեթէ միշտ կըրնայ մէկը անկախ ըլլալու գործածել, սակայն ասոր մէջ ալ Ժէզուիթ կրօնաւորաց գեղեցիկ ու ճոխ ժառանգութեանց տէր ըլլալու համար ի գործ դրած նենդապատիր հնարից մէկ նոր ասպացոյցը տեսաւ:

Երբ Թ. ի Սիւլբիսեանց դիխաւորը նոր ձեռնադրելեաց ցանկին մէջ գտնուած անունները մի առ մի կարդալով Պ. Աբբայ Տը-լա Պլալիէրի եկաւ, կարդինայը անոր նկատմամբ տրուած տեղեկութիւնները մասնաւոր ու նշանակելի ուշադրութեամբ մը մտիկ ըրաւ: Երիտասարդին բարուց, յատկութեանց ու յարմարութեանց վրայ հարցումներ ըրաւ՝ որոց ամենուն նպաստաւոր պատասխաններ ընդունեց:

— Գերապատիւ Ս. Հայր, Ժիւլիօ արբայն մեր մէկ քահնի տարիէ ի վեր սոյն վիճակիս մէջ մարդած քահանայացու-

ներուն ամենէն ընտիրներէն մին է : Իւր երիտասարդական թերութիւններն ունի, չափազանց եռանդ , դիւրագործիւ երեւակայութիւն մը, համարձակախօսութիւն մը՝ երբեմն անխոհեմ . բայց ժամանակը կրնայ բոլոր այս պակասութեանց դարման տանիլ :

Որքան որ այսպէս կը դատենք այս երիտասարդը , չենք կրնար սակայն ծածկել ձեր Պերապատուութենէն որ իրեն դէմ ազդադիր մ'ընդունած ենք՝ որուն ինչ աստիճան կարելորութիւն ունենալը արդէն խորհրդով կշռեցինք , բայց կըփութամք նաեւ ձեր ուշադրութեանը յանձնել զայն :

— Ուսկից եկած է այդ ազդադիրը . ստորագրեալ է :

— Անշուշտ , դերապատիւ Տէր , եթէ չըլլար , ձեզ ներկայացուելու արժանի չէինք համարեր զայն : Ժէզուիթ հայրէ մ'ստորագրեալ է :

— Դեռ ուրիշ ի՞նչ բաներու կը խառնուին , ըսաւ Արքեպիսկոպոսը բաւական դառնութեամբ : Աարծեմ թէ քիչ ատենէն ձեռնադրութիւն ալ ընել պիտի ուզեն . միայն այս մնաց իրենց Թ . ի մէջ :

Ներկայ դանուող Սիւրբիսեանք իրարու երես նայեցան , և կէս ժպիտ մը ամեն շրթանց վրայ սողոսկեցաւ : Բայց բընաւ խօսք մը չելաւ իրենց շրթունքներէն . Աարդինալը նորէն խօսքը առաւ :

— Այս բանին դարմանը կը խորհինք : Տեսնեմ սա նամակը՝ Եւ կարդաց բարձրաձայն .

« Պ . մեծաւոր և յարգելի պաշտօնակից ,

« Քիտեմ որ քիչ օրէն ձեռնադրութիւնները տեղի պիտի ունենան : Արսուի թէ մեր վաղեմի աշակերտներէն մին՝ Աւֆլալիէրի Աբբայն քահանայութեան պիտի կոչուի : Անոր նախնական կարգերն ընդունած ատեն՝ վարանեցանք մեր ըզգացումները ձեզ հաղորդելու այս երիտասարդին կոչման մասին՝ որուն ժամանակին այնքան մեծ խնամք ունեցած ենք : Մեծ պատասխանատուութիւն մ'է ո՛ր և է կերպով մը դեռաւհատակ եկեղեցականի մը կարգաց մէջ յառաջանալուն վրայ

Ժաներանայր : Ուրեմն նոյն ատեն մեր ըրած զգուշութեան պատճառը կը հասկնաք : Սակայն նոյն զգուշութիւնը այսօր մեզի ցաւ կը պատճառէ , վասն զի ստոյգ աղբիւրէ առնուած տեղեկութիւններ կը հաւաստեն մեզ թէ նա վերջին պարապոյ օրերուն միջոցին եկեղեցական սգիէ զգալի կերպով հեռացեր է : Իւր կոչման անվայելուչ ու անսուրբ գրքեր կարդացեր , և իր քրոջ հետ ըրած խօսակցութեանց մէջ խիստ թեթեւամտօրէն վարուեր է : Նոյն իսկ կ'երեւի թէ թշուառը նոր գաղափարներով ալ լեցուեր է , որոնց ի'նչ ապրիճան մնաստառիթ ըլլալը կը ճանչէք : Բոլոր ասոնք ծանր բաներ են , և եթէ այս դժբախտաբար խիստ մօտակայ ձեռնադրութեան նկատմամբ մեր երկիւղներն ձեզ հաղորդած չ'ըլլայինք , օր մը Աստուծոյ առջեւ յանցաւոր պիտի ըլլայինք մեր զանցառութեանը համար :

« Հաւատացէք որ ձեր գեղեցիկ վիճակին նկատմամբ մեր ունեցած համակրութենէն զատ բնաւ ուրիշ պատճառ մը դրդած չէ՛ զմեզ սոյն ընթացքը բռնելու , որ թէ և ծանր է , բայց որուն հակառակը դործել անկարելի է , երբ խիղճն ու կրօնից սրբազան շահերն ի նոյն կը դրդեն զմարդ :

« Ընդունեցէք , Պ . Մեծաւոր և յարգելի պաշտօնակից , իմ խորին յարգանացս հաւաստին :

« Թ . , 10 Սեպտեմբեր 1856

« Ի Դիմաց Պաւառակալ Հօր

« Ստոր . ՖՈՒՐՆԻԷ , Ը . Ժ . »

— Ս.յո' , ըսաւ Կարգինայր , նամակը սեղանին վրայ դրնելով , զանի իւր ինչքէն կողոպտեցին , և հիմայ ալ զինքը կը հալածե՛ն . կը ճանչնամ զիրենք հող :

Եւ նորէն ձեռքն առնելով նամակը .

— Կուղեմ պահէ՛լ այս թուղթը . իրենց նենդութեանց պատմութեանը համար խիստ կարեւոր է : Անյնինք միւսներուն , վասն զի սոյն նորատի Աբբային նկատմամբ ձեր տուած տեղեկութիւնները սքանչելի են : Չեմ ուզեր որ Ժէզուիթները եպիսկոպոս ըլլան իմ վիճակիս մէջ : Ս.յսօրունէ պիտի

սկսիմ ցուցնել անոնց թէ ի՛նչ աստիճան կարևորութիւն կ'ընծայեմ իմ կղերիս դէմ իրենց ըրած ազդարարութեանց :
Պ. Աբբայ ժիւլիօ Տը-լա Պլավիէրը իմ ընդհանուր-քարտուղարս կ'անուանեմ :

Պիւրին է երևակայել այս խօսքին Սիւլբիսեանց նման վեհերոտ ու զգուշաւոր մարդոց վրայ ըրած ազդեցութիւնը : Ամենքը տիրոջ կամքին առջև խոնարհեցան : Արքան դեռահաս ու անփորձ ալ կ'երևէր իրենց ժիւլիօ Աբբայն այն պաշտօնին համար՝ ուր կը բարձրացնէր զինքը կարդինալին շնորհը, այս բանիս մէջ ամեն բանէ յառաջ ժէզուիթաց դէմ դործըւած թշնամութիւն մը տեսան, և ծափահարեցին :

Կարդինալին կառքը կղերանոցին մեծ դրան առջև կ'ըսպասէր : Պլիսաւորը մինչև փողոցը ընկերացաւ անոր : Կարդինալը, բաժնուելու ատեն, ըսաւ անոր .

— Իմաց տուէք այն նորաստի Աբբային որ յառաջիկայ երկուշաբթի օրը Արքեպիսկոպոսարանին մէջ պաշտօնի պիտի սկսի :

Այս տեսարանէն երկու ժամ ետքը, ուր առաջնորդն այնքան եռանդ ցոյց տուած էր, ժէզուիթաց գաղտնի ոստիկանութիւնը խղճահար ճշդութեամբ մը Սիւլբիսեաններուն տան մէջ բոլոր անցածը կ'իմացնէր անոնց : Փողոցին մէջ ըսուած խօսքն իսկ ըսուած, և Քաւառակալ հօր մեծ մտատանջութեան առիթ եղած էր : Անտարակոյս Սիւլբիսեանց մէկ պաշտպանեալն էր որ իրենցինին կը յաղթանակէր . բայց ո՞վ էր արդեօք այն : Պէտք էր գիտնալ զայն, ինչ որ ալ ըլլար : Արդ ինչ որ Ք. ի Ռատիկանութեան ամենէն ճարտար դործակատարին համար անհուն դժուարութիւն մ'էր, ժէզուիթաց Ռատիկանութեան համար խաղ մ'էր : Անմիջապէս կղերանոց զրկած էին ծերունի Տօքթօն Տէթէլը, բըժիշկ առանց հիւանդի, որուն տարեկան փոքր թոշակ մը կուտային, և որ կրօնական աշխարհին մէջ ժէզուիթաց դէմ թշնամական ողի մ'ունենալ կը կեղծէր : Ո՞վ կը կասկածէր թէ այս ծերունին պարզապէս Հաւատաքննութեան

տան մէկ գործակատարն է : Առանց դժուարութեան , շատ տարիներէ ի վեր յաջողած էր Պ . Պուրնալի վտահաւթիւնը յինքն յանկուցանելու : Պ . Պուրնալ իւր կարգակցաց նման պարզասիրտ և արժանաւոր Սիւլբիսեան մ'էր . Տօքթէօս Տէթէլ զայն ընտրած էր իրեն խոստովանահայր :

Յերունի բժիշկը , որ ճերմակ վզնոց և լայն շապկի լանջանոց մը կը կրէր , եկաւ ուրեմն խոնարհաբար Պ . Պուրնալի սենեկին մէջ հողևոր մխիթարութիւններ փնտռելու : Խօսակցութեան ընթացքին մէջ ըսաւ թէ Թ . ի մէջ օրուան մեծ լուրը Սրբեպիսկոպոսարանի ընդհանուր-քարտուղարին անուանումն է : Յաւելցուց թէ Ֆէլուիթք իմանալով որ նոր պաշտօնեայն Սիւլբիսեանց ազդեցութեամբը կոչուած էր այս պաշտօնին՝ խիստ զայրացած էին :

Սիւլբիսեանը ազոռուն դերը խաղաց :

— Բայց ի՞նչպէս եղեր է , ըսաւ , որ այդ բաները իմայուներ են քաղաքին մէջ : Բոլոր ատոնք Նորին Պերապատուութեան և մեր մէջ միայն խօսուեցան :

— Խիստ պարզ կերպով , սիրելի հայր իմ : Նորին Պերապատուութեան փողոյին մէջ ձեր գլխաւորին նոր քարտուղարին անունը տալն ու պաշտօնի սկսելու օրը որոշելն լսուեր է : Ինձ ալ ըսին այդ անունը : Աբբայ . . . արբայ . . . ս'հ , Աստուած իմ , ինչ դէշ բան է ծերանալը . արբայ . . . արբայ . . . կեցէ՛ք . . . շուտով միտք պահուելիք անուն մ'է :

— Պ . Ժիւլիօ Տը-լա Պլալիէր , ըսաւ Սիւլբիսեանը :

— Ստուգիւ այդ է , այդ . . . ս'հ , խեղճ յիշողութիւն , կորուսեր եմ զքեզ :

Եւ իւր լայն եզրերով գլխարկն ու երկայն գաւազանն առնելով , կ'ողջունէր Սիւլբիսեանը , կ'իջնէր կարելի եղածին չափ արագութեամբ , և գաւառակալ հայրին սենեակը մըտնելով դադարի դռնէ մը , սոսկմամբ այս ահաւոր անունը կը հնչէր ականջին - Աբբայ Ժիւլիօ Տը-լա Պլալիէր :

— Ի՛նչ դժբաղդութիւն , աղաղակեց Պաւառակալը : Ատիկայ մեզ համար թշնամի մը , ոխերիմ մը պիտի ըլլայ .

Նողկալի՛ ընտրութիւն : Ի՞նչ յիմարութիւններ կ'ընեն սա
խեղճ Սիւլբիսեանները : Բարի Տօքթէօուս , ներեցէ՛ք ինձ .
ստիպուած եմ դուրս ելնելու : Շնորհակալ եմ ձեր եռան-
դէն . այսպիսի դորձեր կենաց դպրութեան մէջ կ'արձանա-
դրուին : Դուք ձեր ծերութիւնը կը օրբադորձէք : Օրհնեալ
եղիք : Մնա՛ք բարեալ :

Եւ Հայրը , քանի մը վաչրկեան ետքը , Մալաքի Մարդի-
ղուհւոյն տան դուռը կը զարնէր : Այս Մարդիղուհին բարե-
պաշտ կին մ'էր , Թ. ի մէջ ամենուն յարգելի եղած էր , և
մանաւանդ կարգինալին՝ որ անօր-դատողութեանը կը հաւ-
նէր և երբեմն խորհուրդ խօսկ կը հարցնէր անօր :

Մարդիղուհին ժէզուիթաց ա՛յնքան ջերմ կուսակիցներէն
չէ՛ր , այլ անոնց երախտապարտ էր . վասն զի անոնք իւր
անդրանիկ օրդուոյն շահաւետ ամուսնութիւն մ'ընել տուած
էին , և այս կերպով շատ մը միլիօններու օժիտ մը բերած
էին Մալաքի հին տան մէջ՝ որ այն ատեն նիւթասպէս անկ-
ման վիճակի մէջ էր :

Երախտագիտութիւնը աղնիւ բնութեանց առաքինու-
թիւնն է . տիկին տը Մալաք չէր կրնար ծառայութիւն մը
զլանալ Պաւառակալ հօր :

— Փրկեցէ՛ք կրօնքը , տիկին Մարդիղուհի , ահա՛ այս
խնդրելու համար է որ ձեզի կուգամ , եթէ կ'ուզէք , իբր անձ-
նական ծառայութիւն մը : Գիտէք դուք որ Նորին Պերա-
պատուութիւնը ա՛յնքան սիրելի է մեզ : Սա բարեմիտ Սիւլ-
բիսեաններն իրեն մահացու յանցանք մը դորձել տուեր են :
Փոքր սնափառութեամբ մը , զոր պէտք է ներել իրենց ,
յաջողեր են Նորին Պերապատուութեան իբր քարտուղար
ընդունել տալու թեթևօլիկ երիտասարդ մը՝ զոր դժբախ-
տաբար շատ աղէկ կը ճանչեմք . մեր քով աշակերտութիւնը
բած է : Այս անմիտ երիտասարդը անտարակոյս միայն յի-
մարութիւններ պիտի ընէ : Գիտենք նաև որ քիչ մը մեր ըն-
կերութեան թշնամեաց կողմնակից է : Այս ժամանակիս
մէջ , ինչպէս յայտնի է ձեզ , տիկին Մարդիղուհի յորում

ամբարիշտք և ազատականք մեզի դէմ կը դաշնակցին, Նորին Սրբազնութեան քով զօրաւոր պաշտպանութիւն մը դըռնեւու պէտք ունինք, Նորին Սրբազնութեան որ հասարակութեան ողջամիտ մասին հետ մեր միակ զօրութիւնը կը կազմէ Թ. Ի մէջ: Բարեգործութեան մասին ի՛նչ մեծ արդելք մը պիտի ունենանք, եթէ Նորին Սրբազնութեան քով որ մեզ համար միշտ բարեացակամ է, այլ, ինչպէս գիտէք, դիւրահաւան, մեր ուխտին հակառակորդներէն մին դանուի:

— Այո՛, քիչ մը բուռն է մեր սիրելի Արքեպիսկոպոսը, այլ նաև խիստ բարեսիրտ:

— Այո՛, վերջի՛ն ծայր բարեսիրտ, տիկին Մարգիղուհի, վերջի՛ն ծայր բարեսիրտ. ուստի մտածեցի որ դուք, որ մեզ համար պաշտպան մ'էք, աւելի խը քան թէ մեր շահուն համար, երկու խօսք ըսէք իրեն, որպէս զի շուտով առաջքն առնուի սխալման մը՝ որ դուցէ առյապա անդարմանելի ըլլայ:


— Սիրելի հայր իմ, չեմ սիրեր այնքան վարչական գործերու մէջ խառնուիլ. ասիկայ կանանց չի վերաբերիր, և կարգինալն ալ միշտ քիչ մը յօնքերը կը պուտէ, երբ իրեն հետ այս տեսակ նիւթոց վրայ խօսուի: Բայց ինչ և է, ձեզի իմ անձնուիրութեանս ասպացոյց մը տալու համար, փորձ մը կ'ուզեմ ընել:

— Աղէկ կ'ըլլայ որ, այս անխոհեմ ընտրութիւնը չի դիտնալ կեղծելով, Նորին Սրբազնութիւնը նախազգուշացուի Սիւլբիսեանց ընտրութեանը դէմ, որոնք երիտասարդութիւնը ա՛յնքան քիչ կը ճանչեն, և նպաստաւոր կերպով ու իբր պաշտպան խօսուի ուրիշ անձի մը նկատմամբ՝ զոր արդէն Նորին Սրբազնութեան առաջարկած եմ:

— Սա թղթին վրայ ձեր պաշտպանելոյն անունը դրեցէ՛ք:

— Արքայ տը Ախրսօն:

— Բաւ է. ես կը տեսնեմ կարգինալը:



ՄՐՏԻ ԱՌԱՋԻՆ ՄՐՐԻԿ ՄԸ

Երբ օրիորդ Տը-լա Պըավիէր սթափեցաւ այն նուազման վիճակէն՝ ուր ձգեր էր զինքը Ֆիւլիօյի անկեղծ այլ անխոհեմ նամակին ընթերցումը, փութաց՝ իւր հօրաքրոջ առջև ելնելէ առաջ՝ իր կրած յուզմանց հետքերը ջնջելու իր դէմքէն և հանդարտ երևոյթ մ'առնելու : Անկարելի էր անոր ցուցնել նամակ մը՝ ուր այնպիսի բաներ գրուած էին . անկարելի էր նաև մերժել անոր նամակին ընթերցումը, երբ ուզելու ըլլար, ինչ որ անշուշտ պիտի ընէր : Հարկ եղաւ ուրեմն հնարք մ'ի գործ դնել և, գուցէ զառաջինն իւր կենաց մէջ, ստել այսպիսի պարագայի մը մէջ : Նամակը ծուէնս ծուէնս պատառեց, և կտորներուն բաւական սաստիկ հողմէ մը Թօրի փողոցին սրածայր տանիքներուն վրայ տարուիլը տեսաւ :

Ետքը երբ վար իջաւ .

— Սիրելի հօրաքոյրս, Ֆիւլիօ ձեզի շատ բարև կ'ընէ . կ'ապահովցնէ զմեզ իւր առողջութեան վիճակին նկատմամբ . հիմայ ձեռնադրութեան պատրաստութեանց մէջ է . ընդ հուպ կը յուսայ զմեզ ողջագուրել :

— Աարդա՛ ինձ սա սիրելի տղուն նամակը . ի՞նչ աղէկ կը դըրէ :

— Աստուած իմ . . . նամակը նետեցի, և զքօսեցայ հովին՝ կտորները հեռուն տանիլը տեսնելով :

— Տղայ ես, Լուիզ . ես քեզ աւելի մեծ կը կարծէի :

Ուրիշ հարցում մը չ'ըրաւ : Լուիզ աւելի զուարթ, իւր հօրաքրոջ նկատմամբ աւելի խանդակաթ և Մատլէթի համար աւելի բարեսիրտ եղաւ : Բայց իւր սիրտը կ'ուռէր, և երբ իւր հօրաքոյրը աղօթելու համար մինակ ձգելու սովորական ժամը հասաւ, անմիջապէս դնաց, իւր սենեակը առանձնացաւ և սկսաւ յորդ արտասուք թափել՝ իւր սրտին վը-

բայ ծանրացած բեռնը թեթևցնելու համար :

Ինչ է պատճառը որ այն նամակն այնքան սաստիկ ներգործութիւն մ'ըրած էր Աուիզի սրտին վրայ :

Պատճառն այս է որ՝ կիներ, թէ և իւր անձին տէրը չէ, թէ և ոչինչ նկատմունքներ և աղիտարեր պահանջումներ իւր ապագայն կը յարդարեն, թէ և երջանկութիւն և թըշուառութիւն յանակնկալս հասնելով՝ իւր կարի բանաւոր և իմաստուն խորհուրդներն հիմն ի վեր կը տապալեն, կիներ այսու ամենայնիւ Նախախնամութենէն կանխատեսութեան ձիրք մ'ըստացած է՝ որ կը նախազգայնէ անոր կենաց տառապանքներն : Միթէ այս ձիրքը բարի՞ք մ'է այս արարածին համար՝ որ ցարդ մարդուն շինած օրինաց զոհ եղած է : Արդեօք այս նախատեսելու կարողութիւնը, ինչպէս բոլոր տկար արարածոց, նոյնպէս ասոր տրուած է որպէս զի տառապանքներն նուա՞զ ազդեն իր վրայ և նախապէս իւր անձը պատրաստէ՞ վտանգին դէմ : Պէտք է այնպէս հաւատալ, որպէս զի կարելի ըլլայ մեկնել այն անկախութեան և ազատութեան անհաւասարութիւնը՝ որուն ենթարկուած է կիներ, նոյն իսկ քաղաքակրթութեան ամենէն ծաղկեալ վիճակին մէջ :

Աուիզ երբէք լրջօրէն չէր մտածած որ իւր բախտը ձեր կնոջ մը բախտին հետ կապուած էր, և, անոր մահունէն վերջը, իւր եղբօր ճակատագրին հետ՝ որ այս վայրկենիս քահանայութեան կապանաց մէջ կը մտնէր :

Տեսակ մը երկրորդական տեսութեան զօրութեամբ, իւր բովանդակ ապագայն, կանխավէպ պատմութեան մը նման, իւր աչքին առջև ներկայացաւ. կը տեսնէր իւր հօրաքրոջ ծերութենէն մեռնիլը, Քէզուիթայ անամօթարար երկու որբերն իրենց իրաւունքներէն մերկացնելը, Քիւլիօ՝ որու անկեղծութիւնը և ուղղամտութիւնը կ'արդելուն զինքն յառաջանալէ կղերական կեանքին մէջ, և ահա երկու որբերն վտարուած աննշան զիւզի մը անկիւնը՝ ուր բարեկամի մը դութն իսկ չէ կարող գտնել զիրենք : Բոլոր ասոնք, այս ա-

բարածին համար՝ որ ցայն վայր անփոյթ և խաղաղաւէտ կեանք մ'ունեցած էր, ցաւոյ սուր մը և անհնարին լկանաց առաջին փորձ մ'եղաւ: Պէտք է որ մարդկային հոգին ցաւոյ մէջ միայն մեծ ըլլայ:

Յետոյ եկաւ ինքզինքը, երիտասարդութիւն, գեղեցկութիւն, սէր, բարեբաւտութեան իղձերն, ամեն բան լեղձուկ երիցատան մը ամայի կենաց նուիրելու գաղափարը: Ժէզուիթ խոստովանահայրը ի զուր միատկանութեան և հոշկորականութեան վրայ խօսած էր իր եղանի ապաշխարուհւոյն. ի զուր Նուիրական-Սրտի կենաց յափշտակութիւններու տեսլական խայծը նետած էր անոր առջև. բնութիւնը, զօրաւորադոյն քան վերապատուելի Պրիֆարի հայրական ճարտարխօսութիւնը, յաղթանակը տարած էր: Այս վայրկենիս, հազար ու բիւր խառնաշփոթ մտածութիւնք, զգուանք ի կրօնից, բուռն սիրոյ պիտոյից խորին զգացում, բնազդական դժկամակութիւն ինչ բանի որ հոգին մթութեան և մռայութեան մէջ կը թազէ՝ մինչդեռ յինքեան վայելմանց, մեծութեան և ազատութեան անզուսպ տենչեր կ'զգայ, բոլոր ասոնք խռովայոյզ իւր սրբտին մէջ կը ծփային, գրգռեալ Ովկէանու կոհակաց նման:

Սակայն քիչ մը վերջը, նման այն ահեղադոյ ալեաց՝ որք մեղմով իմն կուգան սպառիլ անդորրաւէտ ափունքի մը վըրայ, անկարող հոն գտնուած աւազի հատերն իսկ վեր վերցընելու, կենաց առաջին մրրիկներէն ա'յսպէս յերակարծումն տանջուող այս սրտին ցնցումներն ալ հանդարտեցան:

Կին թերահաւատ, կին փառասէր, կը տրտնջա՛ս դու այժմէն: Միթէ Նախախնամութիւնը քու կենացդ բոլոր ժամերը զքեզ երջանիկ ընել խոստայած է. վշտաց գաղափարն իսկ կը վհատեցնէ՝ զքեզ. ի՞նչ պիտի ըլլայիր, եթէ յանկարծ գայր զքեզ ճնշելու. և ի՞նչ առանձնաշնորհութիւն ունիս դու այլոց մէջ, որպէս զի վիշտն առ քեզ չի հասնի:

Ահա՛ այս մտածութիւնը ունեցաւ յանկարծ Լուիզ: Ժիւլիօ իւր քրոջ հոգւոյն մէջ խորին կերպով սպաւորած էր ինչ

որ կը կոչէր ջերմեռանդութիւն առ Նախախնամութիւնն :
 « Միւս ջերմեռանդութիւնները կ'իյնան , կ'անհետին , կ'ըսէր ,
 այլ այս կը մնայ : » Լուիզ վախցաւ թէ մի գուցէ իւր այս
 սրտատանջութիւնքն հայհոյանք մը համարուին այն գթառատ
 Մօր գէմ՝ որ երկնից բարձունքէն կը հսկէ մինչև իսկ անարգ
 ճճւոյն ու որդին վրայ : Մտածեց սա խօսքերուն վը-
 րայ « թէ ամեն օրուան բաւ է իւր հոգն ու նեղութիւնը ,
 թէ ճնճողուկք չ'են իյնար յարկերէն առանց երկնաւոր Հօր
 հրամանին , և թէ , եթէ դաշտայ շուշաններն այնքան շքեղ
 կերպով պճնուած են , մարդը , Ատուածոյ որդին , երբէք
 չ'ի պիտի լքուի : »

Իւր եղբօր պատկերը , որ իր համար այնքան սիրավառ
 և բարի էր , և որ ամենէն սաստիկ խանդակաթ գորովոյ
 առհաւատչեայ մը կուտար անոր , իր երկու անձանց իբր ի
 մի ապրելու երազովը՝ այնպիսի ամայութեան մը մէջ՝ ուր ին-
 քըն անոր բոլոր երջանկութիւնը պիտի ըլլար , զգալի կեր-
 պով նպաստեց իւր սրտին ու մտածմանց դառնութիւնը ա-
 մօքելու :

— Աերջապէս , ըսաւ իւրովի , թիւլիօ բռնաւոր մը չ'է .
 զիս չափազանց կը սիրէ , հետեւաբար չ'ի պիտի ուղէ իմ ազա-
 տութիւնս կաշկանդել : Խեղճը չ'ի հաւատար որ աշխարհի
 մէջ զիրար եղբայրաբար սիրելէ ուրիշ երջանկութիւն մ'ըլլայ :
 Ա. Բ. Ս. Ս. , գուցէ օր մը նուազ խաղաղաւէտ սիրոյ մը տենչա-
 լուս համար զղջամ : Բայց արդեօք իրա՞ն սա թէզուիթներն
 կ'ուզեն մեր ինչքերը դրաւել . կրնա՞ն այդքան վատ ու ան-
 խիղճ ըլլալ . . . : Չ'է , կարելի չ'է . . . թերևս . . . : Հիմայ
 կը հասկնամ թէ ի՞նչու Հայր Արիֆար այնքան կը ջանար
 զիս Նուիրական-Սրտի մայրապետ մ'ընելու , դեղեցիկ օժիտ
 մը կրնայի տանել թէզուիթաց : Ա՛վ Ատուած իմ , այս բա-
 ներն իմ հաւատքս կը դղրդեն : Ս. յս մարդիկն զքեզ կը քա-
 ղողեն , այս մարդիկն քու վրայօքդ կը խօսին , և այս ամե-
 նուն վախճանն է խարդաւանանք , շահ , ժառանգութեանց
 դրաւումն : Ի՞նչ սոսկալի հակասութիւնք . . . ի՞նչ անել

լարիւրինդոս : Հիմայ կը յիշեմ վերջին սլարապոյ օրերուն միջոցին իմ սրտմտութիւններս , երբ Ա.էռտլօն , եղբօրս բարեկամը , այնպէս սաստիկ կը յարձակէր ժէզուիթաց դէմ՝ որ իւր նախակին վարժիչներն եղած էին : Ապերախտ կը համարէի զայն . . . արդեօք իրաւունք ունէր . . . :

Բայց միթէ միջոց մը չիկա՞յ զգուշացնելու համար հօրաքոյրս այն թակարդներէն՝ զորս այս մարդիկը կը լարեն անոր պարզմտութեան առջև : Յայտնի բան մ' է որ ծերունի Թուռնիչօնը անոնց համար կ'աշխատի : Արսեն թէ ժէզուիթ մ' է այն , չ'եմ հասկնար ի՞նչ ըսել կ'ուզեն զանի այսպէս կոչելով , բայց բաւական է այս՝ իմ անվտանգութիւնս արդարացնելու համար : Հօրաքրոջս բարեկամն է ու գրեթէ ամեն զիշեր մեր տունը :

Ասիկայ էր Աուիզի մենախօսութիւնը :

Ա.էռտլօնի յիշատակը իւր մտքէն անցեր էր : Այս յիշատակը նորէն եկաւ : Ջանաց դտնել՝ սոյն երիտասարդը եկեղեցական վիճակը թողելու ստիպող պատճառները : Մանրաբարոյ , զղոյշ , անկեղծ էր և չ'ունէր բնաւ այն թեթեամտութիւնը՝ որ աշխարհի երիտասարդաց կնիքն է խիստ շատ անգամ : Հարցուց իւրովի թէ ի՞նչու , այնքան տարիներ կղերանոցին մէջ անցընելէ վերջը , այսպէս յետին վայրկենին կը հըրաժարէր յանկարծ ասպարիզէ մը՝ որու համար միշտ մեծ սէր մ'ու յարգանգ մը ցոյց տուած էր իւր առջև :

Յիշեց այն ատեն անոր և թիւլիօյի մէջ տեղի ունեցած խօսակցութիւններէն շատը : Թէպէտ այն ատեն անոր ժէզուիթաց դէմ յայտնած թշնամական գաղափարները զինքը վերաւորած էին , այլ իւր բարձրաթռիչ իմացականութիւնը , իւր պերճախօս լեզուն , անհուն վաստակօք և ընթերցումներով ձեռք բերած ամեն տեսակ հմտութիւնքն յապուշ կը թած էին զինքը :

Բաց աստի Ա.էռտլօն այնքան զգայուն ու ճշմարտասէր էր , այնքան զգուանք և նողկանք կ'զգար կեղծաւորութենէ և մուլեռանդութենէ , այնպիսի եռամդուն սիրով մը կը խօսէր աղ-

քատաց, փոքրերու, տկարաց և այն ամենուն վրայօք՝ որք կաշխատին և կը տառապին, որ անկարելի էր, իբր չքնաղ միտք մը, անոր վրայ սքանչանալէ վերջը՝ չի սիրել զայն իբրեւ ազնիւ սիրտ մը :

Բոլոր այս տպաւորութիւններն, զորս շատ ամիսներ յառաջ ընդունած էր Աուիզ և որոնք տակաւ առ տակաւ կը շնչուէին իւր մտքէն, այս պարագայիս մէջ այնպիսի բորբոքմամբ մը վերարժարծեցան՝ ընդ որ ինքն ևս զարմացաւ : Մինչև ըսաւ իսկ իւրովի թէ Ա. Ա. Ա. Սկիւսթ անունը ազնիւ ու քաղցրը անուն մ' էր, թէ իւր ձայնն ալ խիստ դաշն և համակրական էր : Արդարեւ այս ձայնը այնպիսի հնչիւններ ունէր՝ որք բուռն կերպով հոգւոյն մէջ կ'իջնէին և այլ ևս չէին մոռցուեր :

Նորա մեծ դէմքը, բարձր ու պաղպաղուն ճակատը անկեղծօրէն բացուած աչերը, լայն՝ այլ փափուկ ու նրբալար շրթներով բերանը, իւր հնչանակելի կզակը՝ ուր հաստատամտութիւնն ու զօրութիւնը նկարուած էին, բոլոր ասոնք Աուիզի յիշողութեան մէջ կատարելագործեցին երիտասարդին պատկերը :

Հիմայ Ա. Ա. Ա. Սկիւսթի աչաց առջեւ, Թէզուիթները չի սիրելու և կզերական կոչումէն՝ առանց ոմանց առջև անպատիւ երևելու վտանգը բանի տեղ դնելու հրած արած ըլլալու արժանիքն ալ ունէր :

Այս կէտիս ուր հասուցած էին զԱուիզ յակամայիցս իւր մտաց մէջ իրարու յաջորդող ու հոն անջինջ տառերով դրոշմուող այս արագ դիտողութիւններն, տարակոյս չի կար որ եթէ աշխարհի մէջ Պ. Սկիւսթ Ա. Ա. Ա. Սկիւսթի պատահելու ըլլար՝ անտարբեր չի պիտի մնար :

Ձգայումներու այս յաջորդութեան, երկիւղի՝ յիշատակաց այս խառնաշփոթութեան մէջ Թիւլիօյի քոյրը քնոյ պէտքըն սկսաւ զգալ : Մունը դրաւ երեկոյեան աղօթքն ընելու համար : Երեւակայութիւնը և հոգւոյն բոլոր կարողութիւնքն այնքան զօրաւոր կերպով յուզուած էին, որ խիստ մեծ դժուարութիւն կրեց դոյզն ինչ ուշագրութեամբ պարզ՝ Հայր

մեր, մ'արտասանելու համար . բոլոր մնացորդը գրեթէ բեր-
նէն կը թափթփէր ի մեծ ցաւ իրեն և ի կշտամբանս իւր խըղ-
ճին : Առանց ուզելու իւր միտքն ուրիշ տեղ էր : Իւր բոլոր
կենացը մէջ ցայն վայր այսքան մեծ մտածում մը գրաւած չէր
իւր միտքը : Խիստ հաւանական է որ մէկ քանի օրէն , երբ
Հայր Պրիֆարի ներկայանար , այնչափ մանրամասն խոստո-
վանութիւն մը չի պիտի ընէր այս մասին :

Ձինքը գրաւող վերջին մտածութիւնները եղան Ֆէզուիթք ,
և իւր հօրաքոյրը , զինքն իսկ ու իր եղբայրը անոնցմէ կողոպ-
տուած տեսնելու երկիւղը :

Եւ երբ քնոյն իւր արտեանանց վրայ ծանրանալն զգաց
այն եզական կացութեան մէջ՝ ուր հողին ալ իւր կամաց տէր
չէ և ալ կէս մը միայն կրնայ հասկնալ իւր մտածածն ու սի-
րածը , այս կացութեան մէջ՝ անսովոր քաղցրութեամբ մ'ու
արբեցուցիչ հրապուրով մը իւր ուշը գրաւողը Ա.էռտլօնի սլա-
կերը եղաւ :

Թողունք սիրուն աղջիկը իւր հանդստեան մէջ՝ զոր կը խը-
ռովեն գուցէ տակաւին իւր ընտանեաց հալածիչներուն ուր-
ւականները , կամ զոր կը գեղեցկացնեն նախածին սիրոյ մը
պարկեշտ ու անմեղ անուրջներն :

Անդամ մ'ալ ելնենք այն սրահը՝ որ լի է բոլորովին միշին
դարու մահաքոյր յիշատակներով , և ուր եօթն ծերունիք խոր-
հուրդի նստած են :

Խորհրդակցութեան նիթն է արքեպիսկոպոսարանի ահա-
ռիթ գործը : Ասի ալ հանդարտ վիճաբանութիւն մը չէ , վա-
սըն զի խնդիրը որբերու կողոպուտին արդիւնքը հաշուելուն
վրայ չի կայանար : Ատելութեան և սխութեանց պայթում
մ'է այն :

— Եթէ կարդինալը յամառի , լուել պիտի հարկագրինք ,
ըսաւ Քաւառակալը :

Չայրոյթը ամենուն դիմաց վրայ նկարուած էր , երբ ծա-
ռայ մը մտաւ և ուղղակի Քաւառակալ հօր երթալով պզտիկ
տոմսակ մ'անոր յանձնեց՝ որն որ հետեւեալ լուրերը կուտար :

« Վերապատուելի Հայր :

« Բոլոր յոյսս պարապը ելաւ : Արնաք այլ ևս ջնջել առածոներու բառարանէն սա առածը . Ձոր ինչ կիներ կ'ուզէ , Աստուած կ'ուզէ : Շատ կը բաղձայի իմ խորին երախտագիտութեանս մէկ առհաւատչեայն տալ ձեզ , բայց Պեր . եպիսկոպոսին անդառնալի որոշմանն առջեւ կասիլ հարկադրուեցայ : Ի վերայ այսր ամենայնի , իմ խնդրանօքս ձեր պաշտպանեալը լաւ պաշտօն մը պիտի ունենայ : Աւրախ եմ որ դժնէ կրցի փոքր շնորհ մ'ընդունիլ . Աարդինալը իսպառ անողօք չի մնայ :

« Ձեր սուրբ աղօթից մէջ մի՛ մոռնաք յիշելու զիս՝ ձեր բարեացակամը , և ընդունեցէք , վերապատուելի Հայր իմ , խորին յարգանացս հաւաստին :

» Մնամ Ձեզ անձնուէր

« ԷԼԷՅՈՆՈՒ ՏԸ ՄԱԼԱՔ »

— Մտքերնէս կ'անցնէր այս , ըսաւ Քաւառակալ Հայրը :

— Այդ թեթեամիտը , ըսաւ Հայր Ծուրնիէ , անմտութիւններ պիտի ընէ միայն . քիչ մը համբերենք . մանաւանդ որ Աարդինալը մշտնջենաւոր չէ , և մեր ընկերութիւնը չի մեռնիր :

— Իմ կարծիքս ալ այս է որ , ըսաւ Հայր Պրիֆար , երիտասարդութիւնը շողմը կը սիրէ և յանձնապաստան է : Թերևս կարելի ըլլայ մեզ շահիլ Պ . Ընդհանուր-Քարտուղարը : Ես կրնամ կասկածելի ըլլալ անոր քով , եթէ իւր քոյրը՝ որ իմ խոստովանորդիս է՝ իմ նկատմամբս անխոհեմ յայտարարութիւն մ'ըրած է անոր : Բայց կրնանք ուրիշ հօր մը յանձնել զայն յաճախակի տեսնելու և Ընկերութեանս շահելու դործը : Սա աղէկ յիշատակն ունինք որ մեր աշակերտներէն է . կրնանք նաև անոր աչքը շլացնել ապագային մէջ բարձր վիճակի մը խոստմամբ՝ մեր Հռոմի և Փարիզի մէջ ունեցած պաշտպանաց շնորհիւ :

— Աղէկ կ'ըլլայ նաև , ըսաւ ուրիշ մը , որ իւր ձեռնադրու-


Թեան հանդիսին ներկայ գտնուելու քաղաքավարութիւնն ըլլայ իրեն :

— Սյդ խորհուրդն խիստ իմաստուն է , ըսաւ Պաւառակալը . պէտք է որ երկու հարց ընկերութեամբ ներկայ գըտնըւիմ հանդիսին : Սյս ինքնայօժար մեծարանքը իրեն հաճոյք պիտի պատճառէ :

— Գուք երբէք չի պիտի կրնաք շահիլ զայն երիտասարդը այդ գեղեցիկ միջոցներով , ըսաւ Հայր Բաբիլյօն՝ որն որ ժիւլիօյի հռետորութեան գասատուն եղած էր . ե՛ս կը ճանչնամ զայն . քաղցրաբարոյ՝ բայց միանգամայն հաստատամիտ է իւր համոզմանց մէջ . նա մեզ համար սոսկալի հակառակորդ մ'է : Անոր վրայ մօտէն դիտողներ ունեցէք , և իւր ամենափոքր անխոհեմութենէն օգուտ քաղել ջանացէք :

— Անտարակոյս , յաւելցուց Պաւառակալ Հայրը , մենք ալ միշտ այդպէս պիտի ընենք : Ուստի դուք , Հայր Գուրթուա , որ տեղեկագրերուն հսկելու պաշտօնն ունիք , ձեր գործակատարներէն ամենախիստ ճշգութիւն պահանջեցէք . անոր գործերէն , խօսքերէն և ո՛չ մին պէտք չ'է որ մեզմէ վրիպի :

Քսութեան և վրէժխնդրութեան վճիռ տուող խորհուրդը՝ խաչին վրայ իւր դահիճներուն համար բարեխօսողին մօրըն ուղղուած աղօթքով մը վերջացաւ :



Թ .

ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ

Եթէ կարդինալ տը Գլամարէն բանակի զօրապետ ըլլար , յաճախ զօրահանդէսներ ընել պիտի հրամայէր . այնքան կը սիրէր ցոյցն ու հանդէսները : Հակառակ իւր պատկառելի նախորդին , որ խիստ խոնարհ մարդ մ'էր և առանց տես-

նրաւելու կ'անցնէր թ. ի փողոցներէն, և որ իւր կառքը ձկնորսաց յաջորդի մը համար նախատինք կը համարէր, Աարդինայ տը Ֆլամարէն շքեղ կառք մ'ու կազմածներ և ոսկեհուռ հանդերձներ հագնող ծառայներ ունէր: Ձիերու վրայ ազնուականի մը պէս կը խօսէր, և խիստ գեղեցիկ էր իւր ասպատուանը: Թէ և խիստ մտացի և վերջին ծայր ճարտարամիտ, բայց իւր հնարագիտութիւնը չէր սովորեցուցած իրեն որ թ. ի մէջ Աուսակալին ու առաջին Նախագահին երեսին տիրմ' ցայտեցնելը իրեն բարձր աստիճանին վրայ բընաւ փայլ մը չէր կրնար յաւելուլ: Անն մարդիկ՝ որք մեծնալու համար խոնարհիլ չը դիտեն:

Ասոր հակառակ վերջին ծայր բարետիրտ էր: Այս մարդը, որ արտաքին շքեղութեամբ և անվերջ ուսին քաղաքավարութեամբք կ'ապրէր, կը սիրէր ճշմարիտը, պարկեշտաբարոյ էր, և, թէպէտ զօրհանապաղ վատահամբաւեալ, իւր խիղճը չէր կշտամբեր զինքը եպիսկոպոսութեան պատուոյն և սրբութեանը հակառակ ո՛ր և է յարաբերութեան մը համար: Ըսինք թէ Փէզուիթները չէ՛ր սիրեր, բայց չ'ըսինք թէ ի՞նչու. -վասն զի զիրենք խիստ շատ անդամ այնպիսի նենգութեանց մէջ բռնած էր՝ որք իւր անկեղծ բնաւորութեան հակառակ եկած էին: Ըսե՛նք նաև, որովհետև սիրելի եպիսկոպոսն ալ (ինչպէս կ'անուանէր զինքը Մալաքի Մարդիզուհին) իւր ոստիկանութիւնն ունէր, ըսե՛նք նաև որ լսած էր թէ վերապատուելի հարք դէշ մեկնութիւններ կուտային Նորին Աերապատուութեան մտերմութեանը նկատմամբ նոյն ինքն Մարդիզուհւոյն հետ՝ որուն հասակն ու առաքինութիւնը ամեն կասկած առ ոչինչ կը դրէին:

— Թշուառականներ . . . ըսած էր Աարդինայը:

Նախորդ Եպիսկոպոսաց օրով ձեռնադրութեան արարողութիւնները տարին չորս անգամ կ'ըլլային, կղերանոցի մատրան մէջ, հետևաբար ո՛չ հրապարակաւ: Աարդինայը այս արարողութիւնները մեծ հանդիսով Սէնթ-Էթիէնի Մայր-Եկեղեցւոյն մէջ կատարելու կանոնը հաստատած էր:

Այս ընդարձակ շէնքը, իւր եղական յօրինուածովն, Նսրին Պերապատուութեան գայրոյթը կը գրգռէր : Միջավայրը ուսմանական (ուսման), իսկ դասը աղեղնաձև (օժիւլալ) սճով շինուած ըլլալով՝ մէկ առանցքի վրայ չեն, այնպէս որ դասին մէջ կատարուած արարողութիւնքն անտեսանելի են միջավայրէն՝ ուր կեցողները միայն զանգակաց և երգոց ձայնէն կրնան հասկնալ դասին մէջ եղածը : Այսու ամենայնիւ այս դասը Պաղղիոյ ամենէն գեղեցիկներէն մին է իւր ճարտարպետութեամբն և իր շրջապատին ու նստարաններուն շքեղութեամբը : Անտես ըլլալ Թ. ի այն մեծաշուք ընտանեաց՝ որոնք ամեն մեծ արարողութիւններու տաճարին մէջ կը խոնէին, մինչդեռ ինքը՝ Նարդինալը միայնակ իւր գահին վրայ կը բազմէր, մի քանի ծերունազարդ կանոնիկոսաց և սպասաւորող մանկանց մէջ, ասի այս արժանաւոր մարդուն սիրտը կը տրոմեցնէր : Եթէ համարձակելու ըլլար, զասկի օրը Սէնթ-Էթիէնի մեծ հրապարակին վրայ եկեղեցական հանդէս կը կատարէր :

Ձեռնադրութիւնները մեր առաջնորդին յաղթանակն էին . հայրական արժանաւորութիւն մը իւր անձին վրայ տրտաւորուած կը տեսնուէր, և իւր սիրտը որ բարի էր՝ մեծ հրճուանք կ'զգար եպիսկոպոսական այս սլաշոօնէն՝ որ իւր շուրջը քահանայական սերունդն անսպառ կը պահէր :

Ժիւլիօյի ձեռնադրութեան օրը, ըստ սովորութեան, շաքաթ օր մ'էր . հետաքնին հանդիսականաց բազմութիւնը ամեն ատենէ աւելի էր : Պաւառի քաղաքի մը մէջ ամեն բան կը դիտցուի և շուտով կը տարածայնուի . ամեն մարդ կ'ուզէր Նսրին Պերապատուութեան նոր քարտուղարին ձեռնադրուիլը տեսնել :

Արարողութիւնը դեռ չէր սկսած, երբ, իրենց նախկին աշակերտին պատիւ ընելու համար, Պաւառակալ Հայրն և Ընկերութենէն տասն ուրիշ հայրեր համեստօրէն եկան զետեղուիլ դասին ստորին նստարանաց վրայ : Այս առաջին անգամն էր որ Փէզուիթք ձեռնադրութեան հանդի-

սի մը ներկայ կը գտնուէին :

Աարդինայը՝ որ դասին ալ կողմը իւր աթոռին վրայ բազմած էր, ըստ սովորութեան, եպիսկոպոսական զգեստներն հագած, երբ տեսաւ զանոնք, կէս ձայնով ըսաւ Ընդհանուր-Փոխանորդին՝ որ իրեն օղնականութիւն կ'ընէր .

— Տեսէ՞ք . լայնատարր անդունդին մէջ լողացող ժէզուիթք ի յայտ կուդան :

Փոխանորդը ժպիտ մը զսպեց :

Արարողութիւնը ծանր և վե՛հ եղաւ . ժիւլիօ իւր աղնըւական և համեստ կեցուածքովն ամեն հայեացքներն յինքն գրաւեց :

Երբ եպիսկոպոսը, իւր օրհնութիւնը տալէն յետոյ, աւանդատունը քաշուեցաւ, կղերականք եկան, ըստ սովորութեան, իրենց յարգանքն անոր մատուցանելու : Աորընծայներն Սիւլբիսեանց Պլխաւորին միջոցաւ իրեն ներկայացան : Անոնցմէ իւրաքանչիւրը գորովանօք ընդդրկեց :

Երբ կարդը ժիւլիօյի եկաւ ,

— Ա.սի Պ. Աբբայ ժիւլիօ տը-լա Պլավիէրն է, Պերապտիւ Տէր, ըսաւ գլխաւորը :

Աարդինայը խանդակաթ հայեցուածով մ'ընդունեց ըզնորատի քահանայն, զրկեց զայն և, բարեկամաբար իւր ձեռքը բռնելով,

— Այս երեկոյ արքեպիսկոպոսարանին մէջ պիտի ընթրես, ըսաւ անոր :

Իսկոյն Պաւառակալ Հայրը յառաջ կ'անցնի դէպ ի Աարդինայն :

— Պերապտիւ Տէր, մեծ բարեբախտութիւն մ'եղաւ մեզ համար այսօր մեր լաւագոյն ու սիրելիագոյն աշակերտներէն միոյն ձեռնադրութեանը ներկայ գտնուիլն : Հարկ չ'է զայն Ձեր Սրբազնութեան ծանօթացնել, բայց եթէ անկարևոր չ'է, մենք ալ մեր ձայնը կը միացնենք սոյն իմաստուն հարց ձայնին հետ, և կը յուսանք որ որքան անոնց՝ նոյնչափ և մեզ պատիւ պիտի բերէ :

Եւ գրկեց զայն իւր ամենէն ժամայից դէմքովն :

— Կեղծաւորը , ըսաւ ցած ձայնով Աարդինայը :

Ժիւլիօ թոյլ տուաւ անոր ընդգրկել և այս յուզայա-
կան համբուրին բարի սրտի մը բոլոր պարզութեամբը պա-
տասխանեց : Աան այնպիսի ցածութիւններ՝ զորս ուղիղ բը-
նութիւններն չեն կարող երբէք դուշակել : Ժիւլիօ վայր-
կեան մը կշտամբեց իսկ ինքզինքն , իւր խղճմտանաց մէջ ,
իրեն այնպիսի մեծարաքներ ընելու և կող մարդոց վրայ կաս-
կածելուն համար : Իւր նոր պաշտօնը ընդ հուսյ զինքն այն-
պիսի աշխարհի մը հետ հաղորդակցութեան մէջ պիտի դը-
նէր , ուր իւր պատանեկան միամտութիւններն շուտով պիտի
փարատէին : Երկու օրէն արքեպիսկոպոսարանի ընդհանուր
քարտուղարութեան պաշտօնը վարելու պիտի սկսէր :

« Գաւառական նամականոյն * » կամ « Թարթիւթի ** »
մէջ զետեղուելու արժանի այս տեսարանին տեղի ունեցած
միջոցին , Տիկին Տը-լա Գլալիէր , Աուիզի հետ ընկերացած ,
Թօրի փողոցին հինաւուրց տունը կ'երթար :

Երկուքն ալ ձեռնադրելոց մի քանի ուրիշ ազգականաց
հետ դասին վանդակներուն մօտ նստած ըլլալով , բոլոր ա-
րարողութեան ականատես կրցած էին ըլլալ : Աաթօ իկ կրօնի
այս մեծ շքեղութիւնները իրենց վրայ զօրաւոր տպաւորու-
թիւն մ'ըրած էին : Իրարու կը հաղորդէին ինչ զգացում որ
ունեցած էին՝ Ժիւլիօյի քահանայական օծումն ընդունած
միջոցին : Թ . ի մէջ դուցէ իրենցմէ զատ մէկը չի կար՝ որ
Ժիւլիօյի ստացած բարձր պաշտօնը չը դիտնար : Անուանի
Թուռնիչոնը երկու օրէ ի վեր չէր երևցած : Ատակազիրն
արդէն ձեռք անցուած ըլլալով ալ յարածամ երթեկու-
թեանց այնչափ պէտք չի կար : Միայն հարկ էր խղճմտանաց
սոսկումներով հաստատուն պահել որոշում մը՝ զոր ճարտար
Ժէզուիթը գրեթէ անգրգուելի ըրած էր : Տիկին Տը-լա Գը-

* Գործ Ալէք-Բասքալի , յորում Ժէզուիթութիւնը կը խայտառակէ :

** Աստակերգ Մոլիէրի , որով կեղծաւորութիւնը կ'ապտակէ :

լավիէրի համար ալ խնդիրը բարեպաշտական նուիրատուն
թեամբ մ'իւր ամուսնոյն հողին փրկելու վրայ կը կայանար :

Փիւլիօյի ձեռնադրութիւնը ուրիշ հանդիսատես մ'ալ
ունեցած էր : Պիլիւսթ Ա. Էռտլօն, դրդուած այն խորհուրդ-
ներէն միովն՝ որք հաղար անդամ կը վանուին ու դարձեալ
կուգան, ուզած էր սոյն հանդիսին ներկայ դռնուիլ : Յայց
ի՞նչ ընելու եկած էր հոն, Ս. յնչափ անդամ այս տեսակ ա-
րարողութեանց ականատես եղած էր, որ ալ իւր մասց ու
սրտին հետ չ'էին խօսեր, բայց միայն ալ բնաւ խմաստ չու-
նեցող օրինական ձեւերով (ֆօռմիւլ) քահանայութեան նախ-
կին մեծութիւնը կը ներկայացնէին՝ որ կըլերին և ժողովրդ-
եան հաւանութեամբը կ'ընտրուէր, նոյն իսկ եկեղեցւոյ մէջ
սոցա կարծիքն հարցուելով ընտրելոց նկատմամբ :

Երբ Ա. Էռտլօն եկեղեցւոյն դօթած և մասին կողմնակի
դռներէն մէկովն Սէնթ-Էթիէն հասաւ, դասին մէջ ամեն
տեղերը դրաւուած դտաւ : Չի կրցաւ աւելի յառաջ երթալ,
և ստիպուեցաւ դրան ետին մնալ և ուրիշ բան չի լսել՝ բայց
միայն երգեհոնին և երած շտայ ձայնը, առանց ո՛չ իր բա-
րեկամը և ո՛չ Տը-լա Պլավիէրի տիկնայքը տեսնելու՝ որոց
վրայ շատ խորհած էր իւր Փիւլիօյի հետ ըրած խօսակցու-
թենէն և առ Վուիդ բերած նամակէն ի վեր : Միտքը եկաւ որ
Թ. ի, ինչպէս նաեւ բովանդակ Հարաւոյ մէջ, բաւական է
փայլեցնել անարդ մետաղը, որպէս զի ամեն խոչընդոտ
հարթյառակ ըլլայ մեր առջև : Ֆռանդնոց մը սպրդեցուց
դռնապանին ավին մէջ, և ցած ձայնով ըսաւ անոր .

— Ձիտ դասին վերի սրահներէն մին առաջնորդէ՛ :

Մարդը խոնարհեցաւ :

— Հետե եղէք ինձ, ըսաւ :

Եւ իբր թէ պաշտօնական անձ մ'ըլլար ետեէն եկողը .

— Տեղի տուէ՛ք, կ'աղաչեմ, ըսելով ճամբայ կը բանար
անոր :

Քիչ մը վերջը Ա. Էռտլօնը մանուածոյ, դժուարելանելի
և միթին սանդուղէ մը վեր հանելով սրահը մտցուց, և հինա-

և ուրջ դուռը նորէն դոյցուեցաւ :

« Թախիթօսիում », ի բարձրէն (մեծ մայր եկեղեցեաց գասին շուրջը եղած սրահներուն հնադիտական անունն է) , հանդէսն այնքան վեհ երևոյթ մ'ունէր , որ Աէռաւոյն իսկ ալիա՛ւայ ներդործութիւն մ'ղգաց : Գիպուածն այնպէս բերած էր որ մէկը չ'էր ուղած սրահները ելնել . ուստի ինքը , բոլորովին միայնակ , և իւր աչքին առջև ունենալով գասը , սեղանը և Աարդինալին գահը , կրնար ուղած տեղն ընտրել , և վերջին անգամ մ'ալ իրենց ամենէն շքեղ փառաւորութեանը մէջ տեսնել այս եկեղեցեցական հանդէսներն՝ որոց այլ ևս մասնակից չի պիտի ըլլար :

Իւր առաջին հայեցումաճքը Թիւլիօ Արքային վրայ կանկ առած էր : Արկնեց իւրովի .

— Այո՛ , կը հաւատամ , Թիւլիօ բարի քահանայ մը պիտի ըլլայ : Ես աղէկ ըրի ձեռնադրութենէ հրաժարիլս :

Եւ այս վայրկենիս , ալիամայ ձգողութեամբ մը , հրաշագեղ և պարլաղդեստ՝ այլ վայելչադարդ կ'ին մը՝ որ այն միջոցին իւր գիմացը վանդակին ետին կեցած էր , իւր հայեցումաճքն առ ինքն գրաւեց :

— Օրիորդ Տը-լա Պլավիէ՛րն է :

Այս այնքան հանդարտ և սովորաբար իւր անձին տէրը եղող մարդը կանկ առաւ : « Թախիթօսիումը », զարդարող արուեստաշէն քարէ վանդակին վրայ արմուկովն յեցած ըլլալով , հոն անշարժ ու անխլիրտ մնաց , իբր մագնիտական (մանեէթիզ) ներդործութեան մը ներքև ընկճուած :

— Ի՞նչ անմիտ եմ եղեր , ի՞նչ հոգ ինձի միջին դարու այս արարողութիւնը . ևս հոս հոգեբանական հետազոտութիւն մ'ունիմ ընելիք որ առանց հրապուրի չ'է : Աստարելապէս անտեսանելի , կրնամ այս շքնաղաղեղ և ալնիւ Առիւղի գիմաց վրայ հետազոտել այն ամեն տպաւորութիւնները՝ զոր իւր սիրասուն եղբօր տեսութիւնը իւր հոգւոյն վրայ պիտի ընէ :

Ստուգիւ այս քննութիւնը հրապուրալի էր : Աէռաւոյն

անոր մէջ բնաւ վտանգ մը չի տեսաւ : Երբեմն , երբ ինքզինքըն ամուրիութեան նուիրելու առաջադրած էր , սովորած ըլլալով կնոջ՝ նոյն իսկ ամենագեղեցկին վրայ Աստուծոյ ձեռքէն ելած հրաշագան արձան մը միայն տեսնելու , մոռցաւ որ իր աշխարհական մարդու նոր ու ազատ կացութիւնը կրնար դինքը նուազ սուրբ ու հրեշտակային տպաւորութեանց ենթարկել , և իւր սրտին մէջ նետել այն հրավառ կրից կայծը՝ որոց ամեն ինչ կը զոհէ մարդ , երբ սոսկալի խոչընդոսներու կը պատահի :

Ինկաւ թախարդին մէջ՝ զոր այս վայրկենիս չի տեսաւ՝ իւր նախնի ապահովութիւններէն խաբուած , և , իւր հոգեբանական հեշտալի հետազօտութիւնն ըրած ատեն , տղու մը սկէս այս համեստտախայլ Աիր'իւայ բաժակէն խմեց աղետալի սէր մը՝ որուն առաջին զգացումներն , որք թերեւս մինչեւ ցայն վայր ծածուկ մնացած էին , Լա-Վըալիէրի քաղցր մտերմութիւններէն ծնունդ առած էին :

Երբ լիուլի վայելեց իւր նկատողութեան քաղցրութիւնը՝ որ մինչեւ անգամ մոռցնել տուաւ իրեն սիրոյ այս նորօրինակ տեսարանին տեղի ունեցած սրբավայրը , երբ քահանայից երկայն շարքը դասին ստորին կողմանց սիւներուն ետին անհետացաւ , և այն կրօնական տեսարանէն ա՛լ միայն ինկոց ծուխն ու դուրս խուժող ամբոխին ժխորը մնաց , Վէառլօն սթափեցաւ իւր յափշտակութենէն , Միլօի Աստղկան սուջեւ պահ մը ի քզինքը մոռցող արուեստամուլ պատկերահանի կամ քանդակագործի մը նման : Գինեհարեալ մարդու մը նման « թռիֆօռիումի » մթին սանդուղներէն վարելաւ , ալ աշխարհի վրայ միայն մէկ էակ մը , Լուիզ Տը-լա Վըալիէրը տեսնելով՝ որուն իւր բոլոր հոգին զօրաւոր ու աներևոյթ կապով մը յօդեալ կ'զդար :

Այս օրուրնէ սկսեց նա կրել սիրողներու դժնդակ ու միանգամայն քաղցր մարտիրոսութիւնը :

— Լուիզ և իւր հօրաքոյրը , ըսաւ իւրովի , անշուշտ պիտի երթան տեսնել զժիւլիօ կղերանոցին խօսարանին մէջ :

Թօրի փողոցը դհաց , յածեցաւ ընդ երկար կալանաւորա-
կապի կամ չարագործ մարդու մը պէս , կէս օրու ընէ մինչեւ
երկու ժամ ետքը Սիւլբիսեանց կղերանոցը մտնողներն լըր-
տեսելով : Բոլոր այս այցելուներէն մէկը չ'ըսաւ իրեն . Ահա
Լուիզ :

— Թիւլիօ սոյն օրէն իւր հօրաքրոջ տունը երթալու թոյլտու-
ութիւն ստացած պիտի ըլլայ , հակառակ կղերանոցին սովո-
րութեանց՝ որք միայն հետեւեալ օրը դուրս ելնել կը ներեն :

Մտածեց Տիկին ճը-լա Պլավիէրի տունը ներկայանալ և
հոն իւր բարեկամը հարցնել : Բայց այն վայրկինին այնպիսի
այցելութիւն մը կրնար անպատշաճ ըլլալ : Պուցէ հօրաքրո-
ջն ու այս երկու արարածոց՝ որք իրեն համար այս ժամուս
բովանդակ մարդկութեան համառօտութիւնն էին , առա-
ջին սրտաշեղութեանց արդելք մ'ըլլար :

Իրեն համար ամենէն խոհեմ կերպն էր իւր փոքր միայ-
նարանն երթալ՝ որ այս օրու ընէ աւելի ախուր երեցաւ իրեն՝
քան կղերանոցին մէջի իւր մեկուսարանը : Ապագային հա-
մար ոսկեզօծ երազներ և երջանկութեան յատակագիծներ յօ-
րինելով ինքզինքն սիտիեց : Հետեւեալ օրէն նորէն ձեռք
պիտի առնուր իրաւաբանական ուսումներն՝ զորս թողած էր
եկեղեցական վիճակի մէջ մտնելու համար . մէկ քանի ամսէն
պիտի կրնար երկրորդ աստիճանի քննութեան ընդունուիլ :
Անխոնջ եռանդեամբ պիտի աշխատէր , նշանաւոր փաստա-
բան մը պիտի ըլլար , փառք և հարստութիւն պիտի գիզէր ,
և այն ատեն Թիւլիօներու ազգատոհմին գեղանի և հարուստ
ժառանգուհոյն ձեռքը պիտի խնդրէր :

Երազեցէ՛ք , երազեցէ՛ք կեանքի պայծառութիւններուն ,
զիրար պաշտող սրտերու զմայլմանց և հեշտանաց վրայ : Ե-
րազեցէ՛ք , քանզի երազելու հասակին մէջ էք : Պէթ ձեր ե-
րազներուն հեշտաւէտ ցնորքը վայելած պիտի ըլլաք : Ամեն
բաներու իրականութիւնը ակնյանդիման տեսնողները ա՛լ
չ'են երազեր ձեզի պէս , և ձեր ցնորքներուն վրայ կը նա-
խանձին :

ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍԱՐԱՆԻՆ ՄԷՋ ՄՏԵՐՄԱԿԱՆ ՃԱՇ ՄԸ

Ժիւլիօ ձեռնադրութենէն յետոյ կղերանոց երթալով Միւլ-
քիսեանց զլխաւորէն անմիջապէս իւր հօրաքրոջ տունը եր-
թալու թւյլտուութիւն խնդրած էր :

— Թէ և կանոնը չի ներեր , ըսած էր բարեբարոյ մարդը ,
բայց դուք ա՛լ մեղմէ կախումն չ'ունիք՝ յորմէ հետէ Նորին
Գերապատուութիւնը ղձեզ իրեն քարտուղար կարգած է .
ազատ էք ուրեմն :

Յերունին յաւելցուց .

— Երջանիկ եղիք , որդեակ իմ , Գուք ձեր բարի սրտո-
վըն արժանի էք երջանկութեան : Բայց արդէն խիստ բարձր
դիրք մ'ունիք , նախանձտոներ և մանաւանդ վտանգաւոր ու-
ստիւններ ունիք : Ձեր տօից ներքև լարուած ծուղակները ի
դերև հանելու և շարամտութեան դաղտնի յարձակմանց ու
հարուածոց դիմադրելու համար անսովոր աչալըջութիւն մ'ու
արթնութիւն մը հարկաւոր են : Ներեցէք ձեր լուաղոյն բա-
րեկամայ որ ձեզ իրենց խորհուրդներն հաղորդեն : Սենք
զձեզ կը սիրենք , և թէպէտ չ'եմք ուզ'ը ինքզինքնիս ձեր
յառաջացման ուղղակի պատճառը համարելու փառասիրու-
թիւնն ունենալ , սակայն դէթ այնմ նպաստած ըլլալու եր-
ջանկութիւնն ունիմք : Ձեր գեղեցիկ անկեղծութիւնն ու
համարձակախօսութիւնը՝ որք այնքան ընտիր յատկութիւն-
ներ են՝ ձեզի մեծ վաստուց պատճառ կրնան ըլլալ , եթէ
ամեն պարագայի մէջ ամենամեծ զգուշութիւն մ'իդորձ չի-
դնէք : Ձեր կենցաղն , տարակոյս չ'ունիմ , անսողտանելի
պիտի ըլլայ , բայց ձեր խօսքերը , ժիւլիօ , պիտի լսուին ,
մեկնուին և հաղորդուին : Ահա՛ այս կողմով պիտի ջանան
զձեզ կորուսանել :

— Այք կրնան ըլլալ իմ թշնամիներս , հարցուց ժիւլիօ :

— Աստուած իմ , տղա՛ս , մեր սովորութենէն դուրս է

մեր իմացածներն այլոց հաղորդել : Նոյն իսկ դուք վարչական գործոց մէջ կը մտնէք, և գիտէք նաև յառաջագոյն որ պատիւը պարտք կը դնէ մեր վրայ ամեն գործոց համար խիստ լուրջութիւն մը պահելու . բայց եթէ ձեր շուրջը տեղի ունենալիք իրերն ուշի ուշով նկատելու ըլլաք, շուտով վերահասու պիտի ըլլաք շատ մը բաներու՝ որոց վրայ աւելի բացատրութիւններ տալէ կ'արդելուն զիս գթութիւնն ու խոհեմութիւնը :

Թիւլիօ մեկնելու վրայ էր . դժխաւորը, իբր թէ խղճմը տանայ խայթէ մը դրդուած կեցուց զանի .

— Անցիք, որդեակ իմ . դուք այնքան աննենդ էք ու բարեսիրտ որ դուցէ շատ ուշ կարենաք սովորիլ թէ ո՛ր կողմէն ձեզի թակարդներ կ'ընան լարուիլ : Զ'եմ ուզեր որոշակի ըսել թէ վերապատուելի ժէզուիթ հարք ձեր թշնամիներն են . սակայն, զգոյշ կայէ՛ք :

— Նորհակալ եմ, բիւր անդամ . կը հասկնամ ըսածնիդ :

Եւ դուրս ելաւ :

Այս խօսքերն՝ որք մեկնութեան կարօտ չէին, Թիւլիօյի համար ըլսոյ նոր ճառագայթ մ'եղան :

— Այո՛, ժէզուիթք իմ սոսխներս պիտի ըլլան . ա՛լ հիմայ բնաւ չ'եմ տարակուսիր, բայց ես միայնակ եմ, ու անոնք զօրաւոր մարմին մը . . . :

Այս մտածումով դրաւեալ, կտրեց անյաւ այն միջոցը՝ որ զինքը կը բաժնէր այն սնէն՝ յորում երջանկաբար սահած էր իւր մանկութիւնը իր սիրատարի Աուիլին հետ : Աայրկեան մը վերջը, իւր հօրաքեռն ու քրոջը բազկաց մէջն էր :

Աարդինալին ըրած շնորհին լուրը զիրենք խնդութեամբ լցոյց : Տիկին Տը-լա Գլավիէր ըսաւ իւրովի թէ Թիւլիօ տաղանդի տէր մէկն ըլլալով՝ կրնար արագ յառաջացումի մ'աւելնակալել, և թէ ինքը, հեռեւաբար, այնքան չի պիտի ցաւէր ի նպատակ վերապատուելի հարց զանի ժառանգազիրի ընելուն : Աուիլ միայն մէկ բան մը տեսաւ, այն է թէ բաւական առեն ինք զինքը կենդանւոյն երիցատան մը մէջ

Թաղելու հարկ չի պիտի ըլլար :

Արքեպիսկոպոսին ճաշը կատարեալ մտերմութեան սահմանի մը մէջ տեղի ունեցաւ : Սեղանին վրայ կային միայն եպիսկոպոսը , Աբբայ Աակէլ՝ Ընդհանուր Փոխանորդը՝ որուն ժխլիօ կը յաջորդէր քարտուղարութեան մէջ , օրիորդ Տը Ֆլամարէն՝ Աարդինային քոյրը , Տիկին Տը Մալաք՝ օրիորդ Տը Ֆլամարէնի մտերմուհին , և վերջապէս Աբբայ Ժխլիօ նորընտիր քարտուղարը :

Ասի Ժխլիօյի համար մեծ շնորհ մ'էր , վասն զի Աարդինային ամբարտաւաններէն էր համարձակ ապրիլ , ճաշի ժամանակ կարելի եղածին չափ ուրախ , զուարթ ըլլալ , իբր առողջապահիկ կանոնաց ամենէն ընտիրն ու օգտակարը , և , հետեւաբար , իւր սեղանը չ'ունենալ և ո՛չ մէկ օտար դէմք մը՝ որուն առջև հարկ ըլլար միօրինակ զղուշաւոր ընթացք մը պահել : Պիտէր փորձով որ մեծերուն ամենափոքր գործերը կը լրտեսուին ու կը կրկնուին . ուստի , անախորժ տարածայնութեանց տեղի չի տալու համար , միայն մեծ արարողութեանց և հանդիսաւոր ճաշերու ատեն կ'ընդունէր իւր բարձրաստիճան կղերն , իր կանոնիկոսներն , իր առաջին կարգի և այլ ժողովրդապետներն :

Օրիորդ Տը Ֆլամարէն սասլատող և բաւական զուարճասէր պառաւ աղջիկ մ'էր . մեծ ազդեցութիւն կը բանեցնէր Աբբայ Աակէլի վրայ՝ որուն ինքն եղած էր յառաջացման պատճառ և որ իրեն մտերիմ բարեկամը հռչակուած էր երբեմն : Սոյն Աակէլն ալ իւր կարգին զԱարդինայը կը կառավարէր : Անդամ մը Օրիորդ Տը Ֆլամարէնի տհաճոյ ըլլալը Աակէլի տհաճոյ ըլլալ կը նշանակէր : Այն ատեն ամեն բան լմնցած էր . Աակէլ նոյն ինքն եպիսկոպոսն էր : Աարդինայը , կամ կոյր վստահութեամբ , կամ անհողութեամբ , երբէք անոր ըրած որոշմանց տակը չ'էր փնտռեր :

Երբ Աբբայ Ժխլիօ ճաշին համար որոշուած ժամուն արքեպիսկոպոսարանը գնաց , սենեկապան ծառայն Աարդինային մասնաւոր դահլիճը առաջնորդեց զայն :

Աարդինաւը հայրաշորով բարեսրտութեամբ մ'ընդունեց զանի :

— Սիրելիդ իմ Աբբայ, ըստ անոր, չէի ճանչնար զձեզ, բայց բարի եկաք. բոլոր յանձնարարութեանց լաւագունովք կուգաք առ իս, այն է Նախախնամութեան որ իւր տնօրինութեանց և խորհրդոց պէս գործել կուտայ կարդինաւաց և պարզ մահացուաց : Գիտցէ՛ք որ ալ մեր մտերմութեան սահմանին մէջն էք : Հիմայ ճաշի պիտի նստինք, պիտի տեսնէք հոն իմ քոյրս, Աբբայ Աակէլը՝ զոր կը ճանչէք, Մալաքի Մարգիզուհին՝ քրոջս հինաւորց բարեկամը : Հոն ևս ո՛չ Աարդինաւ եմ, ո՛չ արքեպիսկոպոս, ազատ եմ, ինչպէս ածխագործն իր ածխարանին մէջ : Դուք ալ ունեցէք ձեր կատարեալ աշատութիւնը, և զձեզ իբր տանը զաւակը նկատեցէք :

Ժիւլիօ, այս գորովալից խօսքերէն յուղեալ, լռութիւն պահեց, բայց Աարդինաւին ձեռքն առաւ ու յարդանօք համբուրեց զայն :

Սեղանը՝ Աարդինաւին սենեակէն քիչ հեռու փոքրիկ սրբահի մը մէջ պատրաստուած էր : Սեղանին վրայ ծառայութիւն ընող միայն մէկ սպասաւոր կար՝ որուն վրայ կատարեալ վստահութիւն ունէին : Աարդինաւը զժիւլիօ իւր քրոջն ու տիկին Տը Մալաքի ներկայացուց :

Աարդինաւը երբէք այն օրուան չափ ախորժակ ու զուարթութիւն ունէցած չէր : Օրիորդ Տը Ֆլամարէնի զուարճաբանութիւններ ըրաւ :

— Արջիչէ՛ք այն օրը՝ ուր առաջին անգամ ինձի ներկայացուցիք զՊ. Աակէլ :

— Այո՛, Աբբազան :

— Եւ յաջողեցաք ալ, Ահհ, կինե՛ր : Ինչ բարի կնքամայօրեր են :

— Այդ ըսածնիդ, Պերասպատիւ Հայր, վրայ բերաւ Մարգիզուհին, ինձ հաճոյ չէ՛. մտաշա՞ք որ անցեալ օր իմ մէկ ինդիրքս անողոքաբար մերժեցիք :

— Դուք ժէզուիթաց կողմէն աղերսարկու կ'ըլլայիք :

դէշ դատ մը կը սլաշտապանէիք, կորանյուշիք, Պ. ժիւլիօ սլաշտապան մարդ մ'է, եթէ ձեր խնդրանաց զիջած ըլլալի այսօր անոր տեղ լրտես մը սլիտի ունենայինք, և այս իրիկուն՝ դուք և ես Հաւատաքննութեան փողոցին ախանաւոր հարց բերանը սլիտի խնայինք :

— Մհ, ո՞րքան չար էք, ըսաւ Շրիորդ Տը Ֆլամարէն, ախի խիստ անվայելուչ է եպիսկոպոսի մը համար, ինչ սլիտի ըսէ հիմայ Պ. ժիւլիօ, երբ ժէզուիթաց նկատմամբ ձեր դէշ ըսելը ըսէ :

Շրիորդ Տը Ֆլամարէն իւր եղբօրմէն ոչինչ ընդհատ կատէր ժէզուիթները, բայց, թէ՛ ընաւորութենէն և թէ՛ արքեպիսկոպոսը կճելու և խօսակցութիւնը աւելի ողբերելու դիտաւորութեամբ, կը սիրէր անոր ընդիմախօսել և նայն իսկ մաքառիլ :

Ս.յն ատեն Նարդինայն ալ կը նետուէր, ո՛չ մէկ յարձակման առջև յետս կ'ընկրկէր և, ճաշին բոլոր տեսողութեանը, կճուխօքեր կը փոխանակէր իւր չարամիտ ընդդիմախօսին հետ որ ի վերջոյ ինքն իսկ մեծածայն կը քրքջէր, երբ անոր բերնէն ծանր խօսք մը հանել տալու կը յաջողէր : Ս.յն ատեն իւր սովորական խօսքը կը կրկնէր. « Ասի խիստ անվայելուչ է եպիսկոպոսի մը համար : »

— Խիստ դիւրին է ինձ, սլատասխանեց Նարդինայը, ապացուցանել Պ. ժիւլիօյի թէ ես չար չ'եմ, այլ յանչափս գըթասիրտ :

— Ս.յո՛, այո՛, յանդուգն, լերանց չափ բարձր դատումներ կ'ընէք, և յետոյ գթաւորութիւն կը կոչէք. կը տեսնեմ որ խիստ համեստ էք :

— Աչ, Շրիորդ, այնքան յանդուգն չ'են ըրած դատումներըս : Թո՛ղ նախ աիկին Մարգիդուհին սլատմէ ձեզ ժէզուիթաց կողմէն առ իս ըրած տարօրինակ սլատող ամաւորութիւնը, և ես յետոյ մնայորդը կը սլատմեմ :

— Ահ, սիրելի Տէր, անողորբելի էք. դուք այսօր ինձի խոնարհութեան փորձ մ'ընել տալ կ'ուզէք. մի՛ սնդէք այլ

Ես , կ'աղաչեմ : Պ . Սքսայ ժիւլիօ պիտի կարծէ թէ իւր սխերիմն եմ , բայց ես զձեզ կը կոչեմ ի վկայ թէ ձեր նոր քարտուղարին անունը բոլորովին անծանօթ էր ինձ :

— Աաւ ուրեմն , քոյր իմ , ահա՛ ես եղելու թիւնը կը պատմեմ :

Եւ կ'ըսու կերպով մ'ը պատմեց , իր բոլոր մանրամասն պարագայներովը , Մարդ իզուհւոյն իրեն թախանձելու դալը՝ որ պէս զի արժանայարդ . Սիւլբիսեանց ձեռնասունին տեղ ժէզզուի թներուն այս պաշտօնին համար մասնաւոր խնամքով կըրթած մէկ ընտրելին ընդունի :

— Ահա՛ , քոյր իմ , ինչպէս Մարդ իզուհւոյն Հաւատարմնութեան տան հարց պաշտպանն հանդիսացաւ : Հիմայ , հարցուցէք Պ . ժիւլիօյի՝ ձեռնադրութենէն վերջը Սէնթ-Էթիէնի մեծ աւանդատան մէջ տեղի ունեցած սրտառուչ տեւարանը :

— Ներկայէք ինձ , Սրբազան Հայր , դուք շատ լաւ կը պատմէք . . . :

— Այ , ո՛չ . դուցէ քոյրս կասկածի ըսածներուս ստուգութեանը վրայ : Անշուշտ որ ձեր բերնէն տեղեկանայ սոյն իրողութեանց , ձեզ համար ալ չի պիտի ըսէ թէ չափազանցութեամբ կը խօսիք :

Հնարանդիւ հարկ եղաւ , և ժիւլիօ բաւական դիւրախօսութեամբ պատմեց Վաւառակալ հօր՝ նորին Սրբազնութեան և բոլոր կղերական դասուն ներկայութեանը՝ իրեն ըրած սիրալիր ընդունելութիւնը :

— Վարպեա քաղաքականութեան ընթացք մ'է այդ , Տէր և ո՛չ ուրիշ բան : Ի՞նչո՞ւ ընական է որ իրենց կուսակիցներ շահիլ ուզեն :

— Մի՞թէ վարպեաութիւն կ'անուանէք զայս . դուք ալ ոչինչ նուա՛ համեատ էք : Ուրիշ անուն մ'ունի այդ , Օրիորդ . իմ բառարանիս մէջ կեղծաւորութիւն կը կոչուի :

— Հա՛ , հա՛ , կեղծաւորութիւն . շատ ծանր է այդ բառը , վրայ բերաւ պատաւ աղջիկը՝ միշտ Աարդինալին բար-

կութիւնը գրդուելու համար, տեսնե՛նք, պիտի կրնա՞ք ձեր այդ ըսածն ապացուցանել :

— Ար կարծէի թէ արդէն ձեր լսած երկու եղելու թիւններն բաւական էին զձեզ համոզելու : Աւրիշներ ալ կ'ուզէ՞ք լսել :

— Բոլորով սրաիւ, յաւելցուց օրիորդ Տը Ֆլամարէն :

— Ի՞նչ պիտի ըսէք՝ եթէ ըսեմ թէ նոյն իսկ այն մարդ ին՝ որք այնքան գորովանօք կ'ողջադուրէին զՍ.բբայ ժիւլիօ, որք մեծ պատիւ կ'համարէին իրենց այսպիսի աշակերտ մ'ունեցած ըլլալն, և, ի հարկին, կը յանձնարարէին զայն ինձ, ամեն ջանք ի գործ արկած են անոր քահանայ ձեռնադրութիւն արդիւնքու համար :

— Անկարելի է այդ, ազազակեց Տիկին Տը Մալար. ժէզուիթայ թշնամիներն չափազանցօրէն հասկցուցած են ձեզ : Ստուղիւ այնքան գէշ տարածայնութիւններ հանած են այս բարի հարց նկատմամբ, որ վերջապէս մարդուն բոլորովին անոնց կողմնակից ըլլալը կուզայ :

— Մարդիզուհի, զդուշացէք : Եթէ խօսքի տեղ գրութիւններ ցուցնեմ ձեզ . . . :

— Ա՛հ, այո՛, ըսաւ Օրիորդ Տը Ֆլամարէն, սուրբ Ֆրանսուա Տը Մալի գրութիւնն ալ խարդախեցին և ամբարշտ նամակի մը հեղինակ հրատարակեցին զայն :

— Այո՛, բայց եթէ ձեզի նոյն իսկ Քառառակալ հօր ձեռքով գրուած և Միւլբիտեանց մեծաւորէն ինձ արուած նամակ մը ցոյց տամ, կրնա՞ք ըսել որ այն արժանաւոր քահանայն ժէզուիթայ Քառառակալին գրութիւնը խարդախեր է :

— Ա՛չ, Սրբազան Հայր :

— Լաւ ուրեմն, տիկնայք, ուրեմն հիմայ կը համոզուիք : Եւ խիտ փօրր թղթապանակ մը հանելով, զոր միշտ իւր քովը կը պահէր, քաղաքավար ձեռով մը Մարդիզուհույն տուաւ ժիւլիօյի գէմ եղած ամբաստանադիրը :

— Սիրելիդ իմ Ս.բբայ, փիճակին բոլոր գործերն վազ-

ւրնէ սկսեալ ձեր աչքէն պիտի անցնին, պէտք է որ ամեն բան դիտնաք: Ըսէք հիմայ այս տիկնայց, որովհետեւ սաստաւած արանու թեան ուսում առած էք, թէ Ֆէզուիթները կը գրարտեմ:

— Զ'ի կարծեր երբեք որ այսպիսի բաներ ընելու կարող ըլլան, ըստ կէս ձայնով Մարդիլուհին:

— Ահա՛ ի՞նչեր կ'ըլլան թ. ի մէջ, ըստ Կարդինալը, դուք ձեր հարաւակիան եռանդ սաստ թեամբն ծայրայեղ դ ործերու մէջ կը նետուիք: Սոսյդ է որ Ֆէզուիթաց մէջ կը գրանդին խիտ ողջախոհ մարդիկ, առարինի քահանայներ, հրմուտ ուսուցիչներ: Անոնց մէջ, ինչպէս աշխարհական կղերքին մէջ, առդին անդին կ'երևին մի քանի բայառիկ բնութիւններ՝ որոնք քահանայական մեծ առաջիկութեանց տիրարը կը բերեն յանձին: Բայց, կազաչեմ, ի՞նչ կը նշանակէ բոլոր այս մարդիկն՝ բազմահմուտ դիտնականներ, առաջին աստիճանի բեմբասայներ, հրաշալի սուրբեր համարելը: Սրդարեւ, յիմարութենէ զատ բան մը չ'է այս: Ահա պարկեշտ անձ մը, կղերանոցէն ելած, որ իր հակասորական արուեստին, ուսմանն ե յիշողութեանը շնորհիւ հեշտ պերճախօսութիւն մ'ունի. եթէ զանի Սէն-Սէրնէնի կամ Լա-Զօրասի քարոզիչ անուանեմ, դուք, մեծաշուք ափկնայքդ, այս խեղճ քարոզչին քարոզներուն երթարու չէք գիշանիր: Բայց եթէ մի ե նոյն մարդը մի ե նոյն պերճարանական տաղանդով Հաւատաքննութեան մատուռը դայ, «վերապատուելի հայր» տիտղոսը կրելով, անմիջապէս թ. ի քաղաքին մէջ յուզում ե իրարանցում մ'է կ'ելլայ: «Ի՞նչ տաղանդ, ի՞նչ հանճար, Տիկին Մարդիղուհի, պիտի ըսեն ձեզ. ասի երկրորդ Հայր Աստիճան * մ'է. Լաքօռտէն ** ոչինչ է ասոր քով:» Եւ անթիւ բազմութեանը՝ խեղդ ուելու չափ կը սեղմուիք, նեղ ե անձուկ մատրան մը մէջ, սքանչանալու հա-

* Հռչակաւոր քարոզիչ գաղղիացի, ծն. ի 1795, մեռ. ի 1858:

** Տօմիսիկեան կրօնաւոր ե մեծանուն քարոզիչ գաղղիացի (1802-1861):

մար աշխարհի պարզերութեանց վրայ՝ որոնք յօրանջել պիտի
ապին ձեզ, եթէ ուրիշի մը բերնէն արտասանուած ըլլային :
Յիմար էք դուք :

— Ենորհակալ եմ ձեր այդ մեծաբանքէն, ըսաւ Օրիորդ-
Տը Ֆլամարէն :

— Սրբազանը չիշ մը իրաւունք ունի, վրայ բերաւ Մար-
քիզուհին : Ես իմ մասին յանցաւոր ըլլալս կը խոստովանիմ :

— Բայց, Սրբազան, (վասն զի Օրիորդ Տը Ֆլամարէն
ուրիշ կերպով չէր կոչեր իւր եղբայրը), ի՞նչպէս կրնայ ըլ-
լալ որ ժէզուիթաց՝ դիտութեան, տաղանգի, առաքինու-
թեան մասին բոլոր մնացեալ կղերէն գերադո՞ն ըլլալն ընդ-
հանուր կարծիք մըդ արձած է :

— Այս բանն այնքան յաճախ, այնքան ընդ երկար և
այնքան բերաններով կրկնել տալու յաջողակութիւնն ունե-
ցած են, որ վերջապէս ամենուն ալ այնպէս հաւատացու-
ցած են :

— Ատի ըսել դիւրին է. բայց ես կ'ըսեմ թէ՛ եթէ ամե-
նէն աւելի այս ուխտին մէջ աղքատութեան, աշխարհատե-
ցութեան, բացարձակ հնազանդութեան, կենաց մարրու-
թեան ոգին չ'ըլլար, իրենց սնունդն բոլորապէս այս լուսա-
հիւս պօսակը չի պիտի ըլլար :

— Ար կարծէք որ ժէզուիթք Բեռնարդեան, Բենետիկ-
տեան, Պրաբեան կրօնաւորներէն աւելի սրբակեաց, աւելի
հնազանդ ըլլան : Իրենց աղքատութիւնը կ'ըսէք. բայց կա-
տակ մ'է այդ : Ստուգիւ, թէ և երբէք աղքատութեան
ուխտադրութիւնը չ'եմ կրնար դձուձ ու արհամարհ բան մը
համարել, եթէ իրօք այս ուխտադրութիւնը կարելի է գոր-
ծադրուիլ կրօնական մեծ միաբանութեանց մէջ, բայց, յան-
հունս ճոխ միաբանարաններու մէջ՝ ուր հացը չի կրնար երբէք
պակասիլ, ուր մառաններն միշտ լի են գինւով, ուր իմաս-
տուն խնայողութեամբ մը շատ տարիներ բաւելու շափ փայտ,
ձէթ, ամեն տեսակ պաշար ամբարեալ կան, աղքատ կոչել
այն մարդիկը՝ որոնք, օրը երկու անգամ, զանգակի ձայնով,

ճանդարար խորտիկներով առատալից սեղան մը կերթան
բաշխիլ, բառերու նշանակութիւնը չը գիտել կը նշանակէ :
Ֆէլդուիթք, Նուլրակիան-Սրախ մայրապետաց և այլոց պէս,
« հաշտութեան ուխտ », կ'ընեն, իրենց կրօնաւոր եղած օ-
րը :

— Զմեզ կը դայթակդ գեյնէք, Սրբաշան, ըսաւ պառու-
ւուկը :

— Դա՛ւ, ըսւ. ևս կը դայթակդեյնեմ դձեզ : Տեսնե՛նք
Յրիորդ . դուք ալ, ինձի պէս, ելնկինը չէք . աշխարհի մէջ
եղած աղէտները գիտէք : Սրդ, մտիկ ըրէք ինձ, երբ կը
տեսնեմ դործաւորը՝ որ դեռ այն ինչ իրեն հարսնացեալ օրի-
որդին թեր մտած՝ Սէնթ-Եթիէնի աստիճաններէն վեր
կ'ընէ, կ'ըսեմ . ահա՛ ազքատութեան ուխտ ընող մարդ մը :

Եւ երիտասարդ դործաւորուհին՝ որ սնական աշխատու-
թիւններէն ու նեղութիւններէն կը վախէ, որ իւր շուրջը, եր-
բեմն իր ընտանեաց մէջ, տեսած է լլկանքներն կեանքի մը՝
ուր խիստ շատ անգամ հեռեկալ օրը հաց չ'ունենալէ կը
վախցուի, երբ նա վաճքի մը մէջ իւր ուխտը ընելու կսուցայ՝
հարուստ ըլլալու ուխտ կ'ընէ . ա՛լ ասլահով է ընաւ կարեու-
րէն չի գրկուելուն :

Մե՛ք, մեր կաթուղիկ գեղեցիկ ընկերութեան գիրկը, սու-
տերով կ'օրօրուինք : Եւ ահա՛ ինձո՛ւ այրքան յետս կը մնամք :

— Ատոնք խիստ ծանր են, սիրելի Տէր :

— Այո՛, Մարդիղուհի՛դ, և ևս ատոնք քու ականջէդ վար
կ'ըսեմ . տանեաց վրայ զանոնք քարողելէ կը վախնամ . վա-
սըն զի կը քարկոծուիմ : Այո՛, մահ կ'սպասէ ինձ, թէ և
Աարդինալ, Թ . ի արքեպիսկոպոս և պետութեան ծերա-
կուտի անդամ եմ, եթէ խորհիմ վերջնել այս օտութեանց
քօղը՝ որոց մէջ ընդ քարչ կ'ածիմք՝ հին ժամանակին սու-
չին կապուած : Մարդիղուհի՛, մի քանի ամիսէն եօթանաս-
նամեաց պիտի ըլլամ, որքան որ առոյդ և ուժեղ կը տեսնէք
դիս . և ևս Ս . Իդնատիոսի ընտանիքին և իմ վիճակիս ուրիշ
միարանութեաններուն հետ անխառն կ'ուզեմ մ'ընել :

Բայց, առանց լսելու խել մը սուսքինի և գրանչելի անձանց արժանիքը, կը բռնեմ թէ անոնք աւելի մեծ ու դիւցազնային պիտի երևէին յայս իմ, եթէ աշխարհի կենաց սածանալիք վաստակումները կը լուսորոշուին ըրած զլային. բոլոր մնացեալներուն արժէքը դիտեմ, և կը խնդրեմ Սատուծ մէջ նոյն իսկ ուղղափառութեան շահուն համար որ խմաստնադոյն ուղի մը, քրիստոնէութեան մեծութիւններովն աւելի մաքուր իմացականութիւն մը հասնի շուտ Յկեղեցւոյ մէջ՝ սրբելու զայն հնացեալ կամ ապիկսր դրութիւններէ, և ճշմարիտ աղքատութիւնը, ճշմարիտ սրբութիւնն ու ճշմարիտ հնազանգութիւնը վերահաստատելու ընտանեկան յարկին տակ, այն սրբարանին՝ ուր նախնական քրիստոնէութիւնը զէտելեց Յկեղեցին, և ուսկից կը վանե՛ք մեք զայն՝ իլլելով ընտանեաց ծոցէն ու վանքի մը մէջ փակելով այն հաւատացեալ ու անբիծ հոգիներն՝ որոնք հոն Սատուծոյ սէրը պիտի սուրբեցնէին :

— Ահ, Սրբազան, քանի հասակնիդ կ'առնէք, աւելի փիլիսոփայ կ'ըլլաք :

— Սատուծ իմ . . . այո՛, Օրիորդ. սակայն կը խոտաւաճեմ, միշտ սոյն կարծիքն ունեցած չեմ : Ես ալ կը դերին մէջ տիրապետող դադափարաց աղղեցութեան ներքեւ էի. ե՛ս ալ դայլերուն հետ ունայի : Կնձի համար աղէկ, վասն զի Աարդինալ չ'պիտի ըլլայի բնաւ՝ եթէ իրաց անդխտութիւնը չի ձգէր զիս այն լայն հոսանաց մէջ՝ ուր գործեցի և խօսեցայ ուրիշներուն պէս :

Սիրեցեալդ իմ Աբրայ, մի քանի մատաղ ու առոյդ մըտքերու մէջ կան այս դադափարներն՝ ինչպէս ես կը գտնեմ զանոնք իմ սպիտակ հերաց ստակ : Պիտեմ բոլոր ինչ որ կ'անցնի : Ես զձեզ կոյր դիտրայն չ'ընտրեցի. վերահասու եզայ որ դուք ալ յառաջող իմական դադափարներ ունիք : Այս տիկնայց հետ կը խօսիմք ինչ որ կ'ուզեմք. բայց զգոյշ կեցե՛ք այլուր. որքան հզօր ու կարող ալ եմ, զձեզ աղաատել՝ կրնայ ինձ անկարելի ըլլալ :

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԱՐԱՆԻ ԹՂԹԱԿՅՈՒԹԻՒՆԸ

Կարգինալին ահարկու յայտարարութիւններն, այն անխիղճ ամբաստանութիւնն՝ որուն միակ նպատակն էր ժիւլիօյի քահանայ ըլլալն արգելուլ, այս մարդոց ցածութիւնն՝ որոնք անոր խնկարկելու կուգային, այն վայրկենէն՝ ուր զայն ոչնչացնելու անկարող կը դտնուէին, բոլոր ասոնք ժիւլիօյի աւելի զղուանք՝ քան ատելութիւն ազդեցին:

— Ներե՛նք, ըսաւ իւրովի, միթէ « որ և է » միջոցաւ իրենց յառաջադրած նպատակին հասնելու նողկալի դրութեամբը բաւական պատժուած չ'ե՞ն: Ի՞նչ կեանք է այդպիսեաց վարած կեանքը: Ա՛րքան կռիւ ու պատերազմ պէտք է ըլլալ մարդուս խղճմտանաց մէջ, որպէս զի կարող ըլլայ դործելու, իբր միջոց իրենց ուխտին մեծութեանն ու զարգացման, ինչ որ ամենադոյզն պատուոյ զգացում ունեցող մէկը չի համարձակիր ընել: Ահա՛ ո՛ւր կը տանին մարդկային վրիպումները: Եթէ ուրոյն ուրոյն դատենք այս մարդիկը, կրնանք դտնել անոնց մէջ իրական արժանիք մը, ինչ ինչ առաքինութիւնք, եռանդ բարւոյ և դրեթէ միշտ անբասիր վարք մը: Բայց եթէ քննելու ըլլանք այն ընկերական կազմակերպութիւնը՝ որ զիրենք կը կապէ, որ ցոյց կուտայ իրենց դործելու եղանակը, որ իրենց ուխտին զարգացմանը կը նպաստէ և նորա ազդեցութիւնը կ'ապահովէ, կը տեսնեմք հրէշային մարմին մը, ատելի մաքիավէլութիւն մը, սոսկալի ու ահաւոր մեքենայ մը՝ որոյ անիւները երկրագընտիս բոլոր մակերևութին վրայ շարժման մէջ կը դնէ պարզ ընկերակցութիւն մը՝ որոյ անդամոց թիւը երեք հազարը չ'անցնիր:

Ի՞նչպէս ա՛յսքան սակաւաթիւ մարդիկ կարող եղած են այսպիսի զօրութիւն մը ձեռք բերել: Պատճառն այս է որ զաղտնի ընկերակցութեանց միութիւնն ու փոյթեռանդն

դ ործունէութիւնը ունին : Որքան աւելի ըլլան իրենց գէժ
եղած յորձակումներն , ո՛րքան աւելի ինչ ինչ աւելերէ մեր-
ժուիչն իրենց զայրոյթը դրդուէ , այնքան աւելի ոյժ և լու-
րութիւն կ'ստանան : Ասի Բօնոսթիէն լեռնաբաժնի * լուրախումքն է
զիրենք զտարող ընկերութեան գիմացը , պէտք է յաղթել
կամ ընկծիլ :

Լամբնէ կ'ըսէր . « Այս մարմնոյն նկատմամբ ունեցած
զաղափարս իւր անդամոց նուազ կամ շատ խելք և աս-
ղանդ ունենալուն հետ վերաբերութիւն չ'ունի : Իմ զաղա-
փարս իւր կազմութեան սղուոյն ու անկէ յառաջացած հե-
տևանաց նկատմամբ է . այս սելախն հիմն ու կազմութիւնը ինձ
յոռի կը թուին , և նոյն իսկ Անկերութիւնը կրօնքին աւելի
մասաառիթ՝ քան օգտակար կը տեսնեմ : Անոր մէջ բնու-
թեան հակառակ և քրիստոնէութեան ճշմ. ընդ օգուոյն ներ-
հակ բան մը կայ : » Ասի մահու վճիռ մ'է : Նորին Գերա-
պատուութիւնն ալ զաղափարակից է ասոր : Միւլբիսեանք
կ'երկնչին այս մարդերէն , և չ'են համարձակիր բերան բա-
նալ անոնց առջև , նոցա անհարտ ու անողորմ զրէժ խնդրու-
թիւնն իրենց վրայ չի հրաւիրելու համար : Ես ալ անոնց զոհերէն
մին ըլլալու սահմանուած եմ : Իմ խեղճ ժառանգութեանս
աչք ունին : Ի՞նչու հարուստ չեմ , որպէս զի երթայի ըսել
անոնց . Առէ՛ք , ա՛րք շահախնդիրք , ահա ձեզի կէս միլիոն
բայց մի իմ խոնարհ կացութիւնս վրդովէք : Թողէ՛ք երկու-
օրինաւոր ժառանգորդ ազայոց իրենց ստացուածքը : Ահ ,
կ'զգամ , մրջումը սոսկալի պիտի ըլլայ . բայց վերջապէս նա-
խայարձակը ես չեզայ : Անոնք իմ սխեղիմ թշնամիներս են :
Բայց ես ալ իմ կողմս ունիմ արդարութիւնն ու Աստուած՝ որ
արդար դատերու առաջինն ու հզօրաբոյն պաշտպանն է :

Ժիւլիօ քանի մը վայրկենէն վերջն յաւելցուց .

— Աերջապէս այսպիսի հակառակորդաց առջև յետոս

* Ժ.Գ. և Ժ.Գ. դարերուն մէջ Նոսալիոց այլ և այլ տերութեանց վարձ-
քով բռնած զօրախմբից զբոխներն այս անունը կը կրէին , որ «ստալնորդ»
կամ «զլախ» կը նշանակէ : Ծ . Թ .

Նրանք կիսի վառք մ'է : Լաւ ուրեմն , եւս ալ զօրաւոր ու ան-
գըրդուելի պիտի ըլլամ :

Այս վայրկեանիս կարդինայր լծիւլիօ կոչել տուաւ , վասն
զի իւր վիճակին գործոց անօրինութեան համար՝ իւր քար
տուղարին ներկայութեանը պէտք ունէր :

— Մերեցեալդ իմ Ս.բբայ , ըսաւ անոր , կ'ուզեմ ցոյց
տալ ձեզ ձեր օրական գործոց ընթացքը : Շատ անգամ
տաղակալի ու երբեմն աշխատեցուցիչ է , բայց ս'չ բնաւ խիստ
երկար և ս'չ խիստ տաժանելի : Իմ վարչութեանս ներքեւ ե-
ղած վիճակը Պաղղիոյ ամենէն ընդարձակ վիճակներէն մին
է : Վիճակաց առաջնորդներու ամենէն արթուններէն ու ա-
ռաջիններէն մին համբաւուած եմ : Ս.յս համբաւոյն շնորհիւն
է որ կարդինալական ծիրանին ստացայ , Սնկեղծօրէն խօսե-
լով , նախամեծար կը սեպէի ստանալ զայն բարի գործոյ մը
պատճառաւ՝ ընդ որ Ս.ստուած հաճէր , կամ գրական երկի
մը՝ որ ասպագային մէջ իմ անուանս պատիւ բերէր :

Իւրաքանչիւր օր , չորս ժամուան մէջ , պիտի կրնանք
մեր ամենօրեայ գործերը կարգադրել , եթէ նաև մեր
թուղթերուն մէջ կարգաւորութիւն պահուի :

Ե՛ն ուրեմն , սկսինք գործի : Բոլոր գործը կը կայանայ
եկած նամակներուն պարունակութեանը տեղեկանալուն , ա-
նոց պատասխանները նշանակելուն և յետոյ խորհրդակա-
լայ ատենէն ու կուսակալութեան կողմէն եկած տեղեկա-
գրերը կարգաշուն մէջ : Ահա այս անգամուան սուրհանդա-
կով եկածները . բացէ՛ք նախ նամակները :

Ժիւլիօ սկսեց .

— Պ . Տիւնէլ , Սէն-Վէայի Փոխանօրդը , երկար տաւնէ
ի վեր կրօնական միօրանութեան մը մէջ մտնելու տենչը կը
յայտնէ Ձերդ Վերապատուութեան : Եր վախնայ թէ մի'
գուցէ Ձեր Սրբազնութեան իրեն յանձնած պաշտօնին մէջ
մնալով անկարող ըլլայ մեծ բարիք մը գործելու : Մարիամ-
եան հարց միաբանութեան անգամակցելով Ս.ստուծոյ աւե-
լի հաճոյ ըլլալ կը կարծէ :

— Յաճախակի այսպիսի նամակներ կ'ստանամ: Ասի ըսել կ'ուզէ. ժողովրդապետ չ'ըլլալուս կամ ստորին ժողովրդապետութիւն մը ձեռքս ունենալուս կը ձանձրանամ: Յառաջացո՛ւր զիս: Հիմայ նշանակեցէք իրեն տալիք պատասխաննիդ:

« Թէ Նորին գերապատուութիւնը չի կրնար արդ ելուլ և ո՛չ մին իւր քահանայներէն կրօնական ուխտի մը ուխտակից ըլլալէ, և թէ, ի մեծ ցաւ իւր սրտին, զՊ. Արքայ Տէնէլ ազատ կը թողու իւր կոչմանը հետեւելու: »

Ինձ այս տեսակ առաջարկութիւններ ընող քսան քահանայից մէջէն երկուքն անդամ վանք չ'են երթար: Փառասէր են. ա՛հա խնդիրը:

— Ախշօնի ժողովրդապետը թիւզէի ժողովրդապետ Պ. Արքային անվայել ու թեթեալարոյ ընթացքը կը տեղեկագրէ ձեզ: Ա՛րսէ թէ այս երիտասարդ քահանայն համեստ վարմունք և զգուշաւոր կենցաղավարութիւն չ'ունի. իւր գիւղին մարդոց հետ չափազանց մտերմաբար կը վարուի: Բաց աստի, տաղաչափութիւններ ալ շինելու կ'ենէ, և իւր յոռեճաչակ վերտառութիւններովն իր գիւղապետը, դըպրոցի դասատուն և շրջակայից իւր մի քանի պաշտօնակիցներն իրեն թշնամի ըրած է:

— Պատասխանեցէք թէ Ն. Գերապատուութիւնը պիտի խորհի. շնորհակալ եղիք անոր իւր տուած տեղեկութիւններէն: Յետոյ Ախշօնի մօտ եղող Սէն-Մամէի յարդի ժողովրդապետին պիտի դրէք որ Ն. Գերապատուութեան կողմէն թիւզէի ժողովրդապետին վարմանց նկատմամբ քննութիւն մ'ընէ, այլ ամեն կարելի եղած զգուշութիւնները ձեռք առնելով որպէս զի ո՛չ թեմականք և ո՛չ ժողովրդապետը իրեն այսպիսի պաշտօն մը յանձնուած ըլլալը չ'իմանան: Ախշօնի ժողովրդապետը թէ և պատուարժան անձ մ'է, այլ կը կասկածիմ որ խնդիրը քիչ մը չափազանցօրէն բացատրած ըլլայ:

— Տիկին ար Սէն-Մառթօսի կաղաչէ Ձեր Գերապատ-

ութեան որ բարեհաճի շնորհել իրեն իւր պաշտպանութիւնը, իւր գղեկին մերձակայ մեծ աւանին մէջ աղքատաց և հիւանդաց խնամոց նուիրեալ «Նախախնամութեան քոյրեր», ընդունելու համար:

— Այս նամակը մէկ կողմ դրէք. տիկնանց հետ քաղաքավար պէտք է ըլլալ: Սնոնք ինքնագիր նամակները կը սիրեն. ես անձամբ պիտի պատասխանեմ անոր:

— Սալիէի ժողովրդապետին սեղան մը սրբազործելու իշխանութիւն խնդրելը:

— Նամակը ուրիշ պահարանով մը յետս դրկեցէք և գրեցէք ի ստորև. «Նղիցի ըստ խնդրանաց քոյ:»

— Աիէօյի յարգոյ գիւղապետին նամակը՝ յորում սաստկապէս կը գանդատի տեղւոյն ժողովրդապետին նկատմամբ: Ա՛րսէ թէ ժողովրդապետը յաճախ եկեղեցւոյ բեմին վրայէն իրեն դէմ թշնամական ու բացարձակ յարձակումներ կ'ընէ, և թէ դպրոցի դասատուին ու մերձակայ թաղերու ժողովրդապետաց հետ իրեն հակառակ կը խօսի:

— Գրեցէք ժողովրդապետին թէ Ն. Գերապատուութիւնը ամենամեծ խոհեմութիւն կը պատուիրէ իրեն Պ. Գիւղապետին նկատմամբ, թէ կրնայ ըլլալ որ այս պաշտօնեայն իրեն դէմ չարամիտ ու թշնամական ոչ ի մ'ունենայ, թէ Ն. Գերապատուութիւնը չ'ուզէր իրենց փոխադարձատելութեանց մէջ մտնել, այլ թախանձանօք կ'աղաչէ զյարգոյ ժողովրդապետը որ իրենց մէջ տեղը խաղաղութիւնն հաստատելու համար ամեն զոհողութիւն յանձն առնու, եւ թէ չ'ուզեր ուրիշ ժողովրդապետութիւն մը՝ զոր Ն. Գերապատուութիւնը պատրաստ է յանձնել իրեն, երբ իրեն յարմար տեղ մը գտնուի պարապ: Ըսէք իրեն թէ միշտ մի և նոյն սերտ համակրութիւնը կը կրեմ իր վրայ:

Յիրաւի բարի քահանայ մ'է, այլ քիչ մը դիւրադրգիւն և կռուասէր:

— Նամակ՝ Սէն-Ֆռատուի յարգոյ Քաղաքապետին կողմէն, ժողովրդապետը ձգեր գացեր է իւր հետ տանելով

քաններկա տարեկան օրիորդ մը՝ զոր յաճախակի խոր երկ-
ցատունը կընդունէր անական այլ և այլ աշխատանայ պատ-
րուակաւ : Օրիորդին ընտանիքը խիստ դրդուած է : Ասի
քաղաքին մէջ ստակալի դայթակղոթեան առիթ մ'է : Պ. Վա-
ղարապետը իրողութիւնը կայսեր դործակալին ալ խմայու-
ցած է : Ա՛րժասի թէ յանցաւորն ու խոր մտրեցուցած աղջի-
կը դէպ ի Փարիզ ուղևորած են :

— Միշտ, միշտ այսօրինակ անասրաններ : Չուտուա-
կա՛ն ամուրիութիւն, որքան վնաս կը դործես դու Նկեղեց-
ւոյ : Գրեցէք սոյն դայթակղական եղելութեան Ն. Վերա-
պատուութեան սրտին ազդած խորին ցուր : Ըսէք թէ Կա-
արդէն դալանարար շատ մարդասիրական խրատներ տուած
էր հէք քահանային, կերեայ թէ խելքը կորուած է, և
վախճանն ալ անշուշտ թշուառութիւն և յուսահատութիւն
պիտի ըլլայ : Ըսէք թէ Ն. Վերապատուութիւնը սոյն թա-
ղին հողևոր անսլութեւնը կը յանձնէ Քիյմօրէնի ժողովրդ-
դապեաին : Ս. յա վեջնայն ալ յատկապէս սոյն խմատով նա-
մակ մը դը՛ր՛ցէք, ըսելով թէ Ն. Վերապատուութիւնը կը
խնդրէ որ Նկեղեցւոյն մէջ բեմը չ'եղնէ, միայն պատարագն ը-
նէ ու այս ախար դէպքին վրայ ո՛ր և է խօսակցութեան զգոյշ
կենայ :

— Նամակ Օրիորդ Նուիզ Յէրզի, Օրինեաքի վարժու-
հւոյն : Սաստկապէս կը դանդառի յարգոյ ժողովրդապեաին
նկատմամբ, որ յառաջագոյն խոր դպրոցին նկատմամբ ե-
ռանգ ու հողածութիւն ցոյց կուտար խոր յաճախակի այ-
ցելութիւններովն, և որ այժմ ամենուրեք զինքն անուանար-
կել ու աշակերտաց թիւը նուազցնել կը ջանայ և ամենուն
կըսէ թէ քիչ ատենէն զոյն ճամբու դնել պիտի աայ :

— Ս. յա ալ կա՛մ վարժուհւոյն նախանձօտութեան կա՛մ
ժողովրդապեաին վրէժխնդրութեան արդիւնքն է, ասոր ալ
ասկ դէշութիւն մը կը նշմարուի : Գրեցէք Օրիորդ Յիրոյի
թէ Ն. Վերապատուութիւնը խոր նամակը նկատողութեան
պիտի առնու : Գրեցէք նաև ժողովրդապեաին որ Ն. Վե-

Քաղաքացիներ իւր Օրհորդ ժիրոյի նկատմամբ բռնած ընթացից պատճառներուն տեղեկանալ կը խնդրէ :

— Մօնթէյլի յարգի ժողովրդապետը երեք շաբաթ իւր թեմէն հեռանալու թոյլտուութիւն և իւր բացակայութեան միջոցին իւր դրացի՝ Չինեանի ժողովրդապետին փոխանորդաբար իւր պաշտօնը վարելու հրաման տրուելը կը խնդրէ :

— « Եղիցի բառ խնդրանաց քոց : »

— Վարչական գործառնութեանց համար արժէթից յուղարկման նամակ :

— Ասիկայ հաշուողքին մէջ արձանագրել պէտք է :

— Լուպէնի Պ. ժողովրդապետը խորհուրդ կը հարցնէ Չերդ Պերապատուութեան թէ արդեօք պէտք է կրօնական թաղման հանդէս կատարել Պ. Նատո անուն անձի մը յուղարկութեան, որ առանց հաղորդութեան մեռած և իւր անկրօնութեամբը ամենուն ծանօթ անձ մ'եղած է : Պ. Նատո բնաւ Եկեղեցիէն ներս ոտք չ'էր կոխեր, քահանայից հակառակ կը խօսէր և « Սիէբլ » լրագիրը կը կարդար :

— Պատասխանեցէք որ Ն. Պերապատուութիւնը հրաման կուտայ իրեն եկեղեցական թաղման հանդէս կատարել նոյն անձին յուղարկութեան : Ապուհներ, գործի են ելեր :

— Աքազէնի յարգի ժողովրդապետը կը տենչայ որ Ն. Պերապատուութիւնը բարեհաճի իւր թեմին նորաչէն դերեզմանատունը նուիրաչօրձել երթալու պատիւն ընել իրեն :

— Պատասխանեցէք թէ Ն. Պերապատուութեան բաղմադրազ գործերը չ'եներելով իրեն անձամբ երթալ իւր Էնդհանուր-Փոխանորդներէն մին պիտի դրիէ : Մատուցէք իրեն բարեկամական դրացմանցս հաւաստին : Չինքը իւր արքեպիսկոպոսն ընդունելու տաղնապէն կ'ազատեմ :

— Ասի վերջինն էր, Սրբազան Տէր :

— Խիտո լաւ : Հիմայ տեղեկագրերը կարդացէք :

— Ահա խորհրդակալաց ատենին կողմէն եկածը :

Մի միայն Սէն-Ֆռածուի ժողովրդապետին Մառկոիթ

Պիէլ անուն քսաներկու տարեկան աղջկան մը հետ լիախուստը կը նշանակէ :

— Չայդ արդէն իսկ դիտէինք : Տեսե՛նք հիմայ թէ ի՛նչ կը տեղեկագրէ մեզ կեդրոնական ոստիկանութիւնը :

— * * * ի Փողովրդապետը կը յարատէ իւր դիշերային այցելութիւնները Միւզէ փողոցի թիւ 7 տունը՝ որ կասկածելի ճանչուած է :

— Յետո՞յ :

— Ս. թաղին վարժարանաց տեսչութիւնն ընող կրօնաւոր հարց միոյն նկատմամբ միշտ անվայել զրոյցներ կը պատին : Ծնողք ոմանք տղոց բերնէն մի քանի խոստովանութիւններ առած են . աւելի խիստ ու անաչառ քննութիւն մը մօտերս պիտի սկսի :

— Ա՛հ , սա թշուառակա՛ն կրօնաւորք , միշտ մի և նոյն պատմութիւնը : Այն նոցա մէջ պարկեշտաբարոյ անձինք , բայց նաև քանինե՛ր կան սոսիւ ու դաղանամիտ : Եւ հրաշք մը գործած ըլլալ կարծած են՝ բոլոր այս կոշտ ու կոպիտ մարդիկը ամուրիութեան դատապարտելով : Հուսկ ուրե՞մն . . . :

— Թօրի Փոխանորդներէն մին Բերնսօ մականուանեալ օրիորդաց տնէն դուրս չ'ելնէր : Անոնց խոստովանահայրն է : Ա՛րսուի թէ մերթ ընդ մերթ կը յափշտակուին ու նախագուշակութիւններ կ'ընեն : Սա տարածայնութիւնն ալ կայ որ Ս. Աոյս Մարիամ սոյն օրիորդաց երիցադուներն երևցեր է : Բայց կը հաւաստեն թէ այս տանը մէջ յափշտակութենէ տարբեր բաներ տեղի կ'ունենան և թէ երկու քերց կրտսերը յղի է :

— Քիչ ատենէն հող ալ մեծկակ իրարանցում մը տեղի պիտի ունենայ : Պրեցէ՛ք այդ պարոնին որ ուրբաթ օր ժամ երկուքին զիս տեսնելու գայ : Արիտասարդ յափշտակեալ մ'է , սակայն իւր մօլեկրօնութիւնը կրնայ խիստ մարդկեղէն վախճան մ'ունենալ : Ատոր վրայ կը խորհինք :

— Ժէզուիթք իրենց ընդարձակ սուն մը կառուցանելու

համար լայնատարր գետին մը գնելու վրայ են : Քաղքին մէջ մեծ շարժում ցոյց կուտան և մեծկոկ դումարներ ձեռք կ'անցընեն : Իրենց նուիրատուութիւններ ընել սուրբ համար զանազան տարիքոտ ու խօթամիտ անձինք իրենց ձեռք գործիք ըրած են , որոց մէջէն մասնաւորապէս ՊՊ . Թուռնիչոն , Մարքէ և Լըկրօ իբր իրենց գործակատարքը կը նշանակուին :

— Այդ մասին իմ ունեցած տեղեկութիւններս կեղբոնական օտարականութեան տեսչին ունեցածները կը գերազանցեն :

— Ինքզինքը ժէնովէֆէն անուանող ու կրօնաւորի հանդերձ կրող միաբան մը՝ որ ասդիէն անդիէն նպաստ կը հաւաքէ եղեր , կեղբոնական օտարականութեան տեսչին առջև բերուեր է . խիստ կանոնաւոր թղթեր ու բոլոր վիճակաց մէջ նպաստ հաւաքելու համար իւր մեծաւորին արտօնագիրը ցոյց տուեր է : Անմիջապէս հեռագրուեր ու պատասխան առնուեր է որ Լիոն քաղքին մէջ այս անուամբ անձի մը սոյն օրինակ հրաման մը չէ՛ տրուած : Ձերբակալ եղեր ու վաղը կայսեր գործակալին ներկայանալու պիտի դրկուի :

— Այս ալ նորօրինակ հնարագիտութիւն մը : Ալ բան չի՞ կայ :

— Այ , Սրբազան Տէր :

— Լաւ ուրեմն , Սրբայդ իմ սիրեցեալ , ահա մեր ամենօրեայ աշխատութիւնը՝ բաց ի հարկաւոր փոփոխութիւններէ : Ինչպէս կը տեսնէք , մեր եկեղեցական իրերը լաւ վիճակի մէջ չ'են : Տակաւին այսօր ծանր պարագայից վրայ խորհրդակցութիւններ չ'ունեցանք :

Անոնց մէջ կ'ուզեմ ձեր աստուածաբանական տաղանդը փորձել . խիստ ծիծաղելի պարագայներ կը պատահին երբեմն :

Գացէք ձեր պատասխանները ղրկելու , և նախաճաշին լաւ ախորժակ մը բերէք ի միասին :

ԺԻՒԼ՝ՅՅԻ ՆՈՒԱԶԻՆ ՔԱՐԱՅԸ

Ճիւղիոյի արքեպիսկոպոսարանի (Նդհանուր-Քարտուղարութեան պաշտօնին մտնելը դեռ ութ օր չէր եղած, և ահա իւր այս յառաջացումը կղերին մէջ ամեն տեսակ դիտողութեանց առարկայ եղած էր :

Ճէղուիթը աճապարած էին իր'նց նշանակաւն խօսքն ըսելու, և այս խօսքը՝ որ, իբր վկայութիւն բերուած խօսք մը, Մարգիղուհեաց սրբապատկէն մինչև բարեպաշտուհի աղջկանց խցիկներուն մէջ կը կ'ընտէր, այս էր. « Արքեպիսկոպոսը խիստ նւատանալու սկսած է. արքեպիսկոպոսարանի քարտուղարութեան պաշտօնը տղու մը ձեռք յանձներ է : »

Աղերին մէջ գանուող ծերունիները կ'ըսէին. « Այս բանին մեր խելքը չի հասնիր : Այսուհետև երիտասարդ քահանայք մեզ պիտի հրամայեն : »

Այս արտաբուստ աննշան՝ այլ զրեթէ միշտ Նդհանուր-Փոխանորդութեան և յաճախ եպիսկոպոսութեան առաջնորդող պաշտօնին թեկնածուք իրենց ակնկալութեանց ի դերև ելնելը տեսնելով Ճիւղիոյն վրէժ կ'առնէին ու մօտակայ անկում մը կը նախատեսէին : Ատիսանձը պաշտօնանկութեանց հօտը կ'առնու, ինչպէս բորենիք դիտց :

Բայց անտարակոյս բոլոր այս դիտողութիւններն ու կարծիքները մութին մէջ ու մտերմաբար կը յայտնուէին : Աուրօր՝ հրատարակի մէջ, մանաւանդ կարդինալին կամ անոր մօտը եղող անձանց հետ յարաբերութիւն ունեցող մարդոց առջև նորընտիր քարտուղարին արժանիքը, համեատութիւնը և ընտիր յատկութիւնները մինչ յամպս կը բարձրացընէին : Սէնթ-Էթիէնի Աւագ-Երէցը, խիստ միջակ տաղանդի տէր այլ յաջողակ անձ մը, որ վերջին ընտրութեանց միջոցին Պաղիէժի դերակումսին Օրէնսոյ ժողովոյ անդամ ընտրուելուն մեծապէս նպատուած էր, վասն զի դերակումսը պաշտօ-

նէի մը մտերիմն ըլլալով՝ իրեն եպիսկոպոսութիւն մը խոստացած էր, ժիւլիօյի պաշտօնառութիւնը զԱարդինալ շոյոմ'ըն պատեհ առկթ մը համարեց, Նիսա քաջ դիտեր որ Պեր . Ֆլամարէնի՝ որ Աարդինալ ու միանգամայն ծերակուտի անդամ էր՝ ամենափոքր ընդդիմութիւնը կրնար իւր բոլոր խորհուրդներն վեր ի վայր կործանել : Աւտի իրեն համար կարգինալը շահիլը գլխաւոր և առաջին դործ մ'էր : Պաղէճի Պ . Պերակոմոր ըսած էր իրեն « եթէ կարգինալին կողմէն առ պաշտօնեայն կարենաս նամակ մը ձեռք անցընել՝ դործը չախաղանց կը դիւրանայ : » Ներկայացաւ ուրի մն յարքեպիսկոպոսարան, Աարդինալին նախաճաշիկն ընելէն յետոյ, այն ժամուն՝ ուր փորձառութիւնն իրեն սովրեցուցած էր որ Ն . Պերասպատութիւնը՝ իւր նախաճաշիկովը կաղդուրած և քրոջն ու քարտուղարին հետ ամեն աւսակ զուարճաբանութիւններ բրած ըլլալով՝ կատարելատէս զուարթ ու դիւրամատչելի էր :

— Պերասպատիւ Տէր, ըսաւ անոր իւր ամենէն շորհալից ժպիտովն ու ամենախոնարհ յարգանքովն, պա՛ւստութիւն մ'է ինձ համար յետինն ըլլալ շորհաւորելու զձեզ Աբբայ ժիւլիօյի անձին վրայ ձեր ըրած չքնաղ ընտրութեան համար : Իմ պատուարժան բարեկամն, մեծ-կղերանոցին յարդոյ մեծաւորը, անոր վրայօք մանաւոր յարգանքով մը խօսեցաւ, ըսաւ ինձ թէ ո՛րչափ Ձեր Պերասպատութիւնը այս պարագայիս մէջ ողջամիտ դատողութիւն և իմաստուն ճանաչողութիւն ցոյց տուած է : Իւր հազուագիւտ ձիրքերն ամեն մարդոց խօսակցութեան տառիկայ եղած են : Յարդոյ մեծաւորը անոր վրայ առաջին կարգի բեմբասացի մը յարմարութիւն կը տեսնէ : Աւտի կը խնդրեմ Ձեր Պերասպատութենէն, և կը յուսամ թէ չի պիտի դլանայ մեզ այս շրնորէն, որ արժանապատիւ ժիւլիօ Աբբայն եկեղեցեաց ընծայման տօնին մայր եկեղեցւոյն մէջ բեմբասացութիւն մ'ընէ :
 Աարդինալը, Աւաղերիցուն ճառը մտիկ բրած ատեն, ըսած էր իւրովի . Կու շոյոքըրդ մ'ես . ժիւլիօյի յառաջացու-

մէն քու շահերուդ մասին օգուտ քաղել կը ջանաս . բայց վեր ջապէս հախտախնամութիւնը , ինչպէս զամեն ոք , տխմարներն ալ իւր նպատակաց կը ծառայեցնէ :

— Արժանայարգ աւագերէց , հաճութեամբ կ'ընդունիմ ձեր խնդիրքը . միայն թէ Աբբայ Թիւլիօյի համար ծանր առաջարկութիւն մը կ'ընէք , վասն զի մինչև նոյն օրը հաղիւտասն և հինգ օր կայ :

— Գերապատիւ Տէ՛ր , նորատի քահանայք վառ երևակայութիւն և սուր յիշողութիւն ունին . բայց ասկէ Պ . Աբբայ Թիւլիօ ի վաղուց հետէ իւր ատենարանական պաշարն ըրած է :

— Աա , ձեզի կը յանձնեմ զայն . անոր հետ համաձայնեցէք :

Եւ արձակեց զայն :

Թիւլիօ զառաջինն հաստատ մերժումով մը պատասխանեց աւագերիցուն խնդրանաց , որքան շողօքօրթիչ ու ճարտարարան ալ էր իւր խնդիրքը : Թիւլիօ զօրաւոր փաստեր ունէր մերժելու . ինքը մի միայն իւր աշակերտակցաց առջև ելած էր եկեղեցական բեմը , և այն ալ անկերպարան փորձերու համար՝ որոնցմէ չի կրնար լաւ հասկցուիլ թէ պիտի կրնայ մարդ յաջողիլ : Աւագերէցը իւր խնդիրքը թախանձանքի փոխեց :

— Աստուած պիտի օգնէ ձեզ . պէտք է միշտ սկսիլ հիմայ կամ քիչ մը վերջը , ե՛նչ տարբերութիւն կրնայ ըլլալ :

Այնքան պնդեց ու թախանձեց որ Թիւլիօ , անոր ստիպումներէն յաղթահարուած և թերևս բնազդմամբ տեղի տալով ճօխարար օժտեալ ոգիներու մեծ տեսարանի մը վերայ իրենց ոյժը փորձելու պիտոյից , խոստացաւ անոր այս ա՛յնքան բաղձացեալ բեմբասացութիւնը :

— Խիտ խեղճ յանպատրաստից քարոզ մը պիտի ունենաք , բայց վնասը ձեզի : Ես քարոզ դրելու ո՛չ փափաք և ո՛չ կարողութիւն կ'զգամ՝ յիս : Եթէ անյաջող դտնուիմ մի՛ տըրտընջաք :

— Յանպատրաստից բեմբասացութիւնք աւելի սիրելի են ինձ, յաւելցուց Սւազերէցը :

Եւ երեկոյեան ճաշի հրաւիրեց զայն այն կիւրակէն՝ ուր սոյն քարոզը պիտի խօսուէր :

Անշուշտ փառասէր Սւազերիցուն փնտռածը ժիւլիօյի խօսելիք քարոզին դձուձ կամ վսեմ, անհամ կամ ազդու ըլլալը չէր : Ինքը կը յուսար որ, զժիւլիօ դղուելով ու շողովմելով, ի պատիւ անոր տրուած հացկերութի մը հրաւիրելով և սեղանին վրայ անոր առաջին տեղն ու ամեն կարելի եղած յարգանաց ցոյցերն ընծայելով, անշուշտ պիտի յաջողէր միջնորդել տալ անոր առ Աարդինալն այն գլխաւոր դործին ի նպաստ՝ որուն համար Ն. Պերապատուութեան երկտող գրութիւնը մեծ դործ պիտի կրնար տեսնել հիմայ որ Պաղիէժի դերակոմսը Պ. Պաշտօնէին ամեն բան յայանած էր : Աւրեմն ամեն բան իւր ակնկալութեանց նպաստաւոր ընթացք մ'ունէր. Սւազերեցը, բոլորովին աշխուժալից ու բերկրապատար, Սէնթ-Էթիէնի հրապարակէն անցած ատեն կ'ըսեր. Սաքարո՛ղը, ա՛հ, սա քարո՛ղը, իմ կենացս ամենէն երջանկազոյն օրը պիտի ըլլայ այս :

Աւստի բոլորովին ստոյգ և ապահով որ զժիւլիօ շահածին պէս Աարդինալէն առ պաշտօնեայն յանձնարարագիրն ստանալ խիստ դիւրին պիտի ըլլայ, կատարեալ յաջողակութեամբ մ'ամեն բան կարգի դրաւ : Թ. ի բնակիչներէն փաստաբանութեան և դասատուութեան մէջ երեւելի հանդիսացող շատ մ'անձինք ճաշի հրաւիրեց : Հրաւիրելոց թուոյն վրայ յաւելցուց նաև խիստ նշանաւոր օրագրապետ մը որպէս զի դեռ ահաս ատենախօսին առաջին քարոզն ու նորա անունը հրապարակէ ի լուր աշխարհի : Տեղեկացաւ թէ որո՛նք էին ժիւլիօյի մտերիմ բարեկամները, և իրեն միայն Պ. Օկիւսթ Աէուլօնը կրցին ցոյց տալ, որ եկեղեցականութիւնը դեռ այն ինչ թողած էր՝ փաստաբանութեան ասպարիզին մէջ մըտնելու համար՝ որուն յառաջագոյն հետեւած էր : Բարեբախտաբար Ս. Էթիէնի Սւազերէցը երկու կամ երեք անգամ

առիթ ունեցած էր Ալեալօնի պատահելու պատառ կնոջ մը
տունը, որ իրենց երկուքին ալ բարեկամուհին էր : Ամացաւ
Ալեալօնի նոյն տունը երթալիք իրիկունը, ինքն ալ դնաց,
և երկայն ու մտերմական խօսակցութիւն մը բացաւ Ֆիւլիօյի
բարեկամին հետ :

Այս ա՛յնք քիչ յաջողակութեամբ սկսուած ու շարունակուած
սրտազեղութեանց արդիւնքն այս եղաւ որ Պ. Աւայերէցը,
անտարակոյս ամեն հնարաւոր ճայներով Ֆիւլիօյի ներքոյը
սագմասերդելէ վերջը, Ալեալօնի հետեւեալ յայտարարու-
թիւնն ըրաւ .

— Խիտտ սիրելի սիտի ըլլաք, եթէ հաճիք յառաջիկայ
կիրակէ սեզանակից ըլլալ մեզի մեր Պ. Ֆիւլիօյի և ուրիշ
մի քանի մտերմաց տալիք ճաշին :

Ալեալօն, որ իւր բարեկամը տեսնելու համար չէր հա-
մարձակած արքեպիսկոպոսարանը ներկայանալ, թերևս ծայ-
րայեղ փափկութեան և զգուշաւորութեան զգացումով մը,
եռանդեամբ ընդունեց Սէնթ-Նիքիթի ժողովրդապետին հը-
րաւերը :

Բոլոր քաղաքին մէջ մարդ չի մնաց որ չ'իմանայ Ֆիւլիօյի
Եկեղեցւոյ մէջ տունախօսելը : Աւայերէցը, ժողովրդեան
հետարրըրութիւնը սաստկացնելու համար, դապանարար լմա-
ցուցած էր ամենուն որ Ֆիւլիօ յանպատրաստից պիտի ատե-
նախօսէր : Աւրեմն այն կերակուրը՝ սրտ Պ. ի մտացի հասարա-
կութիւնը հրախրուած էր, խիտտ ցանկալի և ախտըծելի էր :
Յանպատրաստից առաջին քարո՛ղ մը խիտտ նորտտի քահա-
նայի մը բերնէն՝ որ Ն. Պերատաաուութեան ա՛յնքան սիրե-
լի էր, ասկէ աւելին հարկ չ'էր որ իրը դատաւի քաղաքի մը
մէջ դէպքի մը բովանդակ կարեւորութիւնն ստանար :

Չափազանցութիւն մը պիտի համարուի ինչ որ հիմայ սի-
տի պատմանք, և սակայն զարմանալի չի պիտի թուի մեր
ընթերցողներէն անոնց՝ որոց անձանօթ չ'են հարաւային բար-
քերը : Առաւօտեան ժամը հինգէն, երբ հինաւուրց եկեղեց-
ւոյն դռները բացուեցան, տաճարին միջախայրին մէջ արդէն

բաղմութիւնը զիրար կը հրէր ու կը հրմշակէր՝ տաննախօսաց
 բեմին ու կղերական դասուն յատկացեալ ն. տարանին մէջ տե-
 ղը լաւադոյն տեղերը դրաւելու համար : Մեծ տուներու ըս-
 տաաստորները էրկու ժամն անդամ մը կ'եննէին առանձնաշը-
 նորհեալ տեղերը պահելու համար . և թէպէտ քարոզը կէս
 օրէն ետքը՝ ժամ երեքին կատարուելիք պաշտամունքէն յե-
 տոյ պիտի խօսուէր , հապիւ միջօրեայ վերջին ժամերդ ու թիւ-
 նը վերջացած էր՝ երբ բովանդակ քաղաքին տանց կատարէին
 ու ծառայները Մենթ-Եթիէնի արտարին դաւիթը կը ծած-
 կէին . կանայք՝ իրենց ամենէն շքեղ դուրդարանքներովը պա-
 ճուճեալ՝ միջավայրին կեդրոնը խռնած էին , և արք սև հան-
 դերձներ հագած , իբրու թէ պաշտօնական հանդիսի մը ներ-
 կայ դանուելու եկած ըլլային , բայց մնայած բոլոր միջոյր
 կը դրաւէին : Երբ կարդինալը , կղերական դասուն առաջ-
 նորդութեամբ , իւր յատկացեալ տեղը հասաւ քարոզին ուն-
 կրնդիր ըլլալու համար , անկարելի եղաւ իրեն չի կոխել այն
 խիտ և հստամբոյն որ աւնդային անհամբերութեամբ մը
 բորչոքած էր :

Եւ ահա ըստ թիւնը տիրեց : Ամեն սրտեր կը բարախէին :
 Նորատի քահանայն , սլա՛ մը բեմին վրայ ի ծունր իջած կե-
 նայէ վերջը , սաքի ելաւ : Անիկայ իւր շուրջը չի նեակց այն
 սէգ հայեացքը՝ զոր մերթ կը կեղծեն միջակ աստիճանի քա-
 ռոզիչք , իւր ունկնդրաց գոռոզ ու սեթևեթեալ տղոյն մը
 չ'ընծայեց , ամպիտին եղերաց վրայ չի տարածեց ձեան պէս
 սպիտակ թաշկինակ մը՝ բեմբառային սրտայոյզ շարժուած ք-
 ներուն մէջ թափած քիրանը ջնշելու յատկացեալ , այլ եպիս-
 կոպոսին օրհնութիւնը խնդրելով և համեատօրէն ալնուական
 ու վճիտ հայեցումք մը վերջնելով , սկսաւ իւր խօսքը :

Նախ ներումն խնդրեց՝ Ն . Պերապատուութեան , իւր
 գիտութեամբն ու հմտութեամբքը նշանաւոր կղերական դա-
 սու մ'առջեւ , տակաւին ոմիտորձ ու դեռահաս , այնպիսի
 նիւթի մը վրայ ճառելու համարձակելուն՝ որ հասուն հասա-
 կի տէր մարդու մը գորտ որ մտածութեանց և քահանայու-

Թեան մէջ ծերացողներու երկայն որոճմանց և աշխատանաց կը կարօտի, այլ այն հանդէսը, ուր առաջին անգամ առաքելու թեան չքնաղ ու ահաւոր պաշտօնը ի գործ դնելու երջանկու թիւնն ունէր, իր նիւթն իրեն կընկերչնէր:

Ըստ որում նիւթական եկեղեցեաց ընծայման տարեգարձը կը աստիճանէր, ինքն ալ հոգեւոր եկեղեցւոյ, անոր անցելոյն մէջ ունեցած մեծութեանց, ներկային մէջ կրած տառապանաց և ասպաղային համար ունեցած յոյսերուն վրայ պիտի խօսէր:

Բոլոր այս խօսքերն արտասանուած էին թեթեւակի յուզեալ՝ այլ թրթռուն ձայնով մը, որ, միանգամայն ազդու և քաղցրալուր, առանց ամենափոքր ճիղի մը, մի և լայնարձակ միջավայրէ մը բաղկացեալ մայր-եկեղեցւոյն մինչեւ յետին ծայրերը կը հասնէր: Տեսարանը վեհ և սլաակառելի էր: Արդէն ամենքը սխրացման մ'ազդեցութեան ներքեւ էին, և այս սխրացման պատճառաւն էր ատենախօսին երիտասարդութեան և իւր ճարտարարան լեզուին ընծայած հակապատկերը: Արդէն ամեն մարդու իւր այս առաջին երեք ամենապարզ պարբերութիւնները, բովանդակ ատենախօսութեան ընթացքին մէջ, գաղափարաց մեծ նորութիւն մը և ոճոյ հիանալի զեղեցկութիւն մը կը նախազգացնէին: Պօսիւ էի մեծ անուան հեղինակութեանը վրայ կըթնելով, եկեղեցական բեմերու վրայ իրատ ցանցառակի ճառուած սա խնդիրը (թէզ) հաստատեց, այն է թէ Նկեղեցին իւր ծնունդը ո՛չ թէ Քրիստոսի իւր մահկանացու կենաց մէջ շրջած անձուկ միջոցին, կամ մարտիրոսութենէ խուսափող քրիստոնէից պատասպարան դետնագամբանաց խորերուն մէջ առած էր, այլ թէ Նկեղեցին նոյն իսկ ինքն հաւատացեալ մարդկութիւնն է, Ադամէն, Աբելէն, Սէթէն և նորա կրօնական պաշտօնեայններն կամ զոհադորձները եզոզ բոլոր Նահապետներէն սկսեալ:

Չանի (Նկեղեցին) մեծ ու զօրաւոր ցոյց սուաւ, ցորչափ անաղարտ պահած էր այն եզրայրութեան և ազատութեան ոգին՝ որով կարող եղած էր հին աշխարհի մեծաշուք՝ այլ ա-

պարդիւն կրօններուն վրայ գերապանծ յաղթանակ մը տանիլ :
 — Ո՛վ քրիստոնեայ եկեղեցի , աղաղակեց , ահա՛ այն ա-
 տենն էր քու ճշմարիտ պերճութեանցդ . ժամանակը : Դու
 կորստական մեծութիւններու մէջ չ'էիր փնտռեր քու փառ-
 քըդ , քու շքեղութիւնդ : Դու կը թողուիր ոսկին Ուխտագեան
 Սրամագդայ արձաններուն , հանճարէն ներշնչուած ձեռքե-
 րէ քանդակագործեալ մարմարիոնը՝ Ախարոսի Սատղկան , հի-
 անալի արուեստիւ ճարտարագործեալ արոյրը՝ հեթանոս Հը-
 ուովի մէջ բանաստեղծից հնարած աստուածութեանց ի պա-
 տիւ կառուցուած Բանթէոնին : Դու չ'էիր կատարեր բազ-
 մամբոխ , հրապարակական ու մեծաշուք թափօրներ նման
 Համաթենական թափօրից՝ որոց համար կ'ըսէր Բէմոսթէն
 թէ Ս.Թենքի հասարակապետութեան աւելի սուղի կը նըս-
 տէին քան թէ զայն Մակեդոնիոյ թագաւորին փառասիրա-
 կան յարձակումներէն ազատելու նամար զինել հարկ եղած
 բոլոր նաւատորմիդներն : Դու քու քահանայապետացդ , քա-
 հանայիցդ ու սարկաւազացդ՝ որք աղքատաց ծառայներն
 էին ու պարտին ըլլալ չ'էիր հազցներ փառաւոր հանդերձ-
 ներ , որք շքեղութեան մասին կրնան ծերակուտի անդամոց
 ամդաններուն և արքայից մետաքսահիւս ու ոսկեհուս վե-
 րարկուաց հետ մրցիլ : Դու բանդելիքի կամ բարոսի մար-
 մարովը շինուած ու Փիղիասայ և Պրոքսետիլիոսի քանդա-
 կագործած տաճարներուն մեծվայելչութիւնը կ'արհամար-
 հէիր : Դու պէտք չ'ունէիր ընդարձակ սեփականութիւննե-
 րու և երկիրներու , հեթանոս քուրմերու նման՝ որոնք սնա-
 պաշտ և դիւրահաւան ժողովրդեան ձեռքէն իւր ինչքն ու
 ստացուածքը կը կորզէին , անով դատարկապարտ կամ զեղխ
 կեանք մ'անցընելու համար : Այլ քու սեղանդ , այլ քու
 խորանդ անբիծ էր ու անարատ , հոն ելնողն հաւատք և
 կեանքի սրբութիւն ունէր : Ամենքն անոր կը մերձենային ,
 վասն զի ամենքն հաւատացեալ և մաքուր էին : Անկէ՛ , այն
 սեղանին վրայէն , խօլ ու անհեթեթ միտիկականութեան մը
 տեսական վարդապետութիւնները չ'էին քարոզեր կ'ըսէին

մարդոց . դուք եղբարք էք , սիրեցէք զիրեար , Զիրար սիրելը , իրարու անձնուէր ըլլալ էր . իրարու անձնուէր ըլլալը Քրիստոսի նմանել էր՝ որ ամենուն համար մեռաւ : Քրիստոսի նմանիլը ապահովութիւն մ'էր լաւագոյն հայրենիքի մը : Առսուցանէին զայս, այլ զայս և եթ կ'առսուցանէին : Քու բոլոր քահանայներդ աղքատ էին և աղքատաց համար հասարակաց գթութեան գանձին բաշխուցները : Քու եկեղեցիներդ էին այն խոնարհ ու անփառունակ աղօթատեղիները՝ որոց նոր հռոմը դեռ կը պահէ պատուական հետքերը , լայնաւէտ սրբահներ՝ որոնք արեւէն և ցրտէն կը պաասպարէին , Պուր կը խմբուէին քրիստոնեայք , ինքեանք իսկ կենդանի և ճշմարիտ տաճար Աստուծոյ , իբրեւ այս քրիստոնեայ գերդաստանին ընտանեկան սրբաղան յարկին տակ :

Մի եկեղեցիդ . . . երբ կ'ուզեմ զքեզ կարի սիրել , երբ կ'ուզեմ մոռնալ քու արդի դձութիւնդ ու տառապանքներդ , երբ կ'ուզեմ մտայս առջեւ բերել այն գաղափարական պատկերը զոր իրականացնել պարտիս կամ եթէ ո՛չ մարդկային ազանց պատմութեան համար ա՛լ մի միայն հինօրեայ յիշատակ մ'ըլլալ , միտքս կը թողու այս նիւթական աղխտաբեր մեծութեանց դարերը՝ յորս տակաւ առ տակաւ պաղեցաւ նախկին եռանդդ և մարեցան աշխոյժդ ու կենդանութիւնը , կը թողու զանոնք և անոնցմէ յառաջ կը սլանայ քու վրադ սքանչանալու համար , կ'երթայ տեսնել զքեզ այն ժամանակուան մէջ՝ ուր Աստուանդ իանոս , Մտչին երկրպագող առաջին կայսրը , դեռ չէր տուած քեզի ազատութեան հետ մարդկային բաշխին ոյժն ու օժանդակութիւնը՝ որոց օգնութեամբը յաջորդ դարերուն մէջ արտաքին տիրապետութեան հետամուտ եղար , երբ ժողովուրդք կ'ապառնային քեզի իբրենց նախկին աւելորդ ապաշտութեանց վեռադատնալ կամ նորահնար ազանդոց յաշիւ : Մի եկեղեցի , ահա՛ ինչ որ եղար քու օսկեղենիկ դարուդ մէջ , և ինչ որ պարտիս ըլլալ օր մը , երբ ուղեւ ձեռք առնուլ վերստին այն անկորնչելի զօրութիւնը՝ զոր մի միայն անձնուրացութեան և զոհողու-

թեան մեծ առաքինութիւնները կարող են տալ : Պէտք է որ նորէն քու Պողոթնութայիդ վրայ ելնես , նորէն քու գեանադամքանայդ մէջ իջնես :

Եթէ ոչ պիտի ապրիս , ինչպէս կռապաշտութիւնն ապրեցաւ , ժողովրդոց յարգանայ յետին մնացորդներովը , և , աւարութենէ ու ծերութենէ ընկճեալ , պիտի մեռնիս անոր պէս մարդկային սերնդոց առջև՝ որոնք ուրիշ հաւատոյ մը պէտքը պիտի զգան , եթէ հնար ըլլար որ դու , քու աստուածային հիմնադրիդ խոստման հակառակ , չունենայիր վերակենդանութեան զօրութիւն մը , և եթէ ճակատադրուած չըլլայիր՝ քու նախկին կենդանութիւնդ վերդդենով , դարերու մէջէն , առաջնորդելու մարդկային աշանց՝ որք փառայեղ պիտի ապրին ապագային մէջ :

Յետոյ նկարագրեց Եկեղեցւոյ արդի կացութիւնը , որ իւր պատմութեան ամենէն նուազ փառաւոր ու բարեբաստիկ ժամանակաց անմտաբար հետևելով՝ կործանման վճին եղերքն հասած կը դանուի , և բոլոր ասոնք բացատրեց այնպիսի քաջ ծանօթութեամբ մը նոր ընկերութեան պիտոյիցն ու նորա ենթակայ եղած պատրանաց՝ երբ , ինքը ողի և կեանք խնդրած ատեն , իրեն անվերջանալի արարողութեանց շարք մը կը ներկայեն՝ որոց ա՛լ չի հասկնար նշանակութիւնը , որ բոլոր ճակատներն դողցես յանկարծափայլ ճառագայթումով մը լուսաւորեցան , և , այն հետզհետէ աւելի խորին լուսութեան մէջ , ամենուն դիմաց ու շրթանց վրայ փայլեցաւ այն բուռն խնդութիւնը՝ զոր կ'զգայ իմացականութիւնը , երբ տակաւին անտես ճշմարտութիւններ իր առջև պարզուած կը տեսնէ :

Հուսկ ուրեմն պարզ ու մեկին բացատրութեամբք հասկըցուց թէ եկեղեցւոյ ապագային խնդիրը նոյն իսկ իրմէ կախումն ունի , թէ իւր ոյժը կը ննջէ հիմաց այս տաղնապի վիճակին մէջ՝ յորում անցելոյն արարողական սին շքեղութեանց ու ապագային անատուղութեանց մէջ տեղը կը տատանի :

— Գերապատիւ Ս. Հայր, Տեա՛րք, ըսաւ Աբրայ ժիւ-
լիօ իւր խօսքը կնքելով, ես ձեր առջեւ անվարժ ու անփորձ
պատանի մ'եմ միայն, և Աստուած, մարդ արեւից պէս, ինձ
ալ շնորհած չ'է ապագային քօղը ձեր առջեւ մերկանալու կա-
րողութիւնը: Բայց, դեռահաս Գանիէլի նման, ես ալ իմ
ժողովրդեանս ծերօց և իմաստուններուն կ'ըսեմ թէ պէտք
է խորհիլ ապագային վրայ, պէտք է պատրաստել զայն,
պէտք է նորա անթիւ բարիքներն զգալ այժմէն: Արքան հո-
գիներ կան աշխարհի մէջ՝ որք կը վարանին, որք յանհաւա-
տութիւն կը դիմեն, որք մահառիթ սկսպտականութեան մը
մէջ կը լքին ու կը ծնգին, և որոնք համբերութեամբ կրնա-
յին տանել այս ցաւառիթ ներկայն, եթէ նուազ տխուր կը-
րօնական ապագայի մ'ակնկալութիւնն ունենային:

Եթէ իմ խօսքերս ունկնդրացս մէջէն մի միայն մէկ բա-
րեմիտ մարդու մը կարենային օգտակար ըլլալ, եթէ կարող
եղած ըլլայի զապագայն ծածկող քօղին միայն մէկ անկիւ-
նը վեր վերցնել՝ ցուցնելու համար անկորուստ ու անմահ ե-
կեղեցւոյ ծաղկումը նոր-ընկերական աշխարհին դիրիը, որ
յաղթապանձ կ'ընթանայ դէպ ի գեղեցիկ ու փառաւոր ա-
պագայ մը, եթէ յաջողէի ճշմարտութեան նօթի ու ծարաւի
դարուս աննշան զաւկի մը զգայնել թէ Քրիստոնեայ եկե-
ղեցին, աւանդապահ հաւատոյ և սիրոյ առանց որոց չիք
կեանք իմացականութեան և սրտի համար, աշխարհի հողե-
ւոր և բարոյական բոլոր ճակատագրերը կը կրէ յինքեան
բերիլրալից պիտի իջնէի այս բեմէն, գոհանալով զԱստուծոյ
օր զիս իւր շնորհաց դարձին ըրաւ՝ իր յաւիտենական ճշմար-
տութեան մէկ ճաճանչը հողւոյ մը խորը ճառագայթելու
համար:

Ժիւլիօ խոնարհեցաւ: Գերապայծառ կարդինալ արք-
եպիսկոպոսն հանդիսապէս իւր օրհնութիւնը տուաւ, և ըզ-
գածեալ ամբոխը լռիկ մնչիկ տաճարէն դուրս սահեցաւ:

ԱՒԱԳԵՐԻՑՈՒՆ ՀԱՅԿԵՐՈՑԹԸ

Ժիւլիոյի բուռն և եռանդուն բեմբասացութիւնը ժամ մը տևած էր : Ընդ քիրտն թաթաւեալ, ուղեղի և թոքերու կրկնակի ճիգովն ոգեսպառ, ծանր ու տաժանելի աշխատութիւն մը՝ որ մարդուն ֆիզիզական և մտաւորական բոլոր կարողութիւնները միանգամայն շարժման ու գործունէութեան մէջ կը դնէ՝ ներգործելու համար ուրիշ մարդոց վրայ այն հիասթափանչ մոդումը՝ որ կ'անուանի պերճախօսութիւն, կանոնիկոսաց աւանդատան քով՝ փոքրիկ ու լաւ գոցուած խուցի մը մէջ՝ ուր իրեն տաք ճերմակելէն պատրաստուած կար, ամեն ատենաբաններու անհրաժեշտ եղած առողջական նախազգուշութիւններն ի գործ կը դնէր : Անտի՛ կանոնիկոսաց ժողովոյն պատուարժան անդամաց եռանդաղին խօսակցութիւնքը կրնար մտիկ ընել : Խորամանկ աւագերէցը ժիւլիոյի յաջողութիւնը նախազգալով՝ յառաջագոյն իւր յատակագիծը պատրաստած էր : Ժողովոյն գահերէցը և երեք ուրիշ կանոնիկոսներ իւր մտերիմ բարեկամներն էին : Նոյն վայրկենին իր ընելիք փորձին համար երկու ուրիշ ձայն ալ վատրկած էր . հետևաբար մեծագոյն մասին կարծիքն իւր կողմն էր : Գեռ Աարդինալը վեհափառ յամբաքայլութեամբ մը դասէն կանոնիկոսաց աւանդատունը չ'եկած իւր եպիսկոպոսական զգեստները մերկանալու համար, գահերէցը՝ աւագերիցուն խորհրդակցութեամբը պատրաստուած յատակագրծին հաւատարիմ՝ առաջարկեց ժողովոյն խնդրել Ն . Գերապատուութենէն որ հաճի նորատի ընդհանուր-քարտուղարն իրենց ժողովին պատուոյ անդամ անուանել : Աւագերէցն ու իրեն կուսակից պաշտօնակիցը սոյն առաջարկութիւնը եռանդեամբ պաշտպանեցին :

Միայն մէկ ձայն մը բարձրացաւ .

— Դուք ձեր այդ ընթացքովն բեմբասացութեան ասելի

սեռ մը կը քաջալերուիք : Ինչ կայ նշանաւոր այդ քարոզին մէջ :
Շատ մը յանդուգն , անխորհուրդ ու անտեղի դադափարաց
շարք մը , քարոզի մէջ սովորութեան պահանջած ամեն պատ-
շաճից օրէնքներուն մոռացումը , քարոզ մը՝ առանց օրինաւոր
ու յայտնի բաժանմանց և առանց՝ սղջոյն քեզ , Մարիամի՛
որ անհրաժեշտ է Մ. Աուսին ու միանգամայն Ս. Հողւոյն օ-
ժանդակութիւնը խնդրելու համար :

— Սակայն և այնպէս Հողին-Սուրբ ոչ ինչ նուազ ներշնչ-
չեց իրեն , ըսաւ աւագերէցը կէս-ծաղրական ձայնով մը :

Գահերէցը առաջարկութեան նպաստաւոր կարծիքներն
հաւաքեց՝ որնք մեծագոյն մասը կաղմեցին . ուստի երբ արք-
եպիսկոպոսը երևցաւ , ժողովը միահամուռ գնաց անկէ պատ-
ուակալ-կանոնիկոսի ախղոսը խնդրելու Արքայ Ժիւլիոյի
համար :

Աարդինալը կանոնիկոսաց այս վարմունքին երբէք չէր
սպասեր . իսկոյն անոր բոլոր ազդեցութեանը հասու եղաւ :
Ասի իւր ըրած քարտուղարի ընտրութեան յայտ յանդիման
ու վառաւոր մէկ վաւերումն էր . անոր մէջ տեսաւ մանա-
ւանդ հրապարակական աստակ մը Թէզուիթաց ու նոցա կու-
սակցաց : Այլ իւր ներքին գոհունակութիւնը ըստ կարելւոյն
յաջողակութեամբ ծածկեց :

— Պ. Արքայ Ժիւլիո խիստ երիտասարդ է , ըսաւ ար-
ժանայարդ կանոնիկոսաց : Այսօր դեռ իւր տաղանդին մէկ
նախափորձը տեսանք . շատ անկատարութիւններ կան իւր
յանպաստաստից խօսած քարոզին մէջ , թերևս նաև շատ մը
բաներ՝ որ ճիշդ չեն , որոնք ամպլիօնի մը վրայէն ըսուելու ա-
ղէկ չեն դար և զորս քիչ մը խիստ քննադատութիւն մը կըր-
նար կոկել . ի վերայ այսր ամենայնի իրեն համար ունի ամեն
մեղմիչ պարագայները (սիուզոնութանս ակնհայտ) . և քա-
նի որ մայր-եկեղեցւոյս կանոնիկոսական պատկառելի ժողո-
վըն կը հաճի ա՛յսբան պատուասիրարար զանի իւր պաշտպա-
նութեան ներքեւ առնուլ , չեմ կրնար չի ձայնակցիլ անոր ու
մերթել շնորհ մը՝ որ գեռահասակ բեմբոսացին համար զօ-

բաւոր քաջալերութիւն մը պիտի ըլլայ : Ուրեմն զարբայ ժիւ-
լիօ Տը-լա Պլալիէր կ'անուանեմ պատուակալ-կանոնիկոս մայր-
եկեղեցւոյս :

Աւագերէցը վազեց քարոզչին սենեկին դուռը զարնելու ,
նախ զառաջինն աւետելու համար անոր այն նոր աստիճանը՝
յոր կը բարձրացնէր զայն Ն . Պերասպատուութիւնը շնորհիւ
կանոնիկոսաց ժողովոյն :

Նւ ընդ հուպ , երբ Աարդինալը մեկնեցաւ , բոլոր կանո-
նիկոսները միահաղոյն եկան իրենց նորընտիր աստիճանակիցը
շնորհաւորելու :

Միանգամայն ամեն բան կարդադրուած էր որպէս զի իրի-
կունը ժիւլիօ աւագերիցուն սրահէն չի մեկնած , հրաւիրեալ
կանոնիկոսներէն մին խօսակցութեան ձեւով հասկցնէ անոր թէ
ո՛վ եղած էր սկզբնապատճառ նոյն պատիւն ընդունելուն :

Աւագերիցուն հացկերոյթը խիստ շքեղ ու փառաւոր ե-
ղաւ : Առջնականաց անուանքը փայլուն ու կապոյտ թղթի
չքնաղաձև պատառիկներու վրայ գրուած՝ խիստ աղնիւ ու
նրբաթել ծաղիկնկար կտաւէ մը փափկօրէն դուրս ձողուած
էին : Ժիւլիօյի անունը կրող թղթիկը պատուոյ տեղը դըր-
ուած էր , և աւագերէցը նորա աթոռը ցոյց տալով բարձրա-
ձայն ըսաւ . Արժ . Աբբայ ժիւլիօ Տը-լա Պլալիէր , պատ-
ուակալ-կանոնիկոս և ընդհանուր-քարտուղար :

Առջնականաց գրեթէ ամենքն ալ նշանաւոր անձինք էին :
Բոլորն ալ ներկայ դանուած էին քարոզին՝ որ նոյն ժամուն
Թ . քաղաքին մէջ ամեն խօսակցութեանց առարկայ եղած էր :
Խօսակցութիւնը ջերմ ու եռանդնալիր եղաւ : Եթէ ժիւլիօ
դոյզն ինչ հստատութիւն ունենար , կրնար արբենալ այն մե-
ծարանքներէն՝ զոր բանիբուն ու ականաւոր անձինք կը մա-
տուցանէին իրեն պէս դեռահասակ մարդու մը , այն շնորհա-
լի ու ճարտար ակնարկութեանց լեզուովն , մին յառանձնա-
շնորհութեանց դաղդիական ոգւոյն , որ տաղանդն ու գե-
ղեցիութիւնը կը խնկարկէ , առանց երբէք չբտուցանելու
նոյն իսկ ամենէն համեստ ընտրութիւնները :

Կերակրոյ առաջին սկնակը դեռ չէր վերցուած, երբ ժառայ մը արծաթեայ սկտեղի մը մէջ « Թ. ի օրագիրը » մատոյց արժ. աւագերիցուն :

— Տեա՛րք, ըստ աւագերէցը, ներեցէք ինձ եթէ անբաղաքավար կը գտնուիմ. բայց չափազանց հեռաքրքիւր ըլլալու թերութիւնն ունիմ : Ա՛ռ զեմ տեսնել թէ օրագիրը առարկութիւն մ'ըրած է այն դեղեցիկ քարոզի՞ն նկատմամբ՝ զոր լսելու բախտն ունեցանք :

Եւ, աչերը թերթին առաջին էջերուն վրայ արագ արագ շրջշրջելով, միջագծի մը հաստ :

— Այո՛, ստուգի՛ւ, տեարք, սա քանի մը տողերը կապտալու թոյլտուութիւնն կը խնդրեմ ձեզմէ :

« Թ. քաղաքը այսօր այն բերկրութիւններէն մէն զգաց՝ որք հազուադիւտ ու անօտր են ամեն ժամանակ : Այսօր ատենաբանական նորածին տաղանդ մը Սէն-Սէրնէնի մայր-եկեղեցւոյն մէջ առաջին անգամ ի յայտ եկաւ : Խիստ նորատի քահանայ մը, Պ. Աբբայ Ժիւլիօ Տը-լա Գլալիէր, արքեպիսկոպոսարանի ընդհանուր-քարտուղար, յանպատրաստից խօսած բեմբասացութեան մը մէջ՝ որ ժամ մը տեւեց և բոլոր ունինդիրները դիւթեց ու բոցավառեց, արտաքոյ կարգի տաղանդի մ'ապացոյցը տուաւ, որ մեծ պատիւ կը բերէ այնպիսի երկրի մը՝ որ արդէն փաստաբանութեան մէջ այնքան հուշակապ պերճախօսներ ունի : Ամեն մարդիկ ձայնակից ու միահաւան են այս ընտիր բեմբասացութեան արժէքին նկատմամբ, որուն մէջ շոչափուեցան մի քանիններն այն մեծ խընդիրներէն՝ որք այս պահուս լուսամիտ հաւատացելոց ուշադրութիւնը դրաւած են : Եթէ բովանդակ քաղաքի մը այս միաձայն զարմացման մէջ կան մի քանի բացառութիւնք, զանոնք հարկ է փնտռել այն յետադէմ դասերուն մէջ՝ որք յամառութեամբ կ'ուզեն դեռ միջին դարու մաշած ու անձուկ կաղապարին մէջ կաշկանդել նոր ընկերութեան ազնիւ ըղձանքն ու ձգտումները :

« Յաչս այսպիսեայ Արժ. Աբբայ Ժիւլիօ արտակերպոն »

ատենարան մը կամ նոյն իսկ նորադանդ մ'է : Ս.յլ անոնք՝ որ կը բաղձան Լաքորտէրի բացած ատենարանական արուեստի նոր ճամբուն հետեոյ տեսնել կղերականութիւնը, պիտի ծափահարեն այսպիսի պերճախօսութեան մը՝ ուսկից կաթոլիկութիւնը կրնայ անթիւ օղուաներ քաղել, եթէ յաղթէ այն հինաւուրց ու փտած դրութիւններուն՝ որոնք ա՛լ զլլուանք միայն կ'աղդեն նոր սերնդեան, նոր ընկերութեան :

« Պ. Ժիւլիօյի բարեկամներէն միոյն հիմայ առ մեզ զըրկած մէկ նամակին նայելով՝ Նորին Վերապատուութիւնը Ս. Էթիէնի կանոնիկոսաց ժողովոյն թախանձանաց զիջանելով՝ նորատի բեմբասացին պատուակալ-կանոնիկոսութեան ախտոսը տուած է : Սոյն նամակը սա հետեւեալ խօսքերովը կը վերջի՝ որոց ի սրտէ կը ձայնակցինք և մեք .-

« Բովանդակ Թ. քաղաքը շնորհակալ պիտի ըլլայ Պեր. Աարդինային դեղեցիկ տաղանդի մ'ընծայուած այս արդար շքոյն համար : »

Յօդուածը ստորագրուած է Պ. Մելանտէն, խմբագրապետ Թ. ի օրագրոյն, զոր պատիւ ունիմ մեզ սեղանակից ունենալու :

— Տեա՛րք, մեզ նոյն նամակը զրկող անձը Արժ. Աւագերէցն է, ըսաւ այն ատեն Պ. Մելանտ բարձրաձայն :

— Տեսէ՛ք, ի՛նչպէս կը մատնեն զիս, ըսաւ խնդալով Աւագերէցը : Սա օրագրապետաց չափ բաց բերան մէկը չի կայ :

— Ատոնք խիստ շողոքորթիչ են ինձ համար, ըսաւ այն ատեն Ժիւլիօ : Չ'զիտեմ ինչպէս պէտք է յայտնել իրենց իմ շնորհապարտութիւնս :

— Չեր տաղանդը ևս առաւել զարգացնելով, յարեց խմբագիրը :

Ընդ հուպ խօսակցութիւնը աւելի եռանդնալից կերպարանք մ'առաւ. Պ. Վէռտլօն, որ Ժիւլիօյէն քիչ հեռու նրստած էր և որն որ հոն եկած ատեն իւր բարեկամէն խիստ շնորհալից ընդունելութիւն մը և նաև զայն տեսնել երթաւ.

լու ա՛յնքան յաստիճակ ըլլալուն համար բարեկամական յան-
դիմանութիւն մ'ընդունած էր, խօսակցութիւնը բերաւ այն
կրօնական խնդրոց վրայ՝ որք մաքերը կը գրաւէին :

Թ. ի մէջ ամենուն յայտնի էր Թէզուիթաց ընդարձակ
շէնք մը կառուցանելու որոշումը . բնականաբար կը հարցուէր
թէ այն հսկայական շինութեան հարկաւոր եղած միլիոններ
ըն՞ ուսկի՞ց պիտի գոյանային : Պաւառի քաղաքներու հե-
տաքնին ու բամբասասէր ոգին շարամիտ ուրախութիւն մը
կ'ըզայ ամեն բանի վրայ խօսելու, ղամենքը կճելու և խած-
նելու մէջ :

— Ժառանգութեանց վրայ զդ ուշանալու է, կ'ըսէր մի :

— Մեծ-հօրեղբօրս վրայ լաւ զգուշութիւն ընեմ, կ'ը-
սէր ուրիշ մը :

— Պառաւ կնքամայրս մի քանի ազամանդներ ունէր . հի-
մայ երբ անոնց խօսքը կ'ընեմ, կը կարմրի : Աւր դացին ա-
զամանդները :

Երբ նախայարձակք դադրեցան, խօսելու կարգը լըջա-
խոհից եկաւ :

— Թէզուիթք ինքն իրենց կորստեան պատճառ պիտի
ըլլան, ըսաւ Պ. Տիւբէյրա՝ որ Թ. ի նշանաւոր վաստաբան-
ներէն մին էր : Անոնք իրենց այս գրութեամբն, այս ըն-
թացքովը կը յաղթանակեն առ այժմ, բայց նոյն իսկ այս
գրութիւնը, այս ընթացքը զիրենք պիտի սպաննեն : Այս
ուսուցիչ ընկերութեան համալսարանի և աշխարհական
կղերին վրայ տարած յաղթանակը իրեն խիտ միասառիթ
ու աղիտաբեր պիտի ըլլայ : Անոր դէմ բուռն ու անհաշտ
ատելութիւններ կան՝ զորս առ այժմ կը զսպէ Պաղղիոյ մէջ
կառավարութեան սանձերը բռնող հզօր ձեռնը : Բայց նոր
շահեր, նոր դաւադրութիւններ կրնան քաղաքական յու-
ղումներ յառաջ բերել, այն ատեն այս ատելութեանց պայ-
թումը սոսկալի պիտի ըլլայ : Իւ իրենց յաղթանակներն իսկ,
որոց առհաւատչեայններն են Պաղղիոյ բոլոր մակերեւութին
վրայ բարձրացող այս հսկայական շինութեան, նոյն իսկ

անոնք իրենց աղետալի կործանումն յառաջ սլիտի բերեն ,
Պաղղիոյ համար՝ կը յուսամ թէ քսան տարի չ'տեէր իրաց
այս արդի վիճակը :

Աւագերիցուն սրահը քիչ քիչ խուռն բազմութեամբ կը
լեցուէր : Բոլոր անոնք՝ որ իրեն հետ յարաբերութիւններ ու-
նեցած էին , (և փառասէրը Պ . ի մէջ բազմաթիւ յարաբե-
րութիւններ հաստատած էր) փութով ձեռք առին առիթը
ի մօտոյ տեաներու օրուան դիւցա շնը , զայն՝ զոր օրաց իրը , ո-
րու մեծ կարեւորութիւն կուտան դաւառայինք , դեռ իր ըս-
կըղբնաւորութեանը մէջ իրը Վաքօրատէրի ախոյեան մը և յա-
ջորդ մը յոյց կուտար :

Խօսակցութիւնը նորէն սկսաւ : Պ . Մեղանտ Թիւլիօյի
հարցուց իւր կարծիքը Յիսուսեան ընկերութեան ներքին
կազմակերպութեան նկատմամբ :

— Ստոյգ է որ սոյն ընկերութեան մէջ երդում մը կայ
մասնաւոր , հաղորդութիւն մը գաղտնեաց՝ որուն մեծերը մի-
այն կրնան հասնիլ , գաղտնիք մը՝ որ միայն նոյնը պահելու ար-
ժանի հանդիսացող գլխաւորներուն կը յայտնուի : Այս կէ-
տիս վրայ տարակուսած եմ ընդ երկար . բայց Վամընէի մէկ
խօսքը , զոր ջերմ անդրալեռնական եղած առեն ըսած է , և
որ հետեւաբար չի կրնար թշնամական չարախօսութիւն մը
համարուիլ , ինձ շատ մտածել տուած է : Նթէ լաւ կը յիշեմ ,
ահա՛ այն խօսքը . « Պաղտնիք մը կայ հոն , և երբ դիտէ զայն
մարդ , քիչեր յանձն կ'առնուն զայն կրել : »

Վամընէի նման լրջամիտ մէկը , որ անշուշտ ընկերութեան
վրայ ստոյգ ծանօթութիւններ ունէր , այսպէս կը խօսէր ,
եթէ սոյն Ախտին կազմակերպութիւնը տարօրինակ բան մը
չ'ունենար :

— Մեծանուն մասերնադրին այդ խօսքը , պատասխանեց
Թիւլիօ , զիս ալ , ինչպէս զձեզ , զարմացուցած է : Չեմ կար-
ծեր սակայն որ Թեղուիթաց մէջ ալ , գաղտնի ընկերութեանց
մէջ եղածին նման , գաղտնադիտութեան կարգեր ըլլան :

Ահա՛ ինչ որ տեղեկացած եմ ևս այս բանիս նկատմամբ :

կրօնաւորէ մը՝ որուն բարեկամն էի, և որն որ երբեմն ժէզու-
ուիթաց ընկերութեան անդամներէն ըլլալով՝ հիմայ բաժ-
նըւած է անկէ, անոնց լրտեսելու դրութեան յարակից քը-
սութեանց չ'կրնալով դիմանալ:

Կարդին առաջին աստիճաններուն չ'հասնող մէկը երբէք
մասնակից չ'է՝ ընկերութեան աշխարհային և հոգևոր տես-
չութեան վերաբերեալ դործոց, ստորին անդամոց իւրաքան-
չիւրը ռամիկ հասարակութենէն աւելի բան մը չ'գիտեր այս
մասին. իրենց դիտցածն այս է միայն որ իրենց գլուխը կայ
զօրաւոր կազմակերպութիւն մը, հզօր մեքենայի մ'անիւնե-
րու ատամանց ահռելի խառնուրդ մը, որոյ մէջ գլխաւորն
ինքնին իւր բարձր պաշտօնն ի դործ կ'ածէ:

Այս դրութեան բարոյական զօրութիւնը կը կայանայ
այն նշանաւոր առածին (արսիօմ) մէջ՝ որ նորա բոլոր ոգին կը
յայտնէ մերկապարանոց, « դիակնացումն », այսինքն՝ կոյր և
կրաւորական հնազանդութիւն, ընդունուած հրամանի մ'առ-
ջև երկրպագութիւն, իբր նոյն իսկ Սատուծոյ կամաց առջև
գլխաւորին բերնովն յայտնեալ: Իւրաքանչիւր ժէզուիթ գը-
րեթէ ստրուկ մ'է հրամանակատար՝ որ որոշեալ ժամուն կը
մեկնի, կ'երթայ դպրոցի մը մէջ դասելու, եկեղեցւոյ մը
մէջ քարոզելու, դիւղի մատրան մը մէջ վարդապետելու կամ
օտար երկիրներու մէջ վայրենիներ աւետարանելու: Ընդ-
խօսելով, ժէզուիթ մը չ'է այն, այլ քահանայ մը՝ ինչպէս
ուրիշները՝ զոր իշխող մարմինը իւր հրամանաց ներքև ունի:
Այս կառավարութիւնը Աննետկոյ հասարակապետութենէն
օրինակեալ կը թուի. սակաւապետութիւնը (օլիկառչի) գը-
լուխն է. բուն ժէզուիթներէ « սէնա », մ'ունի՝ որոյ բոլոր
ուրիշները, անհատաբար պատուաւոր մարդիկ, կոյր գոր-
ծակատարներն են, ստորին ժողովուրդը՝ որ միայն մէկ պաշ-
տօն մ'ունի. — հնազանդութիւն:

Իմ բարեկամիս մտերմական յայտարարութիւններէն ժէզ-
ուիթաց վրայօք սոյն ծանօթութիւնքն ստացած եմ. ա-
սոնցմէ զսոս դեռ ինծի ուրիշ անհեթեթ բաներ ալ կ'ըսէր. —

« Թէզուիթը անհասարար իւր ուզածին պէս կը խորհի , կրնայ իւր հաւնած սկզբան հետեիլ , միապետական՝ ռամկավարական՝ կալիքան՝ անդրալեռնեայ ըլլայ : Ընկերութեան փոյթ չեն անոր անձնական գաղափարները : Ընկերութիւնն իր մասնաւոր գաղափարները ունի որոնք բարձրէն զայն կը կառավարեն և զորս զի հաղորդեր բնաւ : Նա իւր գաղափարները կ'իրայնէ ի ձեռն բոլոր այն անհասարական կամաց՝ յորոց մի միայն մէկ բան մը կը խընդրէ . — հնազանդիլ : »

Կը տեսնէք որ ճիշդ չէ երբ կ'ըսուի թէ Թէզուիթաց մէջ գաղտնիք մը կայ , տեսչութիւն մը կայ՝ որոյ յատակագծերն միշտ գաղանի կը մնան : Այս յատակագծերն մէկ կէտ նըպատակի մ'ունին , այն է ուխտին մեծութիւնը , փոյթ չէ՛ ինչ միջոցովոր ըլլայ : Չեմ կարծեր թէ Թեզուիթական սակաւապետութեան գաղտնիքն ասկէց աւելի բանի մը մէջ կը կայանայ :

Քալով միաբանութիւնը կազմող ստորին մասին ներքին կենաց , բարեկամս այս կէտիս վրայ երկարօրէն խօսած է ինձ :

Անոնց ներքին կեանքը քիչ սլափէ կը բերէ Թէզուիթաց բարոյականին , բայց հոն քաղաքական մաքիավէլութեան խորին ունակութիւն մը կը տեսնուի : Նորա հիմն է անդամի մը ուրիշ անդամներէն յարած ամ լրտեսուիլն , և ասի յատկապէ՛ս , բացարձակապէ՛ս : Անչոր ընես պիտի ըսուի գլխաւորին , ինչ որ եղբայրդ կը դործէ քու քովդ , քեզ այնպէս համոզած են թէ գթութիւնը պարտք կը դնէ քու վրայ զայն գլխաւորին յայտնելու քու եղբորդ հողևոր բարւոյն ու օգտին համար : Գլխաւորը ամեն բան գիտէ , ամեն բան կը գուշակէ , ամեն բան կը տեսնէ : Ասկէ կը հետեի մասնաւոր կեանք մը քրտութեանց , աւելի կամ նուազ անիրաւ յանդիմանութեանց՝ որոնք յառաջ կուդան քու ընթացքդ լրտեսողներուն քու վրայօքդ տուած աւելի կամ նուազ կ'օմնակալ տեղեկութիւններէն :

Բարեկամս կ'ըսէր ինձ . Իմ մեծ մեղքս , ըստ իմ գլխաւորիս , այս է որ իմ քարոզներուս վրայ կը պարծիմ : Անկա-

րելի է ըսել քեզ այս մարդուն տանն տարիէ ի վեր ինձ տրւած նեղութիւնքը : Շատ անդամ ա՛լ համբերութիւնս վերջին ծայրը կը հասնի : Օր մը , կարծեմ , կ'ապագայունեմ ըզձեզ , այս յարամամ խայթուած քներէն և իմ ամենէն անմեղ դործերուս նկատմամբ եղած նուրբ բժախնդրութիւններէն ձանձրացած , պիտի ըսեմ իրեն . « Մնաց բարով , հայր իմ , ահա՛ ես կ'երթամ » :

Գրեթէ բառ առ բառ բարեկամիս խօսքերն են՝ որ կը կրկնեմ : Արդարև չկրցաւ հանդուրժել , և աշխարհական կղերին մէջ մտաւ :


Այս է Ս . Ինեասի ընտանիքին ներքին դրութիւնը : Ա՞յս է արդեօք ինչ որ Նամըն է « հակաբնական բան մը » , կոչած է :

Իսկ ժէզուիթաց տեղերական ոստիկանութեան դալով , ամենէն հզօր տէրութեանց ոստիկանութեան չափ ճարտարութեամբ կազմակերպուած է այն : Անի տեղեկութեանց այնպիսի անսպառ ու դեզեցիկ աղբիւր մ'ունի՝ զոր կառաւարտութեանց ոստիկանութիւններն չ'ունին . այն է խոստովարանը՝ որուն միջոցաւ հազար ու բիւր կարևոր տեղեկութիւններ ձեռք կը բերէ , բաց ի յանցանաց խոստովանութիւններէն՝ զորս կը կարծեմ թէ ժէզուիթք միշտ դադտնի կը պահեն : Յայտնի է որ ժէզուիթք աշխարհի կնոջ մը հողևոր հայրն ըլլալ յանձն չ'են առնուր մինչև որ անոր անունը , նիւթական կացութիւնը , ամուսնոյն քաղաքական կարծիքը , տան մէջ մտնող օրագիրները և անոր զաւակաց յաճախած վարժարանը ըստ մը չ'զխտնան ու չ'տեղեկանան : Այս բանն անտարակոյս ապահով միջոց մ'է սուղ ժամանակի մէջ ընտանեաց ներքին կենաց մէջ անցածներն իմանալու , ոստիկանութեան տեսչութեան մ'ընել կրցածէն շատ աւելի ազէկ :

Ճշմարտն ըսած ըլլալու համար , յաւելուլ պարտիմ թէ այս լրտեսական պաշտօնն ի դործ դնող ժէզուիթք միշտ կըրօնից օգտակար ըլլալու և Աստուծոյ ամենամեծ փառացը նպաստելու խորհրդով իրենց տեղեկագրերը կ'ուղղեն իրենց

դ խաւորին : Ասոնք մարդ կային միջոցներ են՝ սրբազան դասին ծառայութեանը յատկացած : Ժէզուիթի մ'աչաց առջև չի կայինչ աւելի օրինաւոր քան դիւր ըրածը : Գժբախտաբար սոցա համար և անոնց նաև՝ որոնք չեն հասկնար թէ քանի՛ նողկալի է այդպիսի դրութիւն մը , կրօնական ազդեցութենէն զերծ գանուող մարդիկ անյաղթելի պժղանք և սոսկում մը կ'ըլլան անկէ : Գոյլն ինչ պատուոյ զգացում ունեցողներն իսկ չեն կրնար ըմբռնել թէ ինչպէս կարելի է բարեգործութեան համար այդչափ սատրին ու ցած միջոցներու դիմել , դժուար է անոնց հաւատալ թէ Յիսուս հողոյ փրկութեան գործիք ընել ուզած ըլլայ քսութիւնն ու լրտեսութիւնը : Զարմանալի է մանաւանդ թէ ինչպէս կրցած են քրիստոնէսոյ և պարկեշտ ոգիներ այդպիսի անարգ արուեստի մը ծառայեցնել և լաւ ու զեղեցիկ գանել տալ ինչ որ նուաստն է և ամօթալից : Խիստ հաւանական է որ Աամընէի « հակաբնական բան մը » կոչածն այս ըլլայ :

Ահա իմ պատասխանս : Ըսածներուս մէջ կան բաներ՝ զորս պարզ կարծիքներու վրայ հիմնելով կ'ըսեմ , միայն քաջ համոզուած եմ որ չեմ զրպարտեր :



ԺԴ .

ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍԱՐԱՆԻ ՄԷՋ ՏԵՍԱՐԱՆ ՄԸ

Մինչդեռ Աւագ երիցուն տան մէջ՝ Ժէզուիթաց վրայ եղած այս հետաքրքրաշարժ դիտողութիւնքն անյազաբար մտտիկ կ'ըլլուէին , արքեպիսկոպոսարանի մէջ խիստ տարբեր տեսարան մը տեղի կ'ունենար :

Ժիւլիօյի ընդհանուր-քարտուղարութեան պաշտօնին կոչուած վայրկենէն , Օրիորդ Տը-Ֆլամարէն անոր նկատմամբ հակակրօնական զգացում մ'ունեցած էր , և այս զգացումը

հետ զհետէ սկսած էր աճել ի նա : Անիկայ ժիւլիօյի եղած այս շնորհքը այն ատենն աղէկ պիտի գտնէր , երբ ինքն ալ անոր մէջ մատ ունենար : Նախկին ընդհանուր-քարտուղարն այս յաջողակութիւնն ունեցած էր . անիկայ օրիորդին անձնըւէր ու դիւրակոր կամակատարն եղած էր , և արքեպիսկոպոսարանի գաղտնիքներէն և ո՛չ մին քառորդ մը անծանօթ կը մնար անոր համար : Ժիւլիօ այս Ամիալին օտիցն առջև մանելու երևոյթ չ'ուներ : Հասկցած էր զայս օրիորդը , ուստի և անոր համար սաստիկ ատելութիւն մ'զգաց՝ որուն փութաց հաղորդ ընել նաև զԱրքայ Աակէլ՝ նոր ընդհանուր-փոխանորդը : Հնարիմաց կերպով մը համոզեց զայն թէ , եթէ այս փոքր փառասէրը (ինչպէս որ սկսած էր զայն կոչել) կատարելապէս գրաւէր ծերունոյն վտահութիւնը՝ որոյ միտքը քանի մ'ամսէ ի վեր զդալի կերպով կը տկարանայր , ինքը՝ Արքայ Աակէլ ալ գործերու մասին մէկդի պիտի դրուէր , և բոլոր արքեպիսկոպոսական վիճակին իրաց յանձանձումը նորատի քարտուղարին ձեռքը պիտի անցնէր : Ընդհանուր-փոխանորդը՝ որ դիւրագրգիռ էր , բռնկցնելու համար ասկէ աւելին հարկաւոր չէր :

Այս երկու վէս բնութիւններն , ժիւլիօյի աղատական դաղափարներով լի քարոզը լսելով , ուրախութեամբ խայտացին : Օրիորդ Ֆլամարէնի թաւշապած աթոռը եկեղեցւոյ միջավայրին մէջ՝ ամպիոնին դիմացը դրուած էր , մօտ ձեռակերտ նստարանին՝ ուր կղերը կը նստի : Մինչ ժիւլիօ սքանչելի պերճախօսութեամբ իւր աղատական գաղափարները կը մերկանայր , օրիորդն ու ընդհանուր-փոխանորդը գաղտագողի հայեցուածք մ'ուղղեցին իրարու . այս հայեցուածքն ըսել կ'ուզէր . ա՛լ ձեռքերնիս է , հիմա՛յ կորսուեցաւ :

Քարոզին վերջանալէն անմիջապէս ետքը զիրար տեսնելու փութացած էին :

— Սոսկալի բան է այս , ըսած էր օրիորդը :

— Այս երիտասարդը գէշ պիտի ընէ , ըսած էր Արքայն :

— Ասեցիք այն խել մը տարօրինակ ու անհեթեթ գա-

պիտի քննարկել :

— Ստուգիւ , ուսերս թոթովեցի :

— Յիրաւի եղբայրս խենդ է :

— Նորին Գերապատուութիւնն ալ անշուշտ տժգոհած պիտի ըլլայ :

— Այդ բանին երբէք մի՛ հաւատայք . եղբայրս քիչ մը արտակեղծոն բաները կը սիրէ , և եթէ ես զինքը զսպած չըլլայի , շատոնց ի վեր . . . :

— Ար տարակուսիմ որ Ն . Սրբազնութեան հաճելի ըլլան այսպիսի վարդապետութիւնք : Գիտցէ՛ք որ այս խենդուկ երիտասարդին բոլոր ըսածներն ծայրէ ի ծայր հերետիկոսութեանց դէզ մ'էր :

— Սո՛ւրբ կոյս Մարիամ . և այսօրինակ ուրացեալ մը պիտի պահէ՞ եղբայրս :

— Ոչ որ ըսւ քան զտիկին կանոնիկոսուհին (այսպէս կ'անուանէր Աբբայն զօրիորդը) կրնայ իմացնել Ն . Գերապատուութեան թէ ո՛րքան կը սխալի՝ եթէ իւր քով պահէ այս վտանգաւոր անձը :

Ինչպէս կը տեսնուի , Թիւլիօ կորսուած էր :

Կարդինալը , ճաշելու սրահը դացած ատեն , ցրտութիւն մը նշմարեց ընդհանուր-փոխանորդին և օրիորդին դիմաց վրայ՝ որք ընդհանրապէս զուարթ էին :

— Ի՞նչ կայ արդեօք , ըսաւ իւրովի . և Թիւլիօ միտքըն ինկաւ :

Լուութիւնը շարունակեց : Հուսկ ուրեմն Կարդինալը զանաջինն ընդհատեց զայն .

— Տեսնե՛նք , քոյր իմ , քարոզին վրայ ի՞նչ կարծիք ունիք :

— Ձեր կարծիքն ի՞նչ է , Սրբազան :

— Գէշ չ'է՛ . կը սիրեմ այս տեսակ քարոզները . եռանդկայ , միայն թէ քիչ մը չափազանց . բայց ժամանակը պիտի կրնայ չափաւորել :

— Միայն այդ թերութիւնը դիտեցիք , Տէր :

Այս խօսքերն արտասանուեցան չոր հնչմամբ մը՝ որն որ խիստ ծանօթ էր Աարդինալին : Փորձառութիւնը սովորեցուցած էր իրենն որ մըրկի մը ազդարարն էր այն, ամեն անգամ որ օրիորդը բանէ մը դժգոհ ըլլար :

— Ջղուշութիւն, ըսաւ իւրովի. հոս բան մը կայ, լըռե՛նք :

Աարդինալը կը վախնար իւր քոյրէն : Աան տպաւորութիւններ՝ որոնք մարդուս վրայ կը տիրեն իւր բոլոր կենաց մէջ : Պղտիկ պառաւին ցուրտ հայեցուածքները կը տժգունէին արժանաւոր Աարդինալը : Չի՛ պատասխանեց, այլ փոսակցութեան նիւթը փոխելով, խօսքը ընդհանուր-փոխանորդին ուղղեց, որն որ խիստ ճարտար էր անցածը տեսած չ'ըլլալու մասին :

Ճաշին ժամանակ շատ մը սովորական անհամ խօսքեր եղան՝ որոնք խիստ անհաճոյ էին Աարդինալին : Արիկունն ալ ճաշին պէս տխուր անցաւ. մի և նոյն պաղութիւնը օրիորդին կողմէն, մի և նոյն զղուշութիւնը Աարդինալին՝ մըրկին պայթումն արդիւելու :

Բայց երբ ընդհանուր-փոխանորդը սովորականէն կանուխ իւր սենեակը քաշուեցաւ, այն ատեն փոթօրիկը փրթաւ :

— Արովհետեւ միայնակ ենք, Սրբազան, պիտի ըսեմ ձեզ ինչ որ թերևս ոչ ոք պիտի համարձակէր ձեզ ըսել, թէ մեծ վնաս կ'ընէք ձեր անձին սա երիտասարդ Սրբայն ձեր քով ունենալով :

— Աաղաչեմ, քոյր իմ, այդ մասին անհանդիստ մի՛ ըլլաք :

Աարդինալը կ'ուզէր կռուի ասպարէզէն քաշուիլ :

— Սրբազան, ամեն բանէ յառաջ ձեր պատուոյն, ձեր արժանաւորութեան նախանձախնդիր եմ. ուստի այս չ'կրնայ զիս անհանդիստ ընել :

Աարդինալն ա՛լ աւելի մեղմացաւ .

— Սիրելիդ իմ, դիտեմ ո՛րքան կը սիրէք զիս :

Սոյն օրինակ պարագայներու մէջ ասի Օրիորդ Տը Ֆլա-

Քարէնի համար յաղթութեան ժամն էր : Այս վայրկենիս ծառայ մը մանկելով կարդինալին քրոջն յանձնեց փոքր տոմսակ մը , միայն սա բառն ըսելով , « խիստ ստիպողական » :

Տոմսակը բացաւ . կարդաց .

« Չէինք դիտեր թէ Ն . Պերապատուութիւնը , դեռ եկեղեցիէն դուրս չելած , պատուակալ-կանոնիկոս անուանած է ՂՊ . Թիւլիօ : Ի՞նչ դժբախտութիւն : »

Ընդհանուր-փոխանորդին իրեն տուած այս լրոյն վրայ Օրիորդին զայրոյթը վերջին աստիճանն հասաւ :

— Պեղեցիկ բաներ կ'ընէք , Սրբազան : Ձեր ներկայութեամբը թեթեամիտ երիտասարդի մը յիմարութեանցը կը հաւանիք . միայն երիտասարդական չափազանց եռանդ մը կը տեսնէք իւր յայտնած թիւր ու մոլար սկզբանց մէջ՝ որք բոլոր Թ . ասպնութեան մէջ ձեզեցին :

Կարդինալը ձայն չէր հաներ . կը ծռէր իր վրայ թափուած յանդիմանութեանց կոյտերուն ներքե : Բան մ'ալ ի ներքուստ կամաց մը կը յանդիմանէր զինքը՝ Թիւլիօ կանոնիկոս ընելու փութալուն համար : Անողորբի աղջիկը շարաւարեց .

— Դուք ձեր այս անխոհեմութիւնը կատարեալ ընել ուղեցիք , առանց ձեր ընդհանուր-փոխանորդաց , առանց ինձի բառ մ'անդամ ըսելու , կանոնիկոսական ուսազգեստ (զամայլ) տալու փութալով կղերանոցի աշակերտի մը՝ զոր ընդհուպ ամբարտաւանութեան պղտիկ հրէշ մը պիտի ընէք :

Կարդինալը քիչ մը շտկուեցաւ :

— Քոյր իմ , կրնաք իրաւունք ունենալ , բայց պաշարեցին զիս չորս կողմէս ու թախանձեցին զիս :

— Թախանձեցի՞ն զձեզ :

— Այո՛ , թախանձեցին զիս , կ'ասպահուլցնեմ զձեզ :

— Հա՛ , հա՛ . Նորին Պերամեծար Սրբազնութիւնը թախանձանաց պիտի զիջանի : Որո՞ւն արդեօք : Հաւանականաբար Սւազերէցը , իբր ճշմարիտ շողօքորթ մը , սոյն չքնաղ հրաշակերտիւ (չէ-տէօլուր) համար վարձատրութիւն մը

խնդրելու եկած է : Այդքան լիով մարդոց այդքան չնչին խնդիրներն իսկ չէք համարձակիր մերժել : Ասի մեր արժանապատուութեանը կը մնասէ , և մենք քան զայս աւելի մեծ ու վեհ ծնած ենք , Սրբազան :

— Այ միայն աւագերէցը , այլ բոլոր կանանիկոսաց ժողովը միահամուռ ժիւլիօյի համար այս պատիւը խնդրելու եկաւ :

— Եւ չ'կրցիք խելամտել թէ այդ խնդրանաց տակ դաւ մը կար : Յիրաւի , միայն երբ խնդիրը ձեր նոր քարտուղարին վրայ ըլլայ , ձեր սովորական մտաց կորովն ու արթնութիւնը կը կորսնցնէք :

— Բայց ինչ օգուտ , եղածն եղած է . պարապը զըտնըւեցայ , անմտութիւն մ'ըրի , ըսէք :

— Ա՛լ այսչափ մեծ անմտութիւններ չ'են երկրորդուիր :

Եւ դուրս ելնելու պատրաստուելով ,

— Կը յուսամ թէ , յաւելցուց , բաւական կը ճանչէք ձեր յարդը և թէ ա՛լ այսօրինակ անհաճոյ տեսարանի մը զմեզ հանդիսատես չ'էք ըներ :

Եւ ճրագ մ'առնելով իր խուցը դնաց :

Կարդինան զգետնուած էր :



ԺԵ .

ԱՂԷՏ ՄԸ

Կարդինալը երբ իւր սենեակը քաշուեցաւ , սենեկապան ծառայն կոչելու համար զանգակը զարկաւ :

Յայտնապէս յուզեալ էր : Իւր քրոջ կշտամբանքներն , ի բաց առեալ անոնց չափազանցութիւնը ժիւլիօյի վարդապետութեանց մասին , կերպով մը իրաւացի կ'երեւէին իրեն : Անոր առջեւ թերութեան մէջ դտնուելուն կը ցաւէր : Սաստիկ ծիրանեղոյն կարմրութիւն մը իւր դէմքինը վերին մաս

պատեր էր : Չգաց թէ զլուխը ուժգնապէս ցնցուած էր ,
և թէ բան մը կը դառնար հոն :

Թիկնաթուին վրայ նետուեցաւ :

Յիշեց որ ճաշին ժամանակ սաստիկ տհաճութիւն ու
սրտնեղութիւն մ'զգացած էր :

— Բայց ասի բան մը չ'է , ըսաւ իւրովի . լաւ մարսողու-
թիւն մ'ունիմ :

Նոյն վայրկենին սենեկապանը եկաւ :

— Սրբազան Տէր , ներէցէ՛ք անմիջապէս չգալուս : Պա-
րոն մը նամակ մը բերած էր եւ կ'ուզէր որ անյապաղ ձեզի
յանձնուի : Չ'ուզեցի զձեզ անհանդիստ ընել . պնդեց ըսելով
թէ իրեն պատուիրուած էր որ անձամբ Ձեր Սրբազնութեան
յանձնէ : Չ'թողի իրեն ձեր սենեակը մտնել , բայց խոստա-
ցայ որ այս երեկոյ նամակը ձեր ձեռքն հասցնեմ :

— Ա՛հ , ս'ըքան ծանրատաղտուկ են սա գործերը , Տես-
նե՛նք , ի՛նչ է :

Եւ նամակն առնելով ճրագի մը մերձեցուց եւ հետեւեա-
լը կարդաց .

« Պերապատիւ Տէր , այսօր մայր-եկեղեցւոյ բեմէն լըս-
ւած դայթակղական քարոզին ցաւազին ներդործութեանը
ներքեւ է որ կը համարձակինք գրել Ձեզ սոյն նամակը , հա-
ղորդելու համար Ձեր Սրբազնութեան նոյնին Թ . քաղաքին
մէջ բոլոր կղերական դասուն վրայ ըրած սոսկալի տպաւո-
րութիւնը :

— Ասիկայ խիստ ծանր է , դուքեց Աարդինալը անհամ-
բերութեան շարժումով մը՝ զոր չ'կրցաւ զսպել . ի՛նչ որ լը-
սեցի քրոջմէս , բաւ է . բնաւ մէկէ մը նոյնը լսել չի պիտի
համոզուրթեմ : Ա՛լ գործը յանդուգն լրբութեան հասուցին :
Պիտեմ Թ . ի մէջ միայն ժէզուիթք այս կերպով կրնան գը-
րել ինձ . իմ քահանայներէս և ո՛չ մին կրնար համարձակիլ
ասոր :

Շարունակե՛նք .

« Եթէ Ձեր Սրբազնութիւնը ժիւլիոյի քարոզած վտան-

գալից վարդապետութեանց համամիտ ըլլալու հանդիսաւոր առհաւատչեայ մը չ'տար՝ զայն իւր եպիսկոպոսական քաղաքին կանոնիկոս անուանելով, նուազ սաստիկ պիտի ըլլար մեր ցաւը : Բայց, Սրբազան Տէր, ձեր այս ողբալի դործէն ետքը մեզ ուրիշ բան չ'մնար ընել՝ բայց հեծել լռիկ այն ցընորից ու խաբկանաց վրայ՝ որոց կրցաւ Քնթակայ ըլլալ ուղղափառ եպիսկոպոս մը, եւ ազօթել որպէս զի շնորհքը լուսաւորէ զայն և կեցէ այն անդունդին առջև՝ ուր մերձ էին գահավիժել :

— Ըիւաղներ, ըսաւ Աարդինալը, ընթերցումն ընդմիջելով, տեսէ՛ք անուանարկել կ'ուզեն զիս :

« Ար սիրեմք զձեզ, Սրբազան Տէր, այլ քան զձեզ, քան զկեանս իսկ մեր աւելի կը սիրեմք ուղղափառ վարդապետութեան անարատութիւնը : Գժուարին ու ծանր պիտի ըլլայ մեզ ստիպուիլ բողոք բառնալու Նկեղեցւոյ դերագոյն դատաւորին, Սրբազնասուրբ Պապին, զոր Յիսուս Քրիստոս դրած է այլոց հովուաց վրայ :

« Բայց եթէ ձեր Սրբազնութիւնը, մեր խօսքերէն համոզուելով և իւր իրական շահերը ողջմտօրէն կշռելով, հրապարակական հարուած մը տայ այն մօլերեցուցիչ վարդապետութեանց . . . : »

Եւ երեսը դարձնելով .

— Ո՛հ, Աստուած իմ, նամակն անստորագիր է : Աստե՛րը, զիս Հռոմի ատենին առջև ամբաստանել կը մտաբերեն :

Ու նամակն ինկաւ եկեղեցականին ձեռքէն : Նոքն կսկ ուղեթափ ինկաւ իր վրայ, և սենեկապանը մեծ գժուարութեամբ զինքն իր անկողնոյն վրայ տարաւ :

Գերապատիւ Տը Ֆլամարէն սաստիկ կաթուածէ մը զարնըւեր էր :

Սենեկապանը խուցէն դուրս ելաւ ու գնաց օգնութեան կանչելու :

Ի մի վայրկեան Աարդինալին սենեակը լցուեցաւ : Օրիորդ Տը Ֆլամարէն հասաւ : Ի զուր խօսքեր ուղղեց իւր

եղբորը : Այցիտուր բառեր միայն եղան իւր պատասխանը , Սակայն անթարթափ իւր քրոջը կը նայէր , և այս նայուածքը ներկայ եղողներուն քիչ մը յոյս կուտար : Անմիջապէս ղրկեցին Ն . Գերապատուութեան բժիշկը բերելու :

Բժիշկը Ասպիտոյի հրապարակը կը բնակէր , բաւական հեռու արքեպիսկոպոսարանէն : Ծառայն զայն տունը չ'ըլտաւ . նոյն երեկոյ իւր քրոջը տունը ճաշելու դացած էր , որն որ Թ . ի միւս ծայրը՝ Բուսարանական Պարտիզին մօտ կը դանուէր :

Ծառայն , փոխանակ ուրիշ բժշկի մը տուն երթալու , յուղի անկաւ դէպ ի Բուսարանական Պարտէզը ամենէն կարճ ճամբով , քաղաքին փողոցներէն անցնելով :

Բժիշկը , իր ճաշն ըրած , քրոջ տունէն դուրս ելած էր , և հանդարտօրէն արտաքին ծառազարդ փողոցներէն իւր տունը կը դառնար :

Ծառայն յուսահատ յարքեպիսկոպոսարան դարձաւ և պարապ տեղն ասդիս անդին վազելը պատմեց : Այն ատեն ուրիշ բժիշկ մը բերելու ղրկեցին :

Սակայն այս երթևեկութեանց միջոցին բաւականէն աւելի ժամանակ անցած էր : Հիւանդին ուղեղը վայրկեան առ վայրկեան աւելի կը գէշնար , և վիճակը կը ծանրանար : Բոլոր ծառայները յարտասուս կային : Օրիորդ Տը Ֆլամարէն կիսանուաղ տխուր լռութիւն մը կը պահէր՝ որ հազիւ երբեմն հեծկլտանօք կ'ընդհատէր : Հիւանդին հոտաւէտ ջուրեր ու ողիներ հոտոտել կուտային , այլ ի զուր : Հուսկ ուրեմն երկու բժիշկները գրեթէ մի և նոյն ժամանակ հասան : Խորհրդակցեցան , և իրենց պատասխանը սա եղաւ . « Խիստ բռն է » : Առաջին արիւնառութիւն մը խիստ տկար արդիւնք մը յառաջ բերաւ . երկրորդ անգամ գրեթէ մի և նոյն անջաջողութիւնը ունեցան :

— Կորսուած է :

Այս բառը իբր զանդակի մահադոյժ թնդիւն մը հնչեց օրիորդ Տը-Ֆլամարէնի տկանջին : Մէկդի թողլով որ իւր

եզրայրը դորովանօք կը սիրէր, իւր ապագայ բոլոր յոյսերն ու
ակնկալութիւնքը կը ցնդէին Աարդինալին կենաց հետ :

— Աղաչեմ, պարօն բժիշկք, մէկ քանի դարմաններ
այ փորձեցէք :

Պատասխանեցին թէ ուրիշ որ և է դարման անօդուտ
ու ապարդիւն էր ու միայն գուցէ վայրկենական բարու
քում մը յառաջ բերէր :

— Ուրիշ արիւնառութիւն մ'ալ փորձենք. բայց կրնայ
ըլլալ որ հիւանդը մեր բազկաց մէջ ողին փչէ :

— Շնորհք ըրէք. փորձ մ'ալ, փրկէք զինքը թերեւս :

Այս երրորդ արիւնառութիւնը անյուսալի արդիւնք
մ'ունեցաւ : Հիւանդը զգաց անձին. կրցաւ խօսիլ քրոջն ու
բժշկաց հետ :

— Շնորհակալ եմ, պարօն բժիշկք, կ'սթափիմ, կը ճան-
չեմ ինքզինքս : Աստուած կը հաճի ձեր ձեռքովը շնորհել ինձ
վերջինը այն բարեաց՝ զոր քրիստոնեայ մը կրնայ խնդրել նո-
րա բարութենէն, այն է իւր դատաւորին ներկայանալ պաշ-
տաստուելու միջոցը :

Եւ իւր սենեկապանին դառնալով,

— Ամեն բան պատրաստէ՛ որպէս զի վերջին սրբազան
խորհուրդներն ընդունիմ : Քահանայ մը կոչէ՛ . . . Պ. Ար-
բայ Թիւլիօն, կը լսե՞ս, յաւելցուց աւելի հաստատ ձայնով
մը :

Քոյր իմ, և դուք, բարեկամներս, ամենքդ ալ քաշուե-
ցէք ու թողէք զիս միայնակ. երբ վերջին օժումն ընդունիմ՝
այն ատեն եկէք դարձեալ : Ա՛ղգամ որ սուղ են վայրկեան-
ները. խղճմտանացս վրայ մտածելու պէտք ունիմ :

Թիւլիօ իւր սենեակը կ'ելնէր՝ որ եպիսկոպոսական պա-
լատին մէկ ծայրը կը գտնուէր, երբ սենեկապանը քովը մօ-
տենալով տխուր արկածն ու Աարդինալին կամքը յայտնեց
իրեն :

Թիւլիօ դողդոջաբայլ հիւանդին քով հասաւ :

— Սիրեցեալդ իմ, ըսաւ անոր ծերունին, դու պիտի

հաշտեցնես զիս Աստուծոյ հետ և իմ յետին հառաչս պիտի ընդունիս : Այրկեաններս հաշտեալ են : Թշուառ Թիւլիօ , ահա՛ խիստ փոքր քու առջեւդ երկրի մեծութիւններէն մին : Աստէ՛ իմ անարիցս քով , օրհնէ՛ զիս և լսէ՛ իմ խոստովանութիւնս :

Նորաստի քահանային աչերը արտասուօք թրջեցան : Աարդինալ մը , արքեպիսկոպոս մ'էր առաջին ապաշխարողը՝ ուրու գլխուն վրայ , յանուն ներող Աստուծոյն , պիտի արտասանէր ներման և հաշտութեան վճիռը :

Աարդինալը հաստատուն ու որոշ ձայնով մը և խորին ցաւօք խոստովանեցաւ իւր բովանդակ կեանքին բոլոր մեղքերը . յետոյ իւր ալեղարդ գլուխը խոնարհեցոյց երիտասարդ քահանային ձեռքին սակ :

— Հիմայ , գրկե՛նք զիրեար , Թիւլիօ , ըսաւ Աարդինալը : Ա՛ռ զէի քեզի յիշատակ մը ձգել ինձմէ , իմ խանդակաթ սիրոյս մէկ առհաւատչեայն տալ քեզի : Երկնցո՛ւր առ իս քու ձեռքդ , այս ձեռքը որ վերջին անգամ բարձրացաւ իմ գլխոյս վրայ ի նշան այն ներողութեան՝ զոր Աստուած պիտի շնորհէ , կը յուսամ , մեղաւորի մը : Քեզ կը նուիրեմ իմ հովուական մատանիս , խոստացի՛ր ինձ որ , ինչ որ ալ ըլլայ քու վիճակդ երկրի վրայ , Հռովմէական եկեղեցւոյ Աարդինալ կամ գիւղի մը մէջ մոռցուած խեղճ ժողովրդապետ , միշտ քու հետըդ պիտի կրես իմ այս յիշատակս :

— Ար խոստանամ , Պերապատիւ Տէր :

Ծերունւոյն ձեռքն համբուրելով՝ մատանին ընդունեց ու մատը գրաւ :

— Ա՛լ զիս « Պերապատիւ » մի կոչէր , բարեկամդ իմ : Հիմայ անհաճոյ է ինձ այդ տիտղոսը : Հիւսան որդին « Պերապատիւ » անուամբ յորջորջուեցա՛ւ երբէք : Իմ հասակովս հայր մ'եմ քեզ համար , սրտովս՝ որ զքեզ կը սիրէ , բարեկամ մ'եմ : Երջանիկ և ուրախ եմ մտածելով որ քու աչացդ առջեւ իմ վերջին շունչս պիտի փչեմ և թէ քու ազնիւ ու անարատ ձեռնդ պիտի գոցէ իմ արտեանունքներս :

Մաիկ ըրէ՛ ինձ այս ժամուս . օրհասականի մը հոգևոր

կասկն է որ պիտի ընդունիս :

Ար մեռնիմ կաթուղիկ , առաքելական և հռոմէական Ա-
կեղեցւոյն դրկին մէջ , որուն քահանայ , եպիսկոպոս և կար-
գինալ եղայ :

Այս վայրկենիս՝ յորում պատրաստուած եմ երեւելու ա-
նոր առջեւ՝ որ ճշմարտութիւնն է անյեղլի և անյողդողդ ,
կը յայտարարեմ որ ակամայ և վերջին ծայր դժկամակու-
թեամբ՝ քահանայական և եպիսկոպոսական կեանքիս քառա-
սունէն աւելի տարիներուն մէջ հետևող դանուեցայ այն վը-
տանդաւոր շաւղին՝ ուր կը քայլէ այսօր կաթուղիկ կղերը :
Հարկ եղաւ ինձ ճնշել հոգւոյս ամենէն ազնիւ բնազդումնե-
րըն , խեղդել խղճմտանացս խայթերը և բունն առնել անձի-
նքս որպէս զի իմ տեսակցութեանցս ու խօսակցութեանցս մէջ
չի յայտնեմ իմ ներքին համոզումներս , և Ակեղեցւոյմէջ բռնե-
լիք ընթացքիս նկատմամբ Աստուծոյ ինձի տուած լոյսերն :

Այս իմ անձիս վրայ ի դործ դրած ճնշմանս պատճա-
ռաւն է որ պատիւներու և մեծութեանց մէջ յառաջացայ :
Գիտէի , պէտք էր ընտրել կա՛մ այս պատիւներն ու աստի-
ճանները՝ որոնք իմ փառասիրութիւնս կը շողոքորդէին կա՛մ
մշտախռով և նոյն իսկ հալածեալ կեանք մը : Տկար դանուե-
ցայ . նոր առաքելութեան փառաց ու տառապանաց առջև
յետս ընկրկեցայ . ծիրանւոյ սին մեծութիւնը նախամեծար
համարեցի : Յայն հասնելու համար՝ լուեցի ճշմարտութիւնը ,
ճատնեցի զայն :

Սիրելիդ իմ ժիւլիօ , քրիստոնեայ աշխարհին առջև իմ
յետս կոչումները առ քեզ կը յանձնեմ . խղճմտանքս պարտք
կը դնէ իմ վերայ , և քու իմ ներկայութեանս ցոյց տուած
համարձակախօսութիւնդ , երբ չ'գիտէիր տակաւին թէ քա-
նիօ՛ն քու դաղափարներդ իմ բովանդակ կենացս դաղա-
փարներն էին , երաշխաւորութիւն մ'է ինձ որ իմ վերջին
կամքերս հրապարակելու քաջասրտութիւնը պիտի ունենաս :
Սաստկապէս կը ցաւիմ այն առերևոյթ կեղծաւորութեանը
վրայ՝ յորում ապրեցայ . սրտիս մէջ չ'էր այն , վասն զի միշտ

ատած եմ կեղծաւորութիւնը :

Ար ցաւիմ այն կարեւորութեանը վրայ՝ զոր կուտայի արտաքուստ եպիսկոպոսական շքեղութեան , այն հինցած պաշտաման , այն թամերգական ձևերուն՝ զորս միջին դարու բանաստեղծութիւնը կտակած է մեզ : Այս ամենը մաշած , մեռած , անօգուտ ու ապիկար կը համարիմ : Բանաստեղծութեան տեղ՝ ճշմարտին պէտք ունիմք . իբր յիշատակ ներկայուած կրօնական թատերատեսիլներու տեղ՝ հարկաւոր են լռին աստուածալաշտութիւն , հասարակաց աղօթք և աւետարանական վարդապետութիւն իւր ամենէն մաքուր ու անխառն պարզութեան մէջ : Փոխանակ այն բաներուն՝ որ զգայարանաց կը խօսին՝ պէտք են այն բաները՝ որք հողիներէն կը բղխին : Եկած է ժամանակը՝ ուր Հօրը համար հողուով և ճշմարտութեամբ երկրպագուներ փնտռել հարկ է :

Գարձեալ այնպէս կարծել տուի թէ կը հաւնէի այն ճախող ու չարաղէտ դրութեանը՝ յորում կը յամառի յարատեւել պաստութիւնը : Թէ և ակամայ և դժկամակութեամբ , պաշտպանեցի պապերուն աշխարհային իշխանութեան կարեւորութիւնը , և ասի իմ ամենէն խորին համոզմանցս հակառակ : Հռովմ այսպիսի անհանճար ու խօլ քաղաքականութեամբ մը իւր կործանումը կը ճեպէ : Եթէ Խտայիոյ մէջ թըշուառ հերձուածի մը շի յանգի , պիտի ընդարձակէ , ինչ որ աւելի սոսկալին է , այն պատառուածը՝ որ իբր ու արդ իաշխարհին մէջ դոյացած է : Հռովմի այս քաղաքականութիւնը ազատ խորհողներու ձեռքը ահաւոր զէնքեր կուտայ . յետըս կը նահանջէ այն վայրկեանը՝ ուր հերձուածները կրնան յինքեան միաւորիլ , եթէ ինքը ազատամիտ , ներող և աշխարհային թագաւորութեան սին մեծութիւններէն բաժնուած ըլլայ :

Մուղէի որ իմ յետին խօսքս կարենար հասնիլ Քահանայապետին ոտքը և ըսել անոր . Ս.հա ինչ որ կը խնդրէ քենէ քո օրհասական եղբայրներէն մին . փրկէ՛ հողեւոր եկեղեցին , և հրաժարէ՛ , կարևոր զոհողութեամբ մը , թագաւորութեանէ մը՝ ուսկից միայն խեղճուկ բեկոր մը մնացած է քեզ :

Առաջին որ դիտանան մարդիկ թէ կ'հաւատամ ես քրիստոնէական գաղափարին ապագային, այն խօսքին՝ որուն տեղը չի պիտի բռնէ բնաւ ուրիշ կրօնական ու բարոյական օրէնսդրութիւն մը .- Սիրեցէք զԱստուած, սիրեցէք զմարդիկ՝ ձեր եղբայրները : - Բայց համազուած եմ որ Քրիստոնէութիւնը մեծ փոփոխութիւն մը պիտի կրէ : Միատիկականութեան, բանաստեղծութեան, զգայարանաց հետ խօսելու յատուկ արտաքին փառաւոր ձևերու այն բովանդակ կազմածը պիտի կործանի, և անկէ պիտի մնայ ինչ որ մեծ է, անկորնչելի աւետարանը, ի մարդիկ սիրոյ չքնաղ օրէնքը :

Իմ մարդկօրէն թերութեանցս ու տկարութեանցս համար Աստուծմէ ներումն ունենալով խնդրել, չ'եմ կրնար ատելութեան գաղափար մ'իսկ թողուլ ինձմէ ետքը :

Սակայն և այնպէս պարտք կը համարիմ ինձ քրիստոնեայ ընկերութիւնը զգուշացնել կրօնական ուխտից յարձակմանը դէմ, և մասնաւորապէս Քիսուսեան ընկերութեան՝ որ ամենէն աւելի ջերմն ու եռանդնոտն է իւր աշխարհի վրայ տիրապետելու անյող ցանկութեանց մէջ : Առաջին հաւատալ որ իւր անդամներէն իւրաքանչիւրը բարիք ընելու ամենասուրբ տենչովն վառուած է . բայց իրենց ուխտը մարդկային, հետեաբար յոռի և քիչ պատուաւոր միջոցներ ի գործ կ'ածէ՝ որոնք մարդկային քաղաքականութեան ամեն նենգապատիր հնարքներն ի յուշ կ'ածեն և, ինչպէս յայտնի է, քրիստոնէաւալայել չ'են : Այս ուխտին վրայ շատ բաներ դիտեմ : Արտաքուստ անոր պաշտպան հանդիսացած եմ, հակամիտ չ'գտնուելու համար այն ընդհանուր դրութեան՝ որուն հետ տեւելու անբախտութիւնն ունեցայ : Բայց իմ ներքին համազումս այս է թէ՛ կրօնական ուխտերուն ժամանակն ա՛յլ ևս անցած է :

Վթութեան ընկերութիւններ, այնպէս՝ ինչպէս որ կը հասկնար Ս. Վէնսան տը Բօլ, ժողովրդեան աղէտներն ամօքելու նպատակաւ հաստատուած, առ այժմ կը բաւեն, մինչև որ ընկերային բարւոքումներն մարդկային գերդաս-

տանին մէջ ընձեռեն ամենուն բարեկեցութիւնը աշխատութեամբ այն աստուածային օրէնքին միջոցաւ՝ զոր պէտք է լրծորդել սիրոյ օրինաց հետ :

Չունիմ այլ ևս ինչ յաւելուլ այս ցաւադին խոստովանութեանց վրայ, եթէ ոչ յոյս մը թէ սոյն այս Պատգիոյ մէջ՝ զոր այնքան սիրեցի և որ արդի մարդկութեան հրաբոց սիրտըն է, կղերէն ելնեն մարդիկ՝ որ իմ ունեցած էս աւելի քաջասրտութիւն ունենալով՝ հաւատալիք աշխարհին և դէշ քարոզուած ու հասկցուած քրիստոնէական կրօնից մէջ տեղը նորոգ հաշտութեան առաքեալներն հանդիսանան :

Իցի՛ւ օրհնէր զքեզ Սատուած . սիրելի ժիւլիօ : Գու քու բողբոլին աւետարանական քարոզովդ կենացս ամենէն անխառն բերկրանքներէն մին տուիր ինձ : Գու ստուղիւ ապաղային եկեղեցւոյն առաքեալներէն մին ես : Երբ հալածուիս, և արդէն վաղուընէ հալածանք և թշնամութիւնք պիտի հրոս տան ի քեզ մինչև իսկ իմ տանս մէջ և ի ներկայութեան իմ տակաւին ջերմ դիակիս, երբ ամենքն նզովք ժայթքեն քեզ դէմ, մի՛ կորսներ ապաղային վրայ ունեցած վրատահութիւնդ : Պիտի տեսնե՞ս լաւագոյն օրեր, վերանորոգեալ քրիստոնէութեան դէթ մի քանի սկզբնածագ նշոյլներըն պիտի փայլի՞ն քու աչացդ, գերեզմանին դուռը դեռ քու վրադ չի փակուած, չ'գիտեմ զայս . բայց թո՛ղ իմ տրտութիւնը օրինակս և գաղափարս հետդ ըլլան յա՛ր անմեկին :

Գու հարկ չ'պիտի ունենաս քու ցաւոցդ կտակադիրն ընելու և հրապարակելու քու տկարութիւններդ և նուաստութիւններդ կամ փառասիրութիւնդ : Գու մարդկան առջև պիտի ամբառնաս անխռով քու ճակատդ, և երբ Սատուծոյ առջև ելնես, այդ ճակտոր պիտի փոզիտդէ այն ճշմարտութեան լուսահիւս պսակովն՝ որոյ առաքեալը եղած պիտի ըլլաս :

Բարեա՛ւ մնա՛, իմս ժիւլիօ, բարեա՛ւ մնա՛, որդեակ իմ : Զօրութեանցս սպառումը կ'զգամ . գաղափարներս դժուարաւ կ'ընամ ամիտիել : Եւ ուզեղիս այս վերջին վաստակումը

զայն ալ իր ուժոյն յետին կէտը հասոյց : Աարևոր յանձնա-
բարութիւն մը կար՝ զոր կը մոռնալի սակայն . հող նա-
մակ մը կայ . ա՛ռ զայն : Ժէզուիթաց կողմէն գրուած է Ե-
Իմ կղերիս և ոչ մէկ անդամը ինձ զայդ օրինակ գրելու լըր-
բութիւնը պիտի ունենար : Պահէ՛ այդ նամակը . ևս անձամբ
կը յանձնեմ զայն քեզ : Աւաերական դիր (տօքիւման) մ'է
այդ՝ որ պատմութեան համար կորսուած պէտք չ'է ըլլալ :
Պէտք է որ գիտցուի թէ Հռովմէական եկեղեցւոյ արքեպիս-
կոպոսի մը , կարդինալի մը Ժէզուիթք Պաղղիոյ մէջ կրցած
են Հռովմի շանթերու սպառնալիքներ տալ :

Ծերունոյ մը մաշած կազմը չ'կրցաւ բուռն յուզման
մը դիմադրել : Քրոջս հետ ծանր ու տաժանադին վէճ մ'ու-
նեցայ , և Ժէզուիթաց նամակը վերջին հարուածը տուաւ
ինձ : Մարտիրոս կը մեռնիմ , վասն զի քեզի և քու այնքան
պերճախօսօրէն իրենց երեսին զարկած ճշմարտութեան դէմ
իրենց ունեցած ատելութեամբն էր որ զիս հարին : Ար նե-
րեմ իրենց , վասն զի կոյր մուկերօններ են անոնք : Իցի՛ւ իմ
մահս քաւէր կենացս բոլոր վատութիւնքն առաջի ճշմարտու-
թեան : Բարեա՛ւ մնա՛ , Ժիւլիօ : Մի՛ բաժնուիր քովէս . դո՛ւ
պիտի դոյես աչերս :

Ըսէ՛ քրոջս և այլոց որ ներս դան :

Վերջին խորհուրդները կատարուեցան հիւանդին վրայ :

Արցաւ դեռ ամփոփ մտօք աղօթել : Երբ քահանայն ար-
տասանեց այն չքնաղ կոչումն ի շքեղութիւնս անմահութեան ,
« Ե՛րթ հողիդ քրիստոնեայ » ծերունին վերջին անդամ խօսիլ
սկսաւ :

Քոյրը կոչեց : Չեռքը սեղմեց :

— Բարեա՛ւ մնա՛ , քոյր իմ :

Եւ իւր ծառայներուն երեսը նայելով ,

— Բարեա՛ւ մնա՛յք , բարեկամք իմ :

Եւ ողբվարութեան տաղնապններուն մէջ մտաւ :

ԱՌԱՋ Ի Ն Հ Ա Ր ՈՒ Ս Ծ Ք



Ա .

Թ . Ի ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ԱԹՈՒՆ ԱՆԿԱՀԱԿԱԼ

Պառառի քաղաքի մը մէջ առաջնորդ Եպիսկոպոսին մա-
հը մեծ դէպք մ'է : Անդ հուպ նոր թագաւորութիւն մը
պիտի սկսի , և եպիսկոպոսական արքունեաց սովորական
պալատականը կ'ըսեն արդէն . Թագաւորը մեռաւ , կեցցէ
թագաւորը :

Ո՛չ ինչ այնքան շուտ կը մտաշուի որքան մեծադոր անձ
մը՝ որ կը մեռնի : Պեռ չի պաղած իւր ածիւնը՝ ամեն բան
կը կարգադրուի , իբր թէ իշխանութիւնը բնաւ անոր ձեռ-
քն անցած չ'ըլլար :

Աարդինալը , որ իւր վերջին արիական խոստովանութիւն-
ներովն փառասիրութեան մէջ սահած բովանդակ կեանքի մը
տկարութիւնները քաւած էր , սոսկալի հողեւարութենէ մը
վերջը իւր հողին փչեց : Իւր նոր աշակերտն , իր վերջին հրա-
ժեշտն ընդունած և աչերը փակած էր : Սնչարժ մահա-
համբոյր անկողնոյն ոտից քով , կենազրաւ եկեղեցականին ծա-
ռայիցն ու քրոջը հետ՝ անցուցեր էր այն աղետալի գիշերոյն
մնացորդը , յորում մահը իւր բոլոր սոսկումներովն իրեն
ներկայացած էր :

Հոն եկած էր նաև Արքայ Ասկէլ , որ ամեն ինչ Աարդի-
նալին կը պարտէր , և խորին տրտմութիւն մը ցոյց տուած
էր : Բայց ո՛չ այնքան կը ցաւէր իւր բարեբարին մահուան՝
որքան Աարդինալին քով իւր ունեցած բարձր գրից վրայ ,

գիրք մը՝ որ կրնար զինքն աւելի բարձրելը ասնիլ, եթէ
կարգինալը ապրէր :

Պառաւ քոյրը, ցուրտ և անձնասէր, առաւ բնութեան
ինչ որ բնութիւնը անհրաժեշտ կը պահանջէր իրմէ : Նա-
խահոգ և ճարտար, առաջուց աղւոր կտակագիր մը ձեռք
անցուցած էր՝ որ զինքը իւր եղբօրը ընդհանուր հրիտակա-
սուն կը կարգէր :

Ուրիշ բան չէր մնացած բայց միայն սովորական շքեղու-
թեամբ ննջեցելոյն յուղարկաւորութիւնը կատարել :

Կանոնիկոսաց ժողովը նոյն իսկ արքեպիսկոպոսին՝ մահ-
ուան առաւօտը ժողովեցաւ, և կանոնիկոսական տեղակա-
լաց ընտրութեան ձեռնարկուեցաւ : Նրկու կուսակցութիւնք
կային դէմ յանդիման. մին Աւագերիցուն և միւսը Աբբայ
Կակէլին : Այս երկու մարդիկը զիրար սաստիկ կերպով կ'ատ-
էին և իրենց հակառակութիւնը երևան ելաւ այս սլարագայիս
մէջ՝ յորում խնդիրը, թէ միոյն և թէ միւսոյն համար, գըլ-
խաւոր կէտի մը՝ անձնասիրութեան վրայ կը կայանար :

Աբբայ Կակէլ յաղթանակեց : Յաջողեցաւ ինք զինքն
կանոնիկոսական ընդհանուր-տեղակալ անուանել տալ իրեն
կուսակց ուրիշ երկու կանոնիկոսաց հետ, և աւագերէցը
բոլորովին դուրս ձղուեցաւ :

Մեծ ու խոշոր բառերով շրջաբերական մը, որ սովորա-
կան եղած պաշտօնական ցաւերը մի առ մի կը կրկնէր, գըլ-
րի առնուեցաւ Աբբայ Կակէլի կողմէն և ստորագրուեցաւ
իւր երկու պաշտօնակիցներէն : Իբրև նախկին ընդհանուր-
փոխանորդ, վիճակին իրաց տեսչութիւնն իրօք ինքն իր
ձեռքը առաւ :

Ժիւլիօ մեծանձնօրէն բնաւ միջամուխ չ'եղաւ սոյն ընտ-
րութեան փոքրոգի խարդաւանաց : Սնկեղծ և արդար
վշտով համակեալ, հանդարտօրէն միայն կարգինալին իրեն
յանձնած պաշտօնին օրական դործոց կատարմանը փոյթ ու-
նեցաւ :

Ժէզուիթք հրապարակաւ մեծ վիշտ ու մօրմօք ցոյց

տուին արքեպիսկոպոսին մահուան վրայ : Իրենց հաւատաքըն-
 նութեան մատրան մէջ հողեհանդստեան հանդիսաւոր արա-
 թողութիւն մը կատարեցին , և շատ մտմ վառեցին ահադին
 բարձրաւանդակի մը բոլորովը՝ զոր մասնաւորապէս շինել
 տուած էին : Բայց , մի և նոյն միջոցին , ճարտարութեամբ ի-
 րենց մարդոցը մէջ սա դադաւարը փութացին տարածել թէ
 թշուառ Աարդինալին այսպէս յանկարծադէպ մահը Ստու-
 ծոյ կողմէն զրկուած պատիժ մ'էր այն մահացու մեղաց՝ զոր
 դործած էր Սբբայ Թիւլիոյի վարդապետութեանց պաշտպան
 հանդիսանալով : Մոլեռանդ պառաւներն ու վերացեալ կրօ-
 նամուլ երիտասարդուհիներն բնականաբար դատեցին թէ Ստու-
 ուած աղէկ ըրած էր , և այն վայրկենէն Թ . ի մէջ Թիւլիոյի
 անունը , դրեթէ իբր Լուտերի կամ Սատանի անունը , հնչուե-
 ցաւ ականջաց :

Բայց լուսամիտ դասը այնպէս չէր խորհէր : Նորա մէջ
 Աարդինալը մեծ համակրութիւններ ունէր : Թէ և իւր՝ ար-
 տաքին ցոյցերու և արարողութեանց մասին ունեցած սէրը
 հաճոյ չ'էր թուեր սոյն դասին , սակայն անոր բնազդումներն
 կը գուշակէին : Արտեսնէին որ պաշտօնապէս ամեն եպիսկո-
 պոսաց նման կը խօսէր , բայց գիտէին նաև որ իւր ծիրանե-
 դոյն վերարկուին ներքեւ ուղղախոհ և լուսաւոր միտք մը կայր
 ծածկեալ :

Յաւակցական այցելութիւնքն սկսան բոլոր քաղաքին մէջ :
 Օրիորդ տը Ֆլամարէնի և Սբբայ Աակէլի տունը գացողները
 խորին վշտակրութեան սովորական տաղտուկ խօսքերը կը
 տանէին ի միասին . իսկ Թիւլիոյի եկողները մեծ խմացակա-
 նութիւն մը ողջունելու և այս ա'յսքան անակնկալ ու յեղակարծ
 մահուան մանրամասն պատմութիւնը անոր բերնէն լսելու տեն-
 չով կուգային :

Թիւլիո մի քանի մտերմաց դրեթէ բառ առ բառ կրկնեց
 Աարդինալին կրօնական կտակը : Իւր բարեկամը Աէռալօն ,
 որ զարմանալի յիշողութիւն մ'ունէր , ի դիր առաւ այս կը-
 տակը յետ երկարատեւ խօսակցութեան մը՝ յորում Թիւլիո ,

ողեւորեալ, սքանչելի լեզուով արտայայտած էր ծերունայն վերջին գաղափարները :

Թողուց որ ուրիշ բարեկամներ ալ օրինակեն զայն . և , դեռ ութ օր չանցած , բոլոր քաղաքին մէջ շրջաբերեցաւ այս հետաքրքրաշարժ գիրը՝ որու թ . ի « Եկէ » օրագիրն իսկ քանի մը տողով ակնարկութիւն ըրաւ :

Քեռ երկու օրինակ չէր տարածուած՝ երբ ժէզուիթաց ռատիկանութիւնը անոր ընդօրինակեալը Քաւառակալ վերապատուելի Հօր ձեռքը հասոյց : Ասի , մօլեդին , մեծ ժողով մը կազմեց , դողդոջուն ձայնով մը կարգաց պարտաւազիրը , և եօթը ծերունեաց դառնալով ,

— Ինչ է ձեր կարծիքը :

— Ասի երիտասարդ այսահարին քօտմնելի հնարքն է : Մենք կը ճանչեմք Աարդինալը . այս թշնամանիչ սլարտաւազրոյն դէմ բողոք բառնալ հարկ է բարձրաբարբառ , և , եթէ հարկ է , նոյն իսկ դատաւտանական ատեններու առջեւ :

— Զգուշութիւն , ըսաւ Հայր մը . Աարդինալին կրօնական կտակին ընդօրինակութիւնքն՝ որք անստորագիր ձեռքէ ձեռք կը պտտին ու տպագրութեամբ հրատարակելած չեն , չեն կրնար Սբբայ Թիւլիօյի դէմ յանցանք մը ապացուցանել : Եթէ , ինչպէս այս գրութեան մէկ կէտը դիտաւորութիւն կը յայտնէ , հրատարակելն է , այն ատեն կարծիք կը յայտնեմ որ հեղինակը իբր թշնամանիչ դատի հրաւիրուի :

Այս դիտողութիւնը արդարացի երեցաւ եօթն ծերունեաց , երեք օր վերջը , « Աա Մարըմօնա գաթօլիք » անուն լրագիրը հետագայ յօդուածը կը հրատարակէր .

« Թ . Էն կը գրեն մեզ .

« Աարդինալ տը Գլամարէնի մահը ընդհանուր արարութեան և ցաւոյ առիթ եղաւ : Մեծահանդէս յուղարկաւորութիւն մը կատարուեցաւ հանդուցելոյն : Բոլոր կղերական դատը ներկայ էր սոյն արարողութեան՝ յորում բովանդակ ժողովուրդը վախճանեալ եկեղեցականին խորին յարգանաց և ակնած . լթաան մը վերջին հաւատարիքը կը մատուցանէր :

Արժ . Արքայ Ասիէլ, կանոնիկոսական ընդհանուր տեղակալ , խիստ պերճախօս ու վսեմ դամբանակուն Բարտասանեց , որ ընդհանուրին զարմանքը գրաւեց :

« Աարդինալ տը Ֆլամարէն , իր առ սուրբ աթոռն ունեցած անձնուիրութեամբն ու սուրբ վարդապետութեանց անթերի հետևողութեամբը , անարատ և անստղտանելի համբաւ մը թողած է ի յիշատակ :

« Գծբախտաբար , « Աարդինալ տը Ֆլամարէնի կրօնական կտակը , անուան տակ դադտադողի ու զագիր գրութիւն մը Թ . ի մէջ կը շրջաբերի : Բայ ի այն թշնամանքներէն՝ զորքս այս սլարտաւագիրը կը պարունակէ հոյակապ ընկերութեան մը դէմ՝ զոր իւր առաքինութիւնքը , գիտութիւնն ու Նկեղեցւոյ Պլխոյն ունեցած հաւատարիմ հպատակութիւնը Աթոլիկ Նկեղեցւոյ յառաջապահն ըրած են , պատկառելի Աարդինալին այնպիսի անհեթեթ և իւր բովանդակ կենաց մէջ յայտնածներէն ա՛յնչափ տարբեր դադափարներ կ'ընծայէ , որ և ո՛չ մի ողջախոհ անձ պիտի ուզէ այս զրպարտիչ հրատարակութեան ստուգութեանը հաւատալ : Բայց ազատականք և կրօնից ռխերիմք ասոր մեծ կարևորութիւն կուտան , ու մեծ աղմուկ կը հանեն : Ար հաւատեն թէ անոնք արդարեւ ոգեւլար ծերունւոյն յետին խօսքերն են և թէ զանոնք ոգին աւանդելէն յառաջ ունեցած մտաց հանդարտութեան լուսաւոր վայրկեաններուն մէջ յայտնած է : Աերջին ծայր պարզամիտ և դիւրահաւան մէկն ըլլալու է՝ սոյնօրինակ առասպել մ'իրը ճշմարիտ ընդունելու համար :

« Արտուի թէ սոյն կարծեցեալ « կրօնական կտակին , հեղինակը նորատիքահանայ մ'է , զոր Աարդինալը բարեւորութեամբ իւր քովն առեր , և որուն այս շնորհը խելքը գլխէն թռուցեր է :

« Ասպատուի որ ընդհուպ վիճակային վարչութիւնը աղու միջոցներ ձեռք առնու սոյն գրութեան գայթակղեցուցիչ հրատարակութեան դէմ և արժանաւոր հատուցումն ընէ

այս մեղապարտ խարդաւանութեան հեղինակին : ,,

“ Վասն քաղուածոյն

“ ԱՄՊԻՇ ”

Ղիւրին իմն է մակարեբել թէ որպիսի գրչէ ելած էր “ Վա Մաբրմօնտի ” յօդուածը :

Թ . ի մէջ մեծ աղմուկ հանեց , և “ Էթուալ Լանկրտօսիէն , ” անուն թերթը , որ Ֆէզուիթաց ազդեցութեան ներքեւ էր , փութաց հիւրընկալել զայն իւր էջերուն մէջ : Յաւելցուց նաև յայն ոչինչ նուազ նենգամիտ մեկնութիւն մը , և արդէն կըրնար ամեն ոք նախատեսել որ Ֆէզուիթական կուսակցութիւնը իւր բոլոր ճիգը պիտի թափէր զՖիւլիօ ամօթալից կերպով վտարել տալու , եթէ ո՛չ Թ . ի վիճակէն , դէթ այն նախանձելի պաշտօնէն՝ յոր կոչած էր զայն Աարդինալը :

Արօնական թերթերուն այս յարձակմանց հետեւեալ օրէն , արքեպիսկոպոսարանի մէջ ամեն դէմքեր հետզհետէ ցրտացան Ֆիւլիօյի համար : ‘Նոքա՛ որք երբեմն զինքը փաղաքշած էին , և , նոցա դուրսը , մայր-եկեղեցւոյն յարդոյ Աւագերէցը , նորա անկումը կանխատեսելով , ա՛լ բռնազբօսեալ դէմքով մը միայն անոր կը մօտէին , և երբեմն կեղծաւորութեամբ կը փախչէին իսկ անկէ : Աանոնիկոսաց ժողովոյն քուէներովն հպարտ և իրօք արքեպիսկոպոս , Ս.բբայ Աակէլ , որուն Յրիորդ տը Ֆլամարէնի հետ դաւակցիլը տեսանք , քարտուղարը ճամբելու կը վախէր՝ հակառակ պառաւաղիկան թելադրութեանց , Քաջ դիտէր թէ խիտ հաճոյական բան մ՛ըրած պիտի ըլլար Ֆէզուիթաց և “ Վա Մաբրմօնտ Վաթօլիք , ” ի կուսակցաց՝ որք բաւական բազմաթիւ էին Թ . ի մէջ : Բայց վարչական գործոց մէջ անցուցած երկայն տարիներն երբէք յախուռն կերպով չ՛գործելու ունակութեանը զինքը տէր ըրած էին : Ուստի կուզէր մեղմով իմն վճարել գործը , և , թէ և սաստկապէս կը փափաքէր ազատիլ այնպիսի անձէ մը՝ որ միշտ զինքը նսեմացուցած էր , կը զօպէր սակայն նոյն իսկ իւր ատելութիւնքը , տիկին կանոնիկոսուհւոյն անհամբե-

բուժիւնքը կը մեղմէր, և կ'ըսէր իւրովի թէ հարկ էր խուն
ինչ սպասել, վստահ ըլլալով որ Փիւլիօ ինքնին իւր անցեա-
լովը, իւր նկարագրովը և Աարդինալին մահուան մէջ խա-
ղացած դերովն քիչ ատենէն իւր պաշտօնանկութեանը պատ-
ճառանք մը պիտի տար:

Ասպասէին մանաւանդ անուանի « կոակին», հրատարա-
կութեանը, որու վրայ, շնորհիւ « Մարմնօնտի», դարձած
էր կրօնական աշխարհին ուշադրութիւնը և զորմէ Հռոմն ու
« Ենտէքս», ի Սուրբ-Միաբանութիւնն իսկ սկսած էին մտածել:

Սոյն տետրը ստուգիւ ընդ հուպ պիտի դար յերեւան:
Փիւլիօ, Ա. Էռտլօնի՝ իւր բարեկամին օժանդակութեամբ, վեր-
ջին ձեւը տուած էր այս եզակի գրութիւն՝ որ Հռոմէական
եկեղեցւոյ արքեպիսկոպոս մը և Աարդինալ մը նորակրօն մը
կ'ընէր: Փիւլիօ ձեռագիրը Բարիդի հռչակաւոր հրատարա-
կիչներէն միոյն զրկեց, որ Գեր. տը Ֆլամարէնի սոյն գոր-
ծոյն անսահման ծաւալում մը պիտի տար:

Ա. Էռտլօն և Ս. Բրայն, չունենալով ինչ շահ ծածկելու ինչ
որ սոյն հրատարակութեան կը վերաբերէր, իմացուցին իւր-
եանց բարեկամաց թէ խիստ քիչ օրէն գրքոյկը պիտի սկսէր
ծախուիլ և յառաջագոյն իրենց խնդութիւնը յայտնեցին միմ-
եանց նոյնին ընելիք ներգործութեան համար: Թ. ի « Եկլ»,
ըրազիրը աւելի հեռուն գնաց, և, սատակապէս հասարակաց
հետաքրքրութիւնը դրդուելու համար, յայտարարեց թէ սոյն
կարեւոր գործոյն հրատարակութիւնը պիտի կրնար նորոգել
այն ջերմ վիճաբանութիւնքը՝ որոց տեղի տուած էր երբեմն
մեծանուն Աամրնէի « Բանք հաւատացելոյ ուրուք», ը: « Եկլ» ի
յօդուածը Թ. ի մէջ ստոյգ փոթորիկ մը յարոյց: Աշխար-
հային մարդոցմէ անոնք՝ զորս դիւթած էր Ս. Եթիէնի ամ-
պիոնին բարձրէն նորատի քահանային պերճախօսութիւնը,
նորա բարեկարգչական գաղափարաց համար իրենց բոլոր
համակրութիւնքը բացարձակօրէն կը յայտնէին: Փիւլիօյի
իրապէս արտաքոյ կարգի պերճախօսական տաղանդին հա-
մար իրենց զղացած զարմանաց հետ կը միանար նաև հայ-

բենասիրական զգացումը՝ որ այնքան զօրաւոր է Հարաւոյ մէջ :
 Քիւլիօ երկրին զաւակն էր . Թ . ի փառքերէն մին էր այն :
 Պէտք էր ուրեմն պաշտպանել զայս փառքը . և այն լուսեղէն
 պսակը՝ որ երկտասարդ քահանային անուան շուրջը կը բոլո-
 րէր , գողցես իմն , կ'ընդ արձակուէր բովանդակ քաղքին վը-
 րայ՝ որ արդէն յինքեան , կը զուրցուէր ուսեալ և զխանական
 դասերուն մէջ , այնքան մեծանուն մարդիկ կը պարունակէր ,
 նշանաւորք՝ մարդկային հմտութեանց բոլոր ճիւղերուն մէջ :
 Լա Մարքմօնտի և Ֆէզուիթաց համախոհ մտք տեսակ մը
 մտկեղնութիւն զգաց : Հարաւական ուղեւորները դիւրաբարբոք
 են . և երբ կը տեսնեն թէ Աստուած չ'կրնալով զիւր անձը
 պաշտպանել՝ քիչ մը մտկեռանդութեամբ անոր յօգնութիւն
 դիմել հարկ է , անհնար է զւսել այս մտկեկրօն մարդոց կա-
 տաղութիւնը , որոց վաղազրդ իս ողին կը սիրէ ընկերին դէմ
 ատելութիւն և հեռ ժայթքել՝ առ Աստուած իրենց սէրը յայտ-
 նելու համար :

Զատկի օրերը կը մտաէին : Շատ ատեն կար , խիստ շատ
 ատեն որ դեղանին Առիկ չէր գայած զՀայր Պրիֆար դրա-
 նելու : Աւր հողեւոր Հօր շահադ խաական ու անյաջող ճառէն
 աժդոհ , նայնին իրեն աղղամ զայրոյթը՝ ուղած էր թողուլ
 որ հանդարտի : Նախ մէկ մեծ ամիս մ'անցած էր . և , երբ
 Հայր Պրիֆար իւր միտքը խնկու , ուրիշ տաղնապ մը զին-
 քը պաշարեց . մանրաքնին պիտի հարցափորձուէր , չորս եր-
 կայն շաքաթներ խոստովանարանի մէջ առանց սօք կոխելու
 անցընելուն պատճառները պիտի հարցուէր , և գուցէ գեղե-
 ցիկս պիտի կշտամբուէր : Այս վերջին մտածութիւնը իւր
 բոլոր քաջութիւնը սպառեց : Ուրիշ ամիս մ'ալ սահեցաւ :
 Արդեւքը մեծցած էր , և ա'լ ուրիշ կերպով կարելի չէր ներ-
 կայանալ այս սոսկալի Հօր առջև , բայց եթէ իբր զղձացեալ
 Մաղթաղինէ մը՝ որ գայր իւր աշխարհի մէջ կորսուած ըլ-
 լալը խոստովանելու և արտասուօք խիստ ապաշխարութիւն
 մը խնդրելու :

Զամեն ինչ քսած ըլլալու համար՝ ըսե'նք թէ արդարեւ

Իւր խղճին վրայ բան մ'ունէր : Բաղմիցս իւր եղբօրը սենեկին մէջ պատահած էր Օկիւսթ Ա. Էստրօնի՝ որ, ալ աշխարհի մարդ եղած, ուրիշ կերպ սիրելի ու հրապուրիչ էր քան այն տխրութեան օրերը ի Աա-Վլավիէն, յորս՝ իւր կոչման ու աշխարհի մէջ տեղը տատանախաղ՝ մտածութիւն մը, հայեացք մը յանցանք կը համարէր իւր անձին : Թիւլիօ, միամիտ ու սրբալինչպէս ամեն հանճարեղ մարդիկ, չէր կրնար կասկածիլ անդ ամ որ իւր Աուիզին սիրտը կարող ըլլայ այս աշխարհի մէջ իւր եղբօրմէն ուրիշ մէկու յարկ : Արքան համետ, փափկասիրտ ու անբիծ կը ճանչէինք զԱուիզ, տակայն և այնպէս Աւայի դուստր էր : Իւր հայեցուածքը կրցած էր ամեն զրէն պատիլ այն ականաւոր մարդոց վրայ՝ որք, մասնաւորապէս Սէնթ-Վիթիէնի նշանաւոր քարոզէն ի վեր, պատիւ կը համարէին իրենց առ Թիւլիօ յաճախել : Սակայն կար մէկն ի նոսա՝ որոյ պատկերը միշտ իւր աչաց առջև կը նկարուէր, և այն դադանի խօսակցութեանց մէջ՝ զորս երիտասարդուհի մ'ունի յակամայիցս իւր սրտին հետ, Օկիւսթ Ա. Էստրօն անունը յարած ամ կը ներկայանայր իւր մտաց, և Աուիզ, թէ և միայնակ ամենեկին բաց իւր խղճմտանքին ներկայութենէն, շառագունանքի մը իւր գէճքը պատելը կ'զգայր :

Ծերունի հօրաքոյրը, միշտ ներող և բարեսիրտ, գուշակելով թերևս Աուիզի Հայր Պրիֆարի՝ իւր բռնաւորին նկատմամբ զգացած օրինաւոր հակակրօթիւնքը, և ցաւելով ինքնին անկէ ապտամբելու քաջութիւնը՝ չ'ունենալուն, ինչպէս որ իւր եղբօր աղջկան յորս ամիսէ ի վեր այնպէս ըրած ըլլալը կը կասկածէր, Հայր Պրիֆարի անունն անգամ չ'արտաբերեց և խօստովանութեան խօսք անդ ամ չ'ըրաւ : Հետեւեալ բանակցութիւնը տեղի կ'ունենար իւրաքանչիւր շաբաթ .

— Հաւատաքննութեան մատուռը կ'երթամ :

— Խիտ լաւ, տիկին հօրաքոյր. ձեզ հետ ընկերանալուս պէտք ունի՞ք :

Արբակեաց կինը հասկցած էր :

— Ա՛յ, սիրելի աղջիկս, Մատրլօն քաւական է :

Սակայն մեծ հնդեասասանեկին մտենալուն, տիւրին Տըլա-
Պլավիէր սկսաւ մտածել: Մէկէ աւելի անդամներ բերանը
բանալու եղաւ ըսելու համար սիրուն Օրիորդին թէ վերջա-
պէս հարկ էր զատկական սլարտականութեանց վրայ խորհիլ:
Ազնիւ ընտանիքէ ծնած և ցայն վայր բարեպաշտական սովո-
րութիւններ ունեցող երիտասարդուհւոյ մը զատկական խոս-
տովանութիւնը չ'ընելը՝ Թ. ի մէջ հրապարակելէր թէ առ-
նուադն երկու տարիածու ունի: Եւ սիրուն հրեշտակը ստու-
ղիւ խիստ շատ պիտի գրպարտուէր: Բայց դաւառի քաղա-
քաց մէջ կարծեաց ազդեցութիւնը ա'յնքան հզօր է որ ստիպ-
ուած է մարդ կրօնական կենաց ինչ ինչ հրապարակական սլար-
տաւորութիւնքը կատարել, հաւատալով կամ առանց հաւա-
տալու, ի բարեպաշտութենէ դրդեալ կամ գաղտնի պատ-
ճառներով զանոնք զանց ըրած: Հասարակութիւնը, ի կրօ-
նականս, ինչպէս ուրիշ շատ իրերու մէջ, մեր անողոք բռնա-
ւորն է:

Յաւելցնե'նք թէ Հայր Պրիֆար, որ բարակ քիթ ունէր,
շատ անգամ զտիկին ՏըլաՊլավիէր Մատէթի հետ իւր
խոստովանարանը տեսնելով՝ առանց Լուիզ, զոր այնքան խը-
նամով փայտիայած էր և որուն ա'յնքան գորովական անուններ
տուած էր, գէ'թ անգամ մ'երեւելու, ի միտ առաւ պար-
զապէս որ իւր անտիական ապաշխարուհւոյն վրայ փոփոխու-
թիւն մը տեղի ունեցեր և թէ երկար ատեն իւր վիզը կրած
լուծը թօթափած էր: Ըսաւ իւրովի թէ ա'լ անոր կրօնաւո-
րուհի մ'ըլլալուն յուսալը անօգուտ էր, թէ Սատան յաղ-
թանակած էր, և թէ, եթէ զայն վերստին ձեռք անցընելու
բարեբախտութիւնն ունենար, ուրիշ ընթացք պէտք էր բրո-
նել, չէ թէ զայն յառաքինութիւն ածելու համար՝ յորմէ վայր-
կեան մը չէր շեղած, այլ այնպէս մ'ընելու որ նա՛ արդելք
մը չկարենայ ըլլալ ա'յնքան ճարտարութեամբ ի դլուխ ելած
գրաւման գործին: Պահ մը մտածեց թէ գուցէ Թիւլիօ աշ-
խատած ըլլայ իւր քոյրը Թէզուիթաց հոգեւոր տեսչութե-
նէն կորզելու: Բայց մերժեց այս գաղափարը Թիւլիօյի նման

« իւթօրիւթ, ներ, երազողներ անյաքան մանր իրաց չեն իջ-
 ներ և փոքր վրէժխնդրութեանց չեն հետամտեր : Աաւ կը
 դատէր զՍ.բբայն : Տիկին Տը-լա Պլավիէրի Աուիզի նկատմամբ
 հարցումներ ընելէ զդուշացած էր : Չատկի առթին կ'սպասէր :
 Այն ատեն որոշապէս պիտի դիտնար թէ իւր մոլորեալ գառ-
 նուկը Սատանին երախին մէջն էր, թէ աշխարհային ճանա-
 պարհաց փուշերէն վիրաւորուելէ յետոյ՝ մայելով ու ողբազին
 պիտի դար խնդրելու բարի Հայրէն որ զինքն իւր ծոցին մէջ
 տաքցնէ :

Յաղկազարդին շաբաթ օրը տիկին Տը-լա Պլավիէր ըսաւ
 Աուիզի :

— Սիրելիդ իմ դուստր, ինքզինքս խիստ տկար կ'զգամ :
 Ար բաղձամ վաղը զատկական հաղորդութիւնս առնել : Պուցէ
 վերջինն ըլլայ : Չօրութիւնքս կ'սպառին : Չքեզ անգամ մ'ալ
 սուրբ սեղանին առջեւ իմ քուլս տեսնելու երջանկութիւնը
 չ'պիտի տաս ինձ :

Եւ այս անբիծ՝ այլ տկար կնոջ աչերը արտասուօք լցան :

— Անտարակոյս, սիրելի հօրաքոյրս, ձեզ հետ պիտի
 ընկերանամ Հաւատաքննութեան մատուռը :



Բ .

ԴԱՐՉԵԱՆ, ՀԱՅՐ ՊՐԻՖԱՐ

Անբացատրելի երկիւղներ տիրած էին Աուիզի սրտին :
 Նա բնականաբար կ'սպասէր կծու յանդիմանութեանց, շան-
 թահարիչ սպառնալեաց՝ զորս կը դորձած են խոստովանահարք
 երբեմն յաջողութեամբ, հողիները ահաբեկելու և զանոնք
 մեղանշական մոլորումներէ յետոս դարձնելու համար : Գողգո-
 ջուն, այլ յայլմէ, երկարեց տակաւին իւր օրհասական տաղ-
 նապը՝ աղաչելով զՄատլէթ որ իբմէ յառաջ խոստովանատե-

զին մանկ : Ար սրեմն երբ ահաւոր վայրկեանը եկաւ , զարն
հուրադին , խառվայցող , գրեթէ նման այն մահապարտից՝ որք
դէլիատու թեան բեմին աստիճաններէն վեր կեննեն , ի ծու-
նըր կնկաւ Հայրին քով , հեծկլախն մը խեղդելով և յորդա-
հոս արտասօք սրբելով :

— Օրհնեցէ՛ք զիս , Հայր իմ :

Եւ երկայն հառաչ մը , հառաչ մը սրտապատառ՝ զոր և
ոչ մի զօրութիւն կամաց չկրցաւ դսպել , դուրս թռաւ ա-
պաշխարու հւոյն բեկեալ հողիէն :

— Գա՛ւ ես , դուստրդ իմ . կը ճանչեմ զքեզ : Ասէ՛ քու բը-
լըր յանցանքներդ :

Այս խօսքերն այնպիսի կատարեալ քաղցրութեամբ ու
կամակար հանդարտութեամբ մ'արտասանուեցան , որ հէք
օրիօրդը կրկին ողի առաւ , և խոստովանեցաւ այն սովորա-
կան յանցանքները , այն միշտ նայնը եղող մեղքերը՝ որք սովո-
րական խոստովանութիւնը կը կազմեն այս քաղցր բնութեանց՝
յորս դեռ չէ սպրդած հողին ծանր ջարիք մը դործելու կամ
յայնս հաճոյք մ'զգալու դրդող վորձութիւններէն և ոչ մին .
թէ՛պէս կին և հեռեւարար իւր խղճմտանաց համարը կարի
մանրամանարար տուող , ի վերայ այսր՝ ամենայնի Առիկիւր
վորքը մեղքերը պատմելու մէջ երկայնարան չ'եղաւ : Եւր սըր-
տին մէջ զգացած նորոգ տպաւորութեանց մասին զգուշա-
ւոր լռութիւն մը պահեց : Կատարորի մ'առջեւ կը դանը-
ւէր . ոչ առ հայր և ո՛չ առ բարեկամ ոք կը խօսէր : Ամնցուց
այսպէս .

— Աւրիչ բան չեմ յիշեր , Հայր իմ :

— Խիստ լաւ , դուստրդ իմ : Առզե՞ս դատկական հազոր-
դութիւնն ընդունիլ :

— Այո , Հայր իմ , եթէ զիս արժանի դատէք :

— Լաւ , դուստրդ իմ :

Եւ , աւանց այս ու նախորդ խոստովանութեան մէջ աե-
ղը անցած երկար միջոցին նկատմամբ ամենափոքր ակնար-
կա թեան մը , ուղղեց անոր մին այն տարրամ խրատարա-

նութիւններէն զոր կրնար ամենէն օտար ապաշխարուհւոյ մ'ալ ընել, և յորում կշտամբանայ նշմարէ մ'անդամ ինամով զգուշացաւ, և յետոյ ըսաւ .

— Արդ արձակեմ զքեզ,

Արձակման խօսքերէն վերջը, յաւելցուց .

— Գուտարդ իմ, քու խոստովանութիւնդ լսեցի : Առի՛ Աստուծոյ և քու մէջդ գործ մ'է : Հիմայ քու վրայ ունեցած բարեկամութիւնս, որուն կ'ուզէի որ միշտ յարդ տայիր, կ'ըստիպէ դիս քու ապագայ երջանկութեանդ համար մեծ կարեւորութիւն ունեցող խորհուրդ մը տալ քեզ : Քու հօրաքոյրըդ խիստ ծերացած է . վայրկեանէ վայրկեան կրնայ ի կենաց զրաւիլ : Միայն մէկ ազգական, քո և զբայրն ունիս : Ար յուսամ թէ կը սիրէ զքեզ, և քեզ պարտ է անոր վրայ իշխողութիւն մ'ունենալ : Մտիկ ըրէ անվրդով ինչ որ քեզ պիտի ըսեմ : Եզբայրդ անգունդի մը եզերքը կը դանուի : Ըրագիրներէն իմացանք որ քիչ օրէն ամպարիշտ դրքոյկ մը պիտի հրատարակէ, զոր Ն . Սրբազնութեան հոգեւոյս Աարդինալին ընծայելու անպատկառութիւնն ունի : Այս գիրքը նախ և առաջ յոսի գործ մ'է, յետոյ սարսափելի անխոհեմութիւն մը : Աչ կանոնիկոսական ընդհանուր-տեղակալները, ո՛չ ապագայ արքեպիսկոպոսը չ'պիտի ներեն որ երիտասարդ քահանայ մը համարձակի պատկառելի եկեղեցականին, որուն ուղղահաւատութիւնը քաջածանօթ էր, անուանք ընծայել անհեթեթ գաղափարաց շար մը՝ որք սոյն փոքր՝ այլ սոսկալի պարսաւադրոյն մէջ առատօրէն զետեղուած են, կ'ըսուի :

Արտուի նաև թէ ձեռագիրը արդէն ի Բարիզ ճամբայ ելած է և թէ մեծ հրապարակայնութիւն մը պիտի ստանայ շնորհիւ այն գայթակղութեան գործիք զրավաճառաց՝ որք ամենուրեք կը ծաւալեն Աստուծոյ և իւր Սկեղեցւոյն դէմ ամպարչտողաց զրքերը :

Գեռ յամանակ է, կրնաս քու եզբայրդ փրկել : Զինքը քահանայադործութենէ զազրեցնելու խորհուրդ մը կայ :

Բարեսիրտ Արժ . Աբբայ Աակէլ , առ դթութեան , առ ար-
 դահատանաց այսքան նորառի քահանայի մը համար , դեռ
 կը վարանի : Բայց երբ դիրքը յերեան դայ , հասարակաց
 կարծիքէն պիտի ստիպուի , անշուշտ ի մեծ ցաւ իւր , յան-
 ցաւորը պատուհասելու : Պնա՛ , այսօրուքնէ եղբայրդ դաիր :
 Զինքը համոզելու համար ըրէ՛ ամեն ինչ որ կարելին է :
 Թո՛ղ ետ առնէ այդ դրքոյկը տպադրչին ձեռքէն : Թո՛ղ
 զայն հրատարակելու դիտարութենէն բացարձակապէս ետ
 կենայ : Թո՛ղ խանարհ ու եկեղեցականի վայելուչ կեանք մը
 վարել , յառաջադրէ : Թո՛ղ երթայ առ Արժ . Աակէլ , որ վի-
 ճակին ամեն քահանայից համար ա՛յնքան հայրադութ է , և
 ապահովութիւն տայ անոր որ իւր կեանքը պիտի վսխէ և
 պիտի դառնայ միւսանդամ այն իմաստուն դազափարաց՝ զորս
 թողելու դժբախտութիւնն ունեցաւ : Ըսէ իրեն թէ յայնժամ
 ամեն բան պիտի մոռցուի : Այն բարեպաշտ ոգիներն՝ զորս իւր
 վարմունքն ու վարդապետութիւնքը դայթակղեցուցին , իր
 այս յետս կոչմամբը նորէն իրենց հաւատոց մէջ պիտի հաստատ-
 ուին , նորեկ արքեպիսկոպոսին ներողամտութիւնը պիտի ըս-
 տանայ , և այս կերպով պիտի զերծանի այն ամօթալից խայ-
 տառականքէն ու վշտերէն՝ յարակից ապօտամբութեան մը ,
 զոր իշխանութիւնը կը հարուածէ միշտ անողոր ազդուու-
 թեամբ մը , ահաբեկելու համար զանսաստութիւնն ու ամ-
 բարտաւանութիւնը :

Անդամ մ'ալ , փրկէ եղբայրդ : Թո՛ղ լաւ դիմնայ , եթէ
 դիրքը հրատարակուի , կորսուած է : Այրկեան մը վարանել
 պէտք չէ . թո՛ղ ետ առնէ դիրքը . թո՛ղ յետս կոչումն և
 հպատակութեան ուխտ ընէ :

Բարեա՛ւ երթ , դուստրդ իմ : Ար տեսնես որ դքեզ մու-
 ցած չէի , և թէ կը խորհէի հեռացնել քենէ թշուառու-
 թեանց ամենէն սոսկալին , ընտանեացդ ամօթը և արդիլեալ
 եկեղեցականի մ'անուան յարակից յաւիտենական նախա-
 տինքը : Սուրբ սեղանին մօտեցած ատենդ՝ զօրութիւն և ա-
 ըխութիւն խնդրէ յԱստուծոյ : Ես ալ իմ կողմէս պիտի ա-

դօթեմ այս մուրրեալ հէք քահանային համար : Մեր բոլոր հայրերն ալ , որք զինքն այնքան կը սիրեն , պիտի աղօթեն իւր համար : Բարեալ երթ , վրկէ՛ չուառ եղբայրդ :

Եւ մթին խոստովանարանին դռնակը դոցուեցաւ :

— Ո՛վ Աստուած իմ , ի՞նչ վշտերու պահեր ես զիս :

Այս եղաւ անպատմելի տառապանքի մը մէջ անդնդասոյդ Աուիզի միակ աղօթքը :

Բարեբախտաբար տիկին Տը-լա Չլավիէր և Մատէթ մեկնած էին : Առանց վայրկեան կորսնելու սաքի ելաւ , և , յարքեպիսկոպոսարան տանող փողոցներէն արագաքայլ անցնելով , իւր եղբօրը գնաց այն վայրկենին՝ յորում նա , մայր-եկեղեցիէն դարձած , իւր համեստ նախաճաշը պիտի ընէր :

Աուիզի դէմքն այլայլած էր : Բեր մեծ աչերը , միշտ վըճիտ և քաղցր , բայց այժմ թաղծալից և արտաքով նսեմացած , շիջալոյս կը թուէին : Բեր դեղնութիւնը , դէմքին ջղաճղական շարժումները խորին յուզման մը նշաններն էին :

— Արդեօք հօրաքոյրս մեռաւ :

— Ո՛չ , եղբայր :

— Լաւ , ահա շունչ կ'առնում : Բայց ի՞նչ թշուառութիւն կուգաս ինձ գուժել :

Հոս Աուիզ իւր զօրութիւնները ժողվեց , և ըստ կարի հաւատարմաբար պատմեց ինչ որ Հայր Պրիֆար իրեն ըսած էր :

Թէ և համոզուած էր որ իւր եղբայրը ժէզուիթաց ատելութեան ենթակայ էր , կ'զգար սակայն որ Հայր Պրիֆար իրաւացի էր , և թէ արդիւեալ եկեղեցականի այս սոսկալի անուանարկութիւնը այն նշանաւոր կտակին հրատարակութեան անխուսափելի հետեանքն էր :

Աղերսեց առ Տիւրիօ , յանուն ամենայնի՛ զոր ունէր՝ սիրելազոյն յերկրի , յանուն այն եղբայրագործի եռանդնաւառ սիրոյն՝ զոր իրեն ցցուցած էր , յանուն ամենաքաղցր յիշատակաց իրենց մանկութեան , յանուն իւրեանց հօրաքեռ՝ որուն

կը պարտէին իրենց դատարարական երախտիքը, և զոր այս աղէտը տարածամի դերեզման պիտի լիցնէր: Անոր աչաց առջեւ ներկայացուց բոլոր այն վշտերը՝ որովք իւր կեանքը պիտի թունաւորէր, այն օրէն՝ յորում կռուի պիտի մտնէր ինքզինքն անողորբելի հրատարակող իշխանութեան մը հետ, որոյ խառնութիւններէն զերծ անելոյ չիք հնար:

Մի քանի ամիս քահանայութիւն ընելէ յետոյ, կրկին յաշխարհ մտնել, իւր պաշտօնակցաց ատելի և յայս հաւատացեալ ողւոյ պժղանաց առարկայ մ'ըլլալ, ի՛նչ ապագայ և աւասիկ այս էր իւր սիրելի Թիւլիօյին ապագայն:

Ղուիզ պերճախօս եղած էր:

Թիւլիօ սլատասխանեց թէ այս փաստերուն բովանդակ զօրութիւնը կը հասկնար, և թէ, եթէ իւր սրտին մտիկ ընէր, պիտի փութար կատարելապէս զինդը դո՛հ ընել, ձեռագիրը տպագրութենէն յետո առնելով և իշխանական մարմընէն ներումն խնդրելով:

Բայց, վրայ բերաւ, որբաղան խոտում մ'ըրած եմ. չեմ կրնար խոտմնադրուծ ըլլալ: Պիտեմ թէ քահանայական աշխարհին մէջ քանի՛ անողոր են սրտերը: Բայց չեմ կրնար, առանց խղճմտանացս առջեւ ինքզինքս նուաստացնելու, առանց բոլոր կենացս մէջ ինձի սոսկալի խայթեր պատրաստելու, ձեռնագրութեանս ուխտէն վերջը ամենէն հանդիսաւոր ուխտիս մէջ անհաւատարիմ դանուիլ: Աերէ՛ ինձ, իմս Ղուիզ զոր այնքան սիրած եմ ու կը սիրեմ, դժա՛ւ ճշտօրդ վրայ: Եւ եթէ ընդ հուպ ա՛լ մի միայն քահանայութեան՝ բարիան, առակ նշաւակին ըլլայ, պահէ՛ իրեն, պատասպարելու համար զինքն այս աշխարհի դէմ որուն այնքան սիրելի է հեռիւնանիլ, քո սրտին ապաստանարանը՝ յորում ոչ ոք պիտի կրնայ զինքն հալածել: Պէ՛թ բուհամարումդ պիտի վայելեմ, և այս միայն, իմ խղճիս հետ, պիտի բաւէ ինձ, եթէ սէրդ իսկ վերանայ յինէն:

Ղուիզ իւր վերջին զէնքերը փորձեց. շատ լացաւ: Թիւլիօ անողորբելի մնաց:

— Աստուծոյ թիւն մի՛ պահանջեր յինէն՝

Թիւլիօ զիւր քոյրը հազար սիրտիւր՝ խօսքերով ու գգուանքներով ջանաց հանդարտել :

— Սիրեցեալդ իմ, քաջասիրտ եղիւր : Մտած է թէ լաւս է ըլլալ զոհերուն և նշաւակելոց հետ՝ որք իրենց ապնուական սիրան ու խիղճը կը պահեն, քան վատերուն և հալածչաց հետ :

Տիկին Տը-լա Պլավիէր կրնար անհանդիստ ըլլալ Առիւթբայակայութեան յերկարելէն : Գծբախտ Օրիորդը փութաց Թօբի փողոցը դառնալու : Իւր եզրայրը զինքն համուել չէր կրցած : Անն զոհողութիւններ՝ զորս կանայք կը հասկնան : Սպարտացի կանայք, իրենց պատերազմի գացող որդւոց ձեռքը վահան մը տալով, կ'ըսէին անոնց . Աստուծոյ կամտակը : Սպարտացի երիտասարդը սպարտական էր կ'ամ յաղթող կամ այս վահանին վրայ բարձեալ դիակետ դառնալ : Աստուծոյ մէջ ընդհանրապէս ընդունուած բան մ'է որ մարդ, թշնամանք մը ջնջելու համար, երթաց անհաւասար մենամարտութեան մը մէջ իւր կեանքը վտանգի ենթարկել : Բայց խոնարհութեան դիւցազնութիւնը՝ զայն հասկնալ չեն կարող : Բրիտոնէութիւնը ու թե տասն դարերէ ի վեր կը կրկնէ նոցա առջև . « Երանի՛ անոնց՝ որք արդարութեան համար կը նեղուին : » Անոնք կը լսեն զայս եկեղեցեաց բեմին բարձրէն, երբեմն սերճախօսօրէն քարոզուած, կը կարգան զայն Աւետարանին մէջ, երբ Աւետարանը կը կարգան, և բարեպաշտական մատենից մէջ : Անգլուիլյանուն արդարութեան, ըմպել Սոկրատայ անարդալից բաժակը, ծռիլ անտրտունջ, Բրիտոնի պէս, խաչի մը տակ . բոլոր ասանք իրենց բանականութեան և սրտին առջիկէն կ'անցնին իբր խեղճական ինչ զորոյ կ'զգան մեծութիւնը, բայց զոր դործնական կեանքի մէջ տեսական բարձր վարդապետութեան մը վիճակին մէջ մնացած կը տեսնեն, դուն ուրեք իրականացած և՛ անոնցմէ՝ որք զայն կը քարոզեն և՛ անոնցմէ՝ որոյ առջև նայն կը քարոզի : Առիւ զդեաներ էր իւր չեզոքը յամուութենէն : Իւր

բոլոր կենաց մէջ ինքզինքը թշուառացնել, թունաւորել միանգամայն և նոցա ևս կեանքը՝ որք զմեզ կը սիրեն և զորոց երջանկութիւնը պարտէինք յարդարել, հնազանդելու համար իւր գաղաղին մէջ պառկած և ա՛լ մարդոց անէծքներէն երկիւղ չունեցող ծերունւոյ մը վերջին կամաց, բոլոր ասոնք յաչս իւր անհուն շախաղանջութիւն Քր, տեսակ մը յիմարութիւն էին :

Երբ իւր հօրաքրոջ սենեակը մտաւ, իւր աչաց մէջ ա՛լ արտասունք մը չ'կար. իւր դիմաց յուզմունքէն հանդարտած էր, և քաղցր ու փափուկ ժպիտը դարձեալ սկսած էր շողալ իւր շրթանց վրայ : Տիկին Տը-լա Պլավիէր չ'կրցաւ բան մը կասկածիլ Հաւատաքննութեան մատրան և արքեպիսկոպոսարանին մէջ տեղի ունեցած սոսկալի տեսարաններէն :

Սակայն, Հայր Պրիֆար Թիւլիօյի վրայ այս տուալին փորձը բաւական չէր համարէր : Ասխատեւելով թէ դուցէ քոյրը յամառ ընդդիմութեան մը պատահի, կանչել տուած էր նշանաւոր Թուռնիչոնը, Թէզուիթաց ամենէն գործունեայ ու ճարտար գաղտնի գործակատարը : Անոր յայտնեց իւր պատրաստած յատակագիծը : Երկար ատեն փնտռած էր Թ. ի մէջ թէ որո՛ւ միջոցաւ կարելի էր յամառ Աբբային վրայ ազդու ներգործութիւն մ'ունենալ : Թուռնիչոն Ահաւլօնի և Թիւլիօյի մտերմութիւնը կը ճանչէր : Պիտէր թէ ձեռագիրը երկուց բարեկամաց հաւաքական գործն էր : Պիտէր դեռ ուրիշ շատ բաներ, և, իւր լրտեսներուն մէկէն՝ որ մերթ ընդ մերթ Աուիզի կը պատահէր ընկերութեանց մէջ, իմացած էր որ Թիւլիօյի քոյրը Սկիւսթ Ահաւլօնի կողմէն եռանդնալից հայեցուածոց առարկայ եղած էր յաճախ : Որոշուեցաւ որ Թուռնիչոն Տիկին Տը-լա Պլավիէրի տունը երթայ, և անոր, ինչպէս նաև իւր եղբօր ազնկան, խորհուրդ տայ որ Թիւլիօյի բարեկամն իրենց շահին և անոր ձեռքով զայն ետ կեցնել տան այն սատանայական գրքին հրատարակութենէն, յորում քաջ գիտէին թէ Թէզուիթաց դէմ շանթահարիչ մաս մը կար : Թուռնիչոն և Հայր Պրիֆար, իրարու փոխադարձ հայեցուած

մ'արհակելով որ այսպիսի իրաց երկար փորձառութիւն մը կ'ապացուցանէր, խոստովանեցան իրարու որ, եթէ Օրիորդ Տը-լա Վլավիէրի աչերը այս վերջին փորձին մէջ անյաջող դանուէին, ա'լ թշուառական ժիւլիօյի յամառութեան յաղթելէն պէտք էր հրաժարիլ :

Բայց զտիկին Տը-լա Վլավիէրս Վէառլօնի այսպիսի առաջարկութիւն մ'ընելու հաւանեցնելը դիւրին բան մը չէր : Սա'կայն Թուռնիշոն գործի սկսաւ : Նոյն օրուան իրիկունը Թօրի փողոցը գնաց, և, թղթի սովորական խաղ մը դարձընելէ յառաջ, ինչ որ պառաւ տիկնոջ սիրելի զբօսանքն էր, խօսակցութիւնը ժիւլիօյի վրայ բերաւ : Միտ գովեստիւք խօսեցաւ այս նորատի քահանային տաղանդին վրայօք . խօսեցաւ նաև բարի հարց նորա վրայ ունեցած սիրոյն և գորովանաց նկատմամբ :

— Բայց, ըսաւ իւր յարդելի բարեկամուհւոյն, անկարելի է ինձ ծածկել ձեռնէ այն նողկալի ազդեցութիւնը՝ զոր ըրաւ ողջամիտ մարդոց վրայ այլանդակ հրատարակութիւն մը՝ որուն միակ նպատակը հանգուցեալ Պեր . Աարդինալը արատաւորել է :

Գթուարին չ'եղաւ Թուռնիշոնի ահաբեկել զտիկինը գրքին հրատարակութեան հետեւանաց վրայ : Մեղմով մ'իմացուց թէ ժիւլիօյի քով ամեն փորձ կրնար անյաջող ելք մ'ուներնալ, բաց ի իւր բարեկամին փորձերէն, որ ինքն իսկ այս ցաւալի գործին մէջ նորա գործակիցն էր :

— Իսկ միայն, ազնիւ բարեկամուհիդ իմ, դուք և Օրիորդ Աուիզ միայն կրնաք չուառ տղան ազատել : Ամեն արիութիւն ձեռք առէք . դացէք Պ. Վէառլօնի տունը : Ասի տաղտկացուցիչ է, այնպէս չ'է՞ . բայց ի՞նչ օգուտ : Եւ թէ որ յաջողիք, ի՞նչ երջանկութիւն ձեզ համար, որպիսի՞ տառապանաց ու դձձութեանց հեռացումն այս երիտասարդ քահանային համար, որպիսի գայթակղութեան մը արգիլումը Եկեղեցւոյ մէջէն՝ որ ամեն օր ա'յնքան յարձակումներ կը կըրէ : Սիրելի տիկին, դացէք այս չքնաղ Աուիզի հետ : Մեր

Ժամանակը կանանց բան մը չ'էր մերժուէր : Նրբ մարդ դատ
մը վաստկել կ'ուզէր , կին մը աղերսարկու կը զրկէին դա-
տաւորաց քով : Նրբ խնդիրը սլաշտօնի մը վրայ ըլլար , կնոջ
մը ձեռքով զայն խնդրել կուտային : Ըրէ՛ք զայս , բարեկա-
մուհիդ իմ :

Տիկին Տը-լա Պլավիէր , Թուռնիչոնի պերճարան խօսքե-
րէն համոզուած , խոստացաւ նորա տուած խորհուրդն ի
գործ դնել , խոստովանելով միանդամայն որ ասի խիստ ծանր
պիտի գար իրեն :

— Նաև , գեղանիդ օրիորդ , յաւելցուց Թուռնիչոն ,
պէտք չ'է նաև որ դու ալ երկշոտ ըլլաս : Ատուած իմ , ո՛չ
ասպքէն վախճանն զմիջոցը կ'արդարացնէ : Յուդիթէն ա՛ւ
օրինակ :

Կուիզ շառագնեցաւ գոյգն ինչ :

— Օրիորդ , շարայարեց ծերունի աղուէսը , անշուշտ խըն-
դիրը Պ . Աէաւլօնի զլուխը կտրելուն վրայ չի կայանար .
բայց Ատուծոյ դէմ մեղանշած չ'ըլլար մէկը , կը հասկնաս ,
սիրելի . . . ըլլալով :

Արշուեցաւ որ հետեւեալ օրը , կէս օրէն վերջը , տիկնայք
Տը-լա Պլավիէր այցելութիւն մը պիտի ընէին Պ . Օկիւսթ
Վէաւլօնի :

Բարեսիրտ պառաւը , թէ հասակին տկարութեանը և թէ
երկար տարիներէ հետէ ստացած սովորութեանը պատճա-
ռաւ , մէկը տեսնելու չ'էր երթար : Իւր խոստովանահայրը
զինքը վարժեցուցած էր այս տեսակ մը կամաւոր վանարդե-
լութեան՝ որով ծերունի կինը աղատ կը մնար Թուռնիչոնի
ազդեցութիւնը չափաւորող ուրիշ ո՛ր և է ազդեցութենէ :
Արկին վեհերոտ եղած էր , ինչպէս իւր մանկութեան տարի-
ներուն մէջ : Գեռ Վէաւլօնի ընակած Բեռկամիւնիէն փողո-
ցը հանող ճամբուն կէսը չ'էր ըրած , աղերսարկու ի այցելու-
թիւն մ'ընել երթալու դադափարը իւր քաջութիւնը սարսեց :
Իւր տագնապը Կուիզի յայտնեց : Նա ալ , իւր եղբօր բարե-
կամին համար իւր սրտին մէջ զգացածին հակառակ , իւր

հօրաքրոջմէն առաւել հանդարտ չէր : Մանկամարդ կնոջ փա-
փուկ բնաշղուճ մը կ'ըսէր իրեն թէ պարտաւորութեան մը
տակ կը մտնէ կին մը , երբ երկուստարդ ու իւր սրտին տէր
աշխարհի-մարդ է մը կարեւոր ծառայութիւն մը կը խնդրէ :
Ի վերայ այսր ամենայնի ջանաց զիւր հօրաքոյրը հանդարտե-
ցընել :

— Պ . Վէլստլոն այնքան պարզ է , զձեզ այնքան շուտ
պիտի հանդարտեցնէ , հօրաքոյրդ իմ , որ բնաւ բանէ մը
պէտք չէ որ վախնաք : Չէ՞ք յիշեր որ վերջին պարապոյ օրե-
րուն տասն և հինգ օրի չափ Նա-Պլավիէրի մէջ զինքը տե-
սանք , և շատ անգամ ըսած չէ՞ք ինձ որ զինքը կը սիրէիք
իւր համեստութեան , հասուն մտաց , և ազնուական ու քու-
ղաքավար վարմունքին համար :

— Եր յիշեմ , ըսաւ Տիկին Տը-լա Պլավիէր :

— Համոզուած եմ որ ձեզ հաճոյ ըլլալ պիտի ջանայ , սի-
րելի հօրաքոյր իմ :

— Ատուծոյ և սուրբ Աուսին օգնութիւնը խնդրենք , ը-
սաւ բարեպաշտ կինը , աչերը յերկինս վերցնելով : Կնոջ եր-
ջանկութիւն եթէ կարենայինք փրկել սա սիրելի տղան :

Թիւլիօյի այս անունը կուտար տիկինը :

Յրքան յամր ա'լ քայլած էին երկու կիները , սոյն վայր-
կենիս Վէլստլոնի բնակած տանը դրան առջև հասան : Աու-
իզ զարկաւ դուռը : Սիրտը կը տրոփէր , երբ պառաւ սպա-
սաւորուհի մը եկաւ բանալ և խմայուց այցելուաց որ պարօնը
իւր աշխատութեան սենեկին մէջ էր : Սպասաւորուհին զա-
նօնք վայելուչ կերպով զարդարուած փոքր սրահ մը մտցուց :

Անասելի հետաքննութիւններ կան սրտի մը մէջ որ կը
սիրէ : Սնյադարար աչքէ անցուց շրջանակեալ քանդակներն՝
որոցմով սրահը պնտուած էր և որոց ամենքն ալ հրա-
շակերտներ էին : Ընտանեկան փոքր կենդանադրեր ,
ձուած և շրջանակներու մէջ առնուած , վառարանին վրայ
դրուած հայելոյն բոլորտիքը շարուած էին :

— Անտարակոյս , ըսաւ Նլւիզ իւրովի , Օկիւսթ այս կեն-

դանագրերուն մէջ իւր մօրը պատկերն ալ ունի : Խիստ բարի որդի մ'եղած է անշուշտ :

Բնաւ զանց չ'ըրաւ այն փոքր այլ սիրուն բաներէն և ոչ մին, զորս երիտասարդք կը սիրեն և որոնք դրեթէ միշտ կա'մ բարեկամական փոքրիկ նուէրներ են կա'մ ուղեւորութեանց յիշատակներ : Կիսաբաց դուռ մը թողուց իրեն տեսնել գեղեցիկ թանդարանը այն երիտասարդին՝ որում ժիւլիօ, յաճախ Լուիզի առջև, փայլուն ապագայ մը նախադուշակած էր :

Այս կ'իկիկ ու շնորհալից կերպով զարդարուած սենեկիկը Յիւլիսթ Ա.էռտլօնի բարոյական արժէքին նկատմամբ բարձր գաղափար մը սուսաւ Լուիզի : Անայք կը դատեն իրեանց բնագոյններովն. և այն նուազ բանակութեան քան թէ սրտին վերաբերող զարմանալի հնարքներովն է որ քան զարս դուն ուրեք կը խաբուին :

Ա.էռտլօն, թանդարանին հետ հաղորդակցող սրահին դուռը բանալով, մտաւ, և ներումն խնդրեց նախ տիկին Տը-լա Վլավիէրէն՝ զինքն անմիջապէս ընդունած չ'ըլլալուն : Զարմանալի հեշտախօսութեամբ մը խօսքերն սկսան հոսել իւր բերնէն : Փութայ յիշեցնելու իւր բարեկամին հօրաքրոջ այն անոյշ ժամերն՝ զորս անցուցած էր ի Լա-Վլավիէր ամենէն սիրուն մտերմութեան մէջ : Սուսած չէր և ո'չ ինչ, նոյն իսկ Օրիորդ Լուիզի շարածնի ճարտարամտութիւնները :

Աւրեմն ամեն բան պատրաստուած էր երկու աշուտական կանանց առ Յիւլիսթ Ա.էռտլօն ընելիք աղաչանաց համար : Խիստ դժուարին եղաւ ծերունի տիկնոջ խօսքի սկսելը :

Բայց վերջապէս Սատուծոյ և սուրբ Ալեսէն խնդրած քաջութիւնը եկաւ իրեն : Սրտաշարժ լեզուով մը յայտնեց իւր բուն սրտատանջութիւնքը սիրելի ժիւլիօյի համար՝ հրատարակուելիք գրքին պատճառաւ. իմացուց Ա.էռտլօնի թէ արքեպիսկոպոսարանի մէջ քահանայութենէ վտարելու խորհուրդ մը կայ, թէ Թ. ի մէջ կրօնական ախարհին գաղափարը սաստկապէս յուզուած էր և թէ կանոնիկոսական-տե-

դակալաց որոշմանց վրայ զօրաւոր ճնշում մ'ի գործ կը դընէր, և թէ առաջին վայր'ի ենին՝ «դադարման վճիռը», (այս այն բաւն էր՝ զոր Ք.ու.անիշոն Տիկին Տը-լա Վլավիէրի ակունջին հնչեցուցած էր իբր որոտման ճայթիւն մը) կրնար արտասանուիլ :

— Ժիւլի ոյի անուանարկութենէն վերջը, յաւելցուց, անկարելի պիտի ըլլայ ինչ ապրիլ, և սոսկալի վշտի մը հետ ի դերեզման պիտի տանիմ մեր ընտանեաց անունը արատաւորող կեղտին դադափարը : Եւ ինչ պիտի ըլլայ աշխարհի մէջ այս խեղճ Լուիլի ապագայն, իւր եղբոր անարդութենէն վերջը : Ատաշն Վի, սիրելի Պ. Ա. Է. առջոն, գիտէք դուք, որ մեր մէջը, մեր այս գաղափարներովը, քահանայի մը համար արուած դադարման վճիռը թիարանի դատապարտութեան դատակընիք մ'է :

Յետոյ, բուական ճարտարութեամբ, հասկցուց մեզմով թէ Ք. ի մէջ մեծ մասին համոզումն այն էր որ ինքը Ա. Է. առջոն գործակից եղած էր այս միջիկն յարուցանող գրքուկին խմբագրութեանը, թէ ուրեմն ինքն ալ գործին հրատարակութեանը մէջ իւր պատասխանատուութեան մասն ունէր : Աարելի չ'էր իրեն, հէք Ա. բրայն անուանարկութենէ ազատելու համար, իր գործակցութեան իրաւունքները մէջ բերելով, իւր բարեկամին վրայ այնպիսի ճնշում մը բանեցնել որով կարող ըլլար զանի այս հրատարակութեան մէջ աւելի յառաջ չ'երթալու տրամադրել :

Ա. Է. առջոն տիկին Տը-լա Վլավիէրի կ'ունկնդրէր այն արգահատանօք ու տրտմութեամբ խառն՝ որդիական ակնածութեան զգացումովն, զոր կ'ազդեն միշտ մեծ վշտի մը մէջ գոնուող տարիքոտ անձերը :

Իւր հօրաքրոջ քով նստած, Լուիզ նայուածքովը կը կրկնէր, գողցես, առ Ա. Է. առջոն ուղղեալ խօսքերուն իւրաքանչիւրը, և ծերունի տիկնոջ խօսքերուն հետ այս լոին ճայնակցութիւնը անոնց նուազ պերճախօս կողմը չ'էր :

Այս ակնարկը, միանգամայն այնքան համեմատ և այնքան

վաւ վշտիւ , Աւետիոյնի սրտին վրայ հզօրացոյն մտղիչ ազգեցութիւն մ'ի գործ կը դնէր : Ահաւոր մըցում մը տեղի ունէր յինքեան : Իւր պայծառ տեսութեամբն լաւ կը տեսնէր թէ ինչ օգուտ կրնար քաղել Առիդի յինքեան իւր եղբօր ազատարարը գանելու տրամադրութիւններէն : Իւր անկեղծութիւնը չէր ներէր իրեն խաբել զաիկին Տը-լա Պլավիէր , և խոստանալ որ անոր այս գործին մէջ իրեն համար դուռ կարծեցեալ իրաւունքներովը պիտի կրնար զժխլիօ իւր ձեռնարկութենէն ձեռնթափ ընել : Իսկ բուն ինդիոյն գալով , անիրաւ անուանարկութիւններն յաշտ իւր իւր բարեկամին համար փառաց պսակ կը թուէին :

Սակայն չէր կրնար իւր բարեկամին քով ջանք մը ընելը մերժել . խոստացաւ ամեն բան ընել զժխլիօ « գաղարման » մը աղէտներէն զերծուցանելու համար :

Տիկնայք Տը-լա Պլավիէր բաժնուկեցան Աւետիոյնէն , յոյս մ'իրենց հետ տանելով :

Առիդ իւր հօրաբրոջ վերջին խօսքերուն վրայ յաւելցուց .
— Պարոն Աւետիոյն , փրկեցէ՛ք զմեզ :



Գ .

ՆՈՐ ԱՐԲԵՂԵՍԿՈՊՈՍԸ

Աարդինալ տը Պլամարէնի , այր աւաղամեծար , հանճարեղ և ի մեծ ու աշատ գաղափարներով զորս յինքեան զըսպել սլարտաւորած էր Ակեղեցւոյ աւագութեանց հասնելու համար , ինչպէս կարգելուն շոգին՝ որպէս զի մլման զօրութիւնն ունենայ , Թ . ի արքեպիսկոպոսարանին մէջ յաջորդեց Բիէա-Փաւնտուա Բօլ-լը-Պաիք , Նըվէսի նախկին ընդհանուր-փոխանորդ և տասն տաշի է ի վեր Աիւսօնի եպիսկոպոս : Շատ մասերով ստորին հանլուցեալ Աարդինալէն , անոր վը-

Թայ անհակառակելի գերազանցութիւն մ'ունէր, և այն էր վերջին ծայր յաշողակութեամբ մը վարել ինչ որ վարչային գործեր կը կոչուին : Թէ և ունէր մտաւորական աշխոյժ մը, սակայն ցուրտ ատենաբան էր և շրջաբերականներն այնքան ցամաք կը գրեր որքան գրութեանց այս սեռը կրնայ տանիլ : Իւր քահանայից նկատմամբ չոր ու խիտտ, արդար ըլլալու պահանջումն ունէր, և, եթէ մէկը անոր դիմադրելու, անոր առաջին սոսկալի ընդհարումէն չ'վախելու քաջութիւնն ունենար, բարի մարդը անմիջապէս կը ցածնայր, կը քաղցրանայր, և, վիճամասկ խեղճ քահանայի մ'ապագան տառապալով անդառնալի որոշման մը, այս պարզ խօսքը կ'ըսէր. - Գարձէ՛ք ձեր տեղը. կը տեսնեմ : - Ս.սի գրեթէ միշտ ներողութեան վճիռ մ'էր* :

Թ. ի կղերը շուտով սովորեցաւ այս մարդուն որ իւր կենսայ քսան տարին կրօնաւորութեաց մեծ վանք մը կառավարելով անցուցած էր : Հայր Գուրգէ** (ժողովրդապետները իրենց մէջ այս մականուամբ զինքը կ'անուանէին, ամեն վիճակաց մէջ գրեթէ ընդհանուր եղած սովորութեան մը համեմատ) բարի մարդ մ'էր : Իւր դարուն դաղափարներէն շատ բան չ'էր հասկնար : Ար թղթատէր, շարունակ կը թըղթատէր. բայց երբ իր ժողովը կ'ընէր, իւր բոլոր նամակները կը լմնցնէր, գոհ յինքենէ, կ'երթար զուարթօրէն, կղերա-

* Ընթերցողը պիտի հասկնայ որ գրքիս հեղինակը, այս դիպաց տեսարանը Հարսուոյ քաղաքի մը մէջ գնելով, ուրիշ նպատակ չ'է ունեցած բայց եթէ իւր նիւթին գործողութեանց կեդրոն մ'ընտրել, և թէ բնաւ Յկեղեցւոյ մէջ եղող կենդանի և պաշտօնական անձանց ո՛ր և է ակնարկութիւն մը ընել չ'է մտաբերած : Թէ՛ այս և թէ՛ բովանդակ գործոյն պարունակած գլուխներուն համար կը յայտարարէ թէ իւր բոլոր անձնական նկարագիրներն դուր երեւակայութիւն են : Երաւունք ունի զեղծմանց և հաստատութեանց գէ՛մ յարձակելու. անձնական ակնարկութիւններու չի խորհարհիր երբէք :

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ ՀՆԴԻՆԱԿԻՆ

** (Գուրգէ) բառը դաղղիարէն տեսակ մը մարտիս, և այլաբանօրէն վատթար փոքր ձի, փոքր մարդ կը նշանակէ :

նոցի միամիտ աշակերտի մը պէս, իւր ընդհանուր-փոխանորդներէն միոյն կամ իր քարտուղարին հետ նարտի խաղ մը դարձնելու, և կը կարծէր թէ ամեն մարդ երջանիկ էր իւր վիճակին մէջ:

Մաքուր էր իւր բարոյականը: Թէպէտ, պաշտօնական մեծ հացկերոյթներու մէջ, ընտիր գինիներու պատիւ կ'ընէր, զուարթութեան որոշեալ սահմանէ մ'անդին չէր անյնէր: Ախտօնէն իւր հետ բերած էր երիտասարդ ընդհանուր-փոխանորդ մը և նորատի քարտուղար մը, զորն համբաւը միամտորէն անոր որդիքը կը հռչակէր: Աշխարհ կղերին առաքինութեանը հաւատ չ'ընծայէր, ո՛չ եպիսկոպոսաց և ո՛չ գիւղի պարզ ժողովրդապետաց վրայ:

Ականաւորն Աբբայ Աակէլ այնպիսի ճարտար հնարքներ ի դործ դրած էր որ յաջողած էր ինքզինք իր ընդհանուր-փոխանորդութեան պաշտօնին մէջ հաստատուն պահել տալու:

Եւ այս յաջողութիւնը ձեռք բերած էր, արքեպիսկոպոսին անուանումէն անմիջապէս ետքը, ի Ախտօն ուղեւորութիւն մ'ընելով և անոր տանելով Թ. ի ամբողջ կրօնական մարմնոյն վրայ այնպիսի ճիշդ և կարևոր տեղեկութիւններ, որ անուանեալ արքեպիսկոպոսը, վերջին ծայր դրական մարդ, իւր ձեռքին տակ կազմ և պատրաստ դառաւ մեծ արժեք ունեցող գործ մը, որուն ընծայած ծանօթութիւնքը ձեռք բերելու համար հարկ էր տանն տարի իւր ստորակարգեալ նոր կղերական դասուն վրայ քննութիւններու փորձեր ընել, այսինքն դրեթէ ապրելու համար դեռ ունեցած բոլոր ժամանակը այսմ զոհել: Աակէլ ուրեմն կարհւոր սնձ մը համարուեցաւ և արքեպիսկոպոսը, իւր ուրախութիւնը պատրուակելով ցցուց՝ այնպէ՛ մ'իբրութէ զայն իւր պաշտօնին մէջ պահելով մեծ շնորք մը կ'ընէր անոր: Աակէլ, իւր գլխաւորէն ո՛չ ինչ նուազ խորամանկ, յառաջադրեց բնաւ ժամ մը չ'կորսնել և եռանդեամբ աշխատիլ Պեր. տը Ֆլամարէնի ժամանակ իւր բրած անյիութութեանց տեղը լեցնելու և գէթ երկու կամ երեք տարիէն եպիսկոպոսութեան մը հասնելու ջանալ:

Ասկէլի գաղտնի տեղեկադրութիւնքը արքեպիսկոպոսին ուշը սաստկապէս գրաւած էին : Գաստատանական ամբաստանադրոյ մը պէս անաչառ ու խիստ էր , և այս կէտը ամենէն աւելի եկեղեցական առաջնորդին զարմանքը գրդուած էր : Ստուգեալ դայթակղական գործերն , լսկ կասկածները , ամբաստանութիւնները , անխոհեմութիւնները , վերջապէս ամեն բան յիշատակուած էր իւրաքանչիւր քահանայի յատուկ երեսին մէջ , յետին փոխանորդէն սկսեալ մինչև մայր-եկեղեցւոյն աւագ երէցը , յայտնի և ընդարձակօրէն :

Թիւրիօ ալ այս կղերական վիճակագրութեան մէջ իրեն յատկացեալ գլուխը ունէր : « Ատանդաւոր մարդ . - եռանդուն երևակայութիւն . - ամբարտաւան , ինքնադով և ինքզինքը բան մը կարծող , վասն զի Ն . Գերապատուութիւնը Աարդինալ Տը Ֆլամարէն զառամութեան վիճակին մէջ արքեպիսկոպոսարանի քարտուղարութիւնը անոր յանձնելու տղայութիւններն ըրած էր . - անպատկառ կերպով Աստուծոյ բանը խօսող , մեղապարտ նորութիւններով եկեղեցական բեմը պղծող , որ այս կերպով Պ . ի մէջ բարեպաշտ ականջները վիրաւորած էր . - անկրօն մարդոց հետ յարաբերութիւն ունեցող . - ամեն տեսակ գիրք , օրացիք կարդացող . - ազատ խորհող մը՝ զոր հարկ էր խնամով քահանայութենէ հեռացնել և որ եկեղեցւոյ մէջ սոսկալի գայթակղութիւններ պիտի յարուցանէ . - քահանայորուն վրայ պէտք է միշտ հսկել , և զոր հարկ է երկաթեայ ձեռքով վարել և միշտ կղերականութեան ստորին աստիճաններուն մէջ պահել , որպէս զի չքաւորութիւնը , միայնութիւնը և երեւելի բլլա ու միջոցներուն պակասութիւնը զինքը օգտաւէտ նսեմութեան մ'ու ստորնութեան մը մէջ բռնեն : Սմենափոքր շնորհներն կրնան զինքը կորսնել . ասի նոր Աուտեր մ'է՛ զոր հարկ է խեղդել , եթէ չուզուիր որ իւր խօսքը Եկեղեցւոյ մէջ հրդեհ բռնկցնէ : » Այնուհետև կուգային մի քանի փոքր պատմութիւններ , մի քանի արդէն արձանագրեալ ամբաստանութիւններ անձի մը գէմ՝ որոյ կեանքը հրեշտակի մը կեանքին յդէս սուրբ էր :

Գեր. Գուրբի դպէն ութ օր յառաջ, Աբրայ ժիւլիօ հե-
տեւեալ նամակը ստացաւ :

Յպիսկոպոսարանի Ախօճի, . . . 1859

« Պ. Աբրայ ,

« Մեծ ցաւօք կը յայտնեմ Ձեզ որ Ք. ի արքեպիսկո-
պոսարանին ընդ հանաւր քարտուղարութեան պաշտօնը , զոր
կը վարէք , ուրիշի մը յանձնելու հարկին մէջ գտնուած եմ :
Երկար ատենէ ի վեր քովս խիստ վստահութեան արժանի
մէկն ունենալով , անկարելի էր ինձ բաժնուիլ անկէ այն նոր
պաշտօնին մէջ՝ զոր Նախախնամութիւնը կը հաճի իմ ձեռքս
յանձնել : Արյուսամ գտնել Ձեզ տեղ մը՝ որ Ձեր ճաշակին
և յարմարութեանց համաձայն դայ :

« Հաճեցէք ընդունիլ , Պ. Աբրայ , ևն .

ԲԻԷՌ-ՅՈՒՆՍՈՒՄ արքեպիսկոպոս Ք. ի »

Գեր. լը Գըուիք , Ք. ի արքեպիսկոպոսարանին մէջ հաս-
տատուելուն հետեւեալ օրը , հաւատարիմ իւր կանոնասիրա-
կան սովորութեանց , անպաշտօն քահանայից ցանկը աչքէ
կ'անցնէր , և ժիւլիօյի սա հետեւեալ երկրորդ նամակը կը
դրէր :

ՅԱրքեպիսկոպոսարանի Ք. ի , . . . 1859

« Պ. Աբրայ ,

« Սէն-Սէրնէնի յարգոյ ժողովրդ ապետը հինգերորդ փո-
խանորդի մը պէտքն ունի : Գիտէք դուք այս թեմին կարե-
ւորութիւնը և թէ ինչ բարիք կրնայ ընել հոն մէկը : Ձձեզ
այս պաշտօնին կը կարգեմ , յորում կը յուսամ որ , վարչու-
թեան աչաց տակ , ո՛չ մէկ տրտնջանաց տեղի չ'պիտի տաք :
Երիտասարդ էք . Ձեր առաջին վրիպումներէն օգուտ քաղե-
ցէք : Խոնարհ եղիք , և Աստուած պիտի օրհնէ ձեր պաշտօնը :

« Աստահեցէք իմ անկեղծ բարեկամութեանս վրայ :

ԲԻԷՌ-ՅՈՒՆՍՈՒՄ արքեպիսկոպոս Ք. ի »

Այս էր Գեր. լը Գուրբի պաշտօնավարութեան առաջին
դարձը . սրտի տէր մարդ մը կը նուստատացնէր առանց նա-
խապէս լաւ մը խորհելու : Ասկէլի տուած խիստ կասկածելի
տեղեկութիւնները ճշդ բռնելու կամ զանտնք չստիաւորող ու-

րիչ տեղեկութիւններ առնելու փոյթ չէր ունեցած : Արքայ
ժիւլիօ նոր առաջնորդին համարմանը մէջ կոչուած էր :
Այ՛ մեծ ու աննենդ ողին ընկճելու համար աւաջար'ուած
դրութիւնը ի դորժ պիտի դրուէր : ժիւլիօ չի խաբուեցաւ .
քաջ տեսաւ թէ որո՞ւ դրչմամբ աչքեպիսկոպոսան իրեն դը-
րած էր . իրեն արժանաւոր կ'երգով վաշուեցաւ . հնա-
դանդեցու , և յանձնառու եղաւ փփանորդի համեստ
պաշտօնին :

Գեր . լը Գուրք քան զՆեր . որը Յլամարէն աւելի չէր սի-
րէր ժէզուիթները , բայց անոնցմէ քան զայն աւելի կը վախ-
նար : Ուստի իւր մեծ կղերանոցէն վերջը՝ յորում իրեն կըս-
պասէր մեծ բազմութիւն մը նորածաղ արևը ողջունելու
համար իւր ընդարձակ վիճակին ամեն կողմերէն եկող քա-
հանայներու , իւր առաջին այցելութիւնը եղաւ առ Պաւա-
ռակալ Հայրն , Հաւատաքննութեան տան մէջ : Ընկերու-
թեան համար անձնութեան շերտ յայտարարութիւններ
ըրաւ և դուրս ելաւ իւր ճարտարութեանը վրայ զմայլած :

Հետեւեալ օրը Գաւառակալ Հայրը Արքեպիսկոպոսարան
կը ներկայանայր փոխարձ այցելութեան : Բարի Հայրը
կուգար Նորին Գերապատուութեան նախընթաց օրը իրեն
համրած կեղծ ստակը կեղծ դրամով փոխարինելու : Արքե-
պիսկոպոսը առջի օրուրնէ աւելի փաղաքուշ լեզու մը դոր-
ծած էր : Խոստայաւ որ իր բոլոր կարողութեամբը օշնէ
ժէզուիթաց իրենց կառուցանելիք մեծ վանուց շինութեանը
մէջ : Անոնց եռանդը գովեց ու դրուատեց , և նոյն իսկ սրբազան
քահանայապետներէն «կաթողիկոսութեան յառաջապահը» ճանչ-
ուած ուխտի մը ծաւալման համար ամեն կարելի ջանք ու
ճիւղ ի դորժ գնելու խոստումը կրկին և կրկին նորոգեց :

Գիտնալով որ իւր խօսակցութիւնը ճշդիւ ի գիր առնը-
ւելով Հռովմ պիտի դրկուէր , անմահն Պիոս Թ . ի նկատ-
մամբ շերտ ու կեղեցիկ բառերով խօսեցաւ : Չայն իւր թա-
գաւորութեան մեծամեծ դործոց , և մասնաւորապէս Իտա-
լիոյ մէջ յեղափոխական խորհրդոց դէմ ցյուցած քրիական

ու անդրդուելի ընդդիմութեան համար յանչափս գովարանեց : Պիոս Թ. ի վրայ խօսելու ուրիշ բան չէր գտներ՝ բայց եթէ իւր առաքինութիւնքն ու սրբութիւնը : Ըսաւ թէ շատ անգամ, ինչպէս Արքուհին Թերեզա Աստուծոյ մէկ մեծ ծառային կ'ընէր, ներքին դրդում մ'ըզացած էր դեռ ի կենդանութեան անոր բարեխօսութիւնը խնդրելու : Ա՛վ կրնայ տարակուսիլ որ արքեպիսկոպոսը կարգինալական խոյրին համար յոգներ էր :

Գաւառակալը անոր ըսած գեղեցիկ խօսքերուն վրայ ինքն ալ շատ բաներ յաւելցուց, դեռ չհասած այն կէտին՝ որ կարևորագոյնն էր իրեն համար նոյն վայրկենին, այսինքն մամլոյ տակ գտնուած կտակին :

Արքեպիսկոպոսը դեռ բնաւ ծանօթութիւն չունէր այս գործին : Հնարագիտութեամբ թէ անհոգութեամբ, չեմք գիտեր, Աակէլ անոր վրայօք բան մ'ըսած չէր անոր : Երբ Ժէզուիթն անոր խօսքը բացաւ, զայն իւր ամեն մանրամասըն պարագայներովը պատմել տուաւ :

— Այդ բանին դարման պիտի տանիմ, ըսաւ Գաւառակալին :

— Ձեր Գերապատուութիւնը կրնայ հասկնալ, յաւելցուց Ժէզուիթը, որ ո՛չ թէ սոյն դրքին մէջ այնքան շարաշար կերպով նախատուած մեր ուխտին անձնական շահն է որ զմեզ գործելու կ'ստիպէ, այլ նոյն իսկ կրօնքին շահը՝ որ աւելի մեծ ու ստիպողական է :

— Ատոր դարմանը կը տանիմ, կ'ըսեմ. վստահ եղիք իմ արթնութեանս վրայ, Աերապատուելի Հայր իմ :

Եւ Գաւառակալը, խոնարհաբար ծնրադրելով, Արքեպիսկոպոսին օրհնութիւնը կ'ընդունէր :

Ժիւլիօ փութացած էր արքեպիսկոպոսական նամակին ցոյց տուած պաշտօնատեղին երթալու : Սէն-Սէրնէնի հինգերորդ փոխանորդը արքեպիսկոպոսարանի մէջ ունեցած շքեղ ու փառաւոր սենեակը թողլով կ'երթար փոքրիկ բընակարանի մը մէջ զետեղուիլ, Թօրի փողոցին ծայրը, Սէն-

Ռէյսօն հրապարակին կողմը : Վէպուլօն սաստկապէս նախագրաւուած էր տիկին Տը-լա Պլավիէրի և Ղուիզի իրեն ըրած յանձնարարութեամբն : Թիւլիօյի հետ նոյնին վրայ խօսած և անոր մէկ քանի առաջարկութիւններ ըրած էր՝ որ զայն քիչ մը կակղացուցած էին : Վէպուլօն կ'աճապարէր այս առաջին յաջողութիւնը տիկին Տը-լա Պլավիէրի իմացնելու : Ըսենք նաև որ անհամբեր էր զՂուիզ տեսնելու : Իւր բարեկամին հօրաքոյրէն ու քրոջմէն ընդունած այցելութենէն ի վեր՝ Ղուիզի համար իւր սէրը աւելի բուռն ու եռանդնավառ եղած էր : Ասոր պատճառն , ինչպէս կը հաստատեն բնախօսք ոմանք , արդեօք այն սիրաբոյր գոլորշիներն էին որք գեղեցկութենէն կ'իյնան և , իբր հոտաւէտ հիւթեր , կը լեցնեն զայն տեղերն՝ ուսկից կ'անցնի այն , և յետոյ կը ներգործեն մարդուն վրայ այն ժանտահոտութեանց կերպովը՝ որոցմով բոլոր անձը կը թրծի : Սիրահար փաստաբանին երեւակայութիւնը այն աշխատութեան սենեակը՝ ուր զՂուիզ ընդունած էր՝ իբր սրբավայր մը կը նկատէր . և , ինչպէս բոլոր անոնք՝ որք կը սիրեն , կը կրկնէր սրտի այս փոքր դէպը՝ որոյ վրայ պէտք չ'է խնդալ , վասն զի կենաց ամենէն մեծ ու ծանր գործն է այն , և կենաց բոլոր երջանկութիւնը անկէ կախեալ կայ :

Տը-լա Պլավիէր տիկնայք անհամբեր էին Վէպուլօնի ջանից արդիւնքն հասկնալու : Յերունի տիկինը պարզմտօրէն կ'ըսէր թէ Վէպուլօն փոխադարձ այցելութեան գալու կը յապաղէր :

— Մի՛ վախնաք , սիրելի հօրաքոյրս , Պ . Վէպուլօն խիստ քաղաքավար է , ըսած էր Ղուիզ :

Պերեմն իրենց համար կարեւորագոյն խնդիր մ'էր այս : Նուազ ցաւ ազդած էր իրենց Թիւլիօյի արքեպիսկոպոսարանէն ելնելը : Արյուսային արդէն սր թշնամիներէ շրջապատեալ՝ ամենէն սև դոյներով պիտի ներկայացուէր նոր արքեպիսկոպոսին : Հետեաբար , ըստ որում նորա արտաքոյ կարգի տաղանդը կը ճանչէին , անոր ապագային համար բնաւ

երկիւղ չունէին : Բայց մեծ ցաւը , ահաւոր սղոյն տաղնու-
պը այս կանանց սրտերուն համար՝ այն քահանայադործու-
թենէ աւրելումի սպառնալիքն էր՝ զոր Հայր Արիֆար թըշ-
ուառ երիտասարդին գլխուն վրայ կը բռնէր և զոր իւր ու-
զած այսնը նոր արքեպիսկոպոսին վճռել տալու կարող պի-
տի ըլլար : Այս կիները , որ յօժարակամ ահաւոր Հօր դը-
ժնդակ լուծը կրած էին , այլ ևս անոր վրայ ուրիշ բան չէին
տեսներ՝ բայց եթէ իրենց ընտանեաց կառայի հալածիչը :

Երբ Ահաւորն Տիկին Տը-լա Պլավիէրի տունը հասաւ ,
իբրև Նախախնամութիւն մ'ընդունուեցաւ : Յերունի հօրա-
քրոջ քաղցը աչքերը մայրական սուրը դորովով մը շրջապա-
տեցին զինքը , իսկ Աուիլի այնքան վճիռ ու այնքան բաց
ականողիքը գողցեա անոր իւր բովանդակ հողին կաւտային ,
միայն թէ ժիւլիօ փրկուէր :

Երիտասարդը երջանկութեամբ յիմարած էր :

— Ահա՛ իմ ձեռք բերած արդիւնքս երկաշ ու սակալի
վէճերէ ետքը , վասն զի սատանայի մը շափ յամառեալ է մեր
սիրելի ժիւլիօն :

Ձեր դադախարը ձեռք առի , տիկինն , ձեզի կը վերաբե-
րի յաջողութեանս փառքը : Ձեր ըսածին համեմատ նշանա-
ւոր կտակին մէջ իմ ունեցած խմբագրական մանակցութիւ-
նըս իւր առջև դրի , և ջանացի համողել զինքը որ առ Պեր-
Տը Ֆլամարէն տուած խոտուամը երբէք դրժած չ'ըլլար , եթէ
գիւրքը , փոխանակ իւր անուան , իմ անունս կրէ : Ձեմ ու-
զեր ծածկել ձեզմէ , կը վարանի տակաւին : Ձէ՛ թէ հեղի-
նակ մ'երեւելու տղայական փառասիրութիւնն է որ իրեն
վարանել կուտայ , այլ կաթովիկութեան ապագայ ճակա-
տադրաց վրայ մեծ ներդործութիւն մ'ընելու կարող գործի-
մը իր անունը կցելու փախարը : Եթէ այս զոհողութիւնն
ընէ , առ ձեզ ունեցած երախտապարտութեան , առ այն՝ զոր
իւր սիրելի քոյրը կ'անուանէ ունեցած խանդակաթ գորովոյն
համար է որ պիտի ընէ , բայց խիստ ծանր պիտի նստի իրեն :

Չուղեցի առաջին խօսակցութեան մը մէջ զայն վերջին

կէտը մղել, բայց կը յուսամ թէ պիտի զիջանի : Ասոր կըրկին իրեն հետ պիտի սեանուիմ :

Ահա տղան վարպետութեամբ կ'ուզէր գործը յերկարած գել, որով առիթ պիտի ունենար ստեղծայեղութիւններ ընելու Տը-լա Պլավիէր արկնայ : Այս ատենը հիմա բայ էր իրեն համար : Թիւիոյի քով որքան քիչ սրդիւնք ալ ձեռք բերելու ըլլար, Առիզի երախտագիտութեանը վրայ իրաւունք պիտի ունենար, և դիտէր որ երախտագիտութիւնը ի նպատակ սիրոյ ազդու կերպով կը գործէ :

Սակայն, բոլոր քաղաքին մէջ, Թիւիոյի պաշտօնանկութեանը վրայ կը խօսուէր : Բարեպաշտներու դասը, նախանձոտ քահանայք, Ասկէլի կուսակցութիւնը և Թէզուիթայ համալսոհներու մեծ խումբը կը յայթանակէին :

— Մայր եկեղեցւոյն « մեծանուն ատենարանը », կ'ըսէին ծաղրաբանութեամբ, հանդուցեալ Աարդինային մտերիմը Սէն-Մէրնէի հինգերորդ փոխանորդ, գեղեցիկ բան : Աստուծոյ մատը յայտնի կը տեսնուի այս գործին մէջ, Ինչպէս հպարտը կը պատուհասէ :

Անտարակոյս Թիւիո, մարդոյ ամենէն խօնարհագոյնը, յայս այս Փարիսեցւոյ, ամբարտաւան մ էր : Սի այն դըրոշմն էր՝ որով Ասկէլ զայն նշանակած էր :

Թիւի բնակչաց ընտրելագոյն մասը ռամիկէն տարբեր կերպով խորհած էր : Աերոյիչեալ կուսակցութիւններէն դուրս հոն, պաշտօնակալաց, փաստաբանից, գիտնայ, դասաւորւաց, արուեստագիտաց մէջ կան այնպիսի անձինք՝ որ արժանաւոր կերպով մեծ քաղաք մը կը ներկայացնեն և պատիւ կը բերեն Հարաւոյ վարչութի մայրաքաղաքին : Այս մարդիկը, ելք առիթը կը ներկայանայր, չէին քաշուեր Թիւիոյի վրայ իրենց կարծիքն ըսելէ : Անոր եռանդնալից ու համոզեալ խօսքերուն իրենց վրայ ըրած խորին տպաւորութիւնը կը յիշէին : Չէին զգուշանար նաև ըսելէ որ նմանօրինակ տաղանդներ այնչափ հազուագիւտ են՝ որ դոնուածներն կ'ըրականութեան ծոցին մէջ խնամով պահպանուիլ ու մշակուիլ պէտք են : Չժամկեցին նաև արքեպիսկոպոսէն թէ Թիւիոյի Սէն-

Սէրնէնի հինգերորդ փոխանորդութեան պաշտօնին անուանումը իբր Արքայ Ասիէի մէկ քինախնդրութիւնը և իրմէ կորզուած զիջողութիւն մը նկատուած էր :

Բոլոր ասոնք մտածել տուին Ն. Աերապատուութեան, որ ամեն բանէ աւելի կը ջանար պաշտօնական մարդոց համարումը չկորսնցնել, վասն զի անոնց խօսքը ամեն օր պաշտօնատուները կը հասնի և այսպէս կրնայ համբաւը կազմել անոնց՝ որոց վրայ կ'իյնան իշխանութեան շնորհներն և դիտենք արդէն որ արքեպիսկոպոսին նոր ու կարեւոր գործն էր իւր նախորդին պէս կարգինալութեան հասնել : Արդ, Գաղղիոյ մէջ կարգինալ ըլլալու համար, երկու բան հարկաւոր է՝ քիչ մը գծուար ի միասին հաշտեցնելու անյաջող մարդու մը համար. այն է կառավարութեան շնորհը՝ որ վերջին ծայր չափաւորութիւն կը փնտռէ մարդուն վրայ, և Հռովմէ շնորհը՝ որ առաջին պայման կը դնէ առ Պապն, մանաւանդ առ իւր աշխարհային իշխանութիւնն անծայր անձնուիրութիւն մը : Իրողութիւնք կը հաստատեն որ այսպիսի աջողակ ու ճարտար մարդիկ կը գտնուին : Արդինալութեան հասնելու արուեստը ուսուցուած է առակախօսին սա անմահ տողերուն մէջ .

Թաչուն եմ, հա՛ իմ թեւեր .

Մուկ եմ, ապրի՛ն թող մկներ :

Այս գրեթէ եօթանասնամեայ եկեղեցականին, որ Գաղղիոյ ամենէն գեղեցիկ եպիսկոպոսական վիճակներէն միոյն տիրացած էր, վերջին տարին'ըը պիտի մաշէին Հռովմէ ու Փէղոսիթները շողմեւով և դճարիզ բնաւ չ'գծող հեցնելու ճիգ ընելով՝ որուն առջև առ Հռովմ չափազանց անձնուիրութիւն մը կրնար իր համարումը կտարել : Փիւլիօյի նկատմամբ բազմաթիւ պաշտօնական անձանց հետ ունեցած այլ և այլ խօսակցութիւններէն հետ'ցուց որ Վեր. տը Ֆլամարէնի նախկին քարտուղարին հետ զգուշութեամբ վարուելու էր : Մտածեց նաև որ, Ասիէի ոխութեանց նպաստաւոր գտնուելով, քիչ մը հեռուն գացած էր :

Հիանալի զարնան զուարթագեղ օրերն էին : Թ. , ահա-
 թա ալիքներով գետի մը դալարաւէտ ափանց վրայ
 «օրէն բարձրացած , Հարաւոյ սաստիկ՝ այլ Պիրեն-
 եանց ձիւներուն մօտաւորութեամբն ամեն ժամ բարեխառ-
 նեալ արևուն տակ բնութեան արագ արագ աճումն ու զար-
 դացումը կը տեսնէր : Տիկին Տը-լա Պլավիէրի առողջութիւ-
 նը , որ Ս.բբային խնդրոյն պատճառած մտատանջութիւննե-
 րէն և՛ս առաւել փաստուած էր , հետզհետէ աւելի խնամոց
 ու դարմաններու պէտք ունենալով , բժիշկը օգտիօթութեան
 համար գիւղ երթալ պատուիրեց , և ի մեծ ցաւ այս տիկ-
 նայց , հարկ եղաւ մեկնիլ ի Նա-Պլավիէր : Ահաւորն եկաւ
 միւսանդամ : Ս.յս անդամ լուր բերաւ թէ Թիւլիօ կը հաւա-
 նէր իւր անունը կոտակին հրատարակութենէն ջնջել : Արոշում
 տուած էին որ յառաջաբանը Ահաւորն ինքը պիտի ստորագը-
 րէր , որ անոր ստոյգ հեղինակն էր : Ս.յս իմաստով ազդա-
 րարութիւն եղած էր Բարիշու հրատարակչին : Ահաւորն խօս-
 տացաւ Տիկին Տը-լա Պլավիէրի իւր բոլոր ճիգը թափել նոր
 զիջողութիւն մ'ալ ձեռք բերելու , եթէ կարելի էր , որպէս
 զի Թիւլիօ ամեն տեսակ յարձակումէ պաշտօնապէս կարենայ
 ազատ ըլլալ :

Ս.յս երկրորդ այցելութիւնը Տիկին Տը-լա Պլավիէրի շախա-
 զանց հաճելի եղաւ . մեծ սէր մ'սկսած էր զգալ Թիւլիօյի բա-
 րեկամին վրայ՝ որ իրեն ա՛յնպիսի անձնութեան ապացոյց-
 ներ կուտար : Բւր ի գիւղ երթը անոր իմացնելով խնդրեց
 որ մօտ օրեր պիտիքը աւեսնելու գայ : Ահաւորն խոստացաւ
 Նա-Պլավիէր երթալ , անմիջապէս որ նոր յաջողութիւն մը
 ձեռք բերէր :

Երիտասարդ փաստաբանը տուն դարձաւ ուրիշ անգամներ
 րէ՛ս աւելի հրավառ տարիանօքն Նուիզի , որոյ գեղեցկութիւ-
 նը այն ատեն իւր կատարեալ ծաղկման մէջ էր : Երջանկու-
 թեամբ կը մտածէր այն օրուան վրայ՝ յորում առիթ պիտի
 ունենար երթալու ի Նա-Պլավիէր , ուր երբեմն , թէ և կղե-
 րական հանդերձիւք , ա՛յնքան քաղցր ասպնջականութիւն մ'ըն-

դունած էր, և ուր իւր սիրտն առաջին անգամ խօսած էր :
 Մարդս այնքան խորին յիշատակ մը կը պահէ այն
 նկատմամբ՝ յորս սիրած է : Թիւլիօ իւր սիրելի հօրաքեռս
 պաշտելի քրոջն ի տես դնաց, անոնց ՚ի Լա-Վլալիէր մեկնելէն
 երկու օր յառաջ : Անիկայ հոգւոյ այն տրամադրութիւններէն
 միոյն մէջ կը գտնուէր՝ ուր սրտի խօսակցութիւններն բարե-
 րար ներգործութիւն մը կ'ընեն, ուր խիստ ջերմ, խիստ հա-
 մակրական, խիստ սիրակաթ հայեցուած մը կ'սիրուի զմարդ
 բոլոր տառապանքներէն, բոլոր մրցումներէն : Աարդադրե-
 ցէք ձեր կեանքը, ինչպէս հաճոյ կը թուի ձեզ. մեծութեան,
 փառասիրութեան, հանճարոյ ամեն վայելքներն ստացէք .
 եթէ չէք գիտցած սրտազեղութեանց մաքուր ու անխառն
 ուրախութիւնը ճաշակել, յետին ծայր անաջող մէկն ե-
 ղած էք : Եթէ չ'ունենաք այն մեծ բոլորը, որ ձեր կե-
 նաց վախճանն է յերկրի, և որ ուրիշ կեանքի մը շքեղու-
 թեանց մէջ պիտի շարունակի՝ անվախճան սիրոյ վայելմամբք,
 եթէ չ'գիտնաք զայս, ի՞նչ գաղափար ուրեմն երջանկութեան
 վրայ պիտի ունենաք :

Թիւլիօյի մեծ երազը այն սուրբ, խոհական սէրն էր այն
 էակին հետ՝ զոր ո՛չ մէկ մեղապարտ խորհուրդ մը կըրցած էր
 երբէք պղծել, քրոջ մը հետ : Զի՞նչ փոյթ էր իրեն թէ ա՛լ
 Գերապատիւ Տը Ֆլամարէնի քարտուղարը չ'էր : Ի՞նչու համար
 Թօրի փողոցին համետու երիցատունը արքեպիսկոպոսարանի
 սրահներէն նուազ արժէք ունենար : Միթէ Թիւլիօ նուա՞զ
 մեծ էր, իբր Աէն-Սէրնէնի հինգերորդ փոխանորդ, քան ի-
 բրբ օրհասական Աարդինայի մը պատկառանք ազդող և, մե-
 ղաւորի խոնարհ խօստովանութեանը հետ, յիսուն տարի իւր
 խիղճը մարդկային փառասիրութեան պահանջմանց ճախող
 եպիսկոպոսին թերևս աւելի սոսկալի խօստովանութիւնը ըն-
 դունող : Բարեբախտաբար իւր երջանկութիւնը այդ կողմե-
 րը չ'էր նկատէր. ուստի և մտմտքանաց տեղի չ'ունէր : Երբ
 մէկը ամեն ինչ յՍտուծոյ, բնութենէն և իր անձէն կ'սպասէ,
 երբ իւր կենաց գերագոյն առաջնորդ իւր խիղճը դրած է,

զի՞նչ փոյթ իրեն ռամկին դատողութիւնքը : Քաղցր էր ի-
րեն փառասիրական ամուլ և դառնակսկիծ ցաւերն ու տաղ-
նապները թողուլ մայր-եկեղեցւոյ աւտղերիցուն՝ որ հիմայ
կռնակ կը դարձնէր իրեն, վասն զի ա՛լ այնուհետեւ զանի
իւր շահուց ծառայելու անկարող կը դատէր, թողուլ Աակէ-
լի՝ որ կը շարունակէր իրեն կեղծաւորական ողջոյններ տալ
քաղցր հայեցուածով մը, թողուլ արքեպիսկոպոս Լը-Պոիքի՝
որ կը կարծէր թէ ոչինչ էր, մինչև որ իւր յակնթաղոյն պատ-
մուճանը ծիրանեղոյնի չի փոխուի, և որ այնուհետեւ զգու-
շութեամբ պիտի վարուէր իրեն հետ, վասն զի առաքինի ու
հանճարեղ երկտասարդ քահանայի մը հետ կրօնական վէճի մը
Քարիզի մէջ հանելիք աղմուկէն կը վախէր : Թո՛ղ այս հոգի-
ներն իրենց փառասիրական ցանկութեանց տղմին մէջ թա-
ւալէին, այս էր իրենց դերը : Ժիւլիօ աւելի լաւ կը հասկը-
նար կեանքը : Նա եթէ ամուրիութեան դժնդակ լծին յանձ-
նառու եղած էր, եթէ ընդունած էր զայն իբրեւ Սրեմոից
մէջ քահանայութեան պայման, ըստ հասկցած էր իւր սիրտը
բանալ այն ամեն անարատ տարփանքներուն՝ որք պիտի փո-
խանակէին իրեն քով ընտանեկան բերկրութիւններն՝ յորոց
ցաւաշին զրկումն այժմէն կ'զգայր : Եթէ կարենար Աուիզի
սրտին վրայ վստահել, եթէ, քահանայական կենաց երկար
տևողութեան մը մէջ, կարենար միշտ գտնել հոգի՛ մը սիրող
և անձնուէր, եթէ, մեծ փորձերուն մէջ, այս հոգին՝ քոյր
իրենին դայր ըսել իրեն : Քեզի տուաւ զիս Ստտուած, զիմ-
մէ՞ այլ ևս կը տրանջեա, եթէ ունենար սրտի այս գերազոյն
բարիքը, Նախախնամութենէն աւելին չ'պիտի պահանջէր :

Ստուգիւ ա՛յս էր Ժիւլիօյի զօրութիւնը :

Թէպէտ նիւթական իրաց համար խիստ քիչ հոգ ունէր,
չատ աղէկ նախատեսած էր սակայն որ իւր հօրաբրո՞ջ ճոխ
ժառանգութիւնը Հայր Արիֆարի ուշադրութենէն չ'պիտի
վրիպէր : Միտքը դրած էր թէ և Թէզուիթաց սուղի նստե-
ցընել այս ժառանգութեան մի քանի հարիւր հազար ֆունք-
ներն, բայց ներքնապէս ս'չ իւր և ս'չ Աուիզի երջանկութիւ-

նը մեծագուտար հարստութեան մը մէջ չէր դրած, Պիտի
ըլլար անշուշտ միշտ խոնարհ ու անծանօթ անկիւն մը, խեղ-
ճուկ երկցատուն մը՝ ընդ որ ոչ ոք պիտի հոգայր, և ուր պի-
տի զրկէին զինքը, առ ի չգոյէ լաւագունին կամ ամօթոյ մը-
նացորդով մը: Բաւական է որ զԼուիզ իւր հետ ունենար,
ոչինչ աւելի պիտի խնդրէր քահանայութեան հզօրներէն:

Իւր հօրաքրոջն ու քրոջը հրաժեշտ տալու օրն, ելիլու բա-
րեւիք: Էակներն չկրցին ծածկել իրենց ուրախութիւնը
Վէռտլօնի միջոցաւ իրենց ձեռք բերած յաջող արդեանց
վրայ:

— Ի՞նչ ազնիւ սիրտ, ըսաւ Լուիզ, և թեթեւ շառագու-
նանք մը, որ զինքը սիրող եղբօր մ'աչքը միայն կրնար դի-
տել, հետեւեցաւ իբր սիրոյ խոստովանութիւն մը շրթներէ
թռած այս խօսքին:

— Բայց, հօրաքոյրդ իմ, քեզի և Լուիզի ու չէ՛ թէ իմ բարե-
կամիս համար է որ հաւանեցայ Վարդինային՝ կրօնական կը-
տակին, վրայ իմ անունս չ'դնելու:


— Ա՛հ, դիտենք, ըսաւ բարի հօրաքոյրը: Արնայիւր ասկէ
աւելին ընել, յաւելցուց վեհերօտութեամբ:

Ժիւլիօ չ'պատասխանեց ասոր, խօյս տալու համար կնոջ
մը հետ վիճաբանելէ՝ որուն առողջութիւնը ա՛յքան դիւրաւ
վտանգի ենթակայ էր:

Արոշեցին որ իւր պաշտօնին ներած հանգստեան օրերն Լա-
Պլավիէրի անոյշ ու հեշտաւէտ առանձնութեան նուիրուին: Հոն
պիտի ունենար իւր դրատունը, իւր փոքր սենեակը, ամբողջ
ճղնարան մը, և ասոնց հետ այն էակները՝ որք զինքը կը սիրէին:

Ժիւլիօ ըստ կարի յերկարեց իրիկունէ վերջը իւր այցե-
լութիւնը Լա-Պլավիէրի տան մէջ: Արջանար բուռն ու որ-
դիական գորովոյ հաւաստեօք այն սրբակեաց կնոջ, որուն
այս աշխարհի մէջ վերջին վիշտն էր, պատճառած ցաւը ամօ-
քել: Լուիզի հետ հեշտալի լքում մ'ունեցաւ, Իրենց մի-
այնակ մնացած վայրկեաններուն մէջ, նորոգեց անոր, իբր
պաշտելի սիրուհւոյ մը ծնգաց տաջի, այն բարեկամութեան

և սիրոյ յայտարարութիւնքն՝ որք մեծ հողիներու մէջ ան-
դրրդուելի են և չեն նմանիր հասարակ տարփանքներուն՝ ո-
րոց ճակատագիրն է անհաստատութիւնը : Մրցանաց սկզբը-
նաւորութեան վայրկենին , դաղունի բնազդում մը կը նախագ-
գայնէր իրեն թէ կնոջ կարեկից սրտի մը պէտքն ունէր ,
զինքը պաշտպանելու և զօրացնելու համար , երբ բեկեալ , վի-
րաւոր ու արիւնալից հողուով դուրս ելնէր այն ասպարիզէն՝
յոր պիտի ձայն տային իրեն սոսկալի հակառակօրդներ :



Գ.

ԿԱՐԴԻՆՍԱԼ ՏԸՂՅԼԱՄԱՐԷՆԻ ԿՐԾՆԱԿԱՆ ԿՏԱԿԻՆ
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ

Վէպտլօն քիչ օրէն Լա-Պլավիէր այցելութիւն մը տուաւ :
Պիտենք թէ ինչ զօրաւոր ձգողութիւն մը զայն անդը կը քա-
շէր : Աինը հետաքրքիր է . և , եթէ միանգամայն հօրաքեռ
և Լուիզի կողմէն բարեսրտութեան ակներև զգացում մը զին-
քը կընդունէր , երկու կանայքն ալ անհամբեր էին տեսնելու
այնպիսի խնդրոյ մը վախճանը՝ յորում իրենց սրտին սիրելա-
դոյն էակ մը առաջին դերը կը խաղար : Սոսկալի գիրքը պի-
տի հրատարակուէր : Այս բանին վրայ չէին տարակուսեր .
բայց , ինչ ինչ կարեւոր փոփոխութեամբ , նոյնին կրօնական
հասարակութեան վրայ ընելիք ազդեցութիւնը մեղմող ինչ
ինչ յայտարարութեամբ , մանաւանդ առանց գլխաւոր հե-
ղինակին անուանը , կարելի էր յուսալ որ հէք թիւիօ շան-
թէն պիտի ճողոպրէր և թէ անաթեմայն իւր վրայ չ'պիտի
իյնար : Այսօրիկ էին այն յետինակնկալութիւնքն՝ զորս Վէպ-
տլօն իր երկու բարեկամուհեաց սրտերուն մէջ թողած էր :

Հասաւ նա զուարթափայլ դիմօք : Պեղեցիկ աւետիս մը
կը բերէր : Թիւիօ անողորբելի եղած էր մէկ կէտի մը վրայ ,
այն է իւր հոյակապ վարդապետին գաղափարաց ճշգրիտ

Թարգմանը, հաւատարիմ քարոզն ըլլալ, ինչ վտանգով ալ ըլլայ, Յօժարակամ բոլոր մնացած կէտերուն մասին զիջողութիւն ըրած էր: Մի քանի տող ազդարարութիւն մը կը ծանուցանէր թէ գիրքը, թէպէտ հանդուցեալ Աարդի-նային զգացմանց անկեղծ յայտարարութիւնը, Ակեղեցւոյ մէջ սահմանեալ իշխանութեանց վճռոյն կը մնար, եկեղեցական կանոնաց պատուիրած բովանդակ ակնածութեամբն ու յարգանքը:

— Ա՛րջ մը տանք սոյն գործին, ըսած էր Թիւլիօ: Հրատարակութեան հրամանադիրը կ'ուզեն. այսօր կը շրկեմ զայն. գիրքը շարթու մէջ կրնայ ի վաճառ ելնել:

Սիրելի միջնորդն ուրեմն ըստ կարելոյն յաղթանակած երևցաւ: Այնքան ջանաց զտիկին Տը-լա Վլավիէրս համուշ-լու թէ ա՛լ Թիւլիօյի համար վախճալիք երկիւղ մը չ'կար, որ հաւանականաբար հուսկ ուրեմն ինքն իսկ ենթակայ եղաւ այն ցնորից՝ որով կ'ուզէր զանանք որորել:

Գիւղի, նոյն իսկ Աա-Վլավիէրի տան նման խաղաղ տան մը մէջ, այցելութիւնքն իրենց մանր ու ստիպեալ զուար-ճութիւնքն ունին: Տիկին տը-լա Վլավիէր բնականաբար ըզ-Վէռտլօն վար դրաւ ճաշի: Արովհետեւ Տիկինը ժամանակէ մ'ի վեր չ'էր կրնար իւր սենեկէն դուրս ելնել առանց խիստ շատ չ'յոգնելու, Աուիզ պարտաւորեցաւ զՎէռտլօն պտտը-նելու անդղիական պարտիզին մէջ՝ որով այս գեղեցիկ բնա-կարանը շրջապատեալ էր: Այս պարտէզը սիրելի էր Աուիզին. Թիւլիօ զայն նախանկարած, և Աուիզ ըստ նկարին անոր ձևա-կերպմանը հսկած էր: Անքը եղած էր որ, իւր եզրօրը ցոյց տուածին համեմատ, թաւուտներու տեղերը որոշած և խառն ի խառն տնկուած հինաւուրց ծառերուն մէջէն օձապտոյտ ու-ղիներ գծած էր: Գալարեաց ուողումը, շաղախածեփ աւա-զանի մը խնամքը, որն որ բնական լճակի մը նման քարածայ-ուերու և խիտ առ խիտ ջրասուն ծառերու մէջ տեղը զետեղ-ուած էր և ուր Աուիզ ամեն այցելուաց կարմրագոյն և ար-ձաթափայլ թեփերով փոքր ձկներ ցոյց կ'ուտար, սիրելի ըզ-

բաղումն էին այս շնորհագեղ Օրիորդին՝ որոյ գեղեցկութիւնը իւր բոլորտիքը եղողներուն վրայ անյաղթելի դիւթիչներգործութիւն մը կ'ընէր :

Անտարակոյս գեղանի օրիորդը բարձրաբերձ ծառերով հովանաւորեալ և հարիւրաւոր կենդանի էակներ պարունակող իւր փոքր լիճը ուղեց ցոյց տալ տղայական խօշ ուրախութեամբ մը : Ա.էռտլօն, նախածին սիրոյ մը հիացումովը սիրտը բոլորովին թրթռուն, հետեւեցաւ անոր : Առիւղ առջևէն կ'երթար՝ պարզ, անկեղծ, ուրախ և զուարթ, և գոգցես պարտիզին ուղիներուն աւազին վրայ ոտներովը բնաւ չ'դպելով : Աստիք նոյն այն վայրերն էին՝ յորս Թիւլիօ չրջագայած էր արդէն, երբ իւր բանականութիւնը, աշխարհային կենաց ու քահանայութեան մէջ տեղը երերածուի, իրեն կը ցույնէր ի հեռուստ ամուլ մրցումներն ու տառապանքներն ասպարիզի մը՝ յոր նետուած էր առաջին հակամիտութեամբ մը : Հոն, անխոհեմ կղերիկօսը կինը իւր գեղեցկութեան բովանդակ փթիթին մէջ նկատած, և զիւր հոգին բացած էր այն սիրոյ բուրումներուն, զորս գեղեցկութիւնը կը ծաւալէ շուրջ զիւրև, ինչպէս ծաղկունք, արգասաւէտելու վայրկենին, կը թափեն իւրեանց փոշիքն անուշաբոյր : Առիւղի դաղափորը կարի նպաստած էր իւր յաշխարհ մտնելուն, և, այսօր, կրնար իւր բոլոր հոգին մերկանալ այս պաշտելի էակին, նոյն այն վայրաց մէջ՝ յորս իւր սիրոյն նախկին կայծը բռնկած էր : Քսան անգամ սա նուիրական բառը « Ար սիրեմ գրեզ, Առիւղ », իւր շրթանց ծայրը եկաւ : Քսան անգամ, երբ չքնաղ օրիորդն բնութեան գեղեցկութեանց վրոյ իւր հիացումն ու զարմանքը կը բացատրէր, այն աշխուժիւն՝ որ քսան տարեկան բերնի մը մէջ այնքան հրապուրալի է, Ա.էռտլօն ինքզինք երերման մէջ զգաց, պատրաստ ի ծունր իջնելու այն ամենէն աւելի սխրալի ու յափշտակիչ կերպարանքին առջև՝ զոր կնոջ հոգի մը զգեցած լլկայ, ըսելու համար անոր : Բնութեան հրաշակերտը դուրս : Սակայն ո՛չ այս սիրավտա դրուատն, ո՛չ « կը սիրեմ

դ. քեզ, խօսքը չի թռան Ահաւորօնի շրթներէն, Պատճառը
 միթէ առաջին խոստովանութենէ մը վախցող հողի մը վեհե-
 րոտութիւնն էր, եթէ ո՛չ ծանրաբարոյ մարդու մը զգուշա-
 ւորութիւնը, որ աւելի պատուաւոր կը գտնէր տիկին Տը-լա
 Պլավիէրէն Աուիզի ձեռքը խնդրել, այս վերջինէն իրենց ա-
 մուսնութեան հաճութիւն մ'ստանալէ յառաջ: Ա՛յ այս էր և
 ո՛չ այն: Մարդկային սիրտը լի է տարօրինակ հակասու-
 թեամբք: Ահաւորօն, Աուիզի սիրտին հրաբորբօք, ուրիշ ա-
 ւելի եռանդուն սէր մը կ'զգար: Սրդէն փառաց և ճոխու-
 թեան յոյսերով արբեալ, կրնար ծանր դալ իրեն, որ իւր
 սպազային համար ուրիշ միջոց չ'ունէր բայց միայն իւր փաս-
 տաբանական աշխատութիւնքը, ամուսնանալ կնոջ մը հետ,
 ինչ սիրով ալ զայն սիրելու ըլլար, որ մեծ ազուամար օժիտ մը
 չ'բերէր: Արկու զգացում կը մրցէին յինքեան: Թիւիօյի մի-
 քանի կէս-մտերմական յայտարարութիւններէն Հայր Պրիֆարի
 գրաւման գործին ծանօթացած էր: Պիտէր իւր բարեկամին
 ծանրայեղ անշահախնդրութիւնը: Աաւ ևս կը ճանչէր նաև
 Թէզուիթաց յաջողակութիւնը ժառանգութիւններ իւրացը-
 նելու մասին, առանց օրէնքէն երկիւղ ինչ ունենալու: Պատ
 մը, վերջապէս, քիչ յուսատու փորձ մ'էր այնպիսի մարդու
 մը աչաց, որուն անծանօթ չ'էր բարեխօսութեանց աղղե-
 ցութիւնը: Բոլոր այս մտածութիւններն սառնաշունչ հովի մը
 նման իւր սրտին վրայէն անցան: Արափորձ մարդուն հարկե-
 ցուցիչ խորհրդածութիւնքը յետոս մղեցին այն յայտարարու-
 թիւնքն՝ որ մերձ էին ի խուսափել սիրատարի երիտասարդին
 շրթներէն: Առիկ մնչիկ ընկերացաւ ուրեմն Աուիզի պար-
 տիզին պտոյաներուն մէջ, միայն ծառոց ու ծաղկանց և պար-
 տիզին ուրիշ գեղեցկութեանց վրայ խօսակցելով: Աուիզ
 վախցաւ խիստ երկար ատեն իւր սիրելի հօրաքոյրը միայնակ
 թողելու: Նորէն սրահը մտան:

Մերթ սիրոյն և մերթ իւր շահուց հրապուրանքը Ահա-
 տրօնի սիրտը փոփոխակի կը գրաւէին: Այլ ո՛չինչ այս ներ-
 քին կռիւր կը մասնէր: Մաղկանց և ոսկեղսյն ձկանց հետ

խաղացող աղջկան մը արտաքին անտարբերութեանը տակ, Նուիդի սիրտն աւելի սերտիւ Վեռտլոնի յարած էր: Արք Էրեկոյին, երիտասարդը թ. երթալու համար մեկնեցաւ, և Նուիդ իւր հօրաքրոջ հրածեչտի համբոյրը տալով իւր մենաւոր սենեակը առանձնացաւ, այն ատեն հեծկլտանայ գինքն հեղձամղձուկ ընելն, արտասուայ իւր արտեանունքները թանալը և ցայն վայր անժանօթ յուզմանց իւր սիրտը տակն ի վրայ ընելն զգաց: Անուն մը, միշտ մի և նոյն անունը, պատկեր մը, միշտ մի և նոյն պատկերը, իւր յիշողութեան և իւր հայեցուածոց առջևէն վայրկեան մը չ'էին հեռանար. ինկաւ իւր անկողնոյն վրայ՝ զոր արտասուօք ուղղեց: Սյս անգամ, ինքն իրեն խոստովանեցաւ թէ զՎեռտլոն անհուն, անդիմադրելի սիրով մը կը սիրէր:

Սակայն « Աարդ ինալ տը Ֆլամարէնի կրօնական կտակ », ին հրատարակիչը, ուզե լով ժամ յառաջ այսպիսի հրատարակութեան մը գունելիք կարևորութենէն, օգուտ քաղել տպագրութիւնը փութացուցած, և գիրքը հրատարակուած էր: Սհագին անտուկ մը սոյն գրքէն թ. դրկուեցաւ: Խոշոր դեղէն յայտարարութիւններ քաղաքին պատերը կը ծածկէին, և օրագրաց չորրորդ երեսին մէջ գրուած մեծ ծանուցումներ այս նոր գրքին անսահման ծաւալում մը կուտային: Թ. ի մէջ մեծ դէպ մ'եղաւ անոր երեւումը: Չայն ձեռնէ ձեռն կը քաշէին, և գաւառին ամեն կողմերէն ու մերձակայ գաւառներէն այնքան շատ էին ուզողները, որ գրավաճառներն հարկադրեցան շուտով գրել ու կրկին բերել տալ անկէ: Հանրութեան հետաքրքրութիւնը սոյնքան սաստիկ կերպով դրդուած էր որ սոյն գրքուկին մէջ պարզուած գաղափարները բնականաբար տաքցուցին մտքերը: Երկու բանակ կազմուեցաւ իրարունքհակ. ուսեալ և ազատամիտ դասը, մտացի մարդիկ, տըրամագիր՝ նպաստաւոր կերպով ընդունելու ինչ որ բարձրութեան դրոշմ մը կը կրէ գաղափարին ու ոճոյն մէջ, սոյն մատենիկին վրայ դովեստիւք խօսեցան: Դրուատեցին հանդուցեալ Աարդ ինալը որ նորատի քահանայի մը ծնդաց առ-

Յև իւր աշնուական յետս կոչմանը քաջութիւնն ունեցեր էր . երջանիկ համարեցին զայն իր զլացմանց ու գաղափարաց թարգման ունենալուն այնպիսի մէկը՝ որ, իւր առաջին քարոզմն, նշանաւոր բեմխասացից կարչն անցած էր, և որ, իւր այս արտաքուստ այնքան սլարդ հրատարակութեամբը, մատենագրաց թուոյն մէջ նաև տեղ մը կը դրաւ էր : Եռուով գիտցան քաղաքին մէջ որ գրքոյկը, թէ և Աւետարանի անունը կը կրէր, բայց արքեպիսկոպոսարանի նախորդ քարտուղարին գործն էր : Սիրեցին զինքը՝ որ իւր պաշտպանին յիշատակին հաւատարիմ եղած, և անոր գաղափարաց այս գեղեցիկ թարգմանութեան փառքը իւրեան չ'սեպհականելու համեատութիւնն ունեցած էր : - Այս նորատի քահանայն իւր կոչմանը խիստ արժանաւոր ընթացք մ'ունի, կ'ըսուէր : Ահ, եթէ կղերին մէջ այսպիսի մեծ ու ուղիղ սրտերն հաշուագիւտ չ'ըլլային, ս'րպիսի իշխանութիւն պիտի բանեցնէր մտքերու վրայ :

Խիստ տարբեր լեզու մը կը գործածուէր այլուր : Աարդ ինչպիսի բարեկարգչական գաղափարներն, վճիռը՝ զոր ինքն իրեն գէմ արձակած էր, պարսաւը՝ զոր իւր գիրքը կը ժայթքէր ընդհանուր բարձրաստիճան կղերին հետեւած գրութեան գէմ, և ժեղութեաց փառասէր ու տիրապետող Աւետարանի երեսին քսած նախատանաց մուրը՝ կրօնական աշխարհին հեռն ու ատելութիւնքը գրգռեցին, և շատ մ'ընդունդ ու գիւրագրգիռ հոգիներու մէջ՝ սոյն ատելութիւնքը սահման չ'ունեցան : Աղերին մէջէն ամենէն նուազ զայրոյթ զգացողները կ'ըսէին թէ խորին իւթօքի մ'էր այն, օրհասական ծերունւոյն բանգագուշանքը : Պրքին պարունակութեան ըստուգութիւնը տարակոյսի տակ կը ձգէին : - Աբբայ Յիւլիօ կ'ըսէին, որ միայն ներկայ էր այն տարօրինակ տեսարանին, չէ համարձակած իւր անունը վրան դնելու : Իւր մէկ բարեկամին անուամբը միայն ի լոյս ընծայած է զայն, քաջ գիտնալով որ կեղծիք մ'է այն՝ որուն, երբ որ ուզէ, կրնայ սլարդ բացասական խոստովանութեամբ մը պատասխանատուու-

Թիւնը մերկանալ, Անստորագիր նամակներ կը տեղային Սէն-Սէրնէնի հինգերորդ փոխանորդին տունը: Սոյն նամակներէն ոմանք մինչև ամենէն կոչու թշնամանքներու կ'ելնէին իբր առ զթութեան. այլք բարեպաշտօրէն յաւիտենական անշիջանելի բոցերու սպառնալիքներ կ'ընէին: Ասոյն նաև այնպիսիներ՝ որք « կ'ողբային այն հին երջանիկ ժամանակը, Հաւատաքննութեան բարեբաստիկ օրերը՝ յորս այսպիսի զրքի մը Աստուծոյ դէմ ժայթքած հայհոյութեանց վրէժը կը լսնդրուէր, և յորս հայհոյելը, Ասպիտօլի հրապարակին վրայ խարոյկի մը կապուած և դահիճներէ ու ժէզուիթներէ պար առեալ, իւր պիղծ հողին կ'արտաշնչէր խարոյկին ժանտահոտեալ բոցերուն մէջէն: » Թիւլիօ անտարբեր եղաւ կրօնամոլ աշխարհին այս բարետրտութեանց:

Այս նամակներուն մէջ գտնուեցաւ Ա. ի եպիսկոպոսին մէկ նամակը՝ զոր կրնանք հոս մեր ընթերցողաց ներկայացընել և որ միւսներուն ըրած տխուր ներգործութիւնը ամօքել կուգար: Առի Ակիւսթ Տէլբօն Քաղղիոյ ամենէն երիտասարդ եպիսկոպոսներէն մին էր: Թ. ի Մայր-եկեղեցւոյ կանոնիկոս եղած ատեն, Թիւլիօյի հետ լաւ ծանօթութիւն ունեցած էր: Հնութեան դասական մատենագրաց մասին Աբբայ Աօմի արտակերտն վարդապետութեան դէմ իւր վիճարանական դրուածները, Աարդինալ տ'Աստրօյի Թ. ի մէջ Աարդինալ տը Չլամարէնի նախորդին ձեռագիրներէն քաղելով Տօմ Աերանժէր՝ Սօլէմի Աբբային դէմ հրատարակած կալիփոսան եկեղեցւոյ ծիօնից և արարողութեանց մէկ պաշտպանութիւնը զինքն իւր աբբայութեան ատեն նշանաւոր ըրած էին: Սև կառավարութիւնը, որ այն ատենէն անդրալեռնական կղերին հակառակ գիրք մը բռնած էր, Ա. ի եպիսկոպոսական վիճակին յարմար դատած էր երիտասարդ Աաննիկոսը՝ որուն նկատմամբ Աերին-Աարօնի կուսակալը, որ անոր ազատական գաղափարները կը ճանչէր, խիստ նըպաստաւոր վկայութիւններ տուած էր պաշտօնէին և զայն ցըցուցած էր իբր լուսաւորեալ ու համեստ մտրդ մը՝ որ երբէք

կղերին հակառակութեանցն ու սխալութեանց մասնակից չ'պիտի ըլլար :

Աբբայ ժիւլիօ անոր հետ մտերմական յարաբերութիւններ պահած էր :

Եպիսկոպոսին նամակը սա հետեւեալ խօսքերով գրուած էր .

« Սիրեցեալդ իմ Աբբայ ,

« Թ . էն հետաքրքրական հրատարակութիւն մը կ'ընդունիմ : Թէպէտ ձեր անուամբը չ'գար ի լոյս , այլ այն յայտարարութիւնքը՝ զոր կը ստորունակէ , և որք միայն ձեր առջև եղած են , ձենէ ուրիշ մէկէ մը չ'են կրնար ի դիր առնուած ըլլալ : Խիստ իմաստնաբար վարուած էք չ'ստորագրելով սոյն գրութիւնը , որ ընդ հուպ ամեն տեսակ հալածանաց զձեզ ենթակայ պիտի ընէ : Սիրելի Աբբայ , դուք զարմանալի աշխութեան տէր մարդ մ'էք : Չ'եմ կրնար զձեզ չ'նորհաւորել ձեր մեծ սրտին և ազնիւ ըզձանաց համար : Արտասուեցի կարդալով բարեյիշատակ Աարդ ինալ տը Գլամարէնի , որուն ա՛յնքան կը պարտիմ , խոնարհ խոստովանութիւնքն և ա՛յնքան մեծ դադափարները : Շնորհակալութիւն իմ կողմէս այս շահաւետ գրքուկին համար : Չայն իմ անմեկին ընկերս պիտի ընեմ , և եթէ երբէք ես ալ տեղի տամ այն տկարութեանց՝ որոց վրայ ա՛յնքան դառնապէս կ'ապաշաւէ արժանաւոր եկեղեցականը գերագոյն դատաւորին ներկայանալովայրկենին , այս գիրքը պիտի յուշ առնէ ինձ առ անձն պարտական եղած յարդանքս և քահանայական սրաշտամանս մեծութիւնը :

« Այս մտերմական նամակս խիստ գաղանի պահեցէք , կամ թէ այրեցէք զայն անմիջապէս : Չորս կողմս , ինչպէս գիտէք , մոլեռանդ պաշտօնակիցներ ունիմ : Չ'եմ ուզեր անոնց թշնամութիւնը իմ վրաս հրաւիրել . ասի կրնայ իմ եպիսկոպոսութիւնս վեր ի վայր վրդովել՝ առանց ճշմարտութեան համար ամենափոքր օգուտի մը : Յաւազին փոխանցման ժամանակի մը մէջ եմք : Ահաք է թողուլ յիմարաց իրենց